Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ



ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

А. Ш. МНАЦАКАНЯН

АРМЯНСКОЕ ОРНАМЕНТАЛЬНОЕ ИСКУССТВО

Возникновение и идейное содержание основных мотивов



ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

7929(479.925)(09)
Մ 83

Ա. Ը. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԱՐՔԵՍՏ

Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը

Ա 13 50

ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ։

Խմբագիրներ.
Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. Ս. ԱԱԶԻԿՅԱՆ

Առանց պարզ ըմբռնելու այն, որ միայն մարդկային ամբողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրայի ճշգրիտ գիտենալով, միայն նրա վերամշակմամբ կարելի է կառուցել պրոլետարական կուլտուրա — առանց այդպիսի ըմբռնման մենք այդ խնդիրը լուծել չենք կարող։

Վ. Ի. ԼԵՆԻՆ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդը աչխարհի հնագույն ժողովուրդներից մեկն է. նա գոյության ընթացքում կերտել է նաև իր հարուստ ու նշանավոր կուլտուրան, որի մեջ առանձին տեղ է գրավում հայկական զարդարվեստը։

Զարդարվեստը հայ ժողովրդի ստեղծած արվեստի ամենահին, բայց ամենակենսունակ բնագավառներից մեկն է, որի մի ժայրը քաղված է նախնադարյան անգրագիտության հասարակության ծոցում, իսկ մյուսը, այսօր էլ ծաղկելով, ձգվում է դեպի ապագան։ Այն միաժամանակ արվեստի ամենամասսայական ձևերից մեկն է՝ ինչպես իր ստեղծմամբ, տարածմամբ, գերով և նշանակությամբ, այնպես էլ իր ընդգրկած բնագավառներով։ Նրա բազմահազար ու բազմապիսի մոտիվները, հնագույն ժամանակներից սկսած, զարդարել են մարդկային մարմինը, հագուստը, բնակավայրերը, բնակարանները, տնային կահ-կարասիքը, գործիքները, ձեռագրերն ու գրքերը, պատմական ու կրոնական զանազան հուշարձանները, գերեզմանաքարերը, անասունների մարմիններն ու ծաղկները և այլն։ Նրա երփներանգ ձևերը, իրենց ստեղծագործական զարգացմամբ, որպես հաղթանակող աշխատանքի անչնչելի կնիքներ, իրենց դրոշմն են դրել հայ ժողովրդի նյութական կուլտուրայի բոլոր բնագավառների վրա, ուր հասել են մեր նախնիների ստեղծագործ ձեռքերը։ Տարբեր էպոխաներում, տարբեր հանգամանքների մեջ, նրանք տարբեր իմաստ ու դեր են ստացել և յուրովի վերաստեղծել իրենց կերտողների ու տարածողների կյանքի պատմությունը, մտածողությունը՝ միշտ վերամշակվելով, զարգանալով ու հարստանալով։

Այսօր այդ վիթխարի կուլտուրան, իր ամբողջ հասակով մեկ, կանգնած է սովետական մասնագետների առաջ՝ մի կողմից՝ որպես պատմական սկզբնաղբյուր, իսկ մյուս կողմից՝ որպես անգուգական ժառանգություն՝ սպասելով իր արժանի վեր

Հանձնաժողովի ուսումնասիրությունները և նպատակները

Հասկանալի է, որ այդ հին ու հարուստ կուլտուրան պիտի վաղուց իր վրա հրավիրած լիներ մասնագետների ուշադրությունը։ Դեռ, հիրավի, սկսած XIX դարի կեսերից, հրատարակվում են առանձին աշխատներ, ժողովածուներ, հոդվածներ, ուսումնասիրություններ՝ նվիրված հայկական արվեստի տարբեր բնագավառներին, որոնց մեջ, հանուն, չորսափվում են նաև հայկական զարդարվեստի որոշ հարցերը։ Սկսված աշխատանքները մի նոր թափ են ստանում Հոկտեմբերյան մեծ սոցիալական կարգեր հաստատվելուց հետո և մասնավորապես վերջին տասնամյակների ընթացքում։

Այսօրվա հարկ ենք համարում հիշատակել ոուս բազմավաստակ գիտնական Վ. Վ. Մատուզովի, հայկական ձեռագրերի հմուտ մասնագետ Գ. Հովսեփյանի, Ն. Ցա. Մառի, Ա. Ի. Օրբելու, Ք. Բարամձյանի, Գր. Չափանցյանի, Գ. Լևոնյանի, Ի. Ի. Պիոտրովսկու, Լ. Ա. Դուրնովոյի, Ն. Մ. Տոկարեվու, Բ. Առաքելյանի, Վ. Մ. Հարությունյանի, Կ. Ղաֆադարյանի, Ա. Ն. Սվիրինի, Ք. Դրամբյանի և շատ ուրիշների անունները, որոնք մեծապես նպաստել են հայկական արվեստի տարբեր բնագավառների զարգացումները վեր հանման և ուսումնասիրության աշխատանքներին։

Ներկա աշխատության բնույթին համապատասխանող կարևոր էջերի ենք հանդիպել հատկապես Գր. Չափանցյանի, Ի. Պիոտրովսկու աշխատություններում (կենաց ծառ, տոտեմիզմ, աստվածություններ և այլն), ովքեր ամենայն կոլկող քարանձավներին նվիրված ուսումնասիրություններում (կենդանական և բուսական մոտիվներ, աստվածություններ), Բ. Առաքելյանի «Հայկական պատկերազարդանքները IV—VII դարերում» աշխատության մեջ (տոտեմիզմ, կոսմոգոնիզմ, հին պատկերացումներ և այլն) և ուրիշ գործերում։

Որքան էլ շատ են հիշված ու չհիշված անունները և նրանց կատարած աշխատանքները, գոհ-ջալ, որ այդ բոլորը դիտում ենք հայկական զարդարվեստի ամբողջ ժողանգության և նրա առն բարերացող հարցերի ու աշխատանքի ընդհանուր ֆոնի վրա, տեսնում ենք, որ դեռևս շատ քիչ գործ է կատարված։ Բավական է հիշել, որ մինչև օրս գոյություն չունի այլի ընդհանուր առանձին աշխատություն՝ նվիրված հայկական զարդարվեստին։ Ուստի և ընդհանրապես հայկական արվեստի մասին իրավացիորեն նկատված է, որ տարբ. նշանավոր առանձնագրություններն ուսումնասիրված են անբավարար, նրանցից շատերը նույնիսկ չեն հետազոտված և մնում են արվեստագետների ուշադրության դաշտից դուրս[1]։

Ով կարի մի կերպ կարծիք է բավարար համարել նկարների ու նկարագրությունների միջոցով հայկական արվեստի որոշ բնագավառների զարգերի վեր հանման աշխատանքները, ապա նույնը չի կարելի ասել ինչպես որևէ բնագավառի, այնպես էլ առհասարակ ամբողջ զարդարվեստի ուսումնասիրության ընթացքի մասին։ Այդ ուղղությամբ կատարված աշխատանքները, հիմնականում, սահմանափակվել են որևէ բնագավառի որևէ հատվածի զարդամոտիվների նկարագրությամբ և նրանց դասակարգով։ Շատ քիչ են այն փորձերը, որոնք նպատակ ունենալին քափանցել զարդամոտիվների ներքին էության մեջ։ Միշտ է, տարբեր աշխատություններում հանդիպում ենք մասնակի չափերի, որոշ հիշյա դիտողությունների, մեկնաբանությունների ու ենթադրությունների, բայց և այնպես նրանք միակողմանի են և հաճախ էլ զրկանում են անընդունելի կարծիքներ։ Ասած այսօր, նկատի առնելով այդ աշխատանքների ընդհանուր վիճակը, կարող ենք ասել, որ գեռևս պատշաճորեն բարերացված և մարքսիստորեն լուսաբանված չեն հայկական զարդարվեստի ամենագլխավոր, այն է՝ հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման և զարգացման բովանդակության հարցերը։ Ամենից, այդ հարցերը, իրենց ամբողջությամբ, առաջադրված անգամ չեն եղել, գոյություն չունի գեթ մի ամփոփ ակնարկ՝ նվիրված նրանց։

Պետք նկատել, սակայն, որ համարյա նման վիճակ գոյություն ունի նաև ուրիշ ժողովուրդների մոտ։ Այս հանգամանքը շատ կարևոր է, որովհետև հայկական, ինչպես և առհասարակ որևէ ժողովրդի զարդարվեստի մոտիվների ուսումնասիրության բախտը պատմականորեն կապված է նաև ուրիշ ժողովուրդների զարդարվեստների համապատասխան հարցերի ուսումնասիրության վիճակի հետ։ Մասնագետները վաղուց են նկատել, որ զարդարվեստի մոտիվներն ունեն համաշխարհային բնույթ, չնայած նրանք յուրաքանչյուր ժողովրդի մոտ մշակված են հենց այդ ժողովրդին հատուկ ոճով։ Այս երևույթի բացատրության փորձերը տեղի են ունեցել բազմաթիվ իրարամերժ կարծիքների, բայց, ինչպես ռուս գիտնական Վ. Ա. Նիկոլսկին է նշել,

[1] Տես „Искусство" հրատարակչության երկրորդ հատոր Ա. Ն. Սվիրինի „Живопись Древней Армении" գրքին, Մոսկվա—Լենինգրադ, 1940, էջ 5—8։

ոճից նմանության հարցերը դեռևս գիտականորեն բոլորովին չեն մշակված[1]։

Այսպիսով, մի կողմից տվյալ ժողովրդի և առհասարակ բոլոր ժողովուրդների զարդարվեստների հիմնական մոտիվների և մյուս կողմից՝ նրանց միջազգային բնույթի հետ կապված առեղծվածային վիճակը հիմք է հանդիսացել, որպեսզի ծնվեն ու ձևակերպվեն մեծ թվով հակասական տեսակետներ ու ենթադրություններ։

Կղերական և բուրժուական գիտնականները, ելնելով իրենց դասակարգային պատկանելիությունից և տիրող կարգերի շահերից, տարածում են բազմաթիվ հակագիտական, ռեակցիոն և առասպելական տեսություններ։ Համաձայն նրանց պնդումների, զարդարվեստի մոտիվների հիմքում և նրանց էության մեջ ընկած են մարդկանց կրոնամիստիկ պատկերացումները, սեռական բնազդը, վայրենի կրքերը, անհիմն ֆանտազիան, պատահական ձևերը, ինքնանպատակ կրկնումները և այլն։

Նրանք, օգտվելով հատկապես զարդարվեստի մոտիվների ընդհանուր բնույթից, քարոզում են, որ այդ բոլորը նախապես ծնվել են «կուլտուրական հատուկ օջախներում»՝ հատուկ ռասաների պատկանող ցեղերի և ժողովուրդների կողմից և ապա միայն տարածվել մյուս բոլոր ցեղերի ու ժողովուրդների մոտ, որոնք, իբր թե, պատկանել են ավելի «ցածր», «ստորին» ռասաների և ի վիճակի չեն եղել ստեղծելու իրենց սեփական կուլտուրան ու զարդարվեստը։ Նույնը կարելի է ասել նաև թափառող մոտիվների ու սյուժեների, պարզ փոխառությունների և նման այլ կարծիքների վերաբերյալ։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, մահացու հարված տալով բուրժուական տեսաբանների կեղծ ու հակագիտական տեսակետներին, մատնացույց են անում լուսավոր ուղիներ, տալիս են հըստակ կողմնորոշում և կայուն հիմք՝ ինչպես գիտության բոլոր բնագավառների, այնպես էլ զարդարվեստագիտության առջև բարձրացած հարցերը գիտականորեն լուծելու համար։

«Գաղափարների, պատկերացումների, գիտակցության արտադրությունը,— ասում են Մարքսը ու Էնգելսը,— սկզբնապես անմիջականորեն միահյուսված է նյութական գործունեության և նյութական հաղորդակցությունների հետ։ Մարդկանց պատկերացումները, մտածողությունը, հոգևոր հաղորդակցությունները այստեղ դեռևս համարվում են բխած անմիջապես մարդկային նյութական հարաբերություններից։ Նույնը կարելի է ասել նաև հոգևոր արտադրության մասին, ինչպես [որ] այն դրսևորվում է այս կամ այն ժողովրդի լեզվում, քաղաքականության, օրենքների, բարոյականության, կրոնի, մետաֆիզիկայի մեջ և այլն։ Մարդիկ հանդիսանում են իրենց պատկերացումների, գաղափարների և այլ նմանների արտադրողը...

Այսպիսով, մորալը, կրոնը, մետաֆիզիկան և իդեոլոգիայի մյուս տեսակներն ու նրանց համապատասխանող գիտակցության ձևերը կորցնում են ինքնուրույնության նկատելիությունը։ Նրանք չունեն պատմություն, նրանք չունեն զարգացում. մարդիկ, որոնք զարգացնում են իրենց նյութական արտադրությունը և իրենց նյութական հաղորդակցությունները, տվյալ իրականությունների հետ միասին փոխում են նաև իրենց մտածողությունը և իրենց մտածողության արդյունքները։ Ոչ թե գիտակցությունն է որոշում կեցությունը, այլ կեցությունն է որոշում գիտակցությունը»[1]։

Այս հանճարեղ դրույթը բացում է մեր առաջ իդեոլոգիայի բոլոր բնագավառների, այդ թվում նաև զարդարվեստի մոտիվների ուսումնասիրության ճանապարհը։ Այն ցույց է տալիս, որ այդ հարցերի լուծումը պիտի փնտրել ռեալ կյանքում, մարդկային նյութական փոխհարաբերությունների ոլորտի մեջ, նյութական, կենդանի նախադրյալներում։

Իսկ, ինչպես նշված է մարքսիզմ-լենինիզմի կլասիկների դրույթների հիման վրա, «մարդկանց նյութական կյանքի գլխավոր, որոշիչ պայմանը, այն պայմանը, որ որոշում է հասարակության ամբողջ կերպարանքը (այդ թվում նաև հարաբերությունները ազգերի միջև, ընտանիքի և ամուսնության ձևերը), կենսամիջոցների հայթայթման եղանակն է, մարդկանց գոյության և նրանց սերնդի շարունակման համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրության եղանակը»[2]։

Այստեղից պարզ է, որ մարդկանց մտածողության և իդեոլոգիայի գլխավոր առարկան պիտի լինեին հենց այդ նյութական բարիքները և նրանց համար աշխատավոր մարդկության թափած ծանր աշխատանքն ու անդուլ պայքարը։

[1] В. А. Никольский, Древнерусское декоративное искусство, Петроград, 1923, стр. 20.

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IV, Партиздат ЦК ВКП(б), 1937, стр. 16—17.

[2] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 9. (ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի դրած առաջաբանից)։

«Հասարակության հոգևոր կյանքի ձևավորման պրոցեսը, հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման պրոցեսը պետք է փնտրել ո՛չ թե հենց այդ իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մեջ, այլ հասարակության նյութական կյանքի պայմանների մեջ, հասարակական կեցության մեջ, որի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները և այլն»[1]։

Ներկա աշխատությունը շարադրելու ամբողջ ընթացքում մենք աշխատել ենք միշտ նկատի ունենալ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այս ու համապատասխան բազմաթիվ ուրիշ ցուցումները և մանավորապես Մարքսի կոնսպեկտը՝ գրված Լ. Հ. Մորգանի «Նախնադարյան հասարակություն» գրքի հիման վրա ու Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության ու պետության ծագումը» աշխատությունը։

Սովետական մասնագետները, զինված մարքսիզմ-լենինիզմի ամենազոր ուսմունքով, այժմ լծված են նաև առհասարակ զարդարվեստագիտության հարցերի ուսումնասիրության պատվավոր գործին։ Նրանք համառորեն շարունակում են խորտակիչ քննադատության ենթարկել կղերաբուրժուական տեսաբանների կարծիքներն ու նրանց մնացուկները, ամենամեծ ջանքերն են գործադրում, որ առանձին ու շքեղ հատորներով հրատարակվեն Սովետական Միության բոլոր եղբայրական ժողովուրդների զարդարվեստների տարբեր բնագավառների հարուստ նյութերը և ամեն կերպ մտածում են դյուրացնել նրանց ուսումնասիրության գործը։

Այսուհանդերձ առհասարակ զարդարվեստագիտության առջև կանգնած տեսական ամենադըժվար հարցերը, այն է՝ նրանց «հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերը», մնում են չլուծված։ Այդ ուղղությամբ կատարված որոշ փորձերը կրում են անորոշ բնույթ, և երբեմն էլ դրսևորում անընդունելի հայացքներ, որոնք վերջին հաշվով վերևում նշված սխալ տեսությունների մնացուկներն են։ Մեծապես հարգելով սովետական մի շարք ականավոր գիտնականներին և բարձր գնահատելով նրանց առաջնակարգ մեծարժեք վաստակը, մենք չենք կարող մատնացույց չանել նրանց գործերում առկա որոշ սխալներն ու թերությունները։ Այսպես, օրինակ, Վ. Ա. Գորոդցովը, նկատի ունենալով ռուսական ասեղնագործության զարդամոտիվների մի խոշոր խումբ, դրանք դիտում է որպես ժողովրդական պրիմիտիվ, պարզունակ մտածողության հեշտ բացատրելի արդյունք և համարում կրոնա-սիմվոլիկ նշանակություն ունեցող զարդեր։ Այդ զարդերի «կրոնա-սիմվոլիկ նշանակությունը ներկա ժամանակներում հաստատապես մոռացված է»[1],— գրում է նա։ Գ. Ս. Մասլովան նույնպես կրոնական մտածողության արդյունք է համարում բոլոր ժողովուրդների զարդարվեստների տարրերը կազմող այնպիսի մոտիվ, ինչպիսին է կենաց ծառը[2]։ Շ. Կուտխուջինի կարծիքով ղազախական զարդարվեստի հիմնական մոտիվախմբերը (բուսական մոտիվներ, կենդանական մոտիվներ, երկրաչափական մոտիվներ, երկնային մարմիններ) սկզբնապես ունեցել են կախարդա-հմայական նշանակություն[3]։ Ա. Ն. Սվիրինի համոզմամբ հայկական մանրանկարչությունը ծնվել ու զարգացել է, հիմնականում, խայտաբղետ փոխառությունների հողի վրա[4]։ Ս. Ի. Ռուդենկոն սկյութական որոշ կարևոր զարդամոտիվների ծագումը կապում է ուրիշ ժողովուրդների հետ[5] և այլն։ Ըստ որում, դրանք, ինչպես ցույց է տրվում ներկա աշխատության մեջ, սխալ տեսակետներ են, որոնց հեղինակները գիտականորեն չեն հիմնավորում իրենց կարծիքներն ու ենթադրությունները։

Այս ընդհանուր ֆոնի վրա միանգամայն ուշագրավ են այն դիտողությունները, որոնց համաձայն զարդարվեստի բոլոր մոտիվների կամ նրանց առանձին խմբերի ծագման և էության հարցերը դեռևս լուծված չեն։ Նույն Ս. Ի. Ռուդենկոն, նկատի ունենալով սկյութական զարդերի մի ամբողջ խումբ, գրում է. «Ինչպիսի՞ն է այդ զարդային մոտիվների ծագումը, դեռևս չի պարզված»[6]։ Այս առումով առավել ուշագրավ են հանգուցյալ Ն. Յու. Կրիչևսկու հետևյալ տողերը.

«Ամենից դժվարն այն է, որ դեռևս չի մշակ-

---

[1] Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 184։

[1] В. А. Городцов, Дако-Сарматские религиозные элементы в русском народном творчестве, Труды Гос. Ист. музея, вып. I, разряд археологическ., Москва, 1926, стр. 8—9.

[2] Г. С. Маслова, Народный орнамент верхневолжских карел, Москва, 1951, стр. 88.

[3] Ш. Кутхуджин, Казахская орнаментика, „Известия АН Казахской ССР“, № 78, Алма-Ата, 1950, стр. 52.

[4] А. Н. Свирин, Миниатюра Древней Армении, Москва—Ленинград, 1939, стр. стр. 26, 28, 29, 36 и т. д.

[5] С. И. Руденко, Горноалтайские находки и скифы, Москва—Ленинград, 1952, стр. стр. 148—153, 190—192 и т. д.

[6] Там же, стр. 152.

ված օրնամենտալ կոմպոզիցիաների ամանոտի-կան ուսումնասիրելու մեթոդ։

Ժապավենաձև օրնամենտների առանձին էլեմենտները, ինչպես, օրինակ, շրջագծի, խաչի նշանները, արդեն գրավել են հետազոտողների ուշադրությունը, բայց դեռևս ո՛չ ոք չի փորձել հայտաբերել օրնամենտալ կոմպոզիցիաների ամանոտիկան ամբողջությունը, բացատրել բուն օրնամենտալ ոճը։

Այսպես, շարունակելով, նա գրում է.

«Ինչպե՞ս սահմանել, ունի՞ արդյոք տվյալ օրնամենտալ սիստեմը գաղափարական առանձին բովանդակություն, և ինչպե՞ս են համատեղվում մեկը մյուսի հետ զարդային ձևը («декоративность») ու սիմվոլիկան — Այս հարցին դեռևս պատասխան չկա»[1]։

Այսպիսով, միանգամայն վստահորեն կարելի է նկատել, որ իրենց ամբողջության մեջ դեռևս բացատրություն չեն գտել ինչպես որևէ ժողովրդի, այնպես էլ բոլոր ժողովուրդների զարդարվեստների հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերը։ Բացի դրանից, գոյություն չունի նաև այդ աշխատանքները կատարելու համար մշակված որևէ մեթոդ։

Ահա այս խոշոր և վերին աստիճանի բազմակողմանի հարցերն իրենց ամբողջ հասակով մեկ կանգնած են սովետական զարդարվեստագիտության առաջ։

Ներկա աշխատության նպատակն է բացահայտություն տալ հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերին, ինչպես նաև նրանց հետ առնչվող մի շարք ուրիշ կարևոր խնդիրների։

Վերոհիշյալ տողերից ինքնին հասկանալի է, որ լուծել նշված հարցերը հայ ժողովրդի զարդարվեստի հարուստ ու հին տվյալների հիման վրա, նշանակում է բանալի տալ նաև մյուս ժողովուրդների զարդարվեստների հետ կապված համապատասխան հարցերի լուծման համար։

Հասկանալի է նաև, թե որքան ակտուալ և միաժամանակ որքան դժվարին գործ է նշված աշխատանքին ձեռնամուխ լինելը։

Ներկա աշխատությունը շարադրելիս մենք ձգտել ենք, ամենից առաջ, հանգամանորեն ծանոթանալ հայկական զարդարվեստի բոլոր բնագավառների հետ, որովհետև զարդարվեստ ասելով հասկանում ենք այն արվեստը, որը գործ ունի առհասարակ զարդերի հետ, անկախ նրանից, թե ո՛րտեղ են երևան գալիս նրանք։ Իսկ այդ բնագավառները, ինչպես նշվեց, շատ և շատ են։ Ըստ որում, մեր նպատակը չի եղել քննել այդ բնագավառներից յուրաքանչյուրի բոլոր կարևոր առանձնահատկությունները, գիրը, նշանակությունը և այլն, այլ հայտաբերել նրանց զարդամոտիվների հիմնական տեսակները, պարզել նրանց առնչությունները և բացատրել նրանց էությունը։

Ինքնին հասկանալի է, որ այս աշխատանքների հաջողությունը կախված պիտի լիներ, ամենից առաջ, զարդամոտիվների առանձին էլեմենտների, ապա նրանց հարաբերությունների մանրակրկիտ ուսումնասիրությունից, որոնք և կազմում են տվյալ դեպքում հայկական զարդարվեստի հիմնական մոտիվները։

Ինչպես հայտնի է, զարդերի տեսակները առաջանում են ամենապարզ էլեմենտներից, զարդամիավորներից կամ զարդաբջիջներից սկսած մինչև ամենաբարդ ու ամենախրթին կոմպոզիցիաները։ Հասկանալի է, որ նրանց էությունն ըմբռնելու համար, նախ՝ պիտի բացահայտել առանձին էլեմենտների ծագումն ու իմաստը, ապա՝ աստիճանաբար խորանալ ավելի բարդ ձևերի էության մեջ։

Ըստ որում զարդամոտիվների միջոցով դրսևորված գաղափարներն էլ իրենց հերթին են բաժանվում համեմատաբար պարզ և բարդ խմբերի։ Այսպես, օրինակ, կենաց ծառի մոտիվը, ամենից առաջ, կապվում է բուսական աշխարհի հետ և նկատի ունի մարդկանց բուսամշակության բնագավառում ձեռք բերած գիտելիքները։ Սակայն կենաց ծառի մոտիվի միջոցով ընդհանրացվել են նաև կենդանական աշխարհի, իսկ այնուհետև հասարակական հասկացողությունների հետ կապված շատ կարևոր հարցեր, որոնք արդեն ավելի քան բարդ պատկերացումների արդյունք են։ Ելնելով այս հանգամանքից, մենք ձգտել ենք, որպեսզի զարդարվեստի առանձին, պարզ էլեմենտների և զարդամիավորների բացատրության հետ միասին, առաջին հերթին, բացատրվեն գաղափարական ավելի պարզ բնույթ ունեցող հարցերը, իսկ հետո, աստիճանաբար առաջ քաշվեն ավելի բարդ ու խրթին հարցերը։ Հետևապես չպիտի կարծել, թե առաջին հերթին քննվող հարցերի կապակցությամբ մեջ բերված մոտիվները միայն հենց այդ հարցերին են նվիրված եղել, իսկ հետո մեջ բերվածները՝ ավելի քան հարուստ բովանդակություն են ունեցել։

Երկարատև ու հանգամանալից պրպտումների

[1] Е. Ю. Кричевский, Орнаментация глиняных сосудов у земледельческих племен неолитической Европы, Ученые записки Ленинградск. государств. ордена Ленина университета им. А. А. Жданова, серия историч. наук, выпуск 13, Ленинград, 1949, стр. 55—56.

չնորհիվ մեզ հաղորդվել է բացատրել այն պարզ զարգացմանների պատկերն ու էությունը, որոնք կազմում են ինչպես հայկական, այնպես էլ տարբեր ժողովուրդների զարգարվեստների գլխավոր տարրերը և առկա են բոլոր բարդ կոմբինացիաներում՝ որպես բաղկացուցիչ մասեր։

Այս խնդիրը լուծելիս մենք առաջնորդվել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այն ցուցումներով, որոնց համաձայն յուրաքանչյուր պատկերի ու ձևի, ֆիգուրի և համապատասխան այլ հասկացողության հիմքում նախապես պիտի ընկած լինեին նյութական ռեալ նախադրյալներ, բնության մեջ գոյություն ունեցող իրեր, առարկաներ, կոնկրետ հասկացողություններ և այլն։

Փաստերի հանգամանալից քննությունը, որը շարադրված է ներկա աշխատության ինը գլուխներում, ցույց տվեց, որ զարգարվեստի մոտիվների հիմքում ընկած են՝ մի կողմից՝ բնության ուժերը՝ իրենց որոշանական և անօրգանական աշխարհներով, իսկ մյուս կողմից՝ հասարակական հասկացողությունները՝ իրենց պատմական առումով։ Եվ այս բոլորը՝ ո՛չ մի որպես սոսկական վերարտադրություն, այլ որպես մարդկային ոգեշունչ աշխատանքի, ամենօրյա անդուլ պայքարի, ձեռք բերած նվաճումների, գաղափարագրային և հաչքենաչերական համառ մարտերի և այդ բոլորին համապատասխանող մոտեցողության ձևերի ու աշխարհայացքի արդյունք։

«Մենք բացարձակապես ոչինչ չենք հասկանա հնախոսարյան գեղարվեստի պատմությունից,— ասում է Գ. Վ. Պլեխանովը,— եթե չհամաձայնենք այն մտքով, որ աշխատանքը գեղարվեստից առաջ է եղել, և որ ընդհանրապես մարդը առարկաներն ու երևույթները դիտում է նախ ուտիլիտար տեսակետից և միայն հետագայում նրանց նկատմամբ իր վերաբերմունքի մեջ կանգնում էսթետիկական տեսակետի վրա [1]։

Պարզվում է, որ հատկապես մեր երկրագործ ու անասնապահ նախնիների աշխատանքային առօրյայի արդյունքն են հանդիսանում առհասարակ զարգարվեստի մոտիվների առաջերը կազմող այնպիսի զարդաձևեր, ինչպիսիք են վարսանգա-պըտղային, հատիկա-ձևրմային, չորս էլեմենտների, ծնող-ցույցերի, կենաց ծառերի մոտիվները, ինչպես նաև ընտանեկան-արտադրական, տոհմաֆրատրիալ հասկացողություններին, նրանց նախնական մատերիալիստական և առարկայական գիտելիքների մակարդակին համապատասխան մոտեցողության և այլ նմանների հետ կապված հարուստ զարգամոտիվները։

Ձեր բոլոր ապացուցումները, եզրակացությունները, ընդհանրացումները, դիտողությունները և ենթադրությունները, որ արված են ներկա աշխատության մեջ, հիմնավորված են ոչ միայն հայկական զարգարվեստի պեղածոների հավաստի բազմաթիվ փաստերով, այլև հայկական ժողովրդական բանահյուսության, դիցաբանության, կենսաձևերության գիտելիքների, ժեստերի, հին պատկերացումների, հավատալիքների և շատ ուրիշ բնագավառների վկայություններով։ Ըստ որում, այս վերջիններից մեջ բերված փաստերը ոչ միայն ազնում են զարգարվեստի մոտիվների բացատրության գործին, այլև շատ հաճախ իրենք են ստանում բացատրություն։

Ինչպես տեսնում ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, համանման կենսապայմանների չնորհիվ ծնվում են նաև մոտեցողության համանման ձևեր և նրանց գրանցման համանման եղանակներ։ Ուստի, բնականաբար, ուրիշ ժողովուրդների զարգարվեստների համապատասխան ձևերն էլ պիտի ունենային հիմնականում այնպիսի ծագում ու բովանդակություն, ինչպիսին հայկական զարգարվեստի հիմնական մոտիվները։ Ներկա աշխատության մեջ ձգտել ենք, հնարավորին չափ, միշտ նկատի առնել այս նշանակալից ու խոշոր հանգամանքը։ Հրատարակված գանազան ալբոմների, ժողովածուների, ուսումնասիրությունների մեջ գտնվող ճոխ ու առատ փաստերը համոզում են, որ, իրոք, մյուս ժողովուրդների զարգարվեստների տարրերը կազմող զարգամոտիվները իրենց միջազգային բնույթով, ամենից առաջ, ժեստով են այն կենսապայմանների, որոնց մեջ ապրել ու պայքարել են նրանց կերտողները։ Եվ այն բոլոր բացատրությունները, որոնք արված են հայկական զարգարվեստի հիմնական մոտիվներին, ընչին բացառությամբ, վերաբերում են նաև ուրիշ ժողովուրդների զարգարվեստների համապատասխան մոտիվներին։ Էնք այս աշխատության մեջ բերված են բազմաթիվ փաստեր՝ բաբելական, աստրնատական, եգիպտական, խեթական, միտանիական, ուրարտական, չինական, հնդկական, հունական, հռոմեական, սկյութական, բոսֆորյան, ոուսական, ալավոնական, մերքեն-սաքսական, կովկասյան և այլ ժողովուրդների զարգարվեստներից, որոնք մի կողմից՝ իրենք են բացատրություն ստանում, իսկ մյուս կողմից՝ օգնում են հայկական զարգարվեստի հիմնական մոտիվների հետ կապված և մեզ այսօրը հետաքրքրող հարցերի

---

1. Գ. Վ. Պլեխանով. Հնդկաբնակ և դրամատուրգ, Երևան, 1948, էջ 80։

չափանիշ։ Աշխատել ենք, հնարավորության սահմաններում, համապատասխան վիճակագրություններ կատարել նաև ուրիշ ժողովուրդների բանահյուսական, դիցաբանական, ֆիլմական և նման ուրիշ ապրյուրներից, որոնք բոլոր դեպքերում էլ միշտ ներգաղթ են հնչում բարելաջվող և լուծվող հարցերի հետ ու մեծապես նպաստում մեր առջև դրված խնդիրների լուծմանը։

Պիտի նկատել, սակայն, որ ներկա աշխատության համար բացառիկ նշանակություն են ունեցել հատկապես հայկական միջնադարյան մանրանկարչության գանձերը, որոնք կազմում են աշխատության հիմքը և հանդիսացել են հիղինակի ելակետն ու ուղեցույցը։ Ուստի նպատակահարմար ենք համարել վիճակագրությունների հիմնական մասը վերցնել այդ սկզբնաղբյուրներից, որոնցով աշխատանքս հարուստ են մեր միջնադարյան ձեռագրերը։ Թուրքն ու մագաղաթը, վրձինն ու գրիչը, քանակն ու ներկանյութերը անհամեմատ շատ ավելի լայն հնարավորություններ են ընձեռնել մանրանկարիչներին՝ հարազատ մնալու ընդգրկուն զարգացումների, քան, ասենք, քիլն ու գազգահը՝ անկվածագործին, կամ մուրճն ու բրիչը՝ քանդակագործին։ Մանրանկարչության նշված առավելությունը, հատկապես ներկա գնդում, նրբ վճռական նշանակություն ունի զարգացումների նախնական, ավելի քան բնական տնտ ունեցող ձևերի հայտարարումը, բացառիկ կարևորություն է ստանում։ Բացի դրանից, ձեռագրերի աշխարհն ի վիճակի է նկել ի մի հավաքել և մեզ հասցնել անհամեմատ մեծ քանակ կազմող զարդեր, քան զարգարվեստի որևէ այլ բնագավառ։ Ահ որքան մեծ է զարդերի քանակը, այնքան ավելի շատ կարևոր փաստեր կան աչքառնը։ Մյուս կողմից, մանրանկարչության բնագավառում հենց միևնույն մոտիվը հանդիպում է իր բազմապիսի ու բազմաքանակ վարիանտներով, սկսած նրանց պարզագույն, բնական, նախօրինակին հարազատ ձևերից և վերջացրած ամենաերկին հարաբարդություններով։ Ահա հանգամանքը նպաստում է, որ ուշագիր համեմատություններն ու համադրություններ միջոցով մեզ հետաքրքրող հարցերն ավելի հեշտ լուծվեն։ Այդպիսի օրինակներից են վարսանդա-պրոզային և հատիկա-սերմային, ինչպես նաև չորս էլեմենտներին նվիրված զարդամոտիվները, որոնց մասին խոսված է ներկա աշխատության I, II, III գլուխներում։ Մանրանկարչության հնարքական առավելություններից մեկն էլ այն է, որ ժամանակին այն իր մեջ է ընդգրկել զարգարվեստի մյուս բոլոր բնագավառների լավագույն մոտիվները, որոնք այսօր հնշատագնում են ինչպես այդ բնագավառների զարդամոտիվների, այնպես էլ նրանց փոխադարձ առնչությունների ուսումնասիրության դործը։ Իրենց հնության շնորհիվ ևս մանրանկարները ավելի նախընտրելի են՝ մյուս բնագավառների համեմատությամբ։ Միշտ է, հայկական մանրանկարչությունն ավելի նրբաստարդ արվեստ է, քան, ասենք, քանդակագործությունը, անկվածագործությունը և այլն, բայց մյուս բնագավառներից պահպանված հին վիճակությունները խիստ սակավաթիվ են և առհասարակ իրենց ամրոզության մեջ չեն կարող համապատասխանել մանրանկարչությանը։ Է՛լ ավելի նպաստ կարևորություն է ներկայացնում մանրանկարչությունը՝ իր գունագեղությամբ, որովհետև գույների միջոցով առավել դյուրին է գտնում որոշել իր նախնական տնտից հնարված զարդի ինչ լինելը։ Այս առումով մանրանկարչությանը մատաճ կարող էին հավասարվել անկվածագործությունն ու որմնանկարչությունը, եթե նրանցից պահպանված հին նմուշների աշխատ աղքատիկ ու խուճապած չլինեին։ Ով, վերջապես, մանրանկարչական հին ժառանգության հետ ծանոթանալը, պահանջվող փաստերն անմիջապես ձեռքի տակ ունենալը, նրանց հրատարակելն ու ոգտագործելը ավելի հեշտ է, քան մյուս բնագավառներինը։ Ահա այս և այլ պատճառներով է, որ մենք մեր աշխատության մեջ ընդգրկված փաստերի հիմնական մասը վերցրել ենք հայկական միջնադարյան մանրանկարչություններից։ Այսուհանդերձ, միաժամանակ, մեծ ուշադրություն ենք նվիրել նաև մյուս բնագավառների փաստերին, որոնք, հաճախ, ավելի հին ու հազվագյուտ նմուշներ լինելով, եղակի և երբեմն էլ խիստ վճռական նշանակություն են ունեցել ներկա աշխատության համար։

Ակնհայտ պարզվում է, հայկական և ուրիշ ժողովուրդների հիմնական զարդամոտիվները հենց այդ ժողովուրդների կողմից են ստեղծվել անկախ կնպատվ, որպես պատմականորեն անհրաժեշտ ու անխուսափելի հետևանք՝ նրանց կյանքի, պատքարի և մտածողության։ Միվնույն գեղեցիկ նախնադարյան համաչնական, անգաստակարգ հասարակության ծոցում, այդ մոտիվների հիմնական մասն աչքառնելան ևս չարունակում է ապրել ու հարատևել, ատոմնանարար զարգանալով ու հարատացնելով զարգարվեստի գանձարանը։ Նրանք միաժամանակ ենթարկվում են նաև էական փոփոխությունների։ Այդ փոփոխություններ պայմանավորված են եղել մի կողմից՝ հասարակական կյանքում և նրա շարժիչ ուժերի մեջ տեղի ունեցող համապատասխան փոփոխություններով ու իրա-

գործունյությունների, իսկ մյուս կողմից՝ բնական, տեխնիկական պատճառների։ Իրենց ժամկետ նախնական շրջանում նրանք իմաստավորել են հատկապես նախնագործական երկրագործների և անասնապահների աշխատանքային կենսափորձում ձեռք բերած դիտողությունները, աշխարհայացքը, ինչպես նաև նրանց արտադրա-բնօգտագործման հարաբերությունների հետ կապված կարևորագույն ուժերի ու երևույթների էությունը։ Նրանց այդ հատկանշի գծերն ու նշանակությունը հետագայում, հիմնականում, խախտվում է, երբ երևան են գալիս զանազան հարաբերությունները։ Մտեղծված նոր ուժերը կատարյալ պայքար մղելով հին հասարակարգի դեմ, զանազան պայքար են ծավալում նաև համապատասխան իդեոլոգիաների ոչընչացման ուղղությամբ։ Այդ պայքարի շնորհիվ հին զարգափարանքները կամ զարդամոտիվները, հիմնականում, ստանում են նոր իմաստ կամ առնվազն իմաստազրկվում են։ Հետագայում այդ հին ձևերը նոր վերարժեքումի են հանդիպում նաև հաջորդ ֆորմացիաների ժամանակ։ Դրանց են դասվում նաև բնական, տեխնիկական հանգամանքները, որոնց շնորհիվ, ի վերջո, հին ու նրբամեն հասկանալի ձևերը, իրենց ընչող մեծամասնությամբ, զանում են ըշմարտված զարդամոտիվներ, իսկ փոքր մասով վեր են ածվում զանազան սիմվոլների։ Ըստ որում, այս վերջիններն էլ որոշ ժամանակից հետո կորցնում են իրենց դերը, նորից նա մղվում դեպի ընդհանուր ըշմարտված ձևերը, իրենց տնտը միշտով ուրիշ մոտիվներին։ Դրանց քիվը զարդարվեստի հարուստ ժառանգության մեջ ի վերջո այնքան է փոքրանում, որ այլևս նրանք առանձին քանակ չեն կազմում։ Կորցնելով իրենց նախկին իմաստը, հին ձևերը, հիմնականում, ապրում, զարդանում են որպես արդեն ճաշակի ու գնդնկության հետ կապված զարդաձևեր, և որպես արդյունքից նրանք արժանանում են համընդհանուր ընդունելության։ Անցած միջնադարյան սպասիլ բնագատության ու անորոշ վերարժեքումները, որոշ ժամանակից հետո (սկսած X դարից) կյանքում մղվող պայքարի շնորհիվ, ամրապնդած, տեղի է տալիս, և վանքերն ու ամիատարանները, հոգևորականության տարազն ու ծիսական սպասները, քրիստոնեական սիմվոլներից ու նկարներից ավելի շատ մեծ տեղ են հատկացնում հին զարդամոտիվներին։ Մեր միջնադարյան մանրանկարիչները, քանդակագործները և զարդարվեստի այլ մշակները ոչ միայն ընդօրինակում և վերարտադրում են հին ձևերը, այլև մեծ վարպետությամբ մշակում ու զարգացնում են նրանց՝ հաշվենիով ավելի բարձր ասոիճանի և սանդղենով ավելի հարուստ կոմպոզիցիաներ։ Հետագայում այդ ըշմարտված ձևերի մասնավորական գործածություններն առավել մեծ չափերի է հասնում, որովհետև, ինչպես Մարքսն է ասում, «ընդմանված ձևը՝ ամենաընդհանուրն է և հասարակական զարգացման որոշ ասոիճանի վրա՝ կարող է գործածվել ամենքի կողմից...»[1]։

Այսպիսով, տեսնում ենք, որ զարդարվեստի մոտիվները ըստ ժամանակագրական խորության նույնպես միատարր ու նույնական չեն։ Նրանք տարբեր դարերում, տարբեր գաղափարների կողմից տարբեր իմաստ ու նշանակություն են ունեցել և օգտագործվել են տարբեր նպատակներով։

Այն, ինչ որ այսօրվ ասվեց ամփոփ կերպով, ներկա աշխատության մեջ ավելի ցայտուն է դրսևորված։ Ճիշտ է, շատ հաճախ կարիք չի եղել ամեն մոտիվի ու մոտիվախմբի կապակցությամբ նշել այդ հանգամանքը, քանզի միշտ, անհրաժեշտության դեպքում, այդ մասին խոսված է, ուստի և ամբողջ աշխատության միջով, որպես կարմիր թել, անցնում է նաև այդ հարցը։

Մուշի աշխատության մեջ բացատրված մոտիվների և նրանց հետ կապված հարցերի շնորհիվ մեծապես պլուտանում է նաև զարդարվեստի ներքին օրինաչափությունների հայտնաբերման և նրանց էությունն ըմբռնելու գործը։ Այդպիսիներից են, օրինակ, ընդհանրացումները, տեսակորման, զարդամոտիվների սիմետրիկ կոմպոզիցիան, ևն ու բովանդակության հարցերը և այլն, որոնց մասին նույնպես ընդարձակ ներկա աշխատության մեջ կհանդիպի նորանոր տեղեկություններ։

Ինչպես նշվեց վերևում, այս գործում բացատրվող զարդամոտիվների և հարակից հարցերի շնորհիվ, հետաքրքրություն է առիթվում հատկանշ նաև հայկական կուլտուրայի մյուս բնագավառների շատերի առնչ կանգնած բազմաթիվ կարևոր հարցերի էության։ Այսպես, օրինակ, զարդարվեստի մոտիվների մեծ մասը, որպես մեռացած, պահպանել են նախնագործական հասարակության հետ կապվող հավատացողությունների հետևանք սրամտաքներ, որոնց առաջ նույնի կարող են մատակարարել մեր նախնական շրջանի կյանքի ու մտածողության ուսումնասիրության գործին։ Այդ նյութերն անհամեմատ ավելի անաղարտ են, քան բանավոր կամ գրավոր խոսքի միջոցով հասած վկայություններները և ավելի հարուստ են, քան մյուս հանգամանքներով մեզ հասած փաստերը։ Այդ մոտիվ-

[1] Մարքս և Ենգելս. սրբոնսի մասին. Երևան, Պետհրատ, 1934, էջ 82։

ների բացատրության միջոցով է, որ հասկանալի են դառնում Հարությունյանի աշխատանքի կոմպոզիցիոն ծագման հետ կապված գլխավոր հարցերը, ինչպիսիք են մասունքները, գմբեթները և այլն։ Մենք հնարավորություններ են ստեղծվում առհասարակ հայկական ճարտարապետության, աշխարհայացքի, կենսափոխանցման գիտելիքների, բնափիլիսոփայության և այլ նմանների ավելի հանգամանալից ուսումնասիրության համար։ Հատուկ նշանակություն ունեն տարբեր գլուխներում ցրիվ եկած այն փաստերն ու նրանց բացատրությունները, որոնք վերաբերում են առհասարակ կրոնին և մասնավորապես քրիստոնեությանը։ Այս և բազմաթիվ այլ հարցեր, որոնց մասին խոսված է ներկա աշխատության մեջ, ցույց են տալիս, թե որքան վերաբերի նշանակություն ունի ավյալ ժողովրդի գարգարվեստի ուսումնասիրությունը՝ այդ ժողովրդի նյութական ու հոգևոր կուլտուրայի հետ կապված հարցերը և նրանց ներքին օրինաչափություններր ավելի լրիվ ըմբռնելու առումով։

Անդրադառնալով ազգերությունների և փոխազդեցությունների հարցին, պիտի ասել՝ ինչպես չի կարելի ավյալ ժողովրդի կուլտուրայի ու գարգարվեստի ծագումը կապել ուրիշ ժողովուրդների հետ, այնպես էլ չի կարելի ժխտել այն բարերար կամ պարտադիր փոխազդեցությունները, որ առկա են ավյալ ժողովրդի կուլտուրայում և արդյունք են ժողովուրդների բազմադարյա շփումների, բարեկամական հարաբերությունների, ինչպես նաև ներառումների ու գոնեմարտերի։ Այս հարցում հաճախ ցուցաբերված է ոչ ճիշտ մոտեցում և սխեմայի պրակտիկա, որը միտումնավորեն չի կարող լրիվ արդարացնել։ Այլ բան է հնարավորությունը, այլ բան՝ իրականությունը։ Այժմ, երբ պարզվում է գարգարվեստի հիմնական մոտիվների էությունը, և այն, որ յուրաքանչյուր ժողովուրդ պատմական անհրաժեշտությամբ սիտի ստեղծեր իր գարգարվեստը՝ նշված մոտիվներով և իրեն հատուկ ոճով ու առանձնահատկություններով, այլևս անհնարինություն է դառնում նրա կուլտուրան համարել փոխառական, և խիստ դժվար՝ ցույց տալ այն ոճալ ազդեցությունները, որ կապված են նրա հետ։ Այս վերջին, կարևոր հարցը պահանջում է բազմակողմանի ու հանգամանալից ուսումնասիրության ենթարկել ավյալ ժողովրդի գարգարվեստը, ժամանակ լինել նրա բոլոր բնագավառներին, այդ բնագավառների պատմությանն ու առանձնահատկություններին ամրողջապես, ապա նույնքան մանրակրկիտ կերպով ժամանակալ մյուս ժողովուրդների գարգարվեստներին, և պատմական համապատասխան ավյալների հիման վրա խոսել փոխազդեցությունների խնդրի մասին։ Բնականաբար, մենք այդ հարցով ոչ ոտեղ գրավվել չենք կարող։ Միայն, մի քանի դեպքերում, մատնանշել ենք, թե ինչպես որոշ մասնագետներ կապիտ սխալներ են թույլ տվել այդ ուղղությամբ։

Ինչպես նշվեց, հայկական գարգարվեստին նվիրված առանձին ուշագրավ գործեր չեն նկել, որոնց վրա հարկ լիներ մանրամասնորեն ժամանակ։ Միչ վերջերում է հայկական արվեստի տարբեր բնագավառներին նվիրված գրականությունը, ապա այն, ևրե առանձին է գարգարվեստի հետ, ապա, հիմնականում, նվիրված է նկել գարգամոտիվների հրատարակությանն ու նկարագրությանը, մի հարց, որը գուրս է մեր ծրագրից։ Եվ ևրե ներկա աշխատության մեջ միաժամանակ նաև այդպիսի գործ է կատարվում, ապա դա մեզ հետաքրքրող հարցերի քննության անխուսափելի և ցանկալի հետևանքն է։ Միչ վերջերում է առհասարակ հայկական և ուրիշ ժողովուրդների գարգամոտիվների ծագման և բովանդակության վերաբերյալ եղած գանազան նկատառություններին, կարծիքներին ու տեսակետներին, ապա դրանց էական մասին անդրադարձել ենք նյութի չարադրության ընթացքում։

Քյուրիմացություններից խուսափելու նպատակով, հարկ ենք համարում նշել, որ մենք այստեղ քննության առարկա չենք դարձրել գարգարվեստում հանդիպող բոլոր մոտիվները։ Մաց են քողված մասնավորապես բնական տեսարանների ստեղական վերարտադրությունները, հատուկ այսօր ունեցող նկարները, պատմական և գեղարվեստական առեղծագործություններից առնված տեսարաններին նվիրված պատկերները և այլն։

Բացի դրանից, մենք նպատակ չենք ունեցել խոսել առհասարակ գարգարվեստի բոլոր արժանիքների և առանձնահատկությունների, նրա կատարման տեխնիկայի, արվեստի և ուրիշ կարևոր հարցերի մասին։ Այդ խնդիրներին անդրադարձել ենք միայն այնքանով, որքանով որ նրանք առնչված են նկել մեր առջև գրված խնդիրների լուծման հետ։ Անցամ այնպիսի հարցեր, որոնք կապված են գարգարվեստի գարգացման ներքին օրինաչափություններին հետ և ավելի հասկանալի են դառնում ներկա աշխատության մեջ քննարկված նյութերի հետ ունեցած կապակցություններին շնորհիվ, ըստ ամենայնի ենք մեկ ընդհանուր գծերով։ Նույնը կարելի է ասել նաև շատ ուրիշ կարևոր հարցերի մասին, որոնց ամրողջացումը և խորացումն առանձին գործ է։

Ներկա աշխատության մեջ մենք հաճախ գործ ենք ունեցել նաև տարիչ ժողովուրդների գործերը, որի տակ չպիտի հասկանալ բոլոր ժողովուրդները, որովհետև մենք, բնականաբար, ի վիճակի չենք եղել ծանոթանալ բոլոր ժողովուրդների գարդարվեստների հետ։ Ուրիշ ժողովուրդներ ասելով, այստեղ նկատի են առնված այն ժողովուրդները, որոնց գարդարվեստների որոշ նմուշների հետ ծանոթացել ենք գանազան հրատարակությունների միջոցով և որոնցից համապատասխան վկայակոչումներ են կատարված ներկա աշխատության մեջ։

Ժողովրդական բանահյուսության, ժեսների և այլ նման ազգությունների մեջ, ինչպես հայտնի է, պահպանված են չինում վաղեմի ժամանակների հետ կապված բավականաչափ մեծացուցներ, որոնք մեծապես նպաստում են այդ վաղեմի ժամանակների կյանքի և մտածողության ուսումնասիրությանը։ Միաժամանակ հայտնի է նաև, որ այդ մեծացուցները հետագա ժամանակներում կամ չեն գիտակցվել՝ իրենց հին իմաստով, կամ ընկալվել են փոխաբերաբար, ստանալով նոր նշանակություն, իդեոլոգիական նոր բովանդակություն, որն ուղղակի կերպով այլևս չի առնչվել հին ժամանակների պատկերացումների հետ։ Ներկա աշխատության մեջ ազատագրծված համապատասխան փաստերը քննելիս, մենք միշտ նկատի ենք ունեցել այս պարզ ճշմարտությունը, որի մասին հաճախ կատարել ենք նշումներ՝ այդ փաստերն ազատագրծելիս, իսկ երբեմն էլ, կրկնությունից խուսափելու նպատակով, այդպիսի նշումներ չենք կատարել։ Նույնը կարելի է ասել նաև զարդարվեստի մոտիվների ճնշող մեծամասնության և հատկապես մանրանկարչության բնագավառից մեզ բերված նշումների մասին։ Ելնելով մեր աշխատանքի նպատակից ու բնույթից, ձգտել ենք հանգամանորեն ծանրանալ համապատասխան վկայությունների վրա, չմոռանալով նաև այն նոր իմաստն ու նշանակությունը, որ ստացել են նրանք հետագայում։

Հարկ ենք համարում նշել նաև այն դժվարությունների մի քանիսի մասին, որոնց հանդիպել ենք մեր այդ աշխատությունը շարադրելիս։ Այսպես, ամենից առաջ, նկատի ունենք համապատասխան փորձի ու գործի բացակայությունը և հակասական կարծիքների այն բազմաշերտի վիճակը, որը հնչությամբ կարող է մոլորեցնել հետազոտողներին։ Մեծ դժվարություն է հարուցել նաև համապատասխան փաստերի հրատարակությունների անբավարար պրպտյունը՝ թե՛ ըստ բնագավառների և թե՛ ըստ ժողովուրդների։ Նույնը կարելի է ասել նաև ժողովրդական հին բանահյուսության, դիցարանության, ժեսերի, կենսափորձային դիտողությունների, հավատալիքների, պատկերացումների, առնահանգիտների, պարերի, խաղերի, առօրյա-սովորական վարժությունների և այլ բնագավառների նյութերի հավաքման ու ուսումնասիրության աշխատանքների մասին։ Ինչպես կտեսնենք ընթերցողը, մենք հաճախ դրազվել ենք ոչ միայն նաև այդպիսի փաստերի հավաքմամբ (ձեռագիր ու տպագիր աղբյուրներից), այլև նրանց որոշ մասի մեկնաբանությամբ, և ապա միայն՝ նրանց օգտագործմամբ։

Տեխնիկական գործի դժվարությունների ենք հանդիպել համապատասխան նկարների ընտրության, ընդօրինակման և նրանց հրատարակման աշխատանքների ժամանակ։

Որոշ դժվարություններ ենք հանդիպել նաև մի շարք մանանգիտական առարկաների և գործվածքների բացակայության պատճառով. ասած, անհրաժեշտությունից ժղված, ստիպել ենք որոշ բացերի այնպիսի բարդումների, ինչպիսիք են. ջրաբարվեստ, ջրաբանդա-պաղպաղին, ջնազկա-պաղպաղին, ջնատիկա-սերմակին, ջնատիկա-էլեմենտային, ակնոցանա-բուսական, բրուտ-կնդանական, ծնող-գույզ, տասը ձեռքին, և այլն, որոնք այսօրվա միանգամայն արդարացնում են իրենց։

Ընթերցողը ներկա աշխատության մեջ, անշուշտ, կգտնի նաև բացեր, թերություններ, որոնց մասին կատարված դիտողությունները չնորհակալությամբ հաշվի կառնվեն մեր հետագա աշխատանքների ընթացքում։





ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՍԱՆԴԱ-ՊՏՂԱՁԻՆ ՕՐԴԱՆՆԵՐԸ ԶԱՐԴԱՐՎԵՍՏՈՒՄ

Այ ժողովրդի գարգարվեստի մեջ ևս, ինչպես ուրիշ ժողովուրդների գարդարվեստներում, բուսական մոտիվները գրավում են ամենազգեստավոր տեղը։ Դրա պատճառն այն հափշտակիչ գերն է, որ խաղացել է բուսական աշխարհը մարդկության կյանքում։

Մենդի, ապատարանի, հագուստի, գործիքի, չեքմուշյան, կամ-կարասիքի, բուժանյութի և այլ կարիքներ հոգալու այդ բնական ու անեպատ չոհմաքանը մինչև էլ գոնվել է մարդկանց ուշադրության կենտրոնում և նրանց գարգացման ճանապարհին գնալով է՛լ ավելի մեծ ուշադրության առարկա է գարձել։

Ահա ուշադրի առնությունից րոպի, մարդկանց կողմից աստիճանաբար գիտակցվել է նաև բուսական աշխարհի այն վիթխարի գերը, որ նա ունեցել է ընդհանրապես կենդանական աշխարհի գոյության և գարգացման գործում, որը նույնպես, իր անտեսական մեծ նշանակությամբ, գոնվել է մարդկության մտատեղության կենտրոնում։

Բուսական, ինչպես և կենդանական աշխարհի մարդկային կյանքում ունեցած գերի առավել խոր գիտակցումն առաջացել է հատկապես հրկրագործության և անասնապահության գարգացման հետևանքով, որն սկսվել է գեռևս նեոլիթի գարաշրջանում։ Այնուհետև ավելի են գարգանում արտադրության գործիքները, առաջացնելով խոշորագույն փոփոխություններ մարդկանց կյանքում։ «Հնում այդպես չէր լինում գեպի... այն չրջանը, —ասում է Ենգելսը,— որի ժամանակ բոլոր կուլտուրական ժողովուրդներն անց են կացնում իրենց հնրռասական գարաշրջանը, այն է՝ երկաթի սրի, բայց դրա հետ միասին նաև երկաթե խոփի և կացնի գարաշրջանը։ Մարդուն սկսեց ծառայել երկաթը՝ վերջինն ու ամենաակտիվը բոլոր տեսակի հնում նյութերից, որոնք պատմության մեջ ռեվոլյուցիոն դեր են կատարել, վեր-



Նկ. 1

չինը ընդհատ մինչև կարտոֆիլի հրևան գալը։ Որկաքը հնարավոր գործոց գաղտատուփությունը խոշոր ստրատուփյունների վրա, հնարավոր գործոց յայնատավալ անատատմատների մաքրումն ու վերատումը մշակելի տարատուփյունների. նա ստհատավորին ապահով և սուր գործից ազատ, որին չէր կարող գիմագրել ո՛չ մի քար, ո՛չ մի այլ մինչ այն ժամանք մնատ... Որկրագործուփյունը հացահատիկի, փոխհատվոր ընդհենների և պատղների հետ միատին այժմ տալիս էր նաև ձեթ ու գինի, որոնց պատրաստումը մարդին արդեն ստվորել էին[1]։

Նյութական բարիքների արտադրության զարգացումը երկրագործության բնագավառում՝ մարդկանց ոչ միայն առավել անրաժեշտ էր գարպում բուսական ապրարների հետ, այլև հարատացնում էր նրանց գիտելիքները ապրարի կենսական անհրաժեշտ երևույթների վերաբերյալ։ Նվ ահա, Հենց այդ ամենի հիման վրա է, որ գարերի ընթացքում մշակվում են զարգարվեստի բուսական մոտիվները։

Զարգարվեստի բուսական մոտիվների ամենահոգևոր արտահայտությունը կենաց ծառն է։ Մասնագետները բավականին շատ են խոսել այդ ծառի մասին, բայց, ինչպես կերևա ներկա աշխատության ընթացքից, մինչև որս կենաց ծառի մոտիվն էլ ըստ ամենայնի բացահայտված չի համ։

Կենաց ծառը զարգարվեստում երևան է գալիս ամենատարածված ձևերով, հատկանշական, սակայն, այդ ծառերի համար խիստ ոճավորված և ընդհանրացված մոտիվներն են, ուր պահպանված են չինում բույսի ամենագլխավոր օրգանները։ Դրանցից հատկապես ընդգիված են չինում հատիկի (սերմի), ծաղկի և վարսանդա-պարկային օրգանների գաղափարագործներները։ Նվ դա բնական է, որովհետև երկրագործ ժողովուրդների, ամենից առաջ, հետաքրքրել են կյանքի համար աչքատ վիճակի նշանակություն ունեցող բույսի այդ մասերը։

Ինչպես նշվեց, թե՛ հատիկի և թե՛ վարսանդա-պարկային օրգանների գաղափարագործների առկայությունը զարգարվեստում գեռևս բացահայտված չի համ։ Իսկ ծաղիկների էլ ամեն հարմար առիթով համարվել են արևի սիմվոլներ։ Պարզ է, որ այսպիսի պայմաններում հաճախ չէր կարող բույորովին նկատվել կենաց ծառի մոտիվը և ընդհանրապես մեկնաբանվել նրա բուն իմաստը։

Նախապես նշենք, որ զարգարվեստում կենաց ծառ արտահայտությունն անպայման չի նշանակում, թե գործ ունենք ծառի հետ, այլ՝ ընդհանրապես բույսի։

Որպեսզի չորով գաղափար կարմվի կենաց ծառի մասին, անհրաժեշտ է նախ հանգամանորեն ծանոթանալ նրա օրգաններից յուրաքանչյուրի հետ։ Ահա խիստ ոճավորված կենաց ծառի մի պատկեր՝ հայկական միջնադարյան մանրանկարչությունից, ընդգրկված Հայկական ՍՍՀ Պետական Մատենադարանի № 8309 ձեռագրի 195բ թերթից (նկ. 1)։

Առաջին, չմանրվել մանրամասնություններին մեջ, նշենք, որ այս ծառի հիմքում գտնվող խոշոր շրջագիծն իրենից ներկայացնում է հատիկը (սերմը), որից դուրս բույսի գույք հյուղերն ավարտվում են երկուական բացված ծաղիկով։ Այդ ծաղիկներից յուրաքանչյուրի ներսում կա սրածայր, ձվանման գեագրություն, դրանք արտահայտում են վարսանդի կամ ապագա պտուղի գաղափարը։

Ահա կենաց ծառերի խիստ ոճավորված այլ օրինակներ № 382 ձեռագրի 28բ, № 4196 ձեռագրի 183ա և № 378 ձեռագրի 30բ թերթերից, որ-

[1] Ա. Ի. Ն ի կ ո լ ս կ ի, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Նյուռն. 1948, էջ 214—218.



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

տեղ ծաղկի գաղափարն իր տեղը զիջել է իր միջուկին՝ վարսանդա-պտղային օրգաններին (Նկ. նկ. 2, 3, 4):

Սկսենք ծաղիկներից։

Երկրագործական, այգեգործական նստակյաց կյանքի փորձը մարդկանց նկատել կտար, որ բույսերի ծաղիկներն են այն օրգանները, որոնցից առաջանում է պտուղը-բերքը և ապագա սերմացուն։ Պարզ է, որ մարդիկ, այդ օրգանների մեջ տեսնելով իրենց գոյությունն ապահովող գլխավոր աղբյուրներից մեկը, պիտի նրանց արժանացնեին մեծ ուշադրության։ Այս գործին պիտի նպաստեին նաև ուրիշ հանգամանքներ, որոնք կապված էին զարգացող հասարակական կյանքի, նյութական բարիքների արտադրության և մարդկանց զարգացող գիտակցության հետ։ Որ այդ այդպես էլ եղել է, ապացուցվում է նաև զարդարվեստում այնքան մեծ տեղ գրաված ծաղկային մոտիվների միջոցով։

Ծաղիկներից անբաժան են եղել նաև բողբոջների և վարսանդա-պտղային օրգանների գաղափարները, որոնք նույնպես հսկայական տեղ են գրավում զարդարվեստում։

Չնայած այդ բոլորն էլ իրենց մեջ ամփոփել են նույն-պտղաբերության գաղափարը, բայց այստեղ մենք դրանք կդիտենք առանձին-առանձին։

Հայկական զարդարվեստի մեջ ծաղկային մոտիվները երևան են գալիս ոչ միայն հսկայական քանակով, այլև բազմազան ձևերով։ Նրանք էլ հանդիպում են, հիմնականում, որոշ ոճավորմամբ, որը և զրկում է նրանց բնական ծաղիկներին բնորոշ մանրամասնություններից և հաճախ էլ առիթ է տալիս շփոթությունների։ Ուստի, ծաղկային մոտիվները ուսումնասիրելիս, նախապես պիտի ծանոթանալ բնական տեսք ունեցող օրինակների հետ։

Այս առումով ուշագրավ նմուշ կարող է հանդիսանալ № 7729 ձեռագրի 331բ թերթի զարդը (Նկ. 5)։ Այդտեղ, չնայած մանրանկարի ոճավորման առկայությանը, պարզ կերպով նկատվում է նաև հայկական բնաշխարհը զարդարող մանուշակի մի փունջ, որն այնքան գողտրիկ կերպով գովերգված է մեր ժողովրդական հին երգերում։ Օրինակ, հնագույն պատկերացումների հետ կապված հարսանեկան մի երգում գարնանային կանաչ բուսականությունը համեմատվում է փունջ մանուշակի հետ, որտեղ այն ունի ծիսական նշանակություն և հատուկ իմաստ։



Նկ. 5

Ով ձուռ չքնկիս ետ պառկիլամ,
Գունե ժանուշակ, ճա՛յ, խոռմ առնիլամ,
Գունե ժանուշակ խոռմ առնիլամ,
Գնմ լսափնկե, ճա՛յ, առնիլամ[1]։

«Ջան գյուլում»-ի երգերում, ապրիճներին ու Հայաստանին զուգընթաց ժամանակ, երբեմն Համեմատում են փունջ ժանուշակի հետ՝ գործածել գաղափարական առումով.

Գանգ ժանիշկի ծաղկնոց,
Խոբխոբ կգամ ապրիճնոց։

կամ

Գինի-չինի ճարակներ,
Գանգ ժանուշակ ապրիճներ...[2]

Այս բոլոր դեպքերում էլ փունջ ժանուշակի մոտիվը Հանգիստ է գալիս կապված որոշ Հասկացություններին հետ։ Նույնը պիտի ասել նաև զարդատրվեստում Հանդիպող համապատասխան մոտիվների մասին։

№ 6257 ձեռագրի 207ա թերթում Հանդիպում ենք իսկատ ոճավորված մի կնճաց ծառի (նկ. 6), որի վրա գտնվող ծաղիկներըն նույնպես կրում են ոճավորման շատ թույլ նշաններ։ Դրանք նման են սովորական ծաղիկների, որոնց վերջում է ծաղկի ներքոը, բայց այդ չեն տրված առանձին ու վարսանդը։ Պետի նկատել տանքայն, որ գործատրվեստի համար-բնորոշը ոչ թե այս պարզ, այլ բարդ, ոճավորված ծաղիկներն են։ Այդպիսի ընդգծված կերպով ոճավորման ենթարկված տատանվող ծաղիկների մոտիվներից ուշագրավության արժանի է, օրինակ, № 4186 ձեռագրի 128բ թերթում գտնվող ծաղիկը (նկ. 7)։ Քանալած բնության մեջ նման ծաղիկ չի կարող Հանդիպել, բայց այս գործը միշտ էլ կդիտվի որպես ծաղիկ։ Բնորոշն այն է, որ այդ մոտիվը, գործատրվեստում Հետահայով կոնկրետ բնությունից, աշխատել է ընդհանրացնել տալ ծաղկի պատկերը, խուսել ընդհանրացումների նշանակով։

Ընդհանրացում-ծաղկի օրինակներից է նաև № 2229 ձեռագրի 228ա թերթում գտնվող գործը, որտեղ յուրաքանչյուր ծաղկաթերթիկ իր վրա կրում է նաև տերևի գաղափարանշանը, ընդգրկելով վե-

[1] Մատենադարանի գիտական հրատարակ ժողովածու, № 2, Երևան, 1960, էջ 202։

[2] Մ. Աբեղյան։ Ժողովրդական բանաստեղծներ, Երևան, 1941, էջ 208։



Lg. 15



Lg. 9



Lg. 18



Lg. 10

գնաացիան ավելի մեծ չրջան և ցույց տալով ավելի բարդ հատկացումյուն (նկ. 8)։ Այս տեսակետից առանձնապես ուշագրավ են այն ծաղկազարդերը, որոնք մեծամասնաբար ցույց են տալիս նաև բազկաձևերի, ճյուղերի, պատուհանների, հատիկների և քառակող այլ պրոֆիլների զարգացումները։ № 356 ձեռագրի 22բ թերթում նկարված է մի ծաղիկ, որից գնալի վերև և ներքև ձգված են մեկական բազկաձև նկար (նկ. 9)։ Դրանք ապրում ցույց են տալիս, որ այդ ծաղկի միջոցով մարդին ընդգրկել են նաև այդ ծաղկից սպասվող պտուղ, սերմի և ապա վերջինների տարբերյա հյմանն և պտղաբերության գաղափարները։ Այս միտքն ավելի ցայտուն արտահայտություն է գտել ուրիշ մանրվերների միջոցով։ Այսպես, օրինակ, № 2848 ձեռագրի 118ա թերթում պատկերված է սեմավորված մի ծաղիկ, որի չորս բանչյուր ծաղկաթերթիկն արտահայտում է նաև սերնդի թվատոը (նկ. 11)։ Ըստ որում, նրանք իրենց գտատվորվածությամբ ընդունել են այնպիսի գիհամիկ, չարժուն գիրք, որ կարծես պատվում են իրենց կենտրոնի չուրջը՝ հայտարկելով մեզը մյուսին։ Այսպիսով, այդ ծաղիկը դրված է վեցնասկան զարգացման ընթացքի մեջ. նա քարացած չէ։ կարված չէ ամեման և պտղաբերության գաղափարը։ Դա առավել ընդգծված կերպով երևում է հատկապես այն երկու մյուղերից, որոնք ձգվել են այդ ծաղիկից վերև ու ներքև և ավարտվում են վարսանգա-պտղակյան սիմվոլներով։ Նույնը կարելի է ասել նաև № 356 ձեռագրի 220ա, № 2848 ձեռագրի 69ա, և № 4626 ձեռագրի 13ա թերթերի ծաղկազարդերի մասին (նկ. նկ. 12, 13, 14)։

Այսպիսի գաղափարները արտահայտող նկարների առավել խիստ սեմավորված օրինակներից են № 379 ձեռագրի 134ա, № 356 ձեռագրի 37ա, № 6202 ձեռագրի 3ա թերթերի նկարները (նկ. նկ. 15, 16, 18)։



նկ. 9



նկ. 7



նկ. 8



նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14

Վերևում բերված համարյա բոլոր ծաղկազարդերի համար կա մի ուրիշ բնորոշ գիծ ևս. դա նրանց մեջ նաև հատիկի գաղափարի ընդգծումն է՝ նրանց կենտրոնում գտնվող շրջագծի շնորհիվ: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով, ենթադրում ենք, թե՝ յուրաքանչյուր նման նկար ցույց է տալիս ոչ թե առօրեական ծաղկի պատկեր՝ բնօրինակային կերպով, այլ գաղափարական մի ամբողջ շարք հասկացողություն, բուսական վեգետացիայի մի լրիվ շրջան՝ հատիկից մինչև պտուղ: Այս առումով յուրահատուկ արժեք է ներկայացնում № 6292 ձեռագրի 3ա թերթի զարդը (նկ. 16), որի մասին խոսք կլինի առաջ, հատիկներին նվիրված բաժնում:

Ծաղիկները զարդարվեստում երևան են գալիս նաև ուրիշ ձևերով. դրանցից են, օրինակ, շրջագծի մեջ առնված ծաղիկները: № 2948 ձեռագրի 35ա թերթում նկարված է մի ոճավորված բույս, որն ավարտվում է շրջագծի մեջ առնված երեք ծաղիկներով (նկ. 17): Նույն ձեռագրի 71ա թերթում նման ծաղիկները զետեղված են ոճավորված բույսի տերևների արանքներում՝ խաչաձև սիմետրիայով (նկ. 18):

Ահա ոճավորման այս եղանակի զարգացմամբ ստացվում են նման ծաղիկների այնպիսի խմբեր և իրենց մասերի բնական հարաբերությունները կորցրած զարդեր, որոնց մասնագետների կողմից չեն ընկալվում որպես զարդածաղիկներ:



Նկ. 17

նույն ձեռագրի 3ր քերթում (նկ. 19) պատկերված է մի այգպիսի ծաղիկ, որի հիմքում գտնվող մայրբույրը, իր ընդգծված սեռավորության և անհամեմատ փոքրության պատճառով, վեր է ածվել պատվանդանաձևման հարմարանքի։ Ըստ էության այստեղ գործ ունենք մի կենաց ծառի հետ, որը ծաղկել է։ Ճաշակը էլ այդ մոտիվը քույլ է տրվում ոչ թե լրիվ, այլ կես ծաղիկով, ինչպես, օրինակ, նույն ձեռագրի 165ա քերթում (նկ. 20) և հատկապես մի չարք խորանների ու կիսախորանների (օրինակ, № 6264 ձեռագրի 1բ, 2ա քերթերի խորանները)։ Երկգծերի մեջ առնված ծաղիկների ուշագրավ զարդերից է նաև № 3722 ձեռագրի 130բ քերթի նմուշը (նկ. 21)։ Այստեղ պատկերված է կրնկանկի շրջագծի մեջ վերջացած մի խոշոր ծաղիկ, որից դեպի վեր է ձգված բարակ ու երկար մի գիծ (հյուսի)՝ վարսանդա-պաղպտին զարդափարանշանը։ Պարզ է, որ, անկախ իր ընդունած արտակարգ սեռավորվածությունից, այս նկարը պրանորեն է գարձյալ ծաղկի և պտղաբերության խմաստը։ Այստեղ էլ ծաղիկը մինաժամանակ արտահայտչի է նաև հատիկի գաղափարը։ Նույնը կարելի է ասել նաև № 3722 ձեռագրի 124ա քերթից ընդօրինակված նկարի մասին, ուր հատիկն ու ծաղիկը քույլ են տրված քույլի հիմքում ընկած նույն խոշոր շրջագծի միջոցով (նկ. 22)։ Այդ շրջագիծը, իր ամբողջությամբ, նախ՝ քույլ է տալիս հատիկի պատկերը, ապա՝ իր վրա գծագրված ծաղկի միջոցով՝ այդ հատիկի ամման և ծաղկման պրոցեսը, իսկ նրանից վերև ձգված հյուսվածքը քույլ են տալիս նրա պտղաբերությունը։ Ինչ վերաբերում է այդ հյուսվածքի վրա գտնվող թռչունների, ապա գրանք թռչնային ժողովրդի իմաստն են արտահայտում (այդ մասին մանրամասնորեն կխոսվի ստորև)։

Համանման իմաստ ունեցող նկարներից է նաև № 4680 ձեռագրի 246բ քերթի օրինակը (նկ. 23)։

Այն վերոհիշյալ նմուշներում հատիկն ու ծաղիկը քույլ են տրված նույն շրջագծի միջոցով,



նկ. 18



նկ. 19



նկ. 20

Այստեղ, միանգամայն հին ձևերով և նրանց կոմբինացիաներով ստրատեղծում է խալը քրիստոնեության գործիք։ Մեզ, թերև ասկա էլ, բնչպես քրիստոնեության գաղտագրերի ստրատեղման գործում օգտագործված բոլոր մյուս գործոնները, հանդիպում ենք Հայաստանյայց հարաբերությունների, բարեկաման ու գունակից ձևերի, ասկա դրանք խոսում են ոչ թե մոզովրդի քրիստոնեական ոգով ստեղծագործելու մասին, այլ, բնչպես դիպուկ կերպով ընդգծել է Մ. Թոդիկին, մոզովրդական հին ստեղծագործությունների գեղաուսումնասիրության։

Անկասկած դրանից, ալիքաստվոր մոզովրդի մոտ, որպես նրա բարեկարգության գործարվեստի ամենաբովանդակալից և տարածված գործերից մեկը, չարունակում է գործածել նաև խալի մոտիվը։ Այն նրանց ժամանակ գտնվել է տալիս իր հին ստեր և հանգրվում կրոնական սիմվոլ խալին։ Դա ցույցուն կերպով երևում է, օրինակ, Ն. Շնորհալու (XII գ.) հետևյալ տողերից, ուր նա գրուցանում է, որպեսզի բոլոր խալերը չընդունվեն կրոնական խալի անվ։ «Ասենք թ մեկ խալի բարում կերպարանք են յոթնեակը և թ վերայ երկրի, նաև չանրան գեղագիտ և յոտասյանաձև



Նկ. 478



Նկ. 479

կութիւնս և ի նմանս նկարագրուց, որոց ո՛չ առաք հրաման երկիրպագանել, քանզի չի՛ք աստուածային զգուշութիւնք ի նոսա, և որ արարածոյ երկրպագութիւն մատուցանէ՝ ընդ անկծիւք գառապարանքին գիրք ասէրք, որպէս գիտասջասես [1]։

Ահա երկու խաչի և երկու պատկերացման մասավոր պատկերը։ Առանձնապես կարևոր է այն, որ քաղկեդոնը հակադրում է կրոնական խաչը մանածագործության և նկարչության մեջ հանդես եկող խաչերին, վերջիններս կապելով գառապաշտության հետ։ Պաշտել այդ խաչերը, ասում է նա, նշանակում է տարաբաժոյ երկրպագութիւն մատուցանել, առաչնայինը համարել արարածներին, քնութեանը և ոչ ստեծուս։ Այս վկայութեունը շատ կարևոր է նաև այն առումով, որ ցույց է տալիս ընդհանրապես խաչի մոտիվի հնութեունը՝ ժողովրդական ստեղծագործութեուններուն մեջ։

Ժողովրդական պատկերացումներն ու հին ժեռների հետ կապված խաչի մոտիվների բազմաթիվ նմուշներ տեսանք վերևում։ Նույնպիսիներից էր նաև Կարսս խաչի պրոյեկտը։ Նույնը կարելի է ասել նաև Հարտանեխան ժեռներում պահպանված խաչերի մասին. գրանցից հիշենք ոչխարը, որը փեռասյի գլխին դրված մի նոտ կամ խնձոր է՝ վրան փոքրիկ խաչ։ Այս առումով ուշագրավ է նաև ոսկրյա խաչասեռ վարիանտը։ Վերևում տեսանք, որ Հարտանեքներում էլ, ինչպես զարդարվեստում, հակայական տեղ ունեն հարս ու փեռասյին զարդարող ու նրանց հետ որպես սիմվոլ երևան եկող ծաղիկները, պատուհանը, կենաց ծառերը, ոչնչամեռ զարդերը և այլն։ Ահա այս ցնցամեռ զարդն ու կենաց ծառը, որ Հաճախ կոչվում են նաև ոսկրյա, փոխարինվում են խաչասեռ զարդով։ Ապա-

[1] Ն. Ադոնց, Քուրդ հեդհանոսներ, էջ 272, 1903, էջ 272։

բանի Հարությունի արարողությունների նկարագրություններից մեկում կարդում ենք. «Որդը պատրաստում է գույնզգույն մետաքսի թելերից, խայտան, ծաղիկների փնջեր եւ կախված։ Մյուս թաղումների նշանների մեկն է Համարդում...»[1]։ Դա ևս Հին խաչի մոտիվն է։ Նույնը կարելի է ասել նաև ալի փեսացուների վերաբերյալ, որոնց ասվում է.

Մեր բակիսն էր ալ,
Գլուխ խոյ ու ծոլ,
Գանկն էր կուժիր,
Ոտն էր կանաչ։

Ժողովրդական Հարսի պատկերացումների համապատասխան մետաքսի թոչուն որինակի ենք Հանդիպում նաև մեր Հարսում՝ իբրև «Ոտ եւ ձեռ խայթ կամ Գատրաղի»-ի, որին վերագրվում է կախարդական մեծ զորություն։ Այդ խայտ նրանում է գալիս Գավթի մարմնի զանազան մասերի վրա (քնքին, մեկզին, կրծքին և այլն) և Հանում է նրա գործողություններին.

Գավիթ նրան գնաց ասի.
Դրեր կոխց, կր մանիս ետս'
Ոչ բնիսով ետ Գատրաղին,
Ետավ' ետ Գատրաղին բնին ակի.
Ետաց «Ոտին չէ ոչի գործ»,
Ոտին ետ Գատրաղին էր' ի կր գործես...
Ես ա' Նրկամ գոնե Գրմչկին Գայրամ...[2]։

Ահա այս խայտերի և նրանց Հետ կապված մեռելի ու պատկերացումների մեջ էր, որ պայքարում էր քրիստոնեությունը։

Այդ պայքարը ոտի գործերի ու սիմվոլների ինքնաբացատրվող պայքար չի եղել. դրա ոտի խարխափած է եղել իր ժամանակի գաղափարական տեղյուր պայքարը։ Այս առումով ուշագրավ է, օրինակ, N 262 ձեռագրի 1ր քիչրի Հովհաննեսի խայտագաղափարը, որը չնայած ամբողջովին ներծծված է ժողովրդական առնդհատկությունների տառնձնահատկություններով, բայց տրված, որպես քրիստոնեական սիմվոլ, ուղղված է աշխատավորության և նրա բարոյա գաղափարների դեմ։ Այդ խայտի կոդքերին խաչեր տառերով մակագրված է Հեռակայ քառատող.

Գալա' գնիզ խոյզ գնիզ,
Ու գնատար է Էս տեղիզ.

[1] Գ. Հովհաննիսյան. Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից. Քիլիքիա. 1902. էջ 34։

[2] Նույն տեղում. էջ 27։

[3] Գատրաղ Գավիթ. Ն. Գրմեան. 1936. էջ 102։



Նկ. 8

Այդ տեսակ Հեռատեսիկ
Բոլ պատռոտի լեզուն և լեզվին։

Նույնպիսի խաչերի և մահապրոցեսների Հանդիպում ենք նաև այլ ձեռագրերում։ Դրանց մեջ առաջնակարգն պատկանում է այն գաղափարական պայքարը, որ մղում էր մշակութային ներկայացուցիչների և Հասարակ քանգրահիկների դեմ։

Պարզ է, որ ժողովուրդն ու նրա Հարատև գաղափարները պիտի բուռն ատելությամբ լցվեին այն միության դեպի իրենց Հշողներդ, այլև դեպի նրանց ձեռքին արյունոտ դեմքի փոխված այդ խաչերը։ Այս առումով կարևոր տողեր է թողել Աբրահամեան Հասուիվերցին։ Նա նկարագրում է, թե ինչպես քահանաները խորտակում են թագավորական խաչերը և փշուր-փշուր անում այն։ Ահա նրա տողերը.

«Ի Հասուածս յերկրին Պախրայ, որ այժմ կոչի Պայլախատուռ, տասելին Հարցն տան ինչ էր, զոր թագաւորիւր կոչին, ուր գտանուածոյին նշանն յաղագաւորեան վայելչութեամբ կանգնեալ էին, որ և գանուն գիշին ի նոյն փոխեալ Քաղ ան-

[1] Ձեռագիր N 390. քիչրի էր. նույն գաղտնիք Հանված էրված է նաև N 2849 ձեռագրի 192ր քիչրում նկարված համապատասխան տողերի հետ։



Նկ. 481

ուանեն մինչև քայսար։ Յատուկ մնդի գենտակոսէին ի գիշերին հնձալ՝ որ նոր կիւրակէն կոչի, համարեա մշակքն սատանայի (այսինքն՝ քոնդրակներըը), մրճով հարնալ զքառ սատուածքնիսկ նշանին՝ մանրնալ յերկիր ընկեցին...»[1]։ Ապա նկարագրվում է խնչպես հոգևոր հայրերը պատժում են քոնդրակեցիներին, նրանց բնակավայրը հրկիզելով և նրանց հակառակորդին ազվխատրոշմ խարանելով։

Այսպիսին է խոշի պատմության մոտավոր պատկերը։

Վերլուծելով մեր խոսքը քրիստոնեական սիմվոլների քառակերպության մասին, հարկ ենք համարում վերհիշել, որ այդ մոտիվների նախնական տարատեսակները, չորս էլեմենտներից բացի, կապված են եղել նաև հասարակական ուժերի հետ, որոնք մասին կխոսվի ստորև։

Վերևում արդեն խոսվեց խոշի ծագման մասին եղած կարծիքների վերաբերյալ։ Այժմ, ամփոփ կերպով, հիշենք մի քանի այնպիսի կարծիքներ էլ, որոնք կապվում են ընդհանրապես այս գլխում քննված զարդամոտիվների հետ։

Գրականության մեջ հաճախ հանդիպում են հայտարարություններ, թե որոնց իբր քի արդեն բացահայտված են զարդարվեստի համարյա բոլոր մոտիվները։ Նկրկա աշխատանքից հետո է՛լ ավելի որոշակիորեն է երևում, քե որքան ոչ հիշյա կամ միահղմանի են այդ բացատրություններըը։ Վերջնենք որպես օրինակ ռուս ականավոր հետազոտող Վ. Ա. Գորոդցովի հետևյալ տողերը, որոնք վերաբերում են ռուսական զարդարվեստի գլխավոր մոտիվներին.

«Նրանց հնդեվրոպական մենամասնությունը կենտրոնում ունի ավատիկա (խոշի ֆիգուրան), իսկ շուրջը՝ գենեզիսով նրա հետ կապված մանդրի, ոսմերի, քառակուսու, եվաձևի (ռոմբաս) ֆիգուրներ, որոնց կրոնա-սիմվոլիկ նշանակությունը ներկա ժամանակում հաստատորեն որոշված է։ Անդրադառնալով կոնկրետ մոտիվների, նա հայտարարում է, որ ռուսական ժողովրդական զարդերի ուսումնասիրության պարզել է, քե զարդարվեստում հրկրի կամ հողի սիմվոլը — թուլսերն են ու կենդանիները. ջրինը՝ ձուկը, երկրնքինը՝ թռչունը և օձը և այլն[1]։ Այս և նման մնկնարաբանություններն իրենց կրոնա-միստիկական նկատմամբ ոչ միայն միակողմանի, այլև անընդունելի են։

Հնատիպերական դրագատություններում կան բուժական գիանական նշանակություններ մոտ, օրինակ, Հ. Ծուրբը գրում է. «Հաճախ ոսմերը չորսապատված

[1] Վասիլի Բրիուսովիչ, Հավելվածներ Հաստվելության։ Քիշնև, 1913, էջ 120։

[1] Այս քե ինչ է գրում Նա։

„Примитивная символика, обыкновенно, не сложна и не мудрена; русская народная символика почти вся расшифрована: в ней стихия воздуха представляется птицами, а воздушное (небесное) пространство-змеями; стихия земли символизируется растениями, травоядными и плотоядными животными, а стихия воды-рыбами.

В. А. Городцов. Дако-сарматские религиозные элементы в русском народном творчестве. Труды Гос. ист. музея, вып. I, раздел археологический. Москва, 1926, стр. 18.

են կոնցենտրիկ շրջագիծերով, որոնք պիտի արտացոլեն ուռկանի ցանցահանգույցները, որոնց մեջ քիթոտում է ձուկը [1]։

Մի այլ տեղ նա, մատնանշելով մի գրպանազարդի վրա գտնվող ատրյը՝ բուսական զույգ համեմվածներով, այն դիտում է որպես ամավորված մարդ, կենտրոնում՝ նրա տալքը [2]։ Հ. Շուրցի այս մեկնաբանությունների արտասովորությունն ինքնին ևնթասնչի է։

Կարելի է շատ օրինակներ բերել և միաժամանակ վերհիշել արդեն մեջ բերված մեկնաբանությունները, ցույց տալու, որ, իրոք, մինչև որս մասնագետներին չի հաջողվել գտնել զարդարվեստի հիմնական մոտիվների ու նրանց հարաբարդությունների հիշյա բացատրությունը։

* * *

Ամփոփենք։

Զարդարվեստի հիմնական մոտիվների մեջ վիթխարի տեղ են գրավում նաև բնության լորս ուժերի՝ հողի, ջրի, օդի և արևի գաղափարապատկերները։ Նրանց ճանաչելի են գտնում հատկապես հատիկա-սերմային մոտիվների բացատրության հնռնանքով և երևան են գալիս ինչպես այդ օրգանների, այնպես էլ կենաց ծառերի մյուս օրգանների վրա՝ որպես նրանց աճն ու զարգացումը պայմանավորող և նրանց բազդրությունը հանդիսացող ուժերի նշաններ։

Լորս էլեմենտների գաղափարների դրսևորման արդյունք են հանդիսացել զարդարվեստի մի շարք մոտիվներ, որոնցից են շրջագծի վրա եղած լորս բլթակները, քառակուսիները, քառանկյունիները, լորս մատ բաժանված գնգերն ու շրջագծերը, սոմբերը, լորս օգակները, քառաթև զարդերը և այլն։

Քրիստոնեության սիմվոլ խաչը իրենից ներկայացնում է ոչ թե քրիստոսի խաչափայտի, աստվածներին զոհաբերված կենդանիների լորս սրբատերի, աշխարհի լորս կողմերի ու հոդմերի, նրանց հետ կապված լորս ոգիների, մարդկանց ու կենդանիների մարմնի որոշ մասերի, կրակ առանալու գործիքի, արևի և ուրիշ նման բազմաթիվ հատկացությունների, այլ՝ լորս էլեմենտների, բնության տարերքի գաղափարանշանների մեջ։ Այն գոյություն է ունեցել քրիստոնեությունից հազարամյակներ առաջ և օգտագործվել է վիրջինիս կողմից որպես սիմվոլ։ Այդ սիմվոլը, ենթարկվելով քրիստոնեական իդեալիստական ընդհանուր մեկնաբանություններին, ի վերջո, դարձել է լարիք ու աշխատավոր մասսաներին բթացնելու և կեղեքելու միջոց։

Այդպիսի ծագում ունեն նաև քրիստոնեության լորս ավետարանները, լորս ավետարանիչները, քառակերպ աթոռը, դրախտի լորս սյունները, նրա լորս գետերը և այլն։

Այժմ բացատրություն են ստանում նաև զարդարվեստի այսպես կոչված երկրաչափական ձևերը։ Օրինակ, ձվաձև, շրջան, էլիպսաձև զարդերը ծագել են առավելապես բողբոջների, կոկոնների, վարսանգա-պտղային օրգանների, կոների և այլնի գաղափարանշաններից։ Շրջագծերը, գնգերը, ծագել են հատիկների, ինչպես նաև ծաղիկների ու որոշ պտուղների, ձվերի և ուրիշ նման հավելացուցիչների գաղափարանշաններից։ Քառաթև, քառակողմ, քառաբաժան ձևերը ծագել են լորս էլեմենտների գաղափարանշաններից։ Նույնը կարելի է ասել նաև այդ ձևերից յուրաքանչյուրի կրկնակի հարաբերությունների և նրանց բազմապիսի միասնությունների հնռնանքով ստացված ձևերի մասին։

Լորս էլեմենտների բացահայտումը զարդարվեստում՝ խոսում է մարդկանց նախնական մանրիալիստական և ստեղծային դիալեկտիկական մտածողության մասին, որոնք հանդիսացել են նրանց հատկապես անասնապահական և երկրագործական կյանքի գործնոր փորձի արդյունքը։

Այդ դիտողների հիմքում ընկած են ոչ թե կրոնա-միստիկական պատկերացումները, ֆանտաստիկ ու երևակայական գաղափարները, այլ նյութական ռեալ աշխարհը, մարդ բնությունը՝ իր հավերժական ուժերով։ Այդ բոլորը միաժամանակ ցույց են տալիս, որ փիլիսոփայական ուսմունքը լորս էլեմենտների մասին՝ ծնվել է ոչ թե անտիկ փիլիսոփաների կաբինետներում, այլ բնության ծոցում, աշխատանքային պրոցեսներում, աշխատավոր ամրուհիների մոտ, որը և հետագայում մշակվել է փիլիսոփաների կողմից՝ առանալով գիտական բնույթ։ Զարդարվեստում այնքան առատորեն երևան եկող համապատասխան մոտիվները վկայում են, որ այդպիսի դիտողներ են ունեցել ոչ թե որոշ, առանձնահատուկ ժողովուրդներ, այլ՝ համարյա բոլոր հին ժողովուրդները [3]։ Զարդարվեստի

[1] Г. Шурц. История первобытной культуры. С.-Петербург, 1896, стр. 509.

[2] Там же, стр. 51.

[3] Համարյա ևնք ասում, որովհետև մենք չենք կարողացել հասնելամենայ բոլոր ժողովուրդների զարդարվեստների վերջ, բայց մեզի ասել ունենալով շատ ժողովուրդների զարդարվեստների ուշադրությունը, ամենայն հավանությամբ ևնք լորս էլեմենտների վերջ կապված մոտիվների առկայությունը։

իր այս բացահայտվող մոտիվներով հնարավորություն է տալիս քննհանրապես նկատելու մարդկային մասնաժողովրդական այն առողջ կողմը, որը, դեռ չատ հին ժամանակներից, սարսրապին կերպով առաջնային է համարել նյութական աշխարհը, ռնալ իրականությունը՝ բոլոր սնասկի ոգիների ու աստվածությունների նկատմամբ։ Դա նախնական մասնրիալիստական մոտաժողովույան է, որ իր անչըքնչի կնիքն է դրել համարյա բոլոր ժողովուրդների զարգացվնասներում՝ հատկապես չորս էլեմենտների հետ կապվող մոտիվների չնորհիվ։ Իր ժամանակի փիլիսոփայության առողջ քնը և մարդկության առաջավոր մոտաժողները հենվել են ժողովրդական այդ գիտելիքների վրա և դրանով իսկ ուժեղ պայքար կազմակերպել կրոնական, իդեալիստական, ռնակրիտ ուժերի դեմ։ Հիշենք հնդկական լարվածություններին, որոնք, հենվելով չորս էլեմենտների մասին զարգացած ուսմունքի վրա, ժխատում էին հանգիրժալ աշխարհի և դրա հետ կապված կրոնական հայացքների ամբողջ ուսմունքը։ Հիշենք նաև հունական անտիկ մատերիալիստ փիլիսոփաներին, որոնց ուսմունքի հիմքում նույնպես ընկած էր չորս էլեմենտների փիլիսոփայությունը։ Համապատասխան ուշադրություն պիտի նզած լիներ նաև ուրարտացիների մոտ՝ առնվազն մնկ դարով ավելի վաղ, քան Հունաստանում։

Քանի որ չորս էլեմենտների մասին ստեղծված փիլիսոփայությունն իր ժամանակի առաջավոր մարդկանց ձեռքին հզոր զենք է եղել՝ գաղափարական պայքարում, ուստի պարզ է, որ չորս էլեմենտներին նվիրված զարդանկարը, այդ պայմաններում, պիտի հանդես գայլն զարժյալ որպես պայքարի միջոցներ։ Այս մոմենտը զարդարվեստագիտության մեջ վերին աստիճանի կարևոր նշանակություն ունի, որի վրա ևս մինչև հիմա ուշադրություն դարձված չի եղել։ Այժմ, երբ պարզվում է քննվող զարդանկարի ծագումն ու իմաստը, այլևս չի կարելի երանց կարել գաղափարական այն ֆատացի մարտերից, որոնց բախվում էին հին աշխարհում և միջնադարում մատերիալիզմն ու իդեալիզմը։





ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԾՆՈՂ-ԶՈՒՅԳԻ, ԶԱՎԱԿԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԶԱՐԴԱՐՎԵՍՏՈՒՄ

Նախորդ գլուխներում արված բացատրությունների շնորհիվ այժմ ավելի քան հասկանալի է դառնում զարդարվեստի ամենաբարդ մոտիվը՝ կենաց ծառը։ Նա բարդ է ու բազմաբովանդակ և՛ այն դեպքերում, երբ երևան է գալիս ամենահարուստ հարաբերություններով, և՛ այն դեպքերում, երբ նշվում է մի պարզ գծագրությամբ։

Կենաց ծառի զարդանախշի մեջ էականը ոչ թե նրա արտահայտման ձևն է, որը միշտ էլ կարող է տարբեր լինել, այլ նրա գաղափարական բովանդակությունը, մտահղացության այն ամբողջ կոմպլեքսը, որ մարդիկ դարերի ընթացքում խտացրել են նրա մեջ։ Այդ բարդ բովանդակությունը ներկա աշխատության էջերում բացահայտվելու է աստիճանաբար։

Մեզ համար արդեն հասկանալի է կենաց ծառի պարզ կերպարանքը. այն ծլում է հատիկից՝ չորս էլեմենտների շնորհիվ, տալիս է արմատ, ցողուն, ճյուղ, ծաղիկ և ի վերջո պտղաբերում է։

Մինչև հիմա մեր նպատակն էր մեկ առ մեկ ցույց տալ այդ երևույթների հետ կապված հասկացողությունները և նրանց դրսևորումները՝ զարդարվեստում։ Ըստ որում մենք այդ հարցերը դիտավորյալ կերպով քննեցինք առանձին-առանձին, որի ընթացքում, սակայն, հաճախ հանդիպեցինք նաև ամբողջական կենաց ծառերի պատկերների։

Ահա այդպիսի ամբողջական կենաց ծառի մի գողտրիկ նմուշ № 7729 ձեռագրի 78բ թերթից, որի բոլոր մանրամասնությունները մեզ համար արդեն հասկանալի են (նկ. 482)։ Նրա հիմքում երկճյուղ արմատն է, նրանից վեր՝ հատիկը, հատիկից էլ վեր՝ այդ ծառի տաղավարը՝ ճյուղերով, տերևներով, վարսանգա-պտղային և այլ օրգաններով։

Մինչև օրս անհասկանալի մնացած այս և նման զարդերը, որոնցով ողողված է հայկական



Նկ. 482

մեր մանրանկարչությունը, այժմ կանգնում են մեր առաջ որպես գաղափարական ընդհանրացումներ՝ այդ բուսա-կենդանական աշխարհի ամման ու պաղպաղման երևույթների և նրանց որինաչափությունների մասին։

Ինչպես տվյալ նկարում կենդանական ոչ մի մոտիվ չկա, բայց և այնպես մենք այլևս չենք կարող այսպիսի զարդերը դիտել միանգամայն որոշ, այլ կենաց ծառերի պատկերներ են։ Եվ բուսական աշխարհի հետ կապված հասկացողությունների առումով այս հարցը միանգամայն հասկանալի է, ապա, կենդանական աշխարհի իմաստով, այն դեռևս կարծես է որոշ պարզաբանումների։ Ուստի կանգ առնենք այդ խնդրի վրա, մանավանդ, որ թե՛ հայկական և թե՛ ուրիշ ժողովուրդների զարդարվեստներում այդ մոտիվները նույնպես ամենից շատ տարածումն ունեցող մոտիվներից են։

Կենդանական մոտիվներն էլ կապված են բարդ հասկացողությունների հետ, որոնց էությունը նոր նեղկա աշխատությունն մեզ բացահայտվելու է աստիճանաբար։

Սկսենք գործյալ համեմատաբար պարզ և հեշտ ըմբռնելի մոտիվներից։

Նոսրը վերաբերում է ծնող-զույգի, զավակի և նրանցից անբաժան հանդես եկող կենաց ծառերի մոտիվներին, որոնց նմուշներից նույնպես արդեն բավականաչափ տեսել ենք վերևում և խոստացել նրանց վրա հանգամանորեն կանգ առնել տարին։

Մարդիկ, հնագույն ժամանակներից սկսած, ըմբռնել են, որ որևէ նվիրյալ տեղի է ունենում տարբեր սեռերի պատկանող զույգերի միջոցով։ Նրանք այդ երևույթի հետ, անշուշտ, զգալիորեն ծանոթացել էին դեռևս որսորդության շրջանում։ Հատկապես երկրագործության ու անասնապահության զարգացման ընթացքում այդ մասին մարդկանց ունեցած գիտելիքները բազմազողմանիորեն ստուգվում, զարգանում են։ Նրանք տեսնում են, որ կյանքի հավերժության հիմքում ընկած է այդ մեծ էշմարտությունը և դա, որպես որենք, գոյություն ունի ոչ միայն մարդկանց ու կենդանիների, այլև բույսերի մոտ։ Նրանք այդ անալոգիայով են բացատրում նաև բնության բոլոր ուժերի և երևույթների գոյությունը, նրանց երևան գալը, անհետանալը, փոփոխվելը։ Համարյա բոլոր ժողովուրդների մոտ կարելի է գտնել դիցաբանական զույգեր, որոնց համառայն երկինքն ու երկիրն ամուսիններ են, նրանցից են սերվում դիցաբանական հերոսները, առասպելաէրները և այլն։ Հիշենք մեր հին առասպելներից Վահագնի ծնունդը՝ ամպրկեր երկին, երկներ երկիրս-ը, ուր նկարագրվում է այդ հերոսի ծնունդը՝ երկնքի և երկրի երկունքից, ծովի և կենաց ծառի (նռնենի) միջոցով։ Հիշենք հայրանեկան երգերը, որտեղ հայրանեկան կենաց ծառն էլ համարվում է երկնքի և երկրի զավակ։

Երկինք—գեռեն գետառենով
Եղ ծառ ծալիկ էր.
Ծառ ծալիկով.
Ժող կալիկով
Կանուչ-կարմիր[1]։

Մ՛րն էր այսպիսի պատկերացումների հյուսքանան հիմքը, նրա ոչ մարդկային կյանքը, նրա առօրյան, ինչպես նաև երկրագործական-անաս-

---

1 Գ. Հ ա յ կ ա ն ։ Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից։ Թիֆլիս, 1882, էջ 88։



Նկ. 483



Նկ. 485



Նկ. 484

նապահական աշխատանքների բովում ձեռք բերված և բյուրավոր անգամ ստուգված կենսափորձը։ Բնականաբար, այն բոլոր մոտիվները, որ մենք քննելու ենք վերևում և կապված էին պաշտպանության, ամեման ու վարգացման գաղափարների հետ, առանց ձեռք-զույգի և զավակի գաղափարների չէին կարող պատկերացվել։ Կենաց ծառը, ուր էլ նա լինի, ինչպես էլ լինի, նրա ամեն է ու կա, նշանակում է, նա պտղավոր պտրտական է որևէ ձեռք-զույգի. նա հենց այդ զույգից է սերված, նրա հաջորդական վարգացումն է և այդ զույգի կենաց ծառը։ Այդ զույգերի չեորհիվ է, որ նորմալ պայմաններ են գալում նաև լրիս էլեմենտները՝ ամեման իմաստով։

Զարգարվեստում այս տեսակներից էլ հարուստ և բազմապիսի վկայություններ կան։

Բերենք օրինակներ։

№ 2722 ձեռագրի 247բ թերթում պահպանված նկարի հիմքում պատկերված է քուլնային մի ձեռք-զույգ. նրանց պոչերը միացած են միմյանց, որով ցույց է տրված բեղմնավորման հրճուքը (նկ. 483)։ Նրանց գլուխների վրա հենված է խիտ տնավորված կենաց ծառը, որն ավարտվում է քուլնաձագի նկարով։ Ծառի ստորջրի փոխարեն պատկերված են տերևներ, վարսանգա-պտուղներ, ճառագիթակ զարդեր, ոսկրի և սկաներյան պատկերը կազմող հյուսվածքներ։

Նման և առավել բարդ հյուսվածքներ ունեցող նկար կա նաև № 1522 ձեռագրի 260ա թերթում (նկ. 484)։ Ուշագրավ է, որ այստեղ ցույց տրված գալարուն հյուսվածքը բազկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրը կապված է ձեռք-զույգերից մեկի հետ և գալարվելով գնում է գնալ վեր՝ միանալու, մյուսին, որպեսզի միասին ստեղծեն կենաց ծառի պատկերը և պայմանավորեն քուլնաձագի (պտուղ) առաջացումը։

Այսպիսի մոտիվներում կենաց ծառի գագաթին երբեմն նկար քուլնաձագը, սովորաբար, փոխարինվում է բուսական պտղաբերության սիմվոլներով, ինչպես, օրինակ, № 982 ձեռագրի 85բ



Նկ. 486



Նկ. 487



Նկ. 489



Նկ. 488



Նկ. 490



Նկ. 491

թերթում պատկերված նկարում (Նկ. 485)։ Այստեղ էլ կենաց ծառը ստեղծված է ծնող-զույգի պոչերի միահյուսումից, ուր տալիս են՝ ռոմբը, եռանկյունին, քառաթև զարդը և այլն։

Այս տեսակետից ավելի քան արժեքավոր է № 4156 ձեռագրի 81ա թերթում գտնվող նկարը (Նկ. 486)։ Թռչնակերպ ծնող-զույգի պոչերն այստեղ միահյուսվելով, կազմում են կրկնակի եռանկյունիներ, որոնց վրա բազմել է հավերժա-ձվային խոշոր գաղափարանշանը, իսկ վերջինիս վրա՝ կենաց ծառի պտղաբեր սաղարթը։

Համապատասխան նկարի ենք հանդիպում նաև № 3722 ձեռագրի 245բ թերթի վրա, որտեղ թռչնային ծնող-զույգի պոչերը կազմել են ուղղանկյուն հյուսվածքազարդի մի բարդ կոմբինացիա՝ բուսական երեք ճյուղերի պատկերով (Նկ. 487)։

Այս մոտիվներն էլ միևնույն օգտագործվել են զարդագրերի տառերի կազմման գործում։ Այդպիսիններից է, օրինակ, ռուսական զարդարվեստի հետևյալ նմուշը՝ ընդօրինակված XII—XIII դարերի մի ձեռագրից (Նկ. 488) [1]։ Նման բազմաթիվ նկարներ

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. LX, рис. 37.



Ill. 483



Նկ. 493



Նկ. 495



Նկ. 494

կան նաև հայկական և ուրիշ ժողովուրդների գրչագրերում և ընդհանրապես զարդարվեստի մեջ։

Եթե նախորդ նկարներում թռչնային ծնող-զույգերը միացած էին միայն պոչերով, ապա այստեղ ցույց են տրված նաև ուրիշ հյուսվածքներ, որոնք կազմվում են այդ թռչունների պարանոցների հետ։

Համապատասխան նկարների ավելի ցայտուն օրինակներ կան նաև մեր մանրանկարչության մեջ։ Այդպիսիններից են, օրինակ, № 985 ձեռագրի 3ա, № 3722 ձեռագրի 176բ, № 1522 ձեռագրի 140ա թերթերի նկարները (Նկ. Նկ. 489, 490, 491)։

Նման նկարների մի գողտրիկ նմուշի հանդիպում ենք № 7729 ձեռագրի 318ա թերթում, որը և մեզ ենք բերում գունավոր նկարահանությամբ (Նկ. 492)։

Թռչնային ծնող-զույգերը կարող են նկարվել նաև միայն պարանոցների միահյուսմամբ, գըրկորելով գործյալ նույն գաղափարը։ Այդպիսիներից է № 3722 ձեռագրի 187ա թերթի նկարը (Նկ. 493)։

Լինում են դեպքեր, երբ ծնող-զույգերի այս միասնությունները ցույց են տրվում առանց կենաց ծառերի, սակայն գործյալ նրանք ներկայացվում են որպես առանձնացող զույգեր։ Այդպիսի դեպքերում պտղաբերության գաղափարը պատկերվում է ուրիշ նշաններով, կամ բոլորովին էլ ցույց չի տրվում, բայց ինքնին ընկալվում է։ Առաջին խմբի զարդաձևերից է, օրինակ, № 356 ձեռագրի 240ա թերթում գտնվող նկարը, որ թռչնակերպ ծնող-զույգի պարանոցները միացած են մի օղակով, որն իր գաղափարական իմաստով նույնական է հավիտենա-ձևային սիմվոլի հետ (Նկ. 494)։ Բացի դրանից, այդ թռչունների թևերը պատկերված են ոճավորված բույսերի նմանությամբ։ № 4166 ձեռագրի 242բ թերթի նկարում ծնող-զույգի պարանոցների օղակային հյուսվածքն ավելի բարդ է, քան նախորդում, սակայն այստեղ զուտ բուսական ձևերը բացակայում են (Նկ. 495)։

Թռչնային ծնող-զույգերը հաճախ պատկերվում են նաև կտուցների միացումով, որոնցից էլ աճում է կենաց ծառը։ Այդպիսիններից է, օրինակ, սիրիական մանրանկարչության հետևյալ նմուշը (Նկ. 496) [1]։



Նկ. 496

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, табл. XIV, рис. 8.



Նկ. 497



Նկ. 498

Ինչպես գաղափարական բովանդակությամբ, այնպես էլ իր գեղարվեստական կատարելությամբ վերին աստիճանի մեծարժեք նկարի ենք



Նկ. 499

հանդիպում № 4827 ձեռագրի 100բ թերթում (նկ. 497)։ Այդ նկարում արուն կտուցը բաց և կարծես համբուրելու դիրքով կանգնած է իր զուգակցի մոտ, որը գլուխը խոնարհել է և ձախ ոտքը վերև բարձրացնելով, կպցրել կրծքին։ Այստեղ ցույց է տրված նաև կենաց ծառի և պտղաբերության գաղափարը՝ ինչպես նրանց պոչերի, այնպես էլ գլուխների միջև։

Թռչնային ծնող-զույգերին կենաց ծառի և պտղաբերության գաղափարի հետ շղթայող հյուսվածքները հաճախ էլ օրգանապես նրանց հետ կապված չեն երևում, չնայած, բուն էության, այդպես լինել չի կարող։ Դա զարդարվեստի զրանորման եղանակներից մեկն է, որի համար այլ պատասխան չպիտի որոնել։ Այդպիսիներից հիշենք № 6519 ձեռագրի 376ա թերթի նկարը (նկ. 498), ուր կենաց ծառի զույգ ճյուղերը լոկ պարզ գալարներով են շղթայել ծնող-զույգին։ Նույն սկըզբունքով թռչնային ծնող-զույգերը պատկերվում են նաև զարդատառերի բարդ հյուսվածքների հետ, որտեղ յուրաքանչյուր տառ արտահայտում է կենաց ծառի գաղափարը։ Այդպիսիներից են, օրինակ, № 2589 ձեռագրի 158ա և № 7729 ձեռագրի 492ա թերթերի զարդատառերը (նկ. նկ. 499, 500)։ Դրանցից առաջինը «Թ» տառն է, որի հիմքում պատկերված է ծնող-զույգը, վե-



Նկ. 500

րին ծայրին՝ թռչնածաղը, իսկ երկրորդ տառը՝ մի գեղեցիկ «Ա» է, որի թևերի վրա նստած են ծնող-զույգի ներկայացուցիչները։ Երկու դեպքում էլ



Նկ. 501

առկա են բարդ ու բովանդակալից հյուսվածքներ և այլ զարդեր, որոնց մեջ մեզ համար առայժմ անհասկանալի ոչինչ չկա։

Այս մոտիվների արդյունքն են այն մասսայական պատկերները, որոնց նրման են գալիս զույգ քուչունները՝ ծառերի հետ՝ առանց միահյուսվելու նրանց։ Ահա մի այդպիսի նկար № 7729 ձեռագրի 471բ թերթից (նկ. 501) և մի ուրիշը՝ ֆոլտական մանրանկարչությունից (նկ. 502) [1]։



Նկ. 502

Այդպիսի մոտիվների մեջ էլ քիչ չեն գեպքերը, երբ ծառը, ոճավորվելով, կորցնում է իր ծառային տեսքը, գտնելով լոկ մի զարդ, ինչպես դա տեսնում ենք № 985 ձեռագրի 127բ թերթում (նկ. 503)։

Մասնավորապես քուչային ծնող-զույգերը զարդարվեստի սկզբում և հետագա մոտիվներից են։ Այդ պատճառով էլ նրանց կարելի է հանդիպել զարդարվեստի բոլոր բնագավառներում՝ խիստ լայն տարածմամբ։

Հայկական լեռնաշխարհում գտնված նյութական կուլտուրայի ամենահետաքրքիր հուշարձաններից մեկը սկզբնապես կոչվող քարանիրքերը նույնպես կրում են այդպիսի մոտիվներ (նկ. 504) [1]։ Նման հուշարձաններ կան նաև Վրաստանում, Մոնղոլիայում և ուրիշ երկրներում։

Քուչային ծնող-զույգերի հարուստ պատկերների ենք հանդիպում կիրամիկայի, գորգագործության, քանդակագործության, փայտի մշակման և այլ նման բնագավառներում։ Միջնադար-



Նկ. 503



Նկ. 504

յան կտորների վրա, որոնց բազմապիսի նմուշները պահպանված են մեր ձեռագրերի կազմերի հետ, որպես կազմի պարագա, նույնպես առատորեն նրման են գալիս այդ մոտիվները։ Այդպիսի կտորների մի նմուշ գտնվում է, օրինակ, № 6263 ձեռագրում (նկ. 505)։

Ծնող-զույգի ընդհանրացնող մոտիվը՝ կենաց ծառի և պտղաբերության գաղափարի վրա՝ հսկայական տեղ է գրավում նաև ուրիշ ժողովուրդների զարդարվեստում։ Ով գոհանգամանքի հասկանալի է, որովհետև, ինչպես Գոնֆուցիոսն է ասում, «Երկու սկզբունքների միավորությունն է ամեն ինչի գոյության պատճառը» [2]։

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. CXXXII, рис. 9.

[1] Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вышапы, 1931, стр. 93.

[2] Կոնֆուցիոս, հավաքեց Ֆ. Բաբուլ, Թիֆլիս, 1897, էջ 60.



Ia. 605

Նման մոտիվներից հատուկ ուշադրության արժանի է, օրինակ, ռուսական հին պղնձադրամներից մեկի հետևյալ զարդը (նկ. 506) [1]։ Այստեղ միմյանցից բավականին հեռու տարածության վրա, կանգնած են թռչնակերպ ծառ-զույգի ներկայացուցիչները։ Նրանց պոչերի միացումից առաջացած է մեզ ծանոթ հավերժական շղթաներից մեկի ձևը՝ կենտրոնում ունենալով գաղափարական հյուսվածքների մի համադրություն։ Գաղափարության սիմվոլները՝ անտառային կենդաներն են, որով ընդգծված է ռուսական բնաշխարհի կոլորիտը։

Թռչնային ծառ-զույգերի ուշագրավ մոտիվների ենք հանդիպում նաև ռուսական հին ասեղնագործերի, զարդասեղանների, գոտիների վրա, ինչպես նաև հասարակ մանրանկարչության ու ժանյակագործության մեջ։



Նկ. 507



Նկ. 506



Նկ. 508



Նկ. 509

Համապատասխան բազմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև Գ. Ս. Մասլովայի «Народный орнамент верхневолжских карел» աշխատությունից։ Դրանցից այստեղ ընդօրինակենք միայն երկու նմուշ (նկ. նկ. 507, 508) [2], որոնցից առավել բարդ բովանդակություն է դրսևորում առաջինը։

Թռչնային ծառ-զույգը՝ վարսանդա-պտղային զարդաձևերի և բուսական ոճավորված այլ օրգանների հետ՝ երևան է գալիս նաև Մերձբալթյան երկրների ժողովուրդների զարդարվեստներում։

Հիշենք Լատվիայում գտնված մի դաշույնի պատյան, որը համարվում է XI դարի արտադրություն և իր վերին մասում կրում է թռչնակերպ ծառ-զույգի պատկերը (նկ. 509) [1]։

Առանձնապես ուշագրավ է նաև այս հուշարձանի ներքևի մասում գտնվող զարդը, որտեղ կրկնված է վարսանդա-պտղային սիմվոլը՝ բազմաթիվ ժողովուրդների զարդարվեստներում կանոնիկ տեսք ընդունած ձևով։

Ծառ-զույգի գաղափարը, դարձյալ նույն նշանակությամբ և նույն ձևերով, պատկերված է լինում նաև ուրիշ կենդանիների միջոցով։

Ահա մի նկար № 3722 ձեռագրի 303բ թերթից, որտեղ հատիկա-ձևային գաղափարանշանի վրա կանգնած է մի զույգ նապաստակ. նրանց ականջների վրա էլ բարձրացել է կենաց ծառը (նկ. 510)։ Նման նկար կա նաև № 4186 ձեռագրի 81բ թերթում, որը միանգամայն նույնական է նույն ձեռագրի 81ա թերթից վերևում մեջ բերված նկարի

[1] История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 430, рис. 213.

[2] Г. С. Маслова, Народный орнамент верхневолжских карел, Москва, 1951, таб. V, рис. 1, таб. XLVI, рис. 2.

[1] Советская археология, XVII, Москва, 1953, стр. 126.



Նկ. 510



Նկ. 511



Նկ. 512



Նկ. 514



Նկ. 513

(նկ. 486) հետ, միայն թե այստեղ թռչունները փոխարինված են զույգ գազաններով՝ հավանաբար առյուծներով (նկ. 511):

Զույգ առյուծների պոչերի միացումից առաջացած կենաց ծառի ուշագրավ օրինակ կա նաև № 4567 ձեռագրի 96ա թերթում, որն իրենից ներկայացնում է զարդագիր «Մ» տառը (նկ. 512):

Կենդանիներն էլ հաճախ պատկերվում են միմյանց հետ փարված իրենց պարանոցներով՝ ինչպես թռչունները։ Այդպիսիներից հիշենք № 7451 ձեռագրի 22բ և 59բ թերթերի նկարները (նկ. նկ. 513, 514):

Համապատասխան փաստեր շատ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ։

Ահա մի նմուշ կարելական զարդարվեստից, ուր կենաց ծառի կողքերին կանգնած են երկու ձի, որոնք և արտահայտում են ծառ-զույգի իմաստը (նկ. 515) [1]:

Պարանոցներով իրար փաթաթված գազանների ծառ-զույգի մի ուշագրավ պատկեր է հրատարակված «История культуры Древней Руси» *ժողովածուի II հատորում։ Այդ գազանների գլխա-*

[1] Г. С. Маслова, Народный орнамент верхневолжских карел, Москва, 1951, таб. XLIV, рис. 2. *Ավելորդ չենք համարում բնագրից մեջբերել հետևյալ տողերը.* „Образ коня в вышивках полотенец выражен очень ярко... Карельская вышивальщица изображает коня с кустом вместо хвоста, ветками вместо ушей и деревом на крупе вместо всадника (рис. 1, табл. XLIV). Два таких коня составляют композицию с деревом в центре. В трехчастной компановке кони представлены и в узоре на рис. 2, табл. XLIV, но образы их даны по-другому, иными стилистическими приемами" (там же, стр. 78).

րան մարմինների միջև առեղծված է որոշակի մի փոքրիկ տարածություն, որի ներսում նկարված է վարսանգա-պտղային սիմվոլը [1]։

Գազանների համանման զույգերի պատկերներ հայտնի են նաև ուրարտական, սկյութական

կերված մի զարդապատկերի ենք հանդիպում Սեբաստիայի հին գրակալներից մեկի վրա (Նկ. 517)։ Այդ գրակալի ներքևում կա մի շրջանակավոր ծաղիկ, որի պտղաբերության սիմվոլ լինելն արդեն հայտնի է։ Նույնը կարելի է ասել նաև այդ գրա-



Նկ. 515

և այլ հին ժողովուրդների հուշարձաններից։ Ահա որոշ նմուշներ այդպիսի պատկերներից, որոնք, սակայն, դիտված են որպես կռվի մոտիվներ (Նկ. 516) [2]։ Ինչպես ցույց են տալիս բերված նյութերը, այստեղ գործ ունենք ոչ թե կռվի, այլ սիրո տեսարանների հետ։ Այս առումով հետաքրքրական

կալի վերին մասում գտնվող շրջանակի և նրա ներսում արված զարդերի մասին։ Ահա այդ զարդերի միջև ընկած տարածության վրա էլ փորագրված է գազանների ծնող-զույգը, որն ամբողջացնում է ընդհանուր տեսարանի պտղաբերական բովանդակությունը։



Նկ. 516

են նաև հետևյալ օրինակները՝ հայկական զարդարվեստից։ Ճիշտ այս գազանների դիրքով պատ-

[1] История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 412.

[2] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 323, рис. 108. „Изображения борьбы зверей на костяной пластинке из Кармир-Блура, на бронзовой бляхе из скифского могильника на Тамани и на золотой обкладке ножен акинака из Литого кургана".

Գազանների նման ծնող-զույգի ենք հանդիպում նաև Աղթամարի տաճարի բարձրաքանդակներում [1]։

Այս նկարները ցույց են տալիս ոչ միայն վերհիշյալ օրինակների ծնող-զույգային բովանդա-

[1] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950, таб. 60.



Նկ. 517

կությունը, այլև այն, ինչպես այդ հին մոտիվնե-
րը պահպանվել են նաև միջնադարում։

Իսկ թե ինչպես են պատկերվել կովի մոտիվները՝ զարդարվեստում կամ ինչ հասարակական բովանդակություն ունեն գազանների ու այլ կենդանիների ծնող-զույգերի պատկերները, այդ մասին խոսք կլինի հետագա գլուխներում։

Ծնող-զույգի մոտիվի բացահայտումն ու ուսումնասիրությունը միանգամայն հավանական է դարձնում նաև զարդարվեստում մեծ տարածում գտած այն զարդաձևերի ծագումն ու գաղափարական բովանդակությունը, որոնց համարվում են ֆանտաստիկ կամ երևակայական կենդանիների պատկերներ։ Դրանք երևան են գալիս մերթ մի գլխով և երկու մարմնով, մերթ երկու գլխով և մի մարմնով, մերթ էլ նման այլ ձևերով։ Բնության մեջ այդպիսի նորմալ էակների բացակայությունն ինքնին մատնում է նման պատկերների առնչությունը հին պատկերացումների հետ, որոնց նյութական հիմքը զարգացող իրական աշխարհն ու բնությունն է և ոչ թե վերացական ու կրոնական հասկացողությունները։

Այս մոտիվները, հիմնականում, պիտի բաժանել երկու խմբի, այն է՝ պարզ և բարդ։ Երկրորդ խմբի մասին կխոսենք հետո։ Այստեղ քննենք միայն առաջին խմբի մեջ մտնող մոտիվները։ Դրանք մի մարմին և երկու գլուխ ունեցող կենդանապատկերներն են։

Մեր որոնումները ցույց են տալիս, որ այդ պատկերները առնչված են ծնող-զույգերի գաղափարապատկերներից և արտահայտել են նույն իմաստը։ Այս կարծիքը համոզեցուցիչ դարձնելու համար, բերենք նախ՝ մեկի պարզ օրինակներ, որտեղ որոշակիորեն երևում են ծնող-զույգերի ներկայացուցիչները՝ առանձին-առանձին։

№ 378 ձեռագրի 286բ թերթում նկարված է մի թռչնակերպ ծնող-զույգ՝ կանգնած շրջագծի (հատիկա-ձվային գաղափարանշան) վրա գտնվող ծառանկյան վրա. նրանց պարանոցները սերտորեն միացած են միմյանց հետ և իրենց գլուխներից վերև պահում են կենաց ծառի, պտղաբերության սիմվոլը (Նկ. 518)։ Այսպիսի տեսարան՝ ավելի քան ոճավորված ու ճոխ կենաց ծառով՝ տեսնենք նաև № 985 ձեռագրի 85բ թերթից բերված նկարում (Նկ. 485)։ Այստեղ էլ ծնող-զույգերը ոչ թե ֆիզիկապես են միացած միմյանց հետ, այլ օրգանապես. նրանցից բուսած կենաց ծառը և նրանցից ներքև գտնվող գաղափարանշանները, այդ զույգերի հետ, կազմում են մի օրգանական ամբողջություն. նրանց միմյանցից զատ պատկերացնել չի կարելի։ Ահա այս գիտակցության համաձայն էլ առնչվել են նախ՝ մարմինների առանձին մասերով, ապա և համարյա ամբողջությամբ միացած ծնող-զույգերի պատկերները։

Վերցնենք մի ուրիշ օրինակ № 356 ձեռագրի 147բ թերթից, որտեղ ծնող-զույգը միացած է պոչերով, իսկ կենաց ծառը սերված է նրանց պարա-



Նկ. 518



Նկ. 520

Նոցենները միահյուսող ձյուղերի զալարահյուսվածքից (Նկ. 519)։ Համարյա այդպիսին էր նաև № 3722 ձեռագրի 347ր թերթից մեր բերված նկարը (Նկ. 483)։ Այս վերջինում պոչերի սահմանն



Նկ. 519



Նկ. 521

անգամ վերացված է։ Նույնը կարելի է ասել նաև սերբական հետևյալ մանրանկարի մասին (Նկ. 520)[1]։

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. XVI, рис. 24.

№ 4217 ձեռագրի 220ր թերթում ծնող-զույգի միասնությունը ցույց է տրված ավելի քան ռեալիստական ձևով (Նկ. 521)։ Նրանց մարմինները միացած են միմյանց հետ մեջքերով՝ վերևից մինչև ներքև. ընդ որում կենաց ծառի և պտղաբերության գաղափարն էլ ցույց է տրված թե՛ նրանց պոչերի և թե՛ նրանց թևերի ու գլուխների վրա՝ որպես շարունակություն։ Դա մի բուսա-կենդանական մոտիվ է, որտեղ զույգ թռչունները և կենաց ծառն օրգանական ամբողջություն են կազմում։ Այդ նույն մոտիվի առավել ամփոփված տարբերակներից հիշենք № 278 ձեռագրի 266ր թերթի նկարը, որտեղ ծնող-զույգը, հասկը, պտղաբերության սիմվոլը՝ գարնան օրգանապես ձուլված են մի ամբողջության մեջ (Նկ. 522)։

№ 155 ձեռագրի 128ա թերթում տրցին նման ծնող-զույգի մարմինների միջև եղած սահմանագիծը վերացված է, որի շնորհիվ ստացվել է մի մարմին և մի պոչ ունեցող տերատոլոգիական թռչունի պատկեր՝ երկու գլխով և չորս ոտքով (Նկ. 523)։

Այստեղից էլ հետևությամբ առաջացել են այնպիսի թռչնաձևեր, որոնք կրել են երկու ոտք, երկու թև, մի պոչ և երկու գլուխ։ Այդպիսին է, օրինակ, № 1525 ձեռագրի 5ր թերթի գեղեցիկ նկարը (Նկ. 524)։



Նկ. 522



Նկ. 523

Դա մի կենաց ծառ է, որի հիմքում ընկած է ոճավորված ծնող-զույգը։ Այդ գաղափարը կրկնված է նաև ծառի վերին մասում զետեղված զույգ թռչունների միջոցով, որոնց մեջտեղից վեր է ձգվում կենաց ծառի գագաթը՝ պտղաբերության վարսանդա-պտղայրին գաղափարանշանով։



Ill. 525



Ill. 524



Ill. 526



Ill. 523



Ill. 527

Նույնպիսի նրնույթների արդյունք են նաև № 4514 ձեռագրի 50բ, № 198 ձեռագրի 258ա թերթերի նկարները (նկ. նկ. 525, 526):

Համապատասխան մոտիվներ, քանվածատար, կան, և անպայման պիտի լինեին, նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Ահա մի օրինակ վրացական միջնադարյան մանրանկարչությունից, որտեղ տերիկլոնի արձիվը (տնավորված ծնող-զույգը) նրնած է գալիս խորանի վերին մասի կենտրոնում (նկ. 527) [1]:

Այդպիսի քանդակազարդները և նման այլ նկարները մեծ քիվ են կազմում նաև ռուսական զարդարվեստի մեջ: Հիշենք որպես օրինակ հնատյալ զարդը (նկ. 528) [2]:

Այս ամբողջ զարդանախշ է վարսանգա-պաղպաջին սիմվոլի մեջ, որն այսօրվա ունի մի իմաստ և արտահայտում է ծնող-զույգ — մու — ծնող-զույգ — մու գաղափարը: Այստեղ էլ հանդիսական տեղ է տրված հյուսվածքներին, որոնք զարդյալ ոչ թե անիմաստ ու խնդրուն զարդեր են, այլ ծնող-զույգի, տեմաի և պաղպաջության հետ կապված հասկացողությունների գրանցման նշանակներ: Իր ամբողջ խնդրումների մեջ այստեղ էլ պարզորոշ կերպով նկատելի է սիմետրիկ կոմպոզիցիայի հիմքում ընկած ծնող-զույգի և նրա զարգացման գաղափարը:

Նույն հանդագարձով առնչվել են նաև ուրիշ կենդանիների և մարդկանց ծնող-զույգերի գաղափարը ցույց տվող համապատասխան մոտիվներ: Այդպիսիներից է, օրինակ, 12 կենդանակերպերի մեջ հայտնի տերիվորյակներին մոտիվը, որը, սովորաբար, պատկերվում է մարդկային մի մարմնով և երկու գլխով: Բերենք մի այդպիսի նմուշ № 8973 ձեռագրի 32բ թերթի մեծ նկարից, որտեղ շրջանակի մեջ ցույց են տրված 12 կենդանակերպերը, այդ թվում և տերիվորյակները (նկ. 529) [3]: Ար, իրոք, այստեղ էլ գործ ունենք նույն երևույթի հետ, բերենք մի ապացույց: № 1727 ձեռագրի 83բ թերթում նույն տերիվորյակներին մոտիվը նկարված է ոչ թե տնավորված և միմյանց միացած, այլ ամեն պարզ ու ամեն բնական տեսքով (նկ. 530): Ինչպես տեսնում ենք, այստեղ միմյանց դեմ կանգնած են մի տղամարդ



Նկ. 529 Նկ. 530

և մի կին, որոնք, որպես ծնող-զույգի ներկայացուցիչներ, բոլոր են կենաց ծառի մի ուղղորդ մոտիվ, վերջինս էլ իր հերթին է գրանորում ծնող-զույգի տիեզերական և պաղպաջության իմաստը:

Այդ մոտիվների նախնական էության մոռացման պատճառով է, որ այսօր նրանք համարվում են ֆանտաստիկ և երևակայական կենդանիների պատկերներ: Այս օրինակների վերլուծությամբ զարձյալ ցույց է տրվում, որ զարդարվեստում վերացական քվացող պատկերների հիմքում էլ ընկած է իրական աշխարհը՝ իր կոնկրետ ուժերով և երևույթներով:

Այս վերջին մոտիվների բացատրման գործում կան մի շարք ան-հիմն կարծիքներ, որոնցից է, օրինակ, Հ. Շուրցի վերևում մատնանշված ֆիզիոլոգների ինքնաստատ կրկնման կարծիքը [1]: Այս կարծիքն արդյունք է բուժուհական տեսարանների արվեստ արվեստի համար զարդարված վերատկար տեսության, որն տեսնում է արվեստի ներքին բովանդակությունը:

[1] В. В. Стасов, Сказания и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. CXLIX, рис. 25.

[2] Н. Ф. Лорепц, Орнамент всех времен и стилей, С. Петербург, 1898, таб. 33, фиг. 2.

[3] Երեսուրեակում ևս մյուս տերիվորյակներն մոտիվը

[1] Г. Шурц, История первобытной культуры, С. Петербург, 1896, стр. 557. Ահա իր խոսքերը. „Основной закон повторений и чередований, увеличивающий число фигур, оказывает также влияние и на характер их посредством установления искусственной симметрии. Весьма известный и поучительный пример в этом смысле представляет двуглавый орел австрийского и русского государственных гербов, он гораздо симметричнее скомпанован, чем наш одноглавый немецкий орел. Чаще всего таким экспериментам подвергается фигура человека".



Նկ. 531

Այդ մոտիվի բացատրված լինելու հետևանք պիտի համարել նաև հետևյալ օրինակը։

Սովետական պատմաբան Բազիլևիչը, խոսելով ռուսական պետականության մասին՝ XIV դարի II կեսում, կանգ է առնում նաև Իվան III-ի կողմից ռուսական պետական խորհրդանիշ համարված երկգլխանի արծվի պատմության վրա։ Նա իրավացիորեն կասկածի տակ է առնում որոշ պատմաբանների կողմից ընդունված այն կարծիքը, թե այդ խորհրդանիշը ռուսական իրականության մեջ ներմուծվել է Բյուզանդիայից՝ Իվան III-ի կողմից[1]։ Այսօր, երբ հասկանալի է դառնում նման թռչունների էությունը, այլևս ոչ մի հիմք չի մնում Բազիլևիչի կողմից կասկածի տակ առնված կարծիքի համար, մանավանդ, որ, ինչպես նշում է նա, ռուսական հնագույն աղբյուրներում էլ կան նման մոտիվներ։

Այս մոտիվների մասին մեր առկիչքը վերջացնելուց առաջ, նշենք ևս մի հանգամանք։ Չի կարելի այդ երևույթի բացատրությունը որոնել միայն ռեմակերման պրոցեսի մեջ. այդտեղ մեծ դեր են կատարել նաև ուրիշ կարևոր հանգամանքներ, որոնց հետ կծանոթանանք ստորև, երբ կքննենք է՛լ ավելի բարդ տեսք ունեցող և զարդային ֆանտաստիկ համարված կենդանապատկերները։ Այդտեղ արդեն յուրաքանչյուր ծնող-զույգի ներկայացուցիչը բաղկացած է երկու և երբեմն էլ երեք, չորս կենդանիների առանձին մասերի համադրումներից։

Ծնող-զույգի և նրանից անբաժան՝ մանկան կամ պտուղի գաղափարը ցույց է տրվում նաև լոկ բուսական մոտիվների միջոցով։ Երկու կենդանու փոխարեն նկարվում են երկու բույսեր, որոնք միահյուսվում և առնչվում են միմյանց հետ կենդանիների նման։ Այս երևույթի հիմքում ընկած է երկու հասկացողություն։ Նախ այն, որ մարդիկ, ծանոթ չլինելով բույսերի կամ ծաղիկների երկսեռությանը, բնականաբար, պտուղի գոյացումը համարել են այդ սեռերի միավորության հետևանք։ Նրանց այդ մասին ունեցած գիտելիքների կապակցությամբ արդեն բավականաչափ խոսված է ներկա աշխատության սկզբում։ Բացի դրանից, ինչպես գիտենք, զարգացվելուն ընդհանրացում մոտիվը արտահայտում է ոչ թե ավելի մոտիվում պատկերված բույսի կամ կենդանու, այլ ամբողջ բուսական և կենդանական աշխարհների մասին մարդկանց ունեցած գիտելիքներն ու պատկերացումները։ Մինչ այս սկզբունքով է, որ պտուղի գաղափարը զույգ կենդանիների մոտ էլ արտահայտվում է բուսական ձևերով։ Ահա այս երկու հիմնական պատճառով է, որ ծնող-զույգերի մոտիվներում զույգ կենդանիների նման երևան են գալիս նաև զույգ բույսերը։

Կա մի ուրիշ պատճառ էլ, որը, սակայն, վերջնական նշանակություն չունի. դա անխնախեկական բնույթ ունի։ Ժամանակի ընթացքում կենաց ծառի հետ երևան եկող կենդանիները կա՛մ զույգ են մնում, կա՛մ ձևափոխվելով, վեր են ածվում ո՛չ կենդանակերպ հավելվածների, ըմբաների և ի վերջո զումարվում բուսական ձևերին։

№ 378 ձեռագրի 178բ թերթում նկարված է մի խոշոր հատիկապատկեր, որի վրա, զույգ կենդանիների փոխարեն, ցույց են տրված բուսական երկու ճյուղեր, որոնք պարզ հյուսամոր պայմանավորել են վարսանգա-պտղային սիմվոլի գոյացումը (նկ. 531)։

№ 4186 ձեռագրի 30ա թերթում պատկերված է զարմյալ հատիկա-սերմային մի խոշոր գաղափարանշան, որից ներքև, երկու կենդանիների փոխարեն, միահյուսվել են բուսական երկու օրգաններ՝ պտղաբերության սիմվոլներով, իսկ վերև ձգված է ծառի սաղարթը՝ զարմյալ պտղաբերության սիմվոլներով (նկ. 532)։ Այս նկարը համեմատելի է նույն ձեռագրի 31ա և 31բ թերթերից վերևում մեջ բերված նկարների հետ (նկ. նկ. 486, 511), որտեղ հատիկապատկերի տակ մի դեպքում պատկերված են զույգ թռչուններ, իսկ մյուս դեպքում՝ գազաններ (հավանաբար առյուծներ)։

[1] К. В. Базилевич, Внешняя политика русского централизованного государства, Москва, 1952, стр. 87—88.



Նկ. 533



Նկ. 534



Նկ. 535



Նկ. 537



Նկ. 538



Նկ. 536

№ 3756 ձեռագրի 77-րդ էջում կա նման մի ուրիշ նկար, որտեղ կենաց ծառի հիմքում ընկած հատիկապատկերը փոքր է և օղակի նման միմյանց է կապում բուսական երկու ճյուղեր, որոնց ստորին ծայրերը կազմում են արմատի, իսկ վերին մասերը՝ պտղաբեր սաղարթի գաղափարը (Նկ. 533)։ *Համապատասխան և ավելի բարդ նկար կա նաև նույն ձեռագրի 47-րդ էջում, որտեղ ծառի հիմքում ընկած հատիկապատկերը կրում է նաև չորս էլեմենտների նշանները* (Նկ. 534)։

Հաճախ հատիկապատկերը վեր է ածվում մի պարզ օղակի կամ ուղղակի կապի, որով կապվում են բուսական երկու գլխավոր ճյուղերը և կազմում կենաց ծառի պատկերը։ Այդպիսիններից է, օրինակ, № 1530 ձեռագրի մագաղաթյա պահպանակի (հավանաբար X դար) վրա գունավոր նկարը (Նկ. 535)։

Հաճախ էլ հատիկի պատկերը բոլորովին բացակայում է. երևում են զույգ երկու ճյուղեր, որոնք մեկով միանում միմյանց հետ և նորից կազմում կենաց ծառի գաղափարապատկերը։ Այդպիսիններից հիշենք № 382 ձեռագրի 55բ թերթի պարզ նկարը (Նկ. 536), *№ 7729 ձեռագրի 499ա թերթի գեղեցիկ զարդը* (Նկ. 537) *և այլն։*

Այս մոտիվները տատանվում են ամենապարզ ձևերից մինչև ամենաբարդ հյուսվածքները, որոնց



Նկ. 538

Մեջ միչտ էլ նկատելի է նույն սկզբունքը. Բարդագույն նմուշների գեռ շատ կճանդիպենք, ուստի այստեղ հիշենք մի օրինակ էլ պարզ նմուշներից՝ ընդօրինակված № 252 ձեռագրի 60ա թերթից (նկ. 538)։ Այստեղ էլ առկա են երկու ուժերի նշաններ, որոնք ձեռագրում ներկված են տարբեր գույներով։

Պարզվում է, որ ամենամասսայական լուսանցազարդերի մեծ մասն ստեղծված է նույն ձևով։ Օրինակ, № 1504 ձեռագրի 461ա թերթում գտնվող լուսանցազարդի մեջ ևս նկատելի է երկու սեռավորված բույս. նրանց ներքևի ծայրերը, որոնք նման են տերևակոթունի, միահյուսվելով, պատճառավորել են պաղպաղերույթյան սիմվոլի ստեղծումը՝ ներքևի մասում (նկ. 539)։ Իսկ նրանց տերևանման ստազորենների միացումը ավել է համապատասխան գաղափարականի՝ վերին մասում։



Նկ. 539



Նկ. 540

Ահա նման մի ուրիշ լուսանցազարդ՝ № 1506 ձեռագրի 345ա թերթից (նկ. 540)։ Այստեղ էլ փոքր ունենք մոտավորապես նման գույքի հետ։

Նման լուսանցազարդերն էլ, իրենց կրկնումներով, այլ մոտիվների հարաբերություններով, զարգացել և ավել են բազմատեսակ նուրբ զարդաձևեր։

Համապատասխան շատ օրինակներ կարելի է բերել նաև ուրիշ ժողովուրդների զարդարվեստներից։ Այստեղ բավարարվենք միայն մի նմուշով, առնված ռուսական զարդարվեստից (նկ. 541) [1]։

Զարդարվեստում լուծ բուսական մոտիվներով ծնող-ցույցի և գավանի գազափարն արտահայտող զարդաձևերի ներկա քննությունը նպաստում է լուծելու մի ուրիշ կարևոր հարց ևս։



Նկ. 541

Ներկա աշխատությունը մեզ նախապես նպատակներում, որ արժասանները կենաց ծառերի պատկերներում, որպես օրենք (շնչին բացառություններով) երևան են գալիս մեկական զույգերով։ Այժմ արդեն հասկանալի է, որ այդ տառեզարդը հենված է, ամենից առաջ, ծնող-զույգի գաղափարի վրա։ Բավական է ուշադիր կերպով վերանայել միայն այս գլխում զետեղված նկարները, և խնդիրը լուծված կլինի։ Բայց և այնպես ավելորդ չենք համարում այս առնչությամբ այստեղ զետեղել ևս մի քանի նկար։ № 2920 ձեռագրի 204ա թերթում պատկերված է մի հլուսատոս կենաց ծառ՝ պաղպաղերույթյան խոշոր սիմվոլով (նկ. 542)։ Պարզորոշ կերպով երևում է, որ այստեղ արժասանների իրենցից ներկայացնում են սկզբում կենաց ծառի բաղկացուցիչ երկու ուժերի ստորին ծայրերը։ Իսկ այդ ուժերը, ինչպես գիտենք, ծնող-զույգի սիմվոլներն են։ Ուստի, հասկանալի է, որ կենաց ծառերի հիմքում ընկած զույգ արժասանները կապված են ծնող-զույգի գաղափարի հետ։

Վերցնենք մի ուրիշ օրինակ. № 1522 ձեռագրի 208ք թերթում նկատված է գոբելյակ մի կենաց ծառ, որի բավականին բարդ ու գեղեցիկ գալար-

[1] История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 430, рис. 2.

ները բաղկացած են երկու հիմնական հյուսերից (նկ. 543)։ Ահա այդ հյուսերի ներքևի ծայրերը կազմում են այդ կենաց ծառի երկհյուս և սիմետրիկ արմատը։ Ուշագրավ է, որ այս արմատների յուրաքանչյուրի վրա կա մի տերևանման բլթակ։ Ի միջի այլոց, նշենք, որ հենց այս նկարը պատկանում է այն մոտիվների քվին, որոնց կենդանակերպ ծնող-զույգը տեխնիկական պատճառներով վեր է ածվել բուսական բլթակների։ Այս բլթակները երբեմն թռչնակերպ ծնող-զույգի ձևափոխված հետքերն են, որոնց մեջ ուշագիր նայողը միշտ էլ կարող է նկատել այդ հետքերն՝ արտահայտված ընդհանուր գծերով։ Մեր կարծիքը հաստատելու նպատակով վերհիշենք նման մի ուրիշ օրինակ՝ գտնվող նույն ձեռագրի 260ա թերթից, որը մեզ է թերված վերևում (նկ. 484)։

№ 985 ձեռագրի 74բ թերթում գտնվող նկարը նույնպես երեսից ներկայացնում է մի կենաց ծառ, որի ներսում պահպանված է կենդանակերպ ծնող-զույգի պատկերը (նկ. 544)։ Այստեղ էլ պարզորոշ կերպով նկատելի է զույգ արմատների կապը՝ ծնող-զույգի գաղափարի հետ։

Ահա մի ավելի բարդ նկար՝ ընդօրինակված № 2033 ձեռագրի 224բ թերթից, որտեղ, ասկյուն, ներից ակերտ է նույն երեսույթը (նկ. 545)։ Որքան էլ ոճավորված է կենաց ծառը, գտնվող նրա ամբողջ տեսքը, այդ թվում նաև արմատները, բաժանված են երկու սիմետրիկ մասի և գրանցից յուրաքանչյուրը կապվում է ծնող-զույգերից մեկի հետ։



Նկ. 543



Նկ. 543

Զույգ արմատների մոտիվը երևան է գալիս նաև հայկական զարդարվեստի հետագույն հուշարձաններում, օրինակ, Զաքիմ գյուղի ժամ (Կարսի շրջան) գտնված հին հայկական գոտու վրա



Նկ. 544



Նկ. 545

(նկ. 102)։ Ուշագրավ է, որ ուրարտական, սկյութական կենաց ծառերի մի շարք պատկերների հիմքում երևան ծնող հատկն էլ ներկված է երկու մասի և ունի սիմետրիկ տեսք (նկ. 108)։ Զույգ արմատների մոտիվը հանդիպում է նաև Բրիալիթում (Վրաստան) գտնված հետագույն գանգիներից մեկի վրա, որի մասին խոսք կլինի ստորև։ Այստեղ այդ արմատապատկերները ցույց են տրված պարզ գիծերի ձևով։ Մասնագետներից ոմանք, օրինակ, Ե. Ցա. Ամիրանաշվիլին, ծանոթ լինելով արմատների գաղափարաձևերին՝ զարդարվեստի մեջ, կարծում է, թե այդ ծառի հիմքում պատկերված են Տիգրիս և Եփրատ գետերը, որովհետև, բերդնական ավանդության համաձայն, կենաց ծառը գտնվում է դրախտում, իսկ դրախտն էլ՝ այդ գետերի միացման կետում [1]։ Այժմ ինքներն հասկանալի է այս և նման բացատրությունների սխալ լինելը։

Ուշագրավությունը պարզ է։ Եթե զարդարվեստում կենաց ծառերի վրա որոշակի կերպով պահպանվում են զույգ արմատներ՝ սիմետրիկ դասավորությամբ, ապա դրա հիմքում չենթած է նույն ծնող-զույգի գաղափարը, որի առնման և պահ-

---

[1] Ш. Я. Амиранашвили. История грузинского искусства, I, Москва, 1950, стр. 31.

Ակնարկ չենք համարում մեզ քեզել նրա ավտ բացատրությունը. „Священное дерево на чаше занимает высоту фриза; внизу, у его ствола, изображены две реки, по всей вероятности Тигр и Евфрат. То, что это именно реки, не подлежит сомнению, так как корневая часть дерева, как и ствол, обозначена параллельными горизонтальными линиями, а реки-вертикальными расходящимися".

բերությամբ սիմվոլն է հանդիսանում հենց ինքը՝ այդ ծառը։

Այստեղից ինքնաբերաբար հանգում ենք նաև մի ուրիշ եզրակացության, որը կապված է զարդարվեստի մոտիվների սիմետրիկ կոմպոզիցիայի ծագման և գաղափարական բովանդակության հարցի հետ։ Զարդարվեստում վաղուց է նկատված այս երևույթը, սակայն, քանի դեռ հանգամանորեն բացահայտված չէին զարդարվեստի հիմնական մոտիվները՝ իրենց մանրամասնություններով, հասկանալի է, որ կամա թե ակամա այս հարցը ևս չէր կարող ճիշտ մեկնաբանվել։



Նկ. 546

Հիշենք բուրժուական գիտնական Հ. Շուրցի կարծիքը, որի համաձայն զարդարվեստի սիմետրիայի հիմքում ընկած է մարդկանց կողմից արհեստական սիմետրիա ստեղծելու ձգտումը։ Ահա նրա բերած մոտիվներից մեկը՝ Հարավային Ամերիկայի բնիկների զարդարվեստից (Նկ. 546) [1]. Նա այստեղ տեսնում է ոչ թե ծառ-զույգի ոճավորված զարդապատկեր, այլ ֆիգուրի պարզ կրկնում։ Ըստ նրա՝ զարդարվեստն ունի հիմնական օրենք, որը հենված է պարզ կրկնումների և հաջորդումների սկզբունքի վրա՝ նպատակ ունենալով ավելացնել ֆիգուրների թիվը։ Ահա այդպիսի պարզ կրկնում է տեսնում նա նաև այստեղ, և դրանով էլ բացատրում զարդարվեստի սիմետրիկ կոմպոզիցիայի հարցը [2]։

Բայց մենք արդեն տեսանք զարդարվեստի կրկնվող մոտիվաշարքերի էությունը, որոնք առկա են ոչ թե վերացական ու չպատճառաբանված ցանկությունները, այլ մարդկանց կենսափորձից ներդված գիտելիքներն ու փիլիսոփայությունը։ Նույնքան անիմաստ է Հ. Շուրցի բացատրությունը նաև այստեղ, երբ նա ծառ-զույգի փոխարեն տեսնում է նույն ֆիգուրի սոսկական կրկնումը. և դա զարմանալի չէ, որովհետև նրա կարծիքով զարդարվեստի մեջ շատ բան ստեղծված է զվարճանքի («ради забавы»)։

Ծառ-զույգերի բացահայտման շնորհիվ պարզորոշ կերպով տեսնում ենք, ինչպես զարդարվեստի մոտիվների ճնշող մեծամասնության մեջ ընկած սիմետրիկ կոմպոզիցիան հիմք ունի զարգացյալ այդ նույն գաղափարը։ Վերցնենք հենց այս գըլխում մեջ բերված նկարները, որոնք ոչ միայն կենաց ծառերի արմատներով, այլև իրենց ամբողջությամբ՝ չափված են հենց այդ ուսերի վրա։

Այս կարևոր հարցի լուծումը առավել համոզեցուցիչ դարձնելու նպատակով մեջ բերենք ևս մի նկար՝ ընդօրինակված ավելի բարդ հասկացողություններ դրսևորող խորանային տեսարաններից, որը միաժամանակ է՛լ ավելի կհաստատացնի մեր գիտելիքները ծառ-զույգի և զավակի մոտիվների մասին։

№ 4186 ձեռագրի 1ր թերթի խորանի վերին մասում, կիսաշրջանի մեջ, պատկերված է մի զույգ սիրամարգ, որոնց միջանեղից, կենաց ծառի փոխարեն, բարձրանում է մի բազմաճյուղ, ծաղկուն և պտղաբեր բույս, ծածկելով համարյա ամբողջ տարածությունը (Նկ. 547)։ Այստեղ էլ ցույց է տրված թռչնակերպ ծառ-զույգի և կենաց ծառի գաղափարը, որոնք իրենց վերին կենտրոնական մասում կրում են պտղաբերության վարսանդապտղային սիմվոլը։ Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ այս տեսարանը ստեղծված է կանոնավոր սիմետրիան պահպանելու սկզբունքով, որը հեշտությամբ բաժանվում է երկու նման մասերի։ Անգամ այդ տեսարանի հիմքում ընկած զուգահեռ երկու ծաղկամանները դասվում են մի յուրահատուկ սիմետրիայի մեջ և, որ գլխավորն է, իրենցից ներկայացնում են երկու միահյուսված ուժերի գաղափարները։ Աջ կողմի վերին ծաղկամանը, գալով գծի կենտրոն, իջնում է ցած, թեքվում գծի առաջ, ապա՝ վեր բարձրանալով, կազմում է շրջան ու նորից գալիս գալով գծի աջ, նա է վերադառնում — իր մյուս մասին զուգահեռ և նրանից որոշ հեռավորությամբ։ Այդպես է գծված նաև ձախ կողմի ծաղկամանը։ Այդ երկուսի կազմած գալարները, միահյուսվելով միմյանց հետ, պայմանավորում են կենաց ծառին փոխարինող բույսի աճն ու պտղաբերությունը։ Արտաքնապես սոսկ շրջանակի մաս թվացող այդ գծերը, ըստ

[1] Г. Шурц. История первобытной культуры. С. Петербург. 1896, стр. 557. „Орнамент вазы у чирикван, Южная Америка“.

[2] Там же, стр. 557.



Նկ. 547

էությանն, նորից արտահայտում են ծնող-զույգի գաղափարը։ Եվ հենց այդ գաղափարի շնորհիվ էլ այս ամբողջ տեսարանն ունի սիմետրիկ կոմպոզիցիա։

Ծրինաձևերը բավական ենք համարում, մանավանդ, որ ընթերցողն ինքն էլ կարող է այդ նրանցին հետևել այս աշխատության մեջ բերված ու բերվելիք մյուս զարդաձևերի ուղղիր ընթացքին։ Բացի դրանից, սիմետրիկ կոմպոզիցիային մասամբ կանդրադառնանք նաև զարդարվեստի պայքարի մոտիվների մասին խոսելիս։

Ներկայացությունն առայժմ պարզ է. զարդարվեստի մեջ նրանք սկսվ սիմետրիկ կոմպոզիցիան, ամենից առաջ, հենված է ծնող-զույգի և դրա հետ կապված հասկացողությունների վրա։ Այդ բոլորի հիմքում ընկած են կյանքում գոյություն ունեցող ռեալ ուժերը. և քանի որ զարդարվեստը գործ ունի այդ ուժերի հետ, բնականաբար, նրանց հարաբերություններն էլ պիտի պայմանավորեին նրա մոտիվների մեծ մասի սիմետրիկ կոմպոզիցիան։

Սիմետրիկ կոմպոզիցիան զարդարվեստում ոչ քիչ մուտք է գործել որպես նպատակ, իսկապես կարծում են շատերը, այլ որպես հետևանք։

Զարդարվեստում մեծ տեղ են գրավում նաև մարդկային ծնող-զույգերը, օրինակ, № 6259 ձեռագրի 229բ թերթում, որտեղ խոսվում է Եսրասանիէի մասին, նկարված է բացառիկ արժեք ունեցող մի տեսարան (նկ. 548)։ Հիմքում գտնվում է մի տեսակ[1], նրա վրա՝ ոսկավորված կենաց ծառ, այդ ծառի վրա՝ մի հարմարանք, որը կրում է հարսի և փեսայի պատկերները։ Վերջինները մեղուներից բարձրանում է կենաց ծառի ընդհատված ոստարջը և ավարտվում պտղաբերության սիմվոլներով։ Ահա այդ սիմվոլների կենտրոնում, ծաղկամանի միջից, բարձրանում է հարս ու փեսայի ապագա մանկան պատկերը։ Դա ևս պտղաբերության սիմվոլ է։



Նկ. 548

Ըստ էության այդ ամբողջը մի կենաց ծառ է՝ բարդված նաև մարդկային ծնող-զույգի իմաստն արտահայտող մոտիվներով։ Այստեղ էլ գործ ունենք բուսա-կենդանական կամ կենդանա-բուսական զարդի հետ, որտեղ, սակայն, ամենից առաջ, պիտի տեսնել մարդկային կյանքի համապատասխան հասկացողություններըՙ հայր, մայր, զավակ. ահա այն շարժիչ ուժերը, որոնք պայմանավորում են կենաց ծառի հավերժական գոյությունը, նրա մշտադալարությունը։ Այս առումով հետաքրքրական է ծնարմանի Աստուածածնի կոչվող հայկական մինչնաթրյան պոեմի հետևյալ Ծարման մանկան հոր վիշտըՙ նախքան Ծարմանի ծնունդը։ Քանի որ այս պոեմի մասին խոսվելու է նաև ուշքի ստիքներով, ուստի այստեղ մեջ բերենք նրա սկզբի մասից մի քանի քառատող.

1 Ենթադրենք և կենաց ծառերի առնչությունների մասին կխոսվի ստորև։



Նկ. 549

Եղև մեծ բազուկ մի յԱսորեստան,
Անուն բազուկին էր Զարմանազան.
Ունէր աչքին ետնէ մազ և փնիկուտ,
Առնէր շատ հալածագ ետմէ և հուսատ...

Ունէր խիստ գեղեցիկ ջեռիր բազուկի,
Աղջամ և սպարտատ և երիվարգի.
Ոչ ակն ժարգարիտ պղծէր ՚ւ ոչ ոսկի.
Տանէր սիրտ փոփխոքնան, ոչ տէր՝ ալիարկի։

Գնկայր բազուկին ժառանգ ՚ւ ոչ ուզի.
Ոչ եղբայր ի ետնէն և ոչ ի եղբայր ուզի.
Անցնալ էր իւր ժամանակէն՝ փոքրուն ասուի.
Ու չէր անանալ զաւակ իւր պրոսոզ բարի...

Առէր խէմ իւր մանի շատ բանիւ պղտով,
Թէ ինչ հատ կայ կանանչ՝ գարգարի հագիով.
Ու ինչ բայո կա գոլար՝ երկնի պղտիվ.
Ու մեն հատ չտեսա, բազուսա բանտով...[1]

Այստեղ ծնող-զույգը՝ քագավորն ու քագուհին են, որոնք, տակայն, պատուղ չունեն, ուստի քագավորն իրեն համեմատում է չորացած ծառի հետ, որովհետև, գարգարվեստի մատենագրությամբ ասած, նրանց կենաց ծառից խլված է երեք ատերից մեկը՝ պատուղը կամ զավակը։

Հետքերն պատկերացումների հետ կապված այս մոտիվագրությունն առատորեն երևան է գալիս նաև ժողովրդական ոչխարում, երբ որդեկորուստ մայրերն իրենց համեմատում են պտղաքաղ, ծաղկաքաղ ծառերի հետ։

Այսպիսով, մենք ինքնաբերաբար հանգում ենք մի այլ և շատ կարևոր հարցի. դա գարգարվեստի մոտիվների մեջ նաև ետատաղական հասկացողությունների հայտաբերման հարցն է։ Մի, իսկապես, անհատ վիճակում պատճառաբանված ընդհանրացումների արհնաչափությունից, մենք այնտեղ չէինք կարող տեսնել այնպիսի մոտիվներ, որոնք կոնկրետ կերպով ցույց տային ընտանիքի գազափարը, և դրանք համարել ընդհանրացնող ամման և պտղաբերության երևույթներին նվիրված մոտիվներ։ Այստեղ արդեն զգալիորեն ուժգին են և՛ մենք, և՛ մյուսը, ի՞նչ էր ներկայացնում վիճակում բերված հարսանեկան կենաց ծառն՝ իր երեք ատերով, եթե ոչ իր ժամանակի մենամուսնական ընտանիքի պատկերը։ Ահա այստեղից սկսած արդեն գարգարվեստի մոտիվների ներկա ուսումնասիրության առյն բացվում են նաև ետատաղական հասկացողությունների բացահայտման և ուսումնասիրության հնարավորությունները։ Պարզ է, որ գարգամոտիվների մեջ խոսացված են ոչ միայն նրանց կերտողների գիտակցության ու աշխարհայացքը, այլև նրանց հասարակական հարաբերությունների արտացոլումը։

Քանի որ այս հարցը հանրային նշանակություն ունի ինչպես գարգարվեստագիտության, այնպես էլ ընդհանրապես գիտության համար, ուստի հարկ ենք համարում հանգամանորեն կանգ առնել համապատասխան փաստերի վրա։

№ 3708 ձեռագրի 7ա թերթում պատկերված են երկու նորապսակներ. հարսի անունն է վՒՆՏԱ, իսկ փեսայինը՝ ս...շաւ (նկ. 549)։ Նույն ձեռագրում կա մի ուրիշ նկար, որտեղ փեսացուն կոչվում է ամրամանչաւ։ Թերևս այստեղ էլ գործ ունենք նույն անվան հետ, որն սկզբից եղծված է, իսկ վերջից կրում է ոչ հոդը։

Ուշագրավ է, տակաւն, որ մեզ հետաքրքրող նկարը հիմք է ունեցել պատմական իրականություն, այսինքն՝ այստեղ նկարված են 1320 թ. ամուսնացած Անիան և յուր ամուսինը, որոնք ապրելիս են եղել Մազմոսավանքի (արդի Աշտարակի շրջանում) շրջակայքում և մեծ մասնակցություն են ցուցաբերել այդ ձեռագրի ստեղծման գործին։

Այդ տեսարանում հարսն ու փեսան կանգնած են կողք-կողքի։ Նրանք իրենց մեկական ձեռքերով բռնել են մի կենաց ծառ, իսկ մյուս ձեռքերով՝ մեկական մոմ։ Այդ ծառն էլ ծածկված է պտղաբերության սիմվոլներով։ Պատկերը լրիվ հարսանեկան է։ Ուստի պարզ է, որ այստեղ էլ կենաց ծառը միամամանակ նաև ընտանիքի գաղափարն է արտահայտում։

---

[1] Ձեռագիր № 6421, թերթ 148ա—148բ։ Ըստ ետքերի այս պոեմը մի հին հեքիաթ է՝ յաղագս XV դարում։

Հերթնենք մի ուրիշ նկար, որը գտնվում է Մ 5216 ձեռագրի 12բ թերթում (նկ. 550)։ Դա ուղղակի պատկի տեսարան է։ Կենտրոնում կանգնած են Հարսն ու փեսան՝ գլուխ-գլխի, ձախ կողմում կանգնած է քահանան, իսկ աջ կողմում՝ քավորը։ Հատուկ ուշադրության արժանի է քավորի ձեռքի արհեստական ծառը՝ տերևների և պտուղների նշաններով։ Այս ծառն էլ կենաց ծառ է՝ կապված հարսանիքի և հետևապես ընտանիքի ու տան գաղափարի հետ։

Որ այստեղ, իրո՛ք, հարսանեկան ծեսի հետ գործ ունենք, դա կարելի է ապացուցել նաև այդ նկարին հաջորդող տեքստերի միջոցով։ Այսպես, այդ նկարից անմիջապես հետո սկսվող տեքստի վերնագիրն է ժամանակ պսակ դնելուց, որին հաջորդում են հետևյալ տողերը.

«Եվանու քահանայի խաչն և գմայողն և գնան ի տունն հարսին ի հանգիրն արնենչ։ Նախ ասի շարականն...

Եալանիչ գոլշմանչ նշանի
Պատարագիկ գառամ պսակիկ
Ի կարմրագիծ ճարեկ, մերանչ
Եւ ակնկիկ չնճղալ.
Ողջնա՛, միանկի, գեանգիրն ճարտանեալ...»[1]

Ուշագրավ են նաև հետևյալ տողերը.

«Ընծեցաքէ տանն իմ ի տէր, զի զգեցոյց ինձ հանգիրն փրկութեան և պատմուճան ուրախութեան, իբրև փեսայի եդ ինձ պսակ և իբրև զնարան զարդու զարդարեաց զիս։ Եւ որպէս իբրև զերկիր, որ ածիցուցանէ զծագիկս իւր և տացէ զպտուղ և իբրև զպարտէզ չորցրի, որ բուսուցանէ զսերմանիս իւր...»[2]։

Այնուհետև գետնվում է քահանայի քարոզը՝ ուղղված նախ փեսային, ապա հարսին՝ նրանց համերաշխ լինելու և մի ընտանիք կազմելու մասին։

Այս բոլորից պարզ է, որ, իրոք, վերևում մեզ թերված նկարը հարսանեկան տեսարանի նկար է, ուստի և այնտեղ հանգիս եկող կենաց ծառը, հարսանեկան կենաց ծառ լինելով, պետորում է նաև ընտանիքի գաղափարը։

Մենք զբաղվեցինք այս օրինակի վրա, որովհետև որքան էլ որ նախորդ երկու նկարում հարսանիքի և հարս ու փեսայի գաղափարն առկա է, գործնապես այնտեղ կենաց ծառը երևան է գալիս որպես զարդամոտիվ, իսկ այստեղ՝ այն



Նկ. 550

միանգամայն առարկայական, արհեստական ծառ է։

Հիշենք մի ուրիշ օրինակ։

Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարանում պահպանվում է Նոր-Բայազետի շրջանում գտնվող մի բարերաքանդակի ֆոտո-նեգատիվը, որի լուսանկարը հրատարակված է նախ՝ Գ. Լևոնյանի [1], ապա Գ. Գոյանի [2] կողմից (նկ. 551)։ Մեզ համար այդ միջնադարյան հուշարձանը (XV—XVI դդ.) ունի մեծ նշանակություն, որովհետև այստեղ էլ գործ ունենք հարսանեկան այնպիսի տեսարանի հետ, ուր նկարված է նաև քավորը՝ հարսանեկան կենաց ծառը ձեռքին։ Մտած գազաթին երևում է թռչնորը՝ խաչաձև գարդով (տղղաձև)։

Այս փաստերը թույլ են տալիս, թե որոնց պիտի փնտրել կենաց ծառերի մայրական գիրքն ու արմատը։ Արդյոք կրոնական արարողությունների մե՞ջ, ինչպես արված է մինչև հիմա, թե աշխատավոր ժողովրդի առօրյա կյանքում, նրա կեն-

[1] Ձեռագիր Մ 5216, թերթ 12ա։
[2] Նույն տեղում, թերթ 12բ—14ա։

[1] Գ. Լևոնյան, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1941, էջ 188։
[2] Г. Гоян, 2.000 лет армянского театра. II, Москва, 1952, стр. 319, рис. 99.



Նկ. 551

քաղում և սովորություններդի մեջ։ Ո՞րն է առաջնայինը՝ Հարսանեկա՞ն, ընտանեկա՞ն, տոհմական՞ կենաց ծառը, քն սրբազան ծառերը՝ աստրա-աստրատական, հնգկա-իրանական կրոնների-րում։ Ուշի՞ արդյունք են դրանք. կրոնական միասին ու վերացական պատկերացումների՞, քն բնության դեմ մարդկանց մղած անդադրում պայքարի պրակտիկայով ձեռք բերած գիտելիքներն։

Վերևում մեջ բերված Հարսանեկան տեսարանները, իրենց կենաց ծառերով, ցույց են տալիս այդ մոտիվի ուսումնասիրության եա մի նոր ու հիշտ ուղի։

Այժմ այս հետքերով գնանք գեպի Հայկական Հարսանեկան ծեսերի ու արարողություններդի բնագավառը, որոնց պահպանված փաստերն ավելի քան հարուստ և պերճախոս են։

Ձեղագրագիտները, բանահավաքները, այս առումով, հսկայական նյութ են՞ հավաքել. գրանք ցույց են տալիս այն մեծ տեղը, որ հատկացված է ծեսել կենաց ծառին՝ Հարսանեկան արարողություններում։ Այդպիսի փաստերի որոշ նմուշներ արդեն տեսանք վերևում, որինակ, Ելդայ Բիչարյանի նկարագրությունը՝ Քարեղի կյանքից, ազգագրական Հանդես-ից բերված կենաց ծառի նկարագիրը՝ ղղանին կապակցությամբ, Ա. Մնգրանկյանի վկայությունը՝ ոսկեգանգ գարդերից մասին և այլն։

Հ. Ամատունը՝ ուշադրեն գավառական բառարանում՝ Հարսանեկան կենաց ծառերի մասին, որոնք կոչվում են տարբեր անուններով և նրանց են գալիս տարբեր ձևերով, գրում է.

«Ծեսի ծառ. Բր. Նաւաճ, Սս. Նաւաճ, Մշ. Նաւցիւ։ Փայտե չինված փոքր ծառ մ՝ է, որուն բունին և էյուզերուն վրա գունագույն թուղթերով ծաղիկներ նկարներ հյուսված և խնձորներ են ազուցված. իսկ ամեն կողմեն կախված են չամիչով ու խորոված կաղինով չինված համբյուներ (թելի վրա անցված չարաններ)»[1]։

Մշեցիս տեսնում ենք, գա մեզ ծանոթ կենաց ծառի գաղափարի վերարտադրությունն է՝ ամբողջովին ծածկված պաղպաղերությամբ ասրատհայտող մրգերով, պտուղներով և արհեստական ուրիշ զարդերով։ Նմն այդ ծառի հետ պատկերացնենք նաև հարս ու փեսացին, որոնց համար էլ պատրաստված է այն, ապա ծնող-ըսւրգի, կենաց ծառի ու պաղպաղերության գաղափարն ավելի քան ցայտուն կերևա։ Մակայն, այստեղ մենք չենք կարող կենաց ծառի գաղափարը կորել ընտանիքի գաղափարից։ Նրանք անքակտելիորեն կապված են միմյանց հետ։ Ով, միանգամայն իրավացի է Հ. Ամատունը, որ, վերոհիշյալ նկարագրական տողերից հետո, գրում է, թե այդ ծառը՝ իր զարդերով ավելի ևերկայացնեն փեսացին գերդաստանը, իսկ վրան չարված խնձորները անոր հարակից գանազան անհնավորություններ, ինչպես կնքահայրը, կնքուրը և այլն։ Նկքահայրը այս ծառը գրեած՝ փեսին ալ կոչմեն կերքիա, երբ ժամ կերքիան պատկեռ[2]։ Հենց այս տեսարանն է կարծես ցույց տրված № 5216 ձեռագրի 12բ թերթում (նկ. 550)։ Ուշադ, Հարսանեկան ծառ էլ կենաց ծառ է, որի մեջ արդեն որոշակիորեն մարմնավորված է ընտանիքի գաղափարը։

---

1 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1087—1088։

2 Նույն տեղում, էջ 1088։

Ժողովուրդը գործ չարունակ իր ամենամեծ-ասական հանգիստները, այն է՝ հարսանեկան արա-րողություններուն մեջ, պահպանել, զարգացրել, փառաբանել է հարսանեկան ծառը ոչ թե որպես պատահական զարդ, այլ որպես ընտանիքի սիմվոլ։ Այդ նույն գաղափարն ալ ներծծված հարսանեկան բոլոր արարողություններուն մեջ, որ նկատելի է համարյա ամենուրեք։

Ընտանիքի, տոհմի, գերդաստանի և ազգա-կանության գաղափարների կապը կենաց ծառի հետ՝ արտահայտված ինչ գտնում հենց հարսա-նեկան ծառագովքերի մեջ։ Ահա մի օրինակ.

— Մայիսյով հասա կենաց,
Տեսի, այլ ա՛րե է.
Բայվեցով խնչի ի գլխուն,
Տեսի, այլ ա՛րե է։

— Մայիսյով հասա կենաց՝
Լե բազարե է.
Բայվեցով խնչի ի գլխուն՝
Լե չար պռանչ է։

— Այլ խնձոր, գլխախնձոր,
Տեսի, այլ ա՛րե է.
Այլ խնձոր գլխոգլոր,
Տեսի, այլ ա՛րե է։

— Այլ խնձոր, գլխախնձոր՝
Բազահոտոտայրե է.
Այլ խնձոր գլխոգլոր՝
Այլ ազգակներե է։

— Այլ խնձոր՝ ալ պռանչե,
Տեսի, այլ ա՛րե է.
Այլ խնձոր՝ հալս պռանչե,
Տեսի, այլ ա՛րե է։

— Այլ խնձոր՝ ալ պռանչե՝
Այլ խալիքրայրե է.
Այլ խնձոր՝ հալս պռանչե՝
Լե բազանչե է։

— Այլ չորան, բարեպզրան
Ու անձեռե է.
Հրեղեն բարե ի ճակի.
Ի՜նչ անձեռե է։

— Այլ չորան, բարեպզրան՝
Այլ ճարահզրայրե է.
Հրեղեն բարե ի ճակի՝
Այլ խնչիքրայրե է։

— Այլ հոլիմ, ար ամզ ու պարզ
Ու անձեռե է.
Նրկու ճառ, ար անտառափ.
Ի՜նչ անձեռե է։

— Այլ հոլիմ, ար ամզ ու պարզ՝
Այլ խնամախի է.
Նրկու ճառի, ար անտառափ՝
Նամադաց խոսիրե է։

— Այլ խնձոր գլխոգլոր՝
Ինչ անձեռե է.
Փանչ ժանուշակ, ար հագկիզավ՝
Հագիս ճնառ է։

— Այլ խնձոր գլխոգլոր՝
Լե ազգակնե է.
Փանչ ժանուշակ, ար հագկիզավ՝
Լե ազգիկնեռ է։

— Լե փառ կանե ի արմկե,
Տեսի, լե ա՛րե է.
Լե կարաս գլխոգլոր.
Տեսի, լե ա՛րե է։

— Լե փառ կանե ի արմկե՝
Հալհարնեռ է.
Լե կարաս՝ գլխոգլոր՝
Փառգկնեռ է։

— Ասեն կնավ պարկե ի բերան,
Տեսի, լե ա՛րե է։
— Ասեն կնավ պարկե ի բերան՝
Գեղի գղիրե է։[1]

Ահա թե ինչ է ներկայացնում հարսանեկան կենաց ծառն իրենից՝ գաղափարական առումով։ Դա մի սիմվոլ է, որն ի մի է հավաքում հարսին, փեսային, խնամիներին, քավորին, ազգականներին, հարսնացուներին, հարսնեղբորը և նրանց հետ կապված մյուս հարազատներին ու բարեկամնե-րին։ Փառաբանել այդ ծառը՝ նշանակում է փա-ռաբանել հարսանիքին մասնակցողների միասնու-թյունը, նրանց բարեկամական անքակտելի կապերը։ Կե-նաց ծառն այստեղ գաղափարական ոգեշարժի դեր է կատարում, որի իմաստը նույնիսկ գուցե է գալիս ընտանիքի սահմաններից և ընդգրկում ավելի լայն հասկացողություններ՝ համապատկան առումով։

Քնարած այս մեծարժեք ծառագովքը գրի է առնվել XIX դարում, բայց ինքնին հազարամյակ է, որ նրա ծագումը շատ հին է։ Հենց այդպիսի մի հրդի քրիստոնեական վերամշակում էր վիրհում բերված ոմազկնցաւ ծառս կենաց և անմահ էրա հրդը (տե՛ս էջ 65)։ Այստեղ քննվող ծառագովքի սկզբի մասում նույնպես առկա է նշված մշակումի մի փոփոխակը, որը մեզ չենք քերում։

Հարսանեկան կենաց ծառի գովքի մեզ հայտնի ամենահին օրինակը պահպանված է Հայկական

[1] Ազգագրական հանդես, VII—VIII, էջ 178—179։

ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մատենադարանի № 7709 ձեռագրում։

Ահա այդ երգը հատվածաբար.

Լռեսան ընձուղ,
Լռեսան ընձուղ այծի
Բազուարին վախամ, ար արա.
Բազուա՛ր։

Թէ վարդի ընդուզ,
Թէ վարդի ընդուզ նա.
Ի նամ նազա նամուզ.
Բազուա՛ր...

Թէ բարձրանդին.
Թէ բարձրանդին այսր,—
Ձեզ խզնիս բնիմ խազդէզ.
Բազուա՛ր։

Թէ մշնանդին.
Թէ մշնանդին այսր,—
Ուրկնի բնիմ պրնիզ.
Բազուա՛ր։

Թէ ևորևանդին.
Թէ ևորևանդին այսր,—
Ձեզ խաւազ բնիմ բամանի.
Բազուա՛ր...

Թէ ասէ ՝ն ընամի.
Թէ ասէ ՝ն ընամի ասունդէ
Պատասխո, ար երբար սէր.
Բազուա՛ր։

Սէր ա պիտի,
Սէր ա պիտի, նդիր
Հաֆալին գազանդէ ծանիր.
Բազուա՛ր... ։

Այստեղ նախ փաստարանվում է հարսնացուն, ապա անհնազանդի կերպով նա նույնացվում է վարդի, նռան հատի և կենաց ծառի հետ։ Ճնշողը զրվում է հոգևոր վերջինի վրա, գիտակցով այն որպես ասած ՝ն ընամին ասունդէ, որը պիտի սեր լով լցնի գաշտերը։ Պարզ է, որ խոսքը նորից հարսնացուի մասին է, որի գաղափարն ամբողջապես միաձուլված է կենաց ծառի հետ, իսկ գա էլ՝ ասած ու ընամնիքի։

Համանման երգ է գրի առնված նաև Վասպուրականում, որտեղ ոչլկա սեռականից ասված է.

Ձի նաս լինուի պիտիր,
Մէջ վոնոյ գոլշին պրուսիր,
Ճոզ բալիր.
Ոսոսն նանկիր ։

Ժողովրդական մի այլ երգում մայրը, ամենան օրորելով, երգել է.

Ով՛ր կանչիմ իմանաս,
Պահլիս ու սևուչ Ինանաս,
Ինձնաս ու մեն մի լինիս.
Բալդրիս ու գել մի լինիս.
Ալ գնալ, ար մեն չի կնաս՝
Ալ գնալն մենչ գոռ լինիս.
Գոռ լինիս սնոսս ճառուն,
Ու գարնես բաֆիկըդ խառուն
Բաֆիկըդ խառուն գարնես,
Պառըդ չոմ սեն նիգիտուն.
Պառըմիր, վրա նիմ.
Ճամ ասեմ մեր պլուդըմնուն ։

Այստեղ գործնի գաղափարն է նույնացված ծառի գաղափարի հետ, սակայն գրանց հետ միասին ցույց է տրված նաև հատարակական հատկացողություն՝ կապված բնականքի, գյուղի, հանվածոս նաև գնդի պետական ազատության երգոտ նպատակների հետ։

Վերհիշենք նաև մեռածի մի նման խոսքը տոզով սկսվող վիճակիրդը, որտեղ ոչլկա գաղափարը կապված էր ընդհանրացում հատիկի, կենաց ծառի, իսկ վերջինս էլ՝ ասած, ընամնիքի, գերդաստանի, տոհմի հետ։

Ուշագիր մոտեցումը ցույց է տալիս, որ հարսանեկան կենաց ծառերի մեջ միշտ էլ ամփոփված են եղել հատարակական ավելի լայն հատկացողություններ, քան ովքեր ընամնիքի գաղափարը։

Եվ եթե երբեմն հարսանեկան կենաց ծառը կոչվել է փեսի ծառ կամ արտաքնապես կապվել է հարսի հետ, դա չի նշանակում, որ նրանց մեջ հենց միայն այդ պիտի տեսնել։

Վերջնենք հարսանեկան արարողության մի նկարագրության, որը վերաբերում է կենաց ծառի գովքին։ Ինչպես նշվեց, այդ ծառը հարսանիքներում երևան է եկել տարբեր ձևերով և տարբեր կոչումներով, որոնցից մեկն է նաև տրցը։ Ահա մի տրցագործի նկարագրությունն.

---

[1] Ձեռագիր № 7709, թերթ 88ա, XVII դ. երգահան Ըսահաքիրը նոր նախիջևանում գրի է առել հարսանեկան մի ազատագրված երգ, որը նա կոչում է «բռուսախուտ», որի մեջ առկան մեռածոսի ամենան կենաց ծառ կոչելու փոխարեն նշված է «ընամնիքի ծառ»։ Նա գալիս է այս երգի պատասխանելու։

[1] Գ. Ալիշան, Վասպուրական, I, Վենետիկ, 1855, էջ 88։

[1] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 347—348։

Թեև ասում է հյուրերը հավաքվելուց հետո, սակայն միմյանց կից բոլորշի նստելով, սկսում են բարձրաձայն գովել ուրջը, որ ունի յուր հատուկ երգերը։ Ամենից առաջ գովում է քավորը, ուրջը ձեռքում բռնած, այսինքն՝ նա առում է երգից մի առն և ապա տալիս է կողքի նստածին, որ նույնպես երգելով մի առն՝ տալիս է հերթերին և այլն։ Այսպես, ուրջը պտույտ է առնում մինչև երգի ավարտը [1]։

Հենց այստեղից երևում է, որ դա ոչ թե մի պատահական զարդի գովք է, այլ մի սրբազան սիմվոլի, որին խնամքով շրջապատած գովում են ու ձեռքից-ձեռք անցկացնում։ Հետաքրքրական է նաև, թե քանի՞ սերունդներ են այսպես երգով ու ծեսով փոխանցել միմյանց այդ համբերհանուր սիմվոլը։

Այդ սիմվոլից հետո է, որ գովերգության հերթը հասնում է փեսային։ Նույն նկարագրության շարունակության մեջ ցույց է տրվում, ինչպես նրանք ետևանգում են բոլորշի շրջապատած և քավորին կանգնեցնելով շրջանի կիզրոնում գեպի արևմտյան (արևելք), ազապինդը գովում են նրան հետևյալ երգով.

Թագավոր, ի՛նչ գիտեմ ես ելնեմ...» [2]։

Ուրջին հաջորդող փեսացուն, գազափարական առումով, առհվասն ծառի մշտանորոգ կյանքի հերթական պտղաբեր բարուկության խնդրան ունի։ Նրան գովերգելով ժողովուրդը նկատի ունի ոչ թե միայն տվյալ փեսացուին, այլ, ամենից առաջ, ընդհանրապես փեսացուի, ընտանիքի ներգոմը պայմանավորող այդ գալար ոստի, բարուկության գազափարը։ Այդ երգերում չի կարելի գտնել ոչ մի տող, որը պարունակի որևէ փեսացուի անհնական արժանիքը, որքան էլ որ նա օժտված լինի անհատական առաքինություններով։ Անհատի գազափարը ձուլված է ընդհանրացման մեջ և այդ ընդհանրացում գովքերն են, որ ժողովուրդը գոլորշել ու զարգացրել է գարեր շարունակ։

Ուշագրավ են նաև այդ գովքերը, որոնց փեսացուն գարձյալ համեմատվում է կենաց ծառի, բուսական աշխարհի այդ սիմվոլին գազափարելիքի հետ՝ տարբեր ձևերով։

Այդպիսի գովքերից մեկում կարդում ենք.

Թագվոր, ի՛նչ գիտեմ ես ելնեմ,
Ինձ կանուչ առեմ ինձ ելնեմ։

Եր վարդենի, ար բացվիր,
Բացվիր ինձ առեմ գյուլ ելնեմ [1]։

Այնուհետև նման ձևով, միմյանց հաջորդում են հարսների բնության բուսական աշխարհի ամենատիրական ներկայացուցիչները.

Ծառի առեմ, ար բացվիր...
Ալբրակց առեմ, ար բացվիր...
Վարդ, մանուշակ, ար բացվիր...
Շուշան եակինթ, ար բացվիր...

Ահա մի ուրիշ օրինակ՝ Ագարակի Հարսանեկան փեսագովքերից.

Եր բացվիրեմ եակինթ պիտեր եակինտոց,
Մակինեմ էլ շինի պիտեր եակինտոց,
Քալենեմ բիտենեմ մեր բացվիրեմ,
Եր փարցիր ճարեմ ու տիրեմ ետա ուրանց։

Եր բացվիրեմ եակինթ պիտեր եակինտոց,
Մակինեմ էլ համասիլաս պիտեր եակինտոց,
Քալենեմ բիտենեմ մեր բացվիրեմ,
Եր փարցիր ճարեմ ու տիրեմ ետա ուրանց...» [2]

Սակայն ժողովուրդը գիտեր, որ միայն փեսայով չէ կանգուն ու գալար կենաց ծառը, ուստի այս գովքերին զուգահեռ երևան են գալիս նաև հարսնացուին նվիրված նման երգերը։ Ահա մի ուրիշ գովք, որտեղ փառաբանված է այդ ծեզգոլորշը միասին.

Թագվոր, ի՛նչ պիտեմ ես ելնեմ,
Քո կանուչ առե՛ գյուլ ելնեմ,
Ձեռքիդ վարդ, ար կը բացվիր,
Բացվիր էլ առե, գյուլ ելնեմ։

Թագուհի, ի՛նչ պիտեմ ես ելնեմ,
Քո կանուչ առե՛ գյուլ ելնեմ,
Ճարմիր վարդ, ար կը բացվիր,
Բացվիր էլ առե, գյուլ ելնեմ [3]։

Հարսանեկան կենաց ծառը, սակայն, ինչպես տեսանք, միայն տվյալ զույգին նկատի չունի. այլ բոլոր նրանց, որոնք կապված են տվյալ գերդաստանի, տոհմի գազափարի հետ։ Դրանց քվում, ամենից առաջ, երիտասարդ ազգականն ու ազգենները են, վազվա քագավորները ու քագուհիները։

---

[1] Ա. Տ ե ր - Գ ր ի գ ո ր յ ա ն, Գանգուխա Վահեկին, Կ. Պոլիս, 1878, էջ 118—119։

[2] Գ. Լ ա ֆ ա ճ յ ա ն, Փյուռնեկներ ժողովրդական բանահյուսության, Թիֆլիս, 1883, էջ 28—29։

[3] Ջմիռնյան ազգագրական ժողովածու, VI, էջ 30—31։

---

[1] Ազգագրական Հանդես, VII—VIII, էջ 188։

[2] Նույն տեղում, էջ 188։

Ուսած վիրահիշյալ գովքում հարս ու փեսային հարցրում են նաև հրնատատրցնելը.

Ագռաղներ, ի՞նչ պիտի նվ ենան,
Ձեր լոքին ատե գու ենան.
Ծորթ գույն վարդ, ա՛ր կը բացվիր.
Բացվիր ձեր ատե, գու ենան[1]:

Կարելի է նման բազմաթիվ վկայություններ նրբերկ, որոնց բոլորի մեջ էլ ցայտուն կերպով գերակշռված է նույն միտքը: Կենաց ծառը ոչ թե լոկ գիտելիքների և աշխարհայացքի գրանցման հատնակ է, այլև ընտանիքի, այդ բառի ամենալայն իմաստով, որի մի ծայրը կապվում է մենամուսնական ընտանիքի հետ, իսկ մյուսը գնում է քաղվելու խմբամուսնական ընտանիքի ընդերքում:

Համապատասխան հարուստ վկայություններ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ:

Այս առումով հիշենք ռուսական հարսանեկան կենաց ծառերին նվիրված գովքերից մեկը: Հարսանիքի նախօրյակին աղջիկ հոր տանը հավաքվում են հարազատները, պատրաստում են մի ոյոլկա, զարդարում ժապավեններով, ճեմաքով, մոմերով և երգում.

— Դու իմ նվիճի, նվիճիկս,
Իմ կանա՞չ ատի ծառիկս.
Քիզ վրա՞ են բոլոր ես չիվեր,
Քիզ վրա՞ են բոլոր ես նրսեր,
Ես գոգորի ատի ատիկիներ:
— Իմ վրա են բոլոր ատ ու նրսեր,
Մինով են գանա վիրջ չիվեր.
Ոկա վիրկեր,
Ոսկի գոգորիներ:
— Դու, Ծնողդա Նիկիֆորովիս,
Բալո՛ր ես նրսեր են ատիկիներ նիմա,
Բալո՛ր են ճերկա ու բացված նիմա:
— Բոլոր իմ նրսեր են ատիկիներ նիմա,
Բալորն են ճերկա ու բացված նիմա.
Ոկա մինը, ատկոյն,
Ծանա՞չն իմ ծայրական[1]:

[1] Էմինյան ազգագրական ժողովածու, VI, էջ 30—31.

[1] П. В. Шейн. Русския народныя песни, I, Москва, 1870, стр. 457. Երգի սկզբից ոչի ենանչով բերումենք. „Свадебная песня Калужской губернии, Малоярославецкаго уезда, в селе Костине".

Ձեռ հան այդ տողերի երգի բնագիրը՝ դրի տանք ծանոթագրության.

„Накануне свадьбы, на Девичнике, в доме невесты ставят елку, обвешанную лентами, шелком и свечами, и поют:

— Ужь ты ель моя, елушка,
Зеленая сосенушка!
Все ли на тебе сучки, веточки,
Все ли на тебе верхушечки,
Золотыя макушечки?
— Все на мне сучки, веточки,
Одного сучка нетути,
Самой верхушечки,
Золотой макушечки.
— Ты Феодосья Никифоровна!
Все ли они у тебя гости собраны?
Все ли они у тебя посажены?
— Все у меня гости собраны,
Все у меня посажены,
Одного гостя нетути,
Что родимой матушки".

[1] Дж. Фрезер, Золотая ветвь, I, Москва, 1928, стр. 147.

Հարսանեկան արարողության է: Աղջիկը մեկընդմիշտ հեռանում է ծնողական ոչխից: Նրա ամուսնական, գերբնաստանական միավորից պոկատում է մի հոգի: Եվ ահա դա ցույց է տրված հարսանեկան ծառի միջոցով: Այդ ծառը՝ աղջկա հայրական ընտանիքի կամ գերբնաստանի սիմվոլն է: Նրան հարցնում են. արդյո՞ք նրա բոլոր ճյուղերն իրենց տեղերում են: Այո՛, ասում է նա, բացի մեկից, ամենագեղար վերևինից: Նույնն է ասում նաև աղջկա մայրը. իմ ճյուղերը բոլորն էլ իրենց տեղերումն են՝ բացի մեկից՝ իմ հարազատ զավակից, այսինքն՝ ամուսնացող աղջկանից: Այսպիսով, տեսնում ենք, որ ամբող գիպքում աղջկա հոր տանը պատրաստված հարսանեկան կենաց ծառը, դուրս գալով ընտանեկան նեղ չրջանակներից, արտահայտում է նրա հայրական տոհմի կամ գերբնաստանի գաղափարը:

Վերին ասիանների ուշագրավ են այս տեսակետից նաև բավարական ոմայիական ծառերը, որոնք տնկվում են նորապսակների տան մոտ՝ մինչև հարսի հղիանալը: Երբ նկատվում է հարսի հղիությունը, ասում են, նրա ամուսինն սկսում տնկից մայիական ծառ[1]: Այստեղ ցայտուն կերպով գրանցված է մայիական կամ կենաց ծառի քե՛ հարսանեկան բնույթը, քե՛ այդ ծառի ու հարս ու փեսայի պտղաբերության (զավակի) գաղափարական նույնությունը և քե՛ այդ ծառի ընտանիքի սիմվոլ լինելը:

Նման շատ փաստեր կարելի է վկայակոչել նաև ուրիշ ժողովուրդների կյանքից:

Այժմ, երբ պարզվում է հարսանեկան կենաց ծառերի էությունը, բնական հասկանալի են դառնում ժողովրդական այն բազմաթիվ ու գեղարիկ երգերը, որոնք նվիրված են այդ ծառերի հետ կապված զիսական արարողություններին և հաճախ կոչվում են ծառգիրգիներ:

Նրանց մեջ հանդիպում ենք գրավում նաև պատկի կամ զավակի գովքերը: Այս տեսակներից

բովական է հիշել միայն վերևում մեջ բերված երգերի հատվածները, որտեղ միշտ շեշտը դրվում է ինչպես կենաց ծառի, այնպես էլ հարս ու փեսայի ծաղկման և պտղաբերության վրա։

Հայկական հարսանեկան ծառազարդի ամենահարուստ բովանդակություն ունեցող և ընդարձակ օրինակը մեզ հայտնի է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 8064 ձեռագրից, որը կտեսնենք հաջորդ գլխում։

Մենք արդեն ցույց տվինք, որ հարսանեկան կենաց ծառերի մոտիվները նույնպես առկա են զարդարվեստում։ Հենց այդ մոտիվներն էին, որ մեզ թելադրեցին խորամուխ լինել նաև հարսանեկան կենաց ծառերի էության մեջ։ Ուշագրավ հատկանշական է, որ ժողովրդի կյանքում այնքան պատկառելի տեղ գրաված հարսանեկան կենաց ծառերը պիտի նույնքան պատկառելի տեղ էլ գրավեին նրա զարդարվեստում։ Եվ, իսկապես, պարզվում է, որ ոչ միայն վերևում քննված մի քանի մոտիվներում, այլև ծնող-զույգի և զավակի գաղափարն արտահայտող բոլոր մոտիվներում էլ առկա է ընտանեկան կենաց ծառի հասկացողությունը։ Ավելին. կենաց ծառը միշտ էլ դրսևորում է նաև այդ կարևոր գաղափարը։ Ահա թե որքան բարդ բովանդակություն ունեն և՛ ծնող-զույգ, զավակ մոտիվները, և՛ կենաց ծառերը։ Թե որքան մեծ նշանակություն ունի այս բացահայտումը, դա ավելի ցայտուն կերևա հետագա գլուխներից։ Ստորև այժմ նորանոր փաստերով ցույց տանք զարդարվեստում տեղ գտած համապատասխան կենաց ծառերի մոտիվները։

№ 7451 ձեռագրի 158բ թերթում պատկերված է մի կենաց ծառ, որի հիմքում արմատն է, ապա հատիկը, որից էլ բարձրանում է այդ ծառի ուղղաձիգ սաղարթը (Նկ. 552)։ Սաղարթի հիմքում պատկերված է մարդկային ծնող-զույգը, նրանց գլխի իրար զարկած ուսերը, վերաճելով ճյուղերի, միահյուսվում են միմյանց հետ և սեռնում հենց այդ սաղարթավոր ծառի բունը։ Այստեղ ծնող-զույգի և կենաց ծառի մոտիվներն ավելի քան ոճավորված և ավելի քան զարդային տեսք ունեն, քան վերևում մեջ բերված օրինակներում։ Դա մի ընտանեկան գերդաստանային կենաց ծառ է։

Այդպիսի նկարներով հարուստ է հատկապես № 6257 ձեռագիրը։ Ահա մի նկար՝ այդ ձեռագրի 29բ թերթից (Նկ. 553)։ Զարդանկը համարյա թե նույնն է, ինչ նախորդ № 6289 ձեռագրի 228բ թերթից մեջ բերված նկարում (Նկ. 548), միայն թե այստեղ, մանկան պատկերի փոխարեն, կենաց ծառի գագաթին բազմել է վարսանդա-պտղային



Նկ. 552



Նկ. 553

գաղափարանշանը։ Ծնող-զույգի պատկերներից այստեղ պահպանված են լոկ նրանց գլուխները, որոնք միացած են միմյանց հետ հատիկապատկերի միջոցով։

Մոտավորապես նույնպիսին է նաև նույն ձեռագրի 150բ թերթի նկարը (Նկ. 554)։ Այստեղ արդեն, մանկան և վարսանդա-պտղային սիմվոլի փոխարեն, կենաց ծառի գագաթին բազմել է մի փարթամ տերև՝ դարձյալ նույն իմաստով։

Ծնող-զույգի պատկերը կենաց ծառի վրա, սովորաբար, ցույց է տրվում կամ ծառի կամ նրա սաղարթի հիմքում. սակայն քիչ չեն դեպքերը, երբ այն շարժվում է դեպի վեր և հաճախ էլ բազմում ծառի գագաթին։ Այդպիսի օրինակներից է նույն ձեռագրի 52ա թերթի նկարը (Նկ. 555)։ Այստեղ, չնայած կոնկրետ կերպով ցույց չի տրված մանկան գաղափարը, բայց դա արդեն ինքնին հասկանալի է, որովհետև ծնող-զույգը միահյուսված է անող կենաց ծառի հետ։ Այդ ծառն ամբողջու-



Նկ. 554



Նկ. 555



Նկ. 556



Նկ. 557

թյամբ հենց նրանց սերնդական աճի իմաստն է արտահայտում։

Այս նկարներում, ինչպես տեսնում ենք, միշտ էլ առկա է երեք ուժի իմաստ (հայր, մայր, որդի)։ Ինչպես էլ բազմազան լինեն համապատասխան զարդերը և նրանց հարաբերությունները, զարգացման այս օրինաչափությունը միշտ նկատելի է։ Մեզ չպիտի շփոթեցնեն կենաց ծառի վրա մեկ մանկան կամ պտղաբերության մեկ սիմվոլի փոխարեն նկարված մի քանի մանուկները կամ պտղաբերության սիմվոլները։ Էականը նրանց քանակի մեջ չէ, այլ իմաստի. նրանք բոլորն էլ արտահայտում են պտուղի, զավակի կամ պտղաբերության միևնույն իմաստը։

Այդ երեք ուժերն են պայմանավորում կենաց ծառի գոյությունը։

Այս գիտակցությունը զարդարվեստում դրսևորված է նաև ուրիշ եղանակով, այն է՝ նռանկյան միջոցով։ Ուստի, ինչպես տեսնում ենք, համապատասխան մոտիվներում հաճախ նկարվում են նաև նռանկյուններ. օրինակ, 553, 554-րդ նկարներում։ Այդպիսի նկարներից են նաև նույն ձեռագրի 21ա, 27բ թերթերից մեջ բերված նմուշները (նկ. նկ. 556, 557)։ Նռանկյունին այդ նկարներում ցույց է տրված կենաց ծառի հիմքում՝ որպես



Նկ. 558



Նկ. 559



Նկ. 560

մի գաղափարանշան, որով պայմանավորված է կենաց ծառի գոյությունը։

Նույն ձեռագրի 213բ թերթում այս առումով հանդիպում ենք ավելի ուշագրավ նկարի։ Ծառի հիմքում, արմատի գաղափարի հետ ձուլված եռանկյան վրա, նստած է ծնող-զույգի միահյուսս պատկերը (Նկ. 558)։ Այնուհետև, որպես գաղափարական կապ, ծառի սաղարթի և ստորին մասի միջև երևան են գալիս երկրաչափական ձևերը։ Դրանք բաղկացած են երկու եռանկյունուց և մի քառանկյունուց, որոնք հյուսված են միմյանց հետ, բայց որում, եռանկյունիներն ունեն յուրահատուկ ձև։ Քառանկյունին այստեղ էլ արտահայտում է չորս էլեմենտների գաղափարը, որը հաճախ էլ առանձին է երևան գալիս նման կենաց ծառերի վրա։ Նույնը կարելի է ասել նաև քառակուսու մասին, ինչպիսին է, օրինակ, նույն ձեռագրի 161բ թերթում նկարված կենաց ծառը՝ ծնող-զույգով և քառակուսիով (Նկ. 559)[1]։

Ծնող-զույգի մոտիվն ուսումնասիրելիս, պետք է հաշվի առնել մի հանգամանք ևս, որը խիստ բնորոշ է զարդարվեստի համար։ Արուն և էգը, սովորաբար, պատկերվում են միմյանց նման և բավական դժվար է նրանց տարբերել միմյանցից։ Դա չի բացառում, որ երբեմն էլ հանդիպենք այնպիսի նկարների, ուր նրանք ցույց են տրված նաև որոշ տարբերանիշերով։ Վերևում մեջ բերված նկարներից միայն մի քանիսում (Նկ. Նկ. 548, 550) կարելի է ցույց տալ, թե որն է հարսը և որն է փեսան, մյուս նկարներում դա հնարավոր չէ։ Այս հանգամանքն առավել բնորոշ է այնպիսի նկարների համար, որտեղ երևան են գալիս զանազան կենդանիներ, թռչուններ, երևակայական էակներ և այլն։

Այս երևույթը ցույց տալու առնչությամբ մեջ բերենք № 2829 ձեռագրի 6բ թերթում գտնվող խորանի վերին մասը (Նկ. 560)։ Քառանկյունի շրջանակի կենտրոնում պատկերված է մի քառաբլթակ զարդ, որի ներսում էլ քանդակված է մի խաչ՝ պտղաբերության սիմվոլներով։ Մեր ունեցած ծանոթության համաձայն, կարող ենք ասել, որ դա հարիկա-էլեմենտային գաղափարանշան է։ Նրանից աջ և ձախ սփռված են բուսական փարթամ զարդանախշեր, որոնք արտահայտում են աճման ու պտղաբերության իմաստը։ Ուշագրավ է, որ հենց այստեղ էլ, այդ ձևերի մեջ, հարիկա-էլեմենտային սիմվոլի աջ և ձախ կողքերին, երևան են գալիս նաև ծնող-զույգի կամ հարս ու փեսայի պատկերները։ Ակներև, ամբողջ բուսական ֆոնը ոչ այլ ինչ է, քան այդ զույգի կենաց ծառային օրգանիզմը։ Վերջին հաշվով այստեղ պատկերված է երկու կենաց ծառ և մի հարիկա-էլեմենտային գաղափարանշան. բայց որում ծառերը մարդակերպավորված են։

Այդտեղ էլ ծնող-զույգի պատկերի մարդակերպում ընենք ավելի զարգացած գաղափարը, ամենից

[1] Եռանկյան գաղափարական բովանդակության մասին մանրամասն կխոսվի առաջ։



Նկ. 581

առաջ, կապում է հատարակական հասկացողությունների հետ։ Նույնը կարելի է ասել նաև այդ նույն խորանի վերևի մասում ցույց տրված տեատրանի մասին, ուր նույն գաղափարը գրանորված է քուշնախրիպ ժնոզ-զուլդի միջոցով։

Զարդարվեստի մոտիվներն այնքան հարուստ և միմյանց հետ օրգանապես շաղկապված կենսական հարցեր են ընդգրկում, որ մենքի բացահայտումը միշտ մասնացույց է անում նաև մյուսի մեջ չիենլը։ Հետևելով ժնոզ-զուլդի և զավակի մոտիվին, մենք ինքնաբերաբար արդեն հասանք նաև խորաններդի ու կիսախորաններդի ուսումնասիրությանը։ Հենց վերոհիշյալ խորանի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իրենից ներկայացնում է մի կողմից ժնոզ-զուլդի և զավակի մոտիվի բնորհանուր էությունը, իսկ մյուս կողմից կապվում է տան, բնատնիքի, գերդաստանի, հետևապես նաև տոհմի գաղափարների հետ։ Այն բոլորը, ինչ հրեվան է գալիս զարդարվեստի տարբեր բնագավառներում՝ ցրիվ եկած, այդ ամենը հարար ու մի հարթարդությունների խառացված է խորանների ու կիսախորանների մեջ։

Այստեղ, սակայն, մենք այդ հարցի հետազոտումը չենք շարունակի, որովհետև խորանների և կիսախորանների հետ կապված են նաև ուրիշ մոտիվներ, որոնք գեռևս լուսարանված չեն, ուստի նախ կիանոթանանք այդ մոտիվների հետ և ապա կենդանարկենք խորանների և կիսախորանների ուսումնասիրությանը։

* * *

Նկրկա գլխում չուշափված բոլոր հարցերի մեջ էլ, ինչպես տեսանք, առկա է ժնոզ-զուլդի և զավակի (պատւդի կամ պաղաբերության) միասնությունը։ Մուրազանշյուր ժնոզ-զուլդ՝ զարդարվեստի մեջ՝ անպայման իր հետ կապում է նաև պաղաբերության իմաստը՝ անկախ նրանից արտահայտված է այդ նրբորդ ուժը, թե ոչ։ Պատւդի կամ զավակի գաղափարն էլ դրսևորվում է տարբեր ձևերով. այն կարող է ունենալ կամ բուսական կամ կենդանական արտահայտություն. ըստ որում, միշտ էլ նրա հետ կապված է կենաց ծառի գաղափարը։ Իր հերթին, կենաց ծառն էլ միշտ նկատի ունի ժնոզ-զուլդի և զավակի իմաստը՝ անկախ նրանից, թե տվյալ մոտիվում կա՞ն նրանք, թե՝ ոչ։ Այսպիսով, ժնոզ-զուլդի, զավակի և կենաց ծառի մոտիվները զարդարվեստում, թե՛ առանձին և թե՛ միասին, միշտ էլ ներկայանում են որպես օրգանական ամբողջություն, միշտ էլ մենք առանց մյուսի չի կարող պատկերացվել։ Հատկանշի է, որ կենաց ծառը ցույց է տալիս ժնոզ-զուլդի կյանքը՝ ամման և պաղաբերության ճանապարհին։ Իր ամբողջությամբ այդ ծառը մի գաղափարական նռանկյունի է, որի հիմքում գտնվող անկյուններդը ներկայացնում են ժնոզ-զուլդին, իսկ վերևի անկյունը՝ զավակին։ Ով հենց այս նռանկյունին է, որ հաճախ հանդիպում է կենաց ծառերի վրա՝ գանազան ձևերով ու դիրքերով։ Պարտադիր չէ, որ այդ նռանկյունին լինի անպայման ծառի հիմքում, կամ ամբողջ ծառի ծավալով։ Այն կարող է և՛ ծառի հիմքում լինել, և՛ բնի վրա, և՛ ճյուղերի միջև, և՛ ծառի գագաթին, և՛ անգամ իսպառ բացակայել, բայց միշտ ենթադրվել որպես առկա գաղափար։

Այդ պատճառով էլ զարդարվեստում հանդիսական տեղ են գրավում նաև նռանկյան հետ կապված մոտիվները, որոնք զարդարվեստին տալիս են էլ ավելի բարդ, բովանդակալից և բազմերանգ հոհուրիյուն։

Ահա մի կենաց ծառ № 7729 ձեռագրի 557ա թերթից, որի բնի և ճյուղերի հետ միահյուսվել է պաղաբեր նռանկյունին (նկ. 581)։ Այստեղ չնայած ցույց չի տրված որևէ կենդանական մոտիվ, որն ավելի որոշակի կերպով խոսեր ժնոզ-զուլդի և զավակի գաղափարների մասին, բայց, մեր ձեռք բերած ծանոթության շնորհիվ, արդեն

հատկանշական է այդ ուժերի առկայությունն՝ այս նկարում։ Հատկանշական է նաև, որ այս բուսական մոտիվը արտահայտում է ողջ բուսա-կենդանական, այդ թվում նաև մարդկային աշխարհների ծնող-զույգի և զավակի միասնության գաղափարը։

№ 7347 ձեռագրի 134ա թերթում պատկերված է մի ուղիղ կենաց ծառ, որի հիմքում ընկած է եռանկյունին՝ պտղաբերության երեք սիմվոլներ նկարում։ Նրա վրա զետեղված է հավերժականության սիմվոլը, որի վրա նստած է մի փոքրիկ քառանկյունի և պահում է ծառի եռաճյուղ ու պտղաբեր սաղարթը (նկ. 562)։

Այսպիսով, տեսնում ենք, որ կենաց ծառերի հետ կապված երկրաչափական կոչված մոտիվները սերտորեն առնչվում են նաև եռանկյան հետ։ Նրանք շղթայվում են միմյանց, ձուլվում կենաց ծառին և բազմակողմանիորեն դրսևորում կյանքի մասին մարդկանց ունեցած երբեմնի գիտելիքները։ Ահա մի ուրիշ նկար նույն ձեռագրի 138ա թերթից, որտեղ եռանկյան հետ միասին հանգեն են գալիս շրջագծեր, զույգ օղակները, արտածայր ձվաձևը և բուսական ուրիշ առրիթուսներ (նկ. 563)։

Այս գաղափարաբնույթները հաճախ այնքան են զուգորդվում միմյանց վրա, որ առաջանում է երկրաչափական ձևերի մի բարդ պատկեր, երբեմն էլ՝ առանց որևէ բուսական սիմվոլի։ Այդպիսի զարդերը սովորաբար երևան են գալիս ձեռագրերի կազմերի վրա (որպես դրոշմանիշ), քանդակագործության, փորագրության մեջ և սակավ էլ՝ մանրանկարներում։ Քանի որ մանրանկարչությունն ի վիճակի է եղել միշտ էլ պահպանել բուսական մոտիվները, ուստի, այստեղ նրանց թիվը շատ քիչ է. մյուս բնագավառներում տեխնիկական դժվարությունները ու առանձնահատկությունները այս տեսակետից զգալի դեր են կատարել։ Անկախ ամեն ինչից, այժմ ուր էլ լինեն նրանք և ինչպիսի հարաբերություններով էլ երևան գան, գտնում են հաճախակի։

Եռանկյունիները զարդարվեստի մոտիվները հարստացրել են նաև մի ուրիշ եղանակով. նրանք էլ քառակուսիների, ռոմբերի, քառանկյունիների և մյուս ձևերի նման շատ հաճախ երևան են գալիս իրենց կրկնապատկումներով, առաջացնելով զարդարվեստում վեցանկյունի զարդերի մոտիվները։

Դրա ցայտուն ապացույցն է № 356 ձեռագրի 86ա թերթի նկարը (նկ. 564)։ Այստեղ արդեն ոչ թե անհատ զույգի հավերժության պատկերի հետ գործ ունենք, այլ ընտանեկան երկու միավորների։ Այդ միավորների միասնության կենաց



Նկ. 562



Նկ. 563

ծառի պատկերն է ահա այս նկարը, որը նույնպես ներկայանում է որպես մի ամբողջություն։ Համապատասխանաբար այս ծառի արմատները ոչ թե երկու էակների կամ ծնող-զույգի խորհուրդն են դրսևորում, այլ երկու ընտանիքների։



Նկ. 564



Նկ. 565

Ահա այս հասկացողության արտացոլքն է զարդարվեստում զույգ եռանկյունիների կամ վեցանկյան մոտիվը, որը սովորաբար երևան է գալիս բուսական ձևերով։ Օրինակ, № 313 ձեռագրի 15բ թերթում պատկերված է մի կենաց ծառ՝ բաղկացած զույգ եռանկյունիներից (նկ. 565)։ № 4096

Ձեռագրի 110ա թերթում զույգ եռանկյան մի ուրիշ պատկեր կա, որտեղ բուսական ձևերն խոպան բացակայում են, իրենց տեղը զիչելով գալարա-հյուսվածքներին (նկ. 566)։ Ըստ էության, այս ողջ պատկերը մի հյուսածո զարդ է՝ բաղկացած երկու եռանկյան և մի շրջագծի միահյուսումից։

Զույգ եռանկյունիներդ նույնպես երևան են գալիս երկրաչափական կոչված մյուս մոտիվների հետ, այսպիսով է՛լ ավելի հարստացնելով զարդարվեստի ձևն ու բովանդակությունը։

№ 2722 ձեռագրի 55բ թերթում գտնվող կնիքաց ժամի պատկերը բաղկացած է հատիկապատկեր-շրջագծից, նրա մեջ գեղեցկված զույգ եռանկյուններից, սրածայր ճվաձևից և բուսական զարդանախշերից ու սիմվոլներից (նկ. 567)։ Այս հատիկն արդեն արտահայտում է ամենասի կոլնկոփմի գաղափարը, որը զարգանում է անառական երկու միավորների սիստեմով։ Պարզ է, որ նման երևույթը չէր կարող ավելի հին լինել, քան ազգակցության սիստեմի երևան գալը, իսկ քե ազգակցական ինչ հարաբերություններ և ընտանեկան ձևերի հետքեր կարելի է տեսնել նման նկարների մեջ, դա ավելի պարզ կերևա հաջորդ գլուխներում։

Հատիկի գաղափարը՝ զույգ եռանկյունների հետ, նրանց ազգակցությամբ, հաճախ բյզանտիական է, համապատասխանելով նրանց միահյուսումից առաջացած վեց անկյունիներին։ Այդպիսին է, օրինակ, № 380 ձեռագրի 57ա թերթի լուսանցազարդը, որտեղ հատիկն ատացել է վեց բլթակ ունեցող զարդի ձև (նկ. 568)։

Նույնը կարելի է ասել նաև 566-րդ նկարի մասին։



Նկ. 566

Եռանկյան գաղափարն էլ, բնականաբար, զարդարվեստում երևան է գալիս հատիկից բացի, նաև լուսե էլեմենտների և նման ուրիշ մոտիվների զուգորդությամբ։ Այս առումով խիստ ինքնատիպ զարդի ենք հանդիպում № 4631 ձեռագրի կազմի վրա (վերջին կողմից)։ Կենտրոնում պատկերված է մի խոշոր շրջագիծ, որը ներկայացնում է հատիկի գաղափարը։ Այդ շրջագծի վերին մասից ելնել է վարսանգա-պաշտչին սիմվոլը, որի ներսը պատկերված է խայի ձևով։ Շրջագծի մեջ, միմյանց հետ սիմետրիկ դասավորվածությամբ, միահյուսված են լորս մեծ եռանկյուններ, որոնց արտաքին անկյունների միջով անցնում է մի ուրիշ շրջագիծ՝ սիմետրիկ ու քնքնաձև գոգավորումներով։ Ընդհանուր պատկերի կենտրոնում ստեղծված է մի նոր, ավելի փոքր շրջագիծ՝ վեց քնքնաձև ծայրերի պատկերով։ Այս խոշոր զարդի լորս կողմերին, զարմյալ սիմետրիկ դասավորվածությամբ, գեղեցկված են լորս քառանկյուններ, որոնց ներսում, ինքնատիպ կերպով, պատկերված են հատիկա-էլեմենտային մոտիվները։ Իսկ ամբողջը տեսարանն առնված է հյուսածո շրջանակի մեջ։ Աշխատանքը կատարված է կաշվի վրա և մի քանի գույների օգտագործմամբ։ Դա մեր միջնադարյան կազմարարների և նկարիչների լավագույն գործերից մեկն է, որի պատկերն այսօրվա տեխնիկական պատճառներով չենք կարող ներկայացնել։



Նկ. 567



Նկ. 568

Նման զարդերը մեծ տարածում են ունեցել նաև չիների վրա՝ որպես նրանց զանազան մասերի այլևայլ ընկնող զարդերից մեկը։ Այդպիսիներից է, օրինակ, Դվինի պեղումներից երևան եկած գիպսի փորագիր հարդարանքի մի բեկորի վրայի զարդը։ Կենտրոնում գտնվում է մի շրջագիծ, նրա



Նկ. 569

շուրջը՝ զույգ եռանկյունիներ. այդ բոլորն առնված են մի շրջագծի մեջ, իսկ վերջինս էլ, իր հերթին, մի վեցթևանի աստղի, որի թևածայրերն զբաղված են ծաղկա-պտղային սիմվոլներով[1]։

Ճարտարապետության մեջ այդպիսի զարդերը հանդիպում են հատկապես շենքերի ճակատներին, մուտքերից, լուսամուտներից վերև և ուրիշ տեղերում։

Հայտնի է, որ խորաններն ու կիսախորանները ճարտարապետական ձևերի արտացոլումներ են մանրանկարչության մեջ. ուստի նրանց վրա ևս խիստ մեծ տարածում ունեն գտնվող մոտիվները։ Հիշենք № 2630 ձեռագրի 8ա, № 222 ձեռագրի 2ա, № 50 ձեռագրի 50ա թերթերում և այլ ձեռագրերում գտնվող համապատասխան նկարները։

Եռանկյունիները՝ ծաղիկների, ռոմբերի, քառակուսիների, շրջագծերի և նման ուրիշ զարդաձևերի հետ առատորեն երևան են եկել նաև տնային կահ-կարասիքի, գործիքների և այդպիսի այլ առարկաների վրա։ Դրանցից են, օրինակ, Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարանում պահպանվող բազմաթիվ հուշարձանները, որոնցից հիշենք մի երկու նմուշ՝ փայտի գեղարվեստական փորագրության բնագավառից (Նկ. 569)[2]։

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 127 ([illegible] նկարը)։

[2] Հայ ժողովրդի պատմություն, I, Երևան, 1951, էջ 87։

Ծնող-զույգի և զավակի, այդ վաղեմի երրորդության գաղափարը, բնականաբար, արտահայտվում է նաև ուրիշ ձևերով. միշտ չէ, որ այն ընդունում է եռանկյան տեսք։ Այսպես, օրինակ, № 382 ձեռագրի 279ա թերթում այդ մոտիվը դրսևորված է միմյանց հետ միացած երեք խիստ ոճավորված բույսերի միջոցով (Նկ. 570), իսկ



Նկ. 570

№ 4851 ձեռագրի 171ա թերթում՝ նույն հատիկից ծլած երեք պտղաբեր ճյուղերի և երեք տերևների միասնությամբ (Նկ. 571)։ Այս վերջին նկարը միաժամանակ ցույց է տալիս նաև այդ ուժերի հավերժական հաջորդականությունը, այնպես, ինչպես օղարդ աշխարհիս և նման ուրիշ մոտիվներն են ցույց տալիս կյանքի հավերժության գաղափարը։



Նկ. 571

Եռանկյունին կամ երրորդությունը, այսինքն բացահայտված իմաստով, բնականաբար, պիտի արտացոլում գտներ նաև հին հեթանոսական ու քրիստոնեական պաշտամունքներում։ Այս առումով վերին աստիճանի ուշագրավ է հին աշխարհի պաշտամունքային հայտնի աստվածուհիներից մեկի՝ Աստարտայի սիմվոլը։ Այն իրենից ներկայացնում է մի եռանկյունի, որի վերին ծայրին հանդիպում է շրջագիծ։ Նրանց միացման կետից աջ և ձախ ձգվում են երկու թևեր, որոնք ավարտվում են աղեղներով (Նկ. 572)[1]։

[1] История религий, тайных религиозных обществ, обрядов и обычаев древнего мира, IV, второе издание, С. Петербург, 1833, рис. 16.



Նկ. 573

Այսպիսի քարմաթիվ մոռիվներ են ընկած զարդարվեստում այնքան մեծ տարածում գտած կենաց ծառերի հիմքում, որոնցից որոշ նմուշներ տեսանք վերևում (օրինակ, նկ. նկ. 562, 563): Ուշագրավ են այդ ատավածուհու տաճարի և նրա սիմվոլի մոտ տեղի ունեցող հին ծեսերը. մեզս ապրիկներ՝ մինչև ամուսնանալը՝ պարտավոր էին զոհաբերել ատավածուհուն իրենց անարատությունը՝ նրա տաճարի մոտերքում՝ քարի վրա փորագրված պտղավորման սիմվոլի առջև. Այս սովորությունը խիստ նկատելի էր Հատկապես Հնդկաստանում, որտեղ ապրիկները, կանայք, երեխաները Ատարատայի տաճարում բացարձակորեն հանձնվում էին անառակության և այն՝ ո՛չ այլ կերպ, քան ատարկրացիների հետ ժամանակի ընթացքում, սակայն, գա... կանանց համար փոխարինվեց մազերի գերծումով, որոնք զեռնվում էին տափատիրության ատավածուհու զոհասեղանի վրա: Տիրոսում և Բյուբլիայում ու Վեներյան-Սիկկայում (Կարթագենում) քրմուհիները ապրարդկանց զգեստավորմամբ ընդունվում էին մոլի խառնակության, և Ատարատային այս եղանակով ծառայելը հարատևեց Ասորիքում և ամրոզ Փոքր Ասիայում մինչև III դարը՝ ըստ ք. Ք.: Բերիտեյում և էլի տաճարներում — Բիբլոսում պատանիները իրենց վրա կատարում էին քլպատման ծեսը, կարվածքը (praeputium) զեռնվում զոհասեղանի վրա, որը սիմվոլիկ կերպով արտահայտում էր պատանեկան անբծությունը՝ զոհաբերված գերագույն ատավածությանը [1]:

Համանման ծեսեր են եղել նաև Փոյուքիայում, «Ոսկրագրքի», — կարդում ենք Ա 1878 ձեռագրի 218ա թերթում, — պաշտելին զանուանական մայր ատուծոց գնել և ի տանի նորա արուկ սերական մարմինան հատանէին և խոցոտէին և ի վեր բագնին ձգէին, և արիւնն ի վերոյ բագնին հեղոյր: Եւ որ առաւել ժուժկալ լինէր՝ գովէին և չնա այնորիկ գառնայրին ի գործ խառնակութիւն, զոր ընթացաբան սերեալոյ, այսինքն աճելոյ և վազս անարգութեան կոչէր:

Հին Հայաստանում էս նման ծեսեր եղել են. Հիշենք Անահիտյան տաճարներում կատարված սրարդուկությունները:

Մորաբոնը գրում է. «... բայց Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորից. զանազան տեղեր նրա անվան տաճարներ են կանգնեցրած և հատկապես Եկեղյաց մեջ, նշանակել են այդ տեղերում սորուկներ և սորկուհիներ. այս բոլորը զարմանալի չէ. այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մասդիկը իրենց կույս աղջիկներին նվիրաբերում են ատավածուհուն և նրանք ըստ օրենի երկար ժամանակ պռոնկում են ատավածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ: Գրքի նույնը պատմում է Հերոդոտը լյուդիացոց մասին. բոլորն էլ պռոնկում էին. Ասիական բարեհամ են վերաբերվում այն ձայ կուլտերը իրենց սիրահարներին, որ ո՛չ միայն հյուրընկալություն են ցույց տալիս, այլև տալիս են նրանց նվերներ, հաճախ ավելի շատ, քան քի իրենք են ստանում, ըստ որում մեծահարուստ տներից են և լավ հասույթ ունին: Բայց ամեն մի պատահական տեղի հյուրասիրություն չեն ցույց տալիս, այլ հատկապես իրենց ատյհանի մարդկանց [1]:

Այսպիսով, տեսնում ենք, որ պտղավորման կամ պտղաբերության սիմվոլ նռանկյունին կապված է նաև հատարաչական խոչոր նշանակություն ունեցող ծեսերի, իսկ այդ ծեսերն էլ՝ ընտանեկան որոշ տեղերի հետ: Ո՛չ Ատարատային, ո՛չ Անահիտի և ո՛չ էլ պտղաբերության մյուս ատավածուհիների տաճարների չուրջը և ներսում տեղի ունեցող ծեսերն ու զոհաբերությունները, ինչպես ցույց է տալիս Հերոդոտը, կապ չունեն անառակության և վայրենական խառնակումների հետ:

Այդ բոլորի մեջ ապրել է այն հույզը, որը սիմբամուսնությունից առնում է դեպի զուգամուսնություն [2]. ըստ այդ սովորության տիկնը որոշ ժամանակով անձնատուրության է մատնվում.

---

[1] История религий, тайных религиозных обществ, обрядов и обычаев древнего мира, IV, второе издание, С.-Петербург, 1853, стр. 304.

[1] Մ ո ր ք ա ր ն, Փարիզ և Բարբարոնից էջ. Ա ճ ա ռ յ ա ն, Երևան, 1940, էջ 87—89:

[2] Ֆ. Է ն գ ե լ ս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը: Երևան, 1948, էջ 87:

բաբելոնուհինքը տարեկան մի անգամ պետք է Մարդուկի տաճարում անձնատուր լինելին տաղանդավոր. Առաջավոր Ասիայի ուրիշ ժողովուրդներ իրենց պաշտիկներին տարրիներ չարուհական Անահիտի տաճարն էին ուղարկում, որոնք նրանց պետք է նախքան ամուսնանալու իրավունք ձեռք բերելը իրենց շնորհած սիրեկանների հետ պատաներ վայելելին. նույնպիսի կրոնական վարագույրում անկյալ սովորույթներ հանդիպում են գրեթե բոլոր ասիական ժողովուրդների մեջ, որոնք ապրում են Միջերկրական ծովի և Գանգեսի միջև[1].

Ենգիկը ոչ միայն թիսական-կրոնական այս սովորույթյան մեջ է տեսնում խմբամուսնության հետքեր, այլև՝ դրա հաջորդ էտապի, երբ աստվածուհիների տաճարներում հանդես են գալիս հիերոդուլներ. Անահիտի հիերոդուլները (տաճարներում ծառայող աղջիկները) Հայաստանում, Պիրոդիտիները՝ Կորնթոսում և ուրիշները,— ասում է Ենգելսը,— իրենց էությամբ գործյալ խմբական ամուսնության մի մնացորդ էին[1].

Ահա այսպիսի հասկացողությունների հետ են կապվում նաև Աստղտոսի տաճարների չուրջը տեղի ունեցող արարողությունները, որոնց խորհրդանիշն է եղել եռանկյունին.

Մարդանիշ-չենինիշի կլուսիկները սովորեցնում են, որ աստվածուհիների գաղափարները մինչև էլ չափված են երկրային իրականության վրա. Ուսի համարյա մինչև, որևէ աստվածության ծնունդ նկարագրելիս, դիցարանությունը նրան կապում է քեկուզ գերբնական, բայց գործյալ ծնող-զույգի հետ. Որպես այդպիսի ծնող-զույգ շատ հաճախ երևան են գալիս երկինքն ու երկիրը.

Քրիստոնեական կրոնի մեջ էլ ծնող-զույգի գաղափարը, հետևապես և եռանկյունին, մեծ տեղ են գրավում. Քրիստոսն էլ, վերջին հաշվով, սերված է համարվում ծնող-զույգից՝ Գաբրիելից և Մարիամից, չնայած իր բնական կերպարանքից հետացած այդ առասպելում Գաբրիելը, երբեմն էլ Մարիամը, փոխարինված է սուրբ Հոգի հասկացողությամբ. Քրիստոնեական շրջանի գործերում այս մոտիվն էլ, սովորաբար, ցույց է տրվում ճիշտ այնպես, ինչպես մարդանիշով մյուս ծնող-զույգերը.

Պատկերվում է Գաբրիելը՝ Մարիամի դիմաց, նրանց միջև՝ կենաց ծառը կամ նրան փոխարինող



Նկ. 573

մի այլ առարկա. Համախ էլ, ինչպես տեսանք, Գաբրիելն ինքն է իր ձեռքին կրում այդ ծառի սիմվոլը.

Քրիստոնեական այդ նկարներում առկա է ոչ միայն ծնող-զույգի և կենաց ծառի, այլև պատուզավակի մոտիվը՝ ի դեմս Քրիստոսի.

Նույնը կարելի է ասել նաև Ադամի ու Եվայի մասին, որոնք նույնպես, քան բիբլիական ավանդության, պատկերվում են կենաց ծառի մոտ. Այդտեղ նրանք էլ երևան են գալիս զարգացվածության ծնող-զույգի և զավակի հանգի մոտիվով. Հիշենք այդպիսի նկարներից մի երկու օրինակ. Ն 481 ձեռագրի 31ա թերթում պատկերված է մի կենաց ծառ. Նրա աջ ու ձախ կողմերում կանգնած են Եվան ու Ադամը (նկ. 573): Ծառի բնին փաթաթված է սվանգական օձը, իսկ ծայրին, պտղաբերության սիմվոլներից վեր, այնտեղ, որտեղ սովորաբար ցույց է տրվում որդին կամ պատուղը, նկարված է աստծու պատկերը. Առանձնապես ուշագրավ է նաև այն, որ այդ կենաց ծառն էլ ունի երկու ճյուղ, որոնցից մեկի վրա գրված է «Ադամ», իսկ մյուսին՝ «Եվա».

Այս նույն տեսարանը ձեռագրերում հաճախ ցույց է տրվում ավելի պարզ տեսքով (նկ. 574):

Որպես ուշագրավ զուգահեռ, հին գիցարանություններից հիշենք փյունգական Ատտիս աստծու և նրա զուգակցի մի հին պատկերը, որտեղ այդ ծնող-զույգը երևան է գալիս իր սիմվոլ ծառի ծառի երկու կողքերին, որպես երկու կենդանակերպ էակ[1]. Ինչպես հայտնի է, այդ աստվա-

[1] Ֆ. Ենգելս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 67—68.

[2] Նույն տեղում, էջ 67.

[1] Дж. Фрезер. Золотая ветвь. III, Москва, 1928, стр. 63. „Сосна Аттиса и Кибелы".



Նկ. 574

ժուքյուններն էլ մեռնող ու հարությունն առնող աստվածությունները էին, որոնց դիցաբանությունից ևս շատ բան է անցել քրիստոնեությանը։

Ըստ էության Աստիծը, Կիրակոս և նրանց սիմվոլ սոսին ոչ այլ ինչ են, քան մի ժեռ-ցուցք և մի կենաց ծառ, որի նյութական հիմքը մեզ համար արդեն պարզ է։ Ահա այդպիսի տեսքով են պատկերվում նաև Ադամն ու Եվան, Զաքրիկն ու Մարիամը։ Արտահայտչական այդ ձևերի հիմքում էլ ընկած են ժողովրդական հնագույն պատկերացումները։

Համապատասխան նկարներ շատ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ, որոնցից է, օրինակ, հնուկալ նմուշը՝ ընդօրինակված հերքոգովինոսոնիական ժեռագրերից (նկ. 575) [1]։

Քրիստոնեական ապրյուտներում, ինչպես նաև նրբեմն հնձանոտական կրոններում, կենաց ծառի մոտ, երևան են գալիս ժեռ-ցուցքի փոխարեն զույգ հրեշտակներ, զույգ սքանտատիկ կենդանիներ, ինչպես նաև զույգ ոտամարդիկ և այլն։ Դրանք բոլորն էլ չեզոքներ են՝ կատարված նախկին պատկերացումների մոռացման և կրոնական գաղափարախոսության ընկման հետևանքով։

Քրիստոնեության կողմից, բնականաբար, պատգործված է նաև հոանկյան գաղափարն՝ այդ կրոնի գերագույն սիմվոլ երրորդության իմաստը դրսևորելու նպատակով [2]։

Ջարդարվեստում հոանկյան մոտիվի հույլյան քայլահայտությամբ հիմնականում ավարտվում է, այսպես կոչված, երկրաչափական զարդանախշերի ուսումնասիրությունը։ Ինչպես տեսնում ենք, մոտիվների այդ խումբը դրված է մի այնպիսի անվան տակ, որին նա համապատասխանում է միայն ձևով, իսկ բովանդակությամբ՝ ամենևին ո՛չ։ Երկրաչափական կոչումն ինքնին իմաստազրկում է և նույնիսկ ժխտում նրանց ծագումը՝ զարդարվեստի մայրական գրկում։ Մնական, ինչպես ցույց տվին մեր պրպտումները, որոնց մասին խոսվեց վերևում, զարդարվեստի երկրաչափական ձևերը հագեցված են գաղափարական հարուստ բովանդակությամբ և մշակվել են, հիմնականում, զարդարվեստի զարգացման բազմադարյա պրոցեսի ընթացքում։ Վերցնենք, որպես օրինակ, սրտաձև ձևաձև զարդերը, որոնք ունեն վարսանդա-պրազային ծագում։ Ձի կարծրի քնության մեջ ցույց տալ ամենի հավանական համարվող նյութական հիմք այդ ձևի համար, քան բուսա-կենդանական պտղաբերության այն օրգանները, որոնք քննվեցին վերևում։

Ճիշտ է, կարող է պատահած լինել, որ զարդարվեստի որոշ մոտիվների ձևերը զարդացվելին նաև երկրաչափական առանձին ձևերի հիման վրա, օրինակ, քառանկյունի, քառանկյունին և այլն, բայց սրատեղ էլ հիմնականն այդ չէ, այլ այն, որ այդ զարդամոտիվների բովանդակության մեջ արդեն եղել են բոլոր տվյալները, որպեսզի նրանք ընդունեին նաև այդպիսի ձևեր։ Վերցնենք չղլաձին, գնդի մոտիվը։ Ենթադրենք, ինչպես տեսանք, ասում է, որ երկրաչափական ֆիգուրները ծնվել են իրականության մեջ եղած նյութական, առարկայական հողի վրա։ Արդ, ի՞նչը կարող էր ամենից առաջ հիմք հանդիսանալ արմնատական գնդի և ապա չղլաձի համար, եթե ոչ զարձյալ

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. XXIX, рис. 7.

[1] Քազիչան պատմում պահվող հայկեն մի ձեռագրում (Մատ. հտմ. թ. 18, 3 ա) կա մի այդպիսի գեղարվեստական մի հատկանիշի է. որի նրանց տեսիլքներին գեղած են չղլաձներ՝ ուշյան, ուշոյի և վիրգին մանրամասնություններով (Հայկական ՍՍՌ Գիտական Մատենադարան. Ձեռագրեր գ-ի տրիճ. Քազիչանակ 178, էջ 888)։

[2] Այս կապակցությամբ մասամբ կիսովի նաև խաչանձևերին նվիրված էջերում, որ կգնահատ զարդարվեստի գեղչին մոտիվները։

բուսա-կենդանական պաշտաբերության զանազան պրպանները, ինչպիսիներից են, օրինակ, սերմերը, պտուղները, որոշ կենդանիների և թռչունների ձվերը, նրանց գեղեցիկները և այլն։ Իսկ, ինչպես տեսանք, հենց դրանք էլ զարգարվեստի համապատասխան մոտիվների նյութական հիմքն են հանդիսացել։

Ահա այս բոլորը նկատի առնելով, կարող ենք ասել, որ զարդարվեստի մոտիվների մեջտեղ պրա կատարված խմբավորումը կարիք ունի վերանայման, որովհետև երկրաչափական կոչված խումբը, իր բովանդակությամբ, անհամատեղելի է այդպիսի կոչման հետ։ Զարդարվեստում չկա և չէր կարող լինել բովանդակությունից զուրկ երկրաչափական մոտիվ։ Այնտեղ նզած բոլոր մոտիվներն ունեն իրենց կոնկրետ սկզբնաղբյուրը, իրենց ծագման նյութական հիմքը։ Այդ հիմքը բնությունն է՝ իր կենդանական, բուսական և անօրգանական աշխարհներով։ Այն, ինչ կազմել է մարդկային կյանքի հիմքը, այն էլ գտնվել է նրա մտածողության կենտրոնում՝ նյութ գտնելով նրա կիրառած զարդարվեստի և՛ բովանդակությանը, և՛ ձևերին։

Որոշ ժողովուրդների մոտ պահպանված համապատասխան սվյալների շնորհիվ, մանավանդ ցույց են տվել, որ ագվեզն էլ մեծ տեղ է գրավել նրանց պատմության մեջ որպես առանձ։ Այդ վկայություններն այստեղ, մեզ համար, կարևոր նշանակություն ունեն. ուստի, դիմենք համապատասխան որոշ փաստերի մեկնաբանման ու ընդհանրացման։ Մորգանի ընտանության հասարակությունը սիխասության մեջ, ինչպես նաև այդ սիխասության հիման վրա կազմված Մորգանի համապատասխան կոնսպեկտում բազմաթիվ վկայություններ կան ագվեզի՝ որպես առանձի մասին։ Մորգանի նշված կոնսպեկտից հիշենք մեքսիկական մուսոկի կամ կրկնի քեռերի 11-րդ սոհմը, այրոկների պատասխանատու քեռի 13-րդ սոհմը, այրոկների սասկ և ֆոկս միացյալ քեռերի 11-րդ սոհմը և այլն, որոնք որպես առանձի համապատասխան ագվեզներ են[1]։

Ս. Փ. Տոլստովը ցույց է տալիս, որ ագվեզի իրանական դիցաբանության մեջ պահպանում է նրան առանձական ֆունկցիաները[2]։ Նա նշում է, որ Ավեստայում ագվեզը, որպես առանձ, երևան է գալիս շատ ուժերի մարմնացման գեր և հարթում նրան («Третий брат Йимы Техма-Урупи выступает в образе ездящей и быстрой лисицы, побеждающей Ангро-Майнью»)[3]։ Հյուսային Հնդկական դիցաբանության մեջ ագվեզն է, որ փորձել երևան է գալիս բնության շատ ուժերի գեր, հալածում Ինդ-առանձանդրը և փորձը երկին բերում աշխարհի վրա[4]։ Արդիվ, ագռավ, շուն առանձներից զատ, յակուտները պաշտում են նաև ծանաչիսը (хорёк), որին յակուտները ձնոց չեն տալիս, և ագվեզը։ Կորյակների, ոլչների, չուկչերի, քոլիների և Հյուսիս-արևելյան Սի-

[1] К. Маркс, Конспект книги Льюиса Г. Моргана „Древнее общество", Архив Маркса и Энгельса, том IX, Огиз—Госполитиздат, 1941, стр. стр. 106, 109, 111.

[2] С. П. Толстов, Древний Хорезм, 1948, стр. 304.

[3] Там же, стр. 235.

[4] В. Я. Пропп, Исторические корни волшебной сказки, 1946, стр. 164.



Նկ. 589 Նկ. 590

ժողովուրդների մոտ գլխավոր աստվածների են հանգիստացել ագռավը, արջը, ոչխարը...»[1]: Սվանական ֆոլկլորում պաղպեքրության աստվածությունը երևան է գալիս աստվածական ծագում ունեցող ոչխարի հետ. նա կոչվում է Տուխպխա-Մչխա, որտեղ «Տուխպխա»-ն պաղպեքրության աստծու անունն է, իսկ «Մչխա»-ն բառացի նշանակում է ոչխար[2]: Սվանները պաղպեքրության հանգիստ ժամանակ պարում են, երգում և բարբառում՝ «Մչխա Տնչպխա, իո, իոռ. իսկ այդ հանգիստը, ինչպես ընդունված է մասնագետների կողմից, իրենից ներկայացնում է խեթա-ուրարտական Տնչպխնա աստծու կույտի մեացուկ[3]:

Քրիստոնեյան գավաթի վրա, որի մասին կխոսվի ստորև, ներկայացված է պաղպեքրության հանգիստ խումի տեսարան, որտեղ մարդիկ երևան են գալիս ոչխարի մորթիներով և ունեն խեթական ստորգի նշաններ: Մասնագետների այդտեղ, իրավացիորեն, տեսնում են խեթական կուլտուրայի հետքեր[4]: Այդ ժամենան առանձնապես ուշագրավ է, որովհետև, ինչպես ցույց է տվել Գր. Ջափանցյանը, խեթական կուլտուրան մասամբ անցել է նաև հայերին[5]:

Քոփրակ-Կալեում գտնված ուրարտական գլանակնիքներից մեկի վրա ներկայացված տեսարանում, հավանաբար, գոթ ունենք գործյալ կենաց ծառին սպասարկող քրմի ոչխարակերպ զգեստավորման երևույթի հետ (նկ. 591)[6]:

Հայտնի է, որ ոչխարի մորթիներ էին կրում նաև հին Հունաստանում՝ պաղպեքրության Դիոնիսիոս աստծուն երկրպագելիս[7]:

Տառեմական պատկերացումների մեացուկ են համարվում նաև այնպիսի հավատալիքներ, որոնց համաձայն, եթե մարդ իր վրա կրի ոչխարի մորթը կամ նրա մարմնի մասից որևէ կտոր, նրան փորձանք չի պատահի[1]:

Կարելի է գնա բազմաթիվ նման օրինակներ բերել, սակայն բավարարվենք այդքանով:

Այս բոլորից տեսնում ենք, որ, իրոք, ոչխարը բազմաթիվ ժողովուրդների նախնիների մոտ համարվել է առաջ, երևան է եկել հատկապես պաղ-



Նկ. 591

պեքրության տոների ժամանակ՝ երգին պաղպեքրության հովանավոր:

Այդ բոլոր օրինակներում էլ ոչխարը բարի ուժերի սիմվոլ է, որը պայքարում է չար ուժերի դեմ՝ հանուն գարնան, բերքի և մարդկային բարեկեցիկ կյանքի:

---

[1] Ф. Фрэзер (Фрезер). Золотая ветвь. Перевод с англ., Москва, 1928, стр. 321.

[2] Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства, I, Москва, 1950, стр. 32.

[3] Н. Бердзенишвили, И. Джавахишвили, С. Джанашия. История Грузии, I, Тбилиси, 1950, стр. 99.

[4] Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства, I, Москва, 1950, стр. 23—25, табл. 11.

[5] Гр. Капанцян, Хеттские боги у армян, Ереван, 1940.

[6] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 378, рис. 103.

[7] Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства, I, Москва, 1950, стр. 32.

[1] Зеленин, Табу, стр. 56. „Богульское поверье гласит: если иметь при себе мордочку ягненка... то все будет удаваться".

Ահա այս հանգամանքները հաշվի առնելով հնարավոր է, որ պետք ձեռնամուխ լինենք ազվեսի մոտիվի ուսումնասիրությանը՝ հայկական հին ազդյուրների քաղված ավյալների հիման վրա։ Այսպես մենք ոչինչ չենք կարող հավակնել նրա մոտիվից, որովհետև, ինչպես ցույց կտանք, քրիստոնեության պայքարելով հեթանոսական պատկերացումների դեմ, հալածել է նաև ազվեսին, համարելով նրան քաղաքական, չար ուժերի սիմվոլ, ուստի և նա հնարավոր միանգամայն հավասար իմաստ է ստացել։ Այդ նոր իմաստով մեկնաբանել հին ավդյուրներից հրեան հեղ ազվեսի մոտիվը, նշանակում է մանել փակուղու մեջ։



Նկ. 592

Ազվեսի մոտիվն առատորեն հրեվան է գալիս նաև հայկական հին ու միջնադարյան ավդյուրներում՝ որպես դրական, սիրված էակ, մասնակից իր առանձնական ձագուկը։

Ժողովրդական հեքիաթի հերոսներից մեկը, որը պահպանված է միջնադարյան ձեռագրերում, որպես կրկնակ՝ յուրաքանչյուր տան համար, ունի հետևյալ տողը.

Պիտուռ ազվես, ագիռ տալին[1]։

Ինչպես հայտնի է, կրկնակները հեքիաթի ամենահին մասերն են՝ կարող են փոփոխության ենթարկվել հերի անունը, նրանց բովանդակությունը, բայց կրկնակը հեքիաթ ժամանակ պահվում է անփոփոխ կամ համեմատաբար անփոփոխ։ Այդպիսիներից է նաև այս կրկնակը։ Հենց սկիզբն ազվեսը հաստատությունը ցույց է տալիս նրա սիրված էակ լինելը։

Ուշագրավ է հատկապես տալին ծալելը գարնանը։ Սա լոկ մի բանահավելվածական արտահայտություն չէ, որտեղ ազվեսի պոչը համեմատված լիներ ծալելի հետ։ Առանձնապես որևէ նմանություն էլ չկա ազվեսի պոչի և ծալելի միջև։ Բացի դրանից, հին շրջանի համար ոչդպիսի, սուկ բանահավելվածական, պատկերները խորթ էին։ Այնտեղ, ամեն հերթին, պիտի փնտրել գաղափարական, իմաստային հիմքեր։ Ազեն ծալելը կամ ծալելի պոչը հատկացուցիչությունը, իրոք, հետևություն է իր հատուկ բովանդակությունը։

Հին պատկերացումների համաձայն, պոչը կրկին կամ երեք անգամ փաթաթված է մարմնի շուրջը։ Դրա ամենափայլուն ապացույցը մեր մանրանկարներն են, քանդակները, փորագրությունները և գործարվեստի այլ բնագավառները։ Այստեղ շատ տարածված են այն պատկերները, որտեղ հատուկ բուսական ոճավորման են ենթարկված կենդանիների, մասնավորի պոչերը։

Այդպիսի շատ վկայություններ արդեն մեզ են բերված վերևում՝ տարբեր առիթներով, հատկապես ծնող-զույգերին նվիրված էջերում, ուստի այստեղ զետեղենք միայն որոշ նմուշներ։

№ 355 ձեռագրի 153ա թերթի լուսանցքում նկարված է մի կենաց ծառ, որի վերին մասն ավարտվում է առյուծի պատկերով (նկ. 592)։ Մասն ու առյուծը միացած են միմյանց հետ վերջինիս պոչի միջոցով. ըստ էության, այդ ամբողջ ծառը հենց առյուծի պոչն է՝ համապատասխան ոճավորվածությամբ։

Պոչին հատուկ ուժ վերագրված լինելու մասին է խոսում նաև № 5345 ձեռագրի 99ր թերթի լուսանցազարդը, որտեղ մարդագլուխ և գազանամարմին էակի պոչն ավարտվում է տերևով և կրում է հատիկի ու ճառնկյան գազափարապատկերներ (նկ. 593)։ Համեմատելով ավելի բարդ պատկերի հետ հանդիպում նաև № 355 ձեռագրի 193ա թերթում (մասամբ վնասված), որտեղ նույնպես հատուկ ձևով է պատկերված պոչը։

Այդպիսի նկարներ կան նաև ուրիշ ձեռագրերի մոտ, որոնցից այստեղ հիշենք միայն մի նմուշ՝ փիլոտական մանրանկարչությունից (նկ. 594)[1]։

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ հետո պոչը գիտվել է որպես պաշտպանության պրոցեսին նպաստող կարևոր գործոն։ Այս առումով վերին ասիմանի ուշագրավ է տեսնել բառը, որը միամամանակ արտահայտում է հրեու իմաստ. պոչ և տեսական անգամ։ Մա. Մալխասյանցի բառարանում կարդում ենք.

«ՔՀՏՀ.—1. Մազոտ պոչ կենդանիների (ինչպես շան, ագռավի, առիւծի եւն)։ 2. Առնի անգամ։ Հմմտ. Պոչ (Ղ)»[2]։

[1] Ձեռագիր № 7717, թերթ 208բ—209ա։

[1] Н. Ф. Лорепц, Орнамент всех времен и стилей, С. Петербургъ, 1898, таб. 31, фиг. 16.

[2] Մա. Մալխասյանց, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, III, Երևան, 1944, էջ 390։



Նկ. 593



Նկ. 594



Նկ. 595

Համապատասխան հասկացողության հետքեր պահպանվել են նաև տարբեր բառի գործածություններում մեջ։ Այսպես, օրինակ, տգուշով աչքին գործվածքը ցույց է տվել տեղին, առնական յատկություններ ունեցող աղջիկ[1]։

Աշտիշատի պատկերացումների հետքեր են պահպանվել նաև ժողովրդական հանգիսաներում։ Հիշենք մայիսի 7-ին Հայաստանում տեղի ունեցող հին հանգիսները. երամական մեծ գեր են խաչում այդ օրը և պոչավոր պատառները[2]։ *Հին Եգիպտոսում եղել է հատուկ տոն, որը կոչվել է տեներ-Մեհր, այսինքն՝ պոչի-տոն*[3]։ *Տենդե պոչերը Հնդկաստանում են նաև նիամ-նիամների ցեղի տոհմությունների մեջ*[4]։

Ժողովրդական առօրյա լեզվում պահպանված չէ՛, մի պոչավոր, տգուշ խոյիկ, տգուշ կպցնելու, տգուշով, ականջով և այլ նման արտահայտությունները նույնպես ցույց են տալիս տգուշ կրոշ գիրահատարների հրեան հնամե լինելը։

Քիչ առաջ մեջ բերված 583-րդ նկարը և ուրիշները ոչ այլ ինչ են, քան տգուշավոր կառնանք, այսինքն՝ արշեհատական պոչերով հրեան հնամե հրեհմի գիրահատարների պատկերներ։

Ընդհանրությունը պարզ է։ Պոչի մոտիվը հին պատկերացումների հետևանքով է արտացոլվել բանահյուսության, գործարվեստի և ժեռերի մեջ. այն կապված է եղել պաշտաբերության գաղափարի հետ։

Ահա հենց այդ իմաստով էլ ժողովրդական երգի մեջ ագվեսը կոչվում է «Սիրուն ագվես, ագին ծաղիկ». նվ գա միանգամայն բնական է, որովհետև ագվեսը տոտեմ է եղել։ Ուստի հենց այդ պատճառով էլ ժանրանկարչության մեջ պահպանված ագվեսանկարները հանդես են գալիս նաև բուսական ոճավորում ունեցող պոչերով։ Ահա նա մի այդպիսի օրինակ № 5505 Լեհաստրի 125բ քերթից (նկ. 595)։

Ագվես տոտեմը, բնականաբար, պիտի խոշոր դեր տոհմերում լիներ նաև այնպիսի կարևորագույն հանգիսաներում, ինչպիսին է հարսանիքը։ Նվ, իրոք, հայկական հարսանիքներում ագվեսին շատ կարևոր տեղ ու գեր է հատկացված։ Նա այդտեղ այն գործող անձնավորությունն է, որը բոլոր տեսակի արգելքների, ծեծերի և տուգանքների միջից անցնելով, որպես բարի սուրհանդակ, հասնում է փեսացի տունը և նրանց ամենամոտ հարսի ու հարսանեկան քափորի հանապարհ ընկնելու ժողովուրդը մեծարում է նրան՝ տալով զանազան բնեռներ. բնեռներ են արվում նաև նրա նժույգին։ Ագվեսի գերը զանազան վայրերում զանազան ձևով է դրսևորվել, բայց միշտ էլ, քան էությամբ, մնացել է նույնը։ Այսպես, օրինակ.

«Երբ փեսացի գյուղին մոտենում են՝ մաղարը, այսինքն՝ հարսնեղբայրը, հանում է հարսի տակից քամրի բարձը և տալիս հարսնառներից մեկին, որ կոչվում է ագվես։

---

[1] Ծ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, IV, Երևան, 1946, էջ 218։

[2] Ազգագրական հանդես, II, էջ 278։

[3] К. В. Трофимов, Древнеиранский термин „paršu", Известия АН СССР, серия истории и философии, 1947, № 1, стр. 73—84.

[4] Ազգագրական հանդես, II, էջ 60։

Աղվեսը... չոտապում է... քաղավորի առանը... ազատներից խիստ ծաղուկ... բարձը հանկարծ գնում է քաղավորի առաց առնը...

Քաղավորը հրամայում է... աղվեսի ձիու վզից կախել քաշկինակ... արդիւ... գուլպա [1]։

Մի այլ տեղ նա է, որ աղվեսա տանից գնալի փնտացուի առնն է առնում հարսնատի մի ուրիշ սիմվոլը՝ տանը գոլտը, այսինքն՝ այն ծիսական կապոցը, ուր գրված է չինում հարսի օժիտը։ Այդ տաղվեսին ուշիկցում են գուռնան, պարող ազդրկունք և ազայր։ Դրանց գալու ժամանակ, հանապարհին ընդառաջ է գալիս գայիս գլուխի կորիճներից մինը և առաջարկում աղվեսին կամ ձիանամարտել, կամ տալ նորան մի գավաթ գինի...[2]։

Նման մի այլ վկայության համաձայն, աղվեսը, որպես հարսնատի լրտեսը, ձիաթափա է ծնեի կամ առագանվելու տպատանվելիքին [3]։

Այս բոլոր գնդերում էլ աղվեսը հարս առնող գլխավոր ուժերից մեկն է։

Հայ ժողովրդի առօրյա հասկացողություններ մեջ նա աղվեսը բարի ուժի և հաջողության խորհրդանշան է։ Գանձակի գավառի հայերի կարծիքով, ամառապարհորդության ժամանակ աղվես տեսնելը բախտավորության նշան է[4]։ Բուլանըխում սև աղվեսի մորքին քեի տակ պահելը հաջողվել է հաշողության և բախտավորության միջոց[5]։ Ա 6877 ձեռագրի 19ա թերթում աղվեսի մորքին նշված է որպես միջոց տնտական կապի գեմ, իսկ նրագահանների մեջ այն կապվում է գնդեցիկ կնոջ հետ։

Այս և այլ շատ հավատալիքների հիմքում ընկած է աղվեսի երբեմնի տոտեմ լինելու փաստը։

Առանձնապես ուշագրավ են մեր հրաշապատում հեքիաթները, որոնց հանդիպում ենք գործչությ նույն բարի և սիրելի աղվեսին։ Այս տեսակից արժանի է առանձին ուշադրության վերնի Բամուլ ազի ճեմիաքրը։ Այդտեղ աղվեսը երևան է գալիս որպես հերոսի առաջնորդ, օգնական, հովանավոր, ուղեցույց և այլն։ Հերոսը գժվարության մեջ է. նրան օգնության է հասնում աղվեսը, առաջնորդում գնալի կախարդական աշխարհ և կարևոր խրատներ է տալիս (տմասունցի Դավիթը հայոսի մեջ ևս փոքր Մհերին գնալի լեռան գագաթը տանող կածանն աղվեսն է ցույց տալիս)։

Նշված հեքիաթը ուշագրավ է նաև մի ուրիշ առումով. այդտեղ աղվեսը հանախ փոխարկվում է մի գեղեցիկ աղջկա։ Դա չափազանց կարևոր հանգամանք է, ուստի մի քիչ ավելի հանգամանորեն քննենք այս հարցը։

Ամենի քաջուլ ոգա, ի՞նչ ա նպատակը, ասա՝ կատարեմ. այսպես է գիմում աղվեսը՝ գժվարության մեջ գտնվող հերոսին։ Այստեղ, հանձին աղվեսի, գործ ունենք մի ծանոթի հետ, որը գրավականության մեջ հայտնի է որպես «помощник» (помощник)։ Կախարգ օգնականներին (բարի ծերուկի, պատավ կին, աղավնի, գանազան կենդանիներ և այլն) համարյա ամեն հեքիաթներում հանդես են գալիս և կախարգական առարկաները (մազ, փետուր, նշույլ և այլն)։ Դրանք բոլորն էլ առանձնական հանգամանքներ հետ են կապված։ Այդ առանձնահատկությունների մեջ, որ, իրր թե, գալիս են իրենց հովանավորության տակ համարվողներին ընդառաջելու, օգնելու, խրատելու, փրկելու, նպատակներին հասցնելու։

Քննվող հեքիաթի մեջ հրանց նկող աղվեսը գիտե բոլոր կախարգական խորհրդավորությունների գաղտնիքը, ուստի հերոսին գնալի այդ կախարգական աշխարհը առնող հանապարհին ասում է.

«Էս փուշը կընկնես՝ կծիաս, կասես.— Ես ի՞նչ կանանչ հափ ա։ Նի որ փուշը հանց կծծնաս՝ կտեսնես մի հախրուր արին ու վահրն ա. գրանից մի քուռը կառնես, կասես.— Ես ի՞նչ անմահական չուր ա։ Նա էլ քեզ համփա կտա, կծիաս, կտեսնես՝ մի ուրի ծառ կա, մի էրկու հրոպպա տակին կհովանաս, կասես.— Շեն կծնա էս ծառը։ Նա էլ քեզ համփա կտա՝ կծիաս, կտեսնես գրա տնեցի հառաչին մի ձգը կա ու մի ասլան. ձգի հառաչին գմակ կա, ասլանի հառաչին խոտ, գմակը կգնես ասլանին, խոտը կգնես ձգին, նրանք քեզ համփա կտան, կծիաս։ Կծիաս՝ կտեսնես մի ախչիկ նրատած ա. բարով չտաս, աշխատա նրա հուզը կորա ու գուռս հարի։ Իմցար գուռան՝ ատրավ հա՞, ատրա՞վ, ես չեմամչ տանս, կգտանաս քարտ [1]։

Հերոսն այդպես էլ վարվում է. բերում է կորված հուզը, տալիս աղվեսին, աղվեսն առնում է ու գտնում ամի չավ ախչիկ, էն ախչիկը, որի հուզը բերել ա...։ Ապա խոստում է այդ աղջիկը, ասելով՝ ես էն աղվեսն եմ...։ Հետո նա մեկը-մեկով կծրագրանաֆոխվելով հերոսին հաջնում է իր նպատակին։

Այս հեքիաթում հատուկ ուշագրության արժանի է աղվեսի կանացի գիծը, որպիսին նա ուներ

---

[1] Ազգագրական հանդես, VII—VIII, էջ 187։
[2] Նույն տեղում, էջ 187։
[3] Նույն տեղում, էջ 202։
[4] Նույն տեղում, VI, էջ 261—262։
[5] Նույն տեղում, VI, էջ 61։

[1] Հայ ժողովրդական հեքիաթներ, կազմեց Ա. Չալխալյան, Երևան, 1959, էջ 255—256։

նան վերևում նշված բազմաթիվ կարևոր վկայությունների մեջ։ Դա նրան կապում է մայր-իշխանության չլչանի պատկերացումների հետ։

Ազվես առումով, հավանաբար, պատկանել է այն կենդանիների շարքին, որոնց մեջ մարդին գնահատել են, ամենից առաջ, նրա ոհնչքը, խորամանկությունը՝ որպես դրական հատկություն։

Այս առումով հիշենք մի վկայություն № 2373 ձեռագրի 83ա թերթից.

«Մարդին գնահեմ և զՆաւրիմաց մարդն ասեն։ Նմանեցուցանեն, զի ասեն ընդ խելօք մարդն, քէ իբրև գազանս ես գու։ Այսպէս կենդանիդ ազվես յայսպիսի պատճառութիւն իմաստ իցէ, որ զմարդին խելօք իւր նման կու ասեն»։

Հայկական հին աղբյուրների մեջ ազվեսի հետ կապվող ուշագրավ փաստերից են նաև ազվեսագրոշմները։ Դոյութիւն են ունեցել հատուկ կնիքներ, որոնցով քրիստոնեական եկեղեցին խառնել է իր գաղափարական հակառակորդների ճակատները։ Միջնադարյան կանոնագրքերում և պատաստառագրքերում երևան եկող ազդեցի մեկ և շատ տարածված կնիքը կոչվել է ազվեսագրոշմ։ Այստեղից էլ պարզ է, որ այդ կնիքների վրա գեազրված ձևն իրենից ներկայացրել է ազվեսի պատկեր։ Հարց է առաջանում, ի՞նչն էր պատճառը, որ այդ կնիքների անպատման միջոց երևան են եկել ազվեսի գրոշմով։ Լոկ պատահականությամբ բացատրել, կնշանակի խուսափել պատասխանից։ Գրոշմել մեկի ճակատին ազվեսի պատկերը, նշանակում է նրան համարել ազվես։ Բայց երբ այդպիսի անձավորությունը ներկայանում է որպես գաղափարական հակառակորդ, բնականաբար, պիտի համապատասխան գաղափար էլ ունենար ազվեսի կնիքը։ Եվ, իրոք, ազվեսը որպես հեթանոսական պաշտամունքների հետ կապված և առասպելական ծագում ունեցող կենդանի, այդպիսին էր։ Ուստի և ազվեսագրոշմը գիտվում էր որպես հակաքրիստոնեական, հեթանոսական նշան։ Գոյութիւն են ունեցել նման կնիքներ նաև ուրիշ ժողովուրդների մոտ։ № 4724 ձեռագրի 239բ թերթում գրված է, ինչպես ուրացողների մարմնի վրա նրանց տեղ խփվում է կնիք՝ «ի գլուխս զարարիչն նրանի և նրանի, ուրանամ զՔրիստոս իմ և զքեզ դատաւիմ...»։ Առանձնապես ուշագրավ է այն փաստը, որ Հաղորդում է Գր. Մագիստրոսը քոնդրակեցիների կապակցությամբ. պարզվում է, որ եկեղեցին որպես պատիժ քոնդրակեցիների ճակատին խարանել է ամեհի ազվեսագրոշմ։

Ահա այդ վկայությունը.

«Ոմն բնակեալ էին ի Մնավանան այն որք Հանդերձիւք կրօնաւորաց և կանանց բազմութիւն բոլոր, որոց հրամայեցաք տապալել զՔիմունան յարկացն և հրձիգ առնել և զինքեանս հանել ի սահմանաց մերոց, այլ ոչ զոք վնասեցաք մարմնական պատուհասիւք, քէպէտև յորչեան հրամայէ զվնջոյին պատուհասն կրել նոցա. որպէս և նախքան զմեզ բազում զօրավարք և պետք ի սուր սուանցի մատնեցին զնոսա և անողորմաբար ոչ խնայեցին ի տեղս և ի մանկունս, որպէս արժանն էր, նման մեր քահանայապետք ի կիպրոսն գիմաց և ի դրոշմ ազուռաձևիդ...»[1]։

Հայտնի է, որ հետո ընդունված է եղել տասեմ կենդանու նմանութեամբ խարանել գնել տումի անգամների մարմնի վրա։ Այս սովորությունը հետագայում որպես մնացուկ անցել է նաև քրիստոնեությանը։ Ազվեսագրոշմն էլ այդպիսի ծագում է ունեցել։

Ազվեսի կերպարի բացահայտման տեսակետից վերին աստիճանի արժեքավոր տեղեկություններ են հանդիպում նաև հայկական հին առակներում։ Այդտեղ ազվեսի գերն այնքան մեծ է, որ առակների ժողովածուները, իրավամբ, հաճախ կոչվել են «Ազվեսագիրք»։

Ջնայած այսօրվա հասկացողությամբ և միջնադարյան հոգևոր մեկնիչների (օրինակ, Վարդան Այգեկցու) բացատրությամբ ազվեսը համարվում է կեղծավոր, խարեբա, սատանայի համազոր ոխ, բայց նա, ըստ իր վարքի նշանակության, այդպիսին չէ։ Առակների ընդող մեծամասնության մեջ ազվեսը երևան է գալիս որպես սիրելի, համակրելի հերոս, որի բերանով հաճախ խոսում է ինքը՝ ժողովուրդը։ Բերենք փաստեր։ «Ազվես գետատուր առակում ազվեսը հակադրվում է քրիստոնեական սրբերին, քննադատում նրանց հովանավորած սոցիալական անարդար կարգերը։ Նա, խոսքն ուղղելով սուրբ Գևորգին, ասում է. «զքեզէս և զառաքս տեսէք, որ քանի յաչխարհս մարմնով կային սուրբք, նա ի վիրայ կառաց և ի վիրայ ձիոց կային և զաշխարհս լացուցեալ էին. մէկ որ մն մարտիրոսացան, աստուծոյ սիրելի եղեն. ամ հիմա կաշար առնուն»[2]։

Այսպիսի սուր քննադատական խոսք՝ քրիստոնեական սրբերի դեմ՝ միայն աշխատավոր ժողովուրդը կարող էր ասել։

Առավել ուշագրավ են այդ առակի այն տո-

---

[1] Գր. Մագիստրոսի թղթերը, հրատարակեց Ս. Հասատեան, Պետերբուրգ, 1910, էջ 188։

[2] Н. Я. Марр, Сборникъ притчъ Вардана, II, С. Петербургъ, 1899, стр. 92–94.

չերը, որանց ազվեսը, կրկին անգամ ընկնելով սուրբ Գևորգի քանդուքը, չկարողանալով նրան տկաշառս տալ, խոստովանում է իր չքավորությունը. տահա այլ առակ տեսնք, ուսոյ՝ է ինձ խոսնկ, որ քեզ բերեմ, սուրբ Գորգ, ո՞վ եմ ես, պէզիրկան եմ, քէ խանութպան. ուսոյ՞ է ինձ խոսնկս, ոչ ես ունիմ, ոչ քեզ բերեմս։

Ջունենալը, տակայն, չի փրկում ազվեսին. սուրբ Գևորգը նրան արհաշտագին է անել տալիս, իսկ այդ առակի հոգևոր մեկնիչը, հավանաբար, Վարդան Այգեկցին, ավելացնում է. տալս այն մարդն էր, որ նեղեցնուն նվեր ու հարկ չի տալիս։ Իսկ, ինչպես տեսանք, այդ այն մարդն էր, որ ո՛չ ինքն ուներ, ո՛չ էլ կարող էր նեղեցնուն տալ։ Ավելին. այդ մարդն էր, որ մերկացնում էր քրիստոնեական նեղեցնու գիմքը և ծաղրում ու պախարակում նրա չահագործողական արձեք-արդյունները։

Մի՞թե այս ազվեսն աշխատավորության ու գրկվածների ներկայացուցիչը չէ։

Բերենք մի այլ օրինակ. տեմ և հոզագործս առակում ասն ու հոզագործն ընկերանում են։ Գնալը անցնելիս մարդն ասին ծոցն է գնում, որ անցկացնի, տակայն ասը փաթաթվում է նրան և ցանկանում խայտնել։ Մարդուն օգնության է հասնում ազվեսը, ասին գուրս է բերում նրա ծոցից, ապտնել է տալիս և նրա գալարան մարմինը քաշով ուղղելով, ասում է՝ տալսպէս ըղորդ կացիր։ Այսինքն՝ ընկերության նա անում՝ ուղիղ ու արդար նգիր [1]։

Այսառնչ էլ ազվեսը գրական և սիրելի տիպ է, հոզագործի օգնականը և խարդախների քշնամին։

Մի այլ առակում ազվեսն ու արծիվը եղբայրանում են։ Ազվեսի որոշ ուսում են միասին, իսկ արծիվն իր հարաւծը մենակ է ուսում. տեմ եղբայր, ննեգաւոր և ազահ երկիս և աւաղակս, ասում է ազվեսը [2]։

Այսառնչ էլ ազվեսն արդարության և ազնվության պաշտպանն է, անարդար ու անազնիվների քննադատողը։

Հատուկ ուշադրության արժանի է այն առակը, որանց նկարագրվում է, թե ինչպես 3 ազվես և 3 ուղտ գոնում են 3 հաց. ուղտերն առատճներով խլում են այդ հացերը և ագի մեջ բարձրացնելով ուսում՝ ուղտերի տակ էգմնելով սոված ազվեսներին։ Առակի մեկնության մեջ, որը բուն աշխատավորության ոգով է գրված, ասվում է. տեսուցանէ առակս, թէ մեծատուսք եղեն գրգուս ժողովրդեան և շատ պատահի, որ աղքատն ի նեղեալ վիշտացն մեռանիս [1]։

Մի ուրիշ առակում ազվեսը քննադատում է ագնա, հարուստ քաղաքացիներին, որոնք սնունդ բնաւ ոչ ունենս։ Քաղաքորը հրեան է գալիս գալլ-ագռավի կերպով. նա պահիր է գտել. ազվեսը նրան ասում գովքի խոսքեր է ասում, որից գալլ-ագռավը չգիացած սկսում է երգել, և պանիրը վայր է ընկնում.

Ջեռնիդ ազեկ է, այո,— ասում է նրան ազվեսը,— զամենայն տեղիդ չաւել ունիս քաղաւորութենան, տպաւ խելք բնաւ ոչ ունիս գու, մեկ չերս պահիր ոչ կարացիր պահել գու, գիա՞րդ կարես պահել զքաղաւորութիւնս։

Կարելի է գնս շատ օրինակներ բերել։ Սակայն բերվածներն էլ բավական են համոզվելու, որ Հայկական հին առակների մեջ ազվեսը մեծ մասամբ հրեան է գալիս որպես քրիստոնեության և ֆեոդալական կարգերի քշնամի, արտահայտելով ճնշվածների և աշխատավորության չահերը։ Եվ դա պատահականության արդյունք չէ։ Այդ առակների մեջ գոյե ունենք այն վաղեմի առասե ազվեսի գաղափարական հնաքների հնա, որը բազմաքիվ գործեր աշխատավորության պատկերացումների մեջ դիտվել է որպես բարի ուժերի մարմնացում, աշխատավորության հովանավոր և չար ուժերի սիևերիմ ախոյան։

Հետաքրքրական է, որ այդ գաղափարը, սոցիալական հողի վրա, աստիճանաբար սկսել է իմաստափոխվել։ Հատկապես քրիստոնեական նկեղեցին է նզել այն ուժը, որ, պայքարելով ժողովրդական հին պատկերացումների դեմ, պայքարել է նաև ազվեսի մասիվ հին հասկացողության դեմ։ «Ոզուսեան սատանայի աւրինակ է, որպէս բազում առացաւ և ագռաւն մատգունս [2], ասում է Վարդան Այգեկցին՝ հայ նկեղեցու քարոզիչներից մեկը՝ գալլ-ագռավի և ազվեսի մասին մեկերկրված առակի մեկնաբանության մեջ։

Ազվեսի նկատմամբ տրամադրումն հակադիր այս տեսակետները գաղափարագիրին տարբեր պատկանելիություն ունեն։ Եվ եթե նախքան գաղափարագիրն հարաբերությունները մարդիկ հանդեսներում երևան էին գալիս ազվեսների դիմակներով և մորթիներով, ապա այդպիսիներին ոչ ոք քշնամական տեսլությամբ չէր նայում. ընդհակառակը, նմաններով հատուկ հարգանք էին վայելում որպես

[1] Н. Я. Марр. Сборник притч Вардана, II, С. Петербург, 1899, стр. 90—91.

[2] Նույն տեղը, էջ 148—149.

[1] Նույն տեղը, էջ 192 (նաև տես էջ 77—78).

[2] Նույն տեղը, էջ 30.

Հովանավոր կենդանու, սիրելի առասպելի գաղափարներին։ Դասակարգային հարաբերությունների պայմաններում նման անձինք արդեն սակաց համար սիրելի էին, որովհետև պաշտպանում էին նրանց շահերը, իսկ սակաց համար էլ ատելի, որովհետև հակադրվում էին նրանց շահերին։

Այսպիսով, կարող ենք ասել, որ Հայկական հին ավյուրներում, ժեսերում և հավատալիքներում պահպանված են հարուստ փաստեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ազվեսի մոտիվն այդ բոլոր ավյուրներում կապված է առասպելական հասկացողությունների հետ։ Այդ հասկացողությունները, մեզ հասնելու ձևով, պահպանված են ժողովրդական երգերում, հեքիաթներում, էպոսում, առակներում, առածներում, հարսանեկան հանդեսներում և այլ նման բնագավառներում։ Ջի՛ կարելի այդ մոտիվն ուսումնասիրել առանց այս հանդամանքը հաշվի առնելու, հատկապես այն պատճառով, որ ազվեսի գաղափարը հետագայում տրոհվել է և ի վերջո հիմնականում իմաստաֆոխվել, առանալով բոլորովին հակադիր բովանդակություն։ Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես մեր հին առակների ուսումնասիրության ժամանակ։



Նկ. 596



Նկ. 597

Այս ընդհանուր մեկնաբանությունից հետո կարող ենք այժմ համոզված ասել, որ ազվեսը Հայ ժողովրդի նախորդների մոտ ևս եղել է տոտեմ, իսկ մեր զարգացվեստում պահպանված ազվեսապատկերների քննված սրինակներն ու նրանց նմանները՝ համապատասխան մեկնություններ։

Ինքնին հասկանալի է, որ այդ ազվես-տոտեմների հետ երևան եկող կենաց ծառերն ու պրոդարձության սիմվոլները վերաբերում են ոչ թե բնության մեջ քաոսային գաղափար-ազվեսների աճմանն ու զարգացմանը, այլ այն տոհմերի և նրանց ֆրատրիաների, որոնք, երբեմն, որպես տոտեմի, համարվել են ազվեսին։ Ուստի, ինչպես ազվեսը, այնպես էլ նրա հետ կապված կենաց ծառը, հատարակական բովանդակություն ունեն։

Հայկական և ուրիշ ժողովուրդների զարգացվեստներում, վերևում քննված կենդանիների նման, երևան են գալիս նաև շատ ուրիշ կենդանիներ, որոնց համար էլ կարելի է նույնն ասել։ Մենք չգիտի չփոթելու նրանց ո՛չ չատությունը և ո՛չ էլ բազմազանությունը։ Հենց վերևում՝ մարգից մեզ բերված մի վիճակության մեջ տեսանք, թե ինչպես ոչխարվեների տոհմերը միաժամանակ ունեցել են 23 տարբեր տոտեմներ։ Իսկ եթե հաշվի առնենք նրանց ամբողջ պատմության ընթացքում ունեցած տոտեմները, ապա կստացվի կենդանիների մի մեծ թիվ, անկախ այդ կենդանիների տեսակներից։ Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ մեր զարգացվեստում եղնիկների, խոյերի, քաշերի, քաղերի, ազվեսների և շատ ուրիշների քվում երևան են գալիս նաև այնպիսի կենդանիներ, ինչպիսիները են, օրինակ, կրիաները, նապաստակները, արյունը, կապիկները և այլն։

Ամփոփ կերպով կանք առնենք նաև այս կենդանիներից մի քանիսի վրա։

Վերցնենք նապաստակի մոտիվը։

Ինչպես երևում է, նապաստակն էլ, հետևապես, ժամանակին է ունեցել ուշադրության։ Մեր էպոսում այն, նույնիսկ ուշադրավորեն, կապվում է տոտեմական հասկացողությունների հետ։

Ն 5505 ձեռագրի 123ա թերթում հանդիպում ենք հետևյալ տեքստի մի նապաստակի նկարին, որին վերևում մեզ բերված ազվեսապատկերները (նկ. 596)։

Է՛լ ավելի ուշագրավ է Ն 7451 ձեռագրի 244բ թերթի գարդը (նկ. 597)։ Դա մի կենաց ծառ է, որի մեջտեղ մասին տրված է վարսանգա-պաշտային խոշոր սիմվոլի տեսք, իսկ նրա ներսում պատկերված է մի նապաստակ՝ ոսոց տեսնելու։ Այս գաղտնի նկարն ընդհատվածության ցույց է տալիս այն ուշադրության հետքը, որին արժանացել է նապաստակը հետևյալ։



Նկ. 598

Այժմ վերցնենք կրիայի մոտիվը։

M 7451 ձեռագրի 420ա թերթում Հանդիպում ենք մի կրիայի նկարի, որի մարմնի վրա նկարված են ոսկրեր, իսկ մարմնից վեր ու ցած՝ կենաց ծառի պաղպաղեր էլուզներ (նկ. 598)։ Միջնադարյան ձեռագրերում պարզ է, որ այս նկարը տարածվել է որպես զարդ։ Բայց այդ նկարի արտահայտած գաղափարական բովանդակությունը քույլ է տալիս, որ ինքը ծնվել է շատ ավելի հին ժամանակներում։

Կրիայի պատկերը, կենաց ծառի ներկայության պատճառով, այլևս զուգորդում է սովորական կրիայի պատկեր լինելուց, որովհետև իրականում այդպիսի էլուզավոր կրիաներ չկան։ Ըստ էության, այդտեղ չնչաղ գրված է ոչ թե կրիայի վրա, այլ կենաց ծառի և պաղպաղեքայաև։ Ամբողջ զարդարվեստի բնորոշ ձևի վրա քննելով այդ մոտիվը, տեսնում ենք, որ փոփոխվում են կենդանինները, բայց մնում է անփոփոխ կենաց ծառը։ Խոսքը ծառի կրած ձևափոխումների մասին չէ, այլ այն մասին, որ նա բոլոր գեպքերում էլ պահպանվում է։ Հարց է առաջանում. ինչո՞ւ է կենաց ծառը կապվում տվյալ գեպքում կրիայի հետ, որը կարծես թե փոխարինել է որևէ բնորոշ գաղափարանքի։ Դա կարող է առաջացած լինել նրա ճանապարհով։ Առաջին, կրիան կարող է շատ հնում կարևոր տեղ գրաված լինել նաև Հայաստանի որոշ հին բնիկների կյանքում և պատկերացումների մեջ, կապված լինել առանձին հավատալիքների հետ և այդպիսով էլ բարձրված լինել կենաց ծառի ու պաղպաղեքայան գաղափարանշանների։ Կարելի է մատնել նաև, որ ուզումի միջնադարյան նկարիչները՝ բազմազանության համար, նման տեղում ունեցող նկարների մեջ ոչ ավել նաև կրիային, որը Հայաստանում բավականին տարածված կենդանի է։ Հավանական ենք համարում ոչ թե այս պատահականությունը, այլ առաջին ենթադրությունը։ Բավական է հիշել այն հին հեքիաթները, որոնց աշխարհը պատկերվում է գրված կրիայի մեջքին։

Այդպիսի պատկերացումներ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ։

Հնդկական հին պատկերացումների համաձայն, աշխարհի վախճանը և վերածնունդը պատկերված է որպես մի քառակուսի, նրա մեջ՝ մի կրիա, որի մեջքին՝ չորս փիղ, իսկ այդ չորսի վրա՝ նռանկյունի։ Վերջինիս հիմքին պատկերված է մի գանգ, նրա վրա էլ՝ կենաց ծառ (յոտոս, նկ. 599)[1]։

Համապատասխան օրինակներից հիշենք նաև հնդկական կոսմոգոնիկ պատկերացումները ցույց տվող՝ մի նկար ևս, որտեղ աշխարհն իր երկնա-



Նկ. 599

չին չորի կամարներով և նրանց պահող ատրով ու փղերով գտնվում է կրիայի մեջքին (նկ. 600)[2]։

Կրիան, որպես տոտեմ, կար նաև իրոկեզների մոտ, որի մասին խոսվեց վերևում։

---

[1] История религий, тайных религиозных обществ, обрядов и обычаев древнего мира, I, второе изд. С.-Петербург, 1883, стр. 19.

[2] Там же, стр. 22. „Космогония индусов, сих высших сфер, подерживаемых героем Меру, четверыми слонами и черепахой". *Ռուսի կրիաների պատկեր գտնվի է ուսումն նաև Ձեր-Բրյուի „Первобытное мышление" գրքի 380-րդ էջում։*

Հասկանալի է, որ վիրհում քերված և քնարչյան ատրճա կրիայի մոտիվն էլ՝ կապված կենաց ծառի հետ (ինչպես հիշեցինք պատկերացումների մեջ է կենաց ծառը կրիայի մեջքին) ոչ թե պատահական զարդ է, այլ պատմական հասկացողության արդյունք։

Տոհմական հասկացողությունների մեջ առանձին տեղ են գրավել նաև թռչունները։ Այսօրվա, անշուշտ, նշանակություն է ունեցել մանավանդ թռչունների օգտակար ուրախալու ընդունակությունը։

Հայկական աղբյուրներում հարուստ վկայություններ են պահպանվել նաև թռչուն-տոտեմների մասին։ Հայկական հին տարմանունների մի մասի մեջ պահպանված թռչունների կոչումները դրա ապացույցներից մեկն են։ Մեր լեռնիկոնում նույնպես պահպանված են եղել համապատասխան հետքեր։ Միջնադարում գեռևս ուժի մեջ եղած «հավ բառը՝ նախնի իմաստով՝ դրա լավագույն օրինակն է։ Ինչպես հայտնի է, հետո հատուկ հանգամանքներ են եղել՝ նվիրված տոտեմ նախնիներին, որոնց մարդիկ զգնատավորվել են այդ տոտեմների նման և պարել։ Մեր լեռներում մինչև օրս պահպանված «հավքավիչ» բառը ցույց է տալիս կապավ տոտեմի նմանությամբ մարդկանց զարդարված լինելն ու պարելը։ Համապատասխան վկայություններ պիտի համարել նաև այն պարերը, որոնց մեջ պարուրն աշխատում է ներթափանցել ամբ կամ այն թռչուններն։



Նկ. 600

Հարությունյան հանգամանքում ևս պահպանվել են այդպիսի շատ հետքեր։ Վիրհում մեջ քերված «էն աստուծոյ օրհնությունով» ծառազարդում տոտեմ կենդանիների հետ երևան է գալիս նաև «նաստան պիլպիլնա»։ Համապատասխան ուրիշ երգերում նույն ձևով հրավիրվում են «գնում եմ չոլվնա, գրադի ի գոլվնա և այլ թռչունները։

Ժողովրդական երգերի մեջ ևս կարելի է գտնել այդպիսի շատ փաստեր։ Օրինակ, վիրհում նշված հայրենիքներից մեկում երթևեկի անուղղը համարվում է բազեն.

Ու չանկն բազան անուշիս։

Անկի հետ կապված մի ուրիշ հայրենում երթևեկն, իր ծնողներին հիշելիս, ասում է, թե իրեն

Փայ արեին է ինի ասլան։

Առանձնապես ուշագրավ են հեքիաթներում երևան եկող թռչունները, որոնք հերոսներին, իրենց քների վրա գրած, տանում են մութ աշխարհից դեպի լույս աշխարհը, փրկելով նրանց կյանքը։ Այդպես թռչուններն են հանախ քերում գարունը երկրի վրա (հավքարան բլրուշը) և կատարում բնորհանրապես միևնույն փրկարար դեր մարդկանց նկատմամբ։

Հայտնի է, որ հին ատավածուհիներին երբեմն ժամանակ ուղեկցել են նախկին տոտեմները՝ որպես ատրիբուտներ։ Դրանց թվում մեծ տեղ են գրավել նաև թռչունները։ Այդպիսիներից հիշենք, որպես օրինակ, ագռավին, որը նվիրագործվել է Անահիտ, Աստղիկ և ուրիշ աստվածուհիներին։ Հին հավատալիքները վկայում են, որ Ամիքրամը պատկերվել է մարդու գեմքով և ագռավու մարմնով (նկ. 619)։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ հետո թռչունները էլ հայ ժողովրդի նախնիների մոտ համարվել են տոտեմներ։ Բնականաբար, զարդարվեստում երևան եկող թռչունների մեջ էլ մեծ տեղ պիտի գրավեն նման հատկացողություններ հետ կապված մոտիվները։ Բերենք օրինակներ։



Նկ. 601



Նկ. 602



Նկ. 603

№ 4514 ձեռագրի 112ա թերթում գտնվող լուսանցազարդը մի ավանդական ոճավորված կենաց ծառ է, որի հիմքում մարդկանց և այլ կենդանիների նման գտնվում է մի թռչուն (նկ. 601)։ Մենք դժվարանում ենք որոշել այդ թռչունի տեսակը. արագի՞լ է, թե ձկնկուլ, կռո՞ւնկ է, թե կարապ, սակայն առանց դժվարության տեսնում ենք տոտեմ նախնուն, որի վրա հենված է նրանից սերված տոհմական ծառը։

Համապատասխան նկարի ենք հանդիպում նաև № 4551 ձեռագրի 298ա թերթում (նկ. 602)։ Այստեղ թռչուն-նախնին կանգնած է կարծես երգելու վիճակում, ուրախ տրամադրությամբ, իսկ նրա գլխին գտնվող տերևափնջից աճել է պտղաբերության գաղափարանշանը։ Այստեղ կենաց ծառը չունի այն ճոխ տեսքը, ինչպես նախորդ նկարում, բայց դա նշանակություն չունի, որովհետև կարևորն այդ ծառի առկայությունն է և ոչ նրա ձևը, որը միշտ էլ ենթակա է փոփոխման։

Այդպիսին է նաև վրացական մանրանկարչությունից մեզ բերվող նկարը (նկ. 603)[1]։

Ահա մի ուրիշ օրինակ № 5505 ձեռագրի 147բ թերթից, որտեղ թռչուն-նախնին առնչվում է կենաց ծառի հետ ավելի ուշագրավ ձևով (նկ. 604)։ Այստեղ նրա թևերն են վեր ձգվել և միահյուսվելով ստեղծել կենաց ծառը[2]։

---

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. CLII, рис. 6.

[2] Այս թռչունն ունի յոթ թև։ Նման մոտիվները կրապաշտության են առնչվում։



Նկ. 604



Նկ. 605

Պարտադիր չէ, որ կենաց ծառը երևան գա միշտ թռչունի (կամ ուրիշ կենդանու) գլխից վերև։ Քանի որ էականը տոտեմ-նախնին է, ապա նրա հետ առնչվող և նրանից սերված կենաց ծառը կարող է տեղ գտնել այդ էակի նաև ուրիշ մասերի վրա և ունենալ ուրիշ ձև ու դիրք։



Նկ. 607

Ահա մի ուրիշ նկար՝ № 5505 ձեռագրի 76ա թերթից, որտեղ գաղափարական իմաստով պատկերված թռչունը գտնվում է օդում, խոյացող թռիչք գործելու դիրքով (Նկ. 605)։ Այստեղ կենաց ծառի



Նկ. 606

գաղափարը ցույց է տրված նրա պոչի համապատասխան ոճավորման շնորհիվ։

Հաճախ էլ տոտեմ-կենդանին պատկերվում է կենաց ծառի միջին մասում, իրենից վեր ու ներքև ձգելով այդ ծառի ճյուղերն ու այլ օրգանները։ Այդպիսին է, օրինակ, № 3722 ձեռագրի 191ը թերթում գտնվող նկարը (Նկ. 606)։

№ 197 ձեռագրի 252ը թերթում գլխատառ «Ե»-ն նկարված է թռչնակերպ, որտեղ կենաց ծառի գաղափարն առնչվում է այդ թռչունի կտցի հետ (Նկ. 607)։ Դա սուր կտցին մոտիկ մի այլ տարբերակն է, որն այս նոր մեկնաբանության մեջ



Նկ. 608

արմատը կապվում է զարգացյալ տոհմի և տոտեմիզ-մի հետ։

Կենաց ծառի մոտիվը ոճավորվելով ստանում է տարբեր ձևեր, իր հետ միասին փոփոխելով նաև տոտեմ կենդանու պատկերը։ Ահա այս տոտեմով մի ուշագրավ նկար՝ բուլղարական միջնադարյան մանրանկարչությունից (նկ. 608)[1]։

Այդպիսի դեպքերում տոտեմը ներկայանում է հատկապես որպես արտադրող, ծնող, սերող, որը և նրա գլխավոր ֆունկցիան է համարվել։

Թռչուն տոտեմներն էլ հաճախ պատկերվում են տոհմական կենաց ծառերի գագաթին։ Այդպիսին է, օրինակ, № 6349 ձեռագրի 288բ թերթի լուսանցազարդը (նկ. 609)։ Այս թռչունի կապը գաղափարական հասկացողությունների հետ ցույց է տրված նաև ուսուցապատկերի միջոցով։ Դա համեմատաբար ուշ շրջանի նկարից է, որը, սակայն, հանգես չէր գա, եթե այդտեղ պատկերված թռչունը և կենաց ծառը որպես բնական տոտեմական վերարտադրություն չլինեին։



Նկ. 609



Նկ. 610

№ 6257 ձեռագրի 171ա թերթում հանդիպում ենք համապատասխան մի այլ լուսանցազարդի, որտեղ կենաց ծառի վերին մասն ավարտվում է թռչնային գլխով (նկ. 610)։ Ըստ էության, այդ կենաց ծառն ամբողջապես իրենից ներկայացնում է տվյալ թռչունի մարմինը։

Այսպիսով, տեսնում ենք, որ տոտեմ նախնու և տոհմական կենաց ծառի մոտիվները երևան են գալիս ամենաբազմազան ձևերով։

Նկատելի է, որ հաճախ այս մոտիվները զարգանում են նաև կենաց ծառի աճման ճանապարհով, ստեղծելով տոտեմ կենդանու, տվյալ դեպքում թռչուն տոտեմի, ավելի բնական պատկեր։ Այդպիսի նկարների ուշագրավ նմուշներից հիշենք մի քանի օրինակ № 7729 ձեռագրի 315բ, 201ա, 410ա թերթերից (նկ. նկ. 611, 612, 613)։ Կենաց ծառի գաղափարն առաջին դեպքում ցույց է տրված թռչունի պոչի միջոցով, իսկ երկրորդ և երրորդ նկարներում՝ պարանոցների։

Այս մոտիվների կապակցությամբ էլ կարելի է հիշել մի հանգամանք, որի մասին մասամբ խոսվեց վերևում։

Զարդարվեստի թռչնային մոտիվների զարգացման ընթացքում նույնպես տեղի է ունեցել, եթե կարելի է այսպես կոչել, անցումային պրոցես. թռչունները ազատագրվել են բուսական տարրերից, իսկ բույսերը՝ թռչնայինի։ Ահա մի գողարիկ նկար՝ № 356 ձեռագրի 46բ թերթից (նկ. 614)։ Այստեղ արդեն թռչունները ոչ մի օրգանական առնչություն չունեն իրենց միջև պատկերված կենաց ծառի հետ։ Ինքը՝ կենաց ծառն էլ՝ ավելի քիչ է ոճավորված։ Վերջին հաշվով այս նկարում ավելի շատ առկա է բնական տեսարանը, քան գաղափարական պատկերը։

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. IV, рис. 2.



Նկ. 811



Նկ. 812



Նկ. 813



Նկ. 614

Ներկա կյանքն ու իրական աշխարհը՝ հին հավատացողությունների մոռացման, համապատասխան ծեսերի վերացման և պահպանվող տրադիցիաների քայքայման հետ միասին՝ մանրանկարիչների և այլ արվեստագետների առջև բաց են արել նոր հնարավորություններ՝ գնալի ոճով իրականությունը։ Սակայն այս նոր պայմաններում այդ գործին խանգարել է քրիստոնեական գաղափարախոսությունը։ Եվ հին զարգացմները նորանոր բացատրություններով և տրադիցիան ուժով կարոզանում էին պահպանվել, ապա բարդություններից անդատված, բնական մոտիվները չէին առնչվում նոր գաղափարախոսությանը։ Բոլորովին բնական կենդանիներն ավետարանների լուսանցներում և գլխագրերում, պարզ է, որ բոլորովին այլ կերպ պիտի հնչեին։ Ոստի և նմանները քիչ են։ Գտանել, վեր հանել և արժեքավորել բոլորովին բնական կենդանիների մոտիվներ, բնական տեսարաններ, նշանակում է ցույց տալ այն նորը, որ մտել է մեր զարգարվեստի մեջ աչխարհիկ կյանքի շնորհիվ, մեր միջնադարյան արվեստի մշակների քանքերով՝ ընդդեմ քրիստոնեական հնչեցու և հին (նախքրիստոնեական) տրադիցիաների։

Հրապես այդ տեսակետից ուշադրավ նմուշ հիշենք № 358 ձեռագրի 33ա թերթի լուսանցքում պատկերված բադերի խմբի նկարը (նկ. 615)։ Այստեղ ոչ մի գաղափարական բովանդակություն ցույց տվող հիմնիկա չկա, այլ կա բնական տեսարանի մի գողտրիկ վերարտադրություն։

Նման նկարները զարդացել են նաև զարդագրերի միջոցով։ Բուլանիերով զարդագրերից ընդօրինակենք մի նմուշ № 3722 ձեռագրի 129բ թերթից (նկ. 616)։ Ճի կարելի ասել, թե աչտեղ խոսքս բացակայում է հին տրադիցիան, բայց և այնպես այս նկարում նկատելի է բնական թռչնապատկերների ատեղծելու ձգտումը։

Ընդհանրապես այս հարցը կարևոր է, սակայն նրա մեջ խորանալը դուրս է մեր նպատակից, ուստի բավարարվենք այսքանով։

Փաստերն էլ կարելի է համարել բավական։

Այսպիսով, տեսանում ենք, որ զարդարվեստում, թեչերս և հին պատկերացումների, ծեսերի, ժողովրդական բանահյուսության մեջ և ուրիչ բնագավառներում այնքան առատորեն հրևան ենող կենդանական մոտիվները, իրենց զգալի մասով, կապված են հրեմեի առասպական հավատացողությունների հետ և ունեցել են հատարակական բովանդակություն։

Այդ առասպելներն արտահայտել են ստեղծ, ֆիատրիայի, ջնջախմբի և այլ նման միավորների հիմնադիրների գաղափարը. իսկ նրանց հետ կապված ծառերն ու պաղտրեքրության սիմվոլները՝ ամլուծ կոլնկոլիի աճման և զարգացման իմաստը։

Քանի որ զարդարվեստում, թեչերս արդեն տեսանք մինչև այսօր ցույց տրված փաստերի միջոցով, այդ կենդանապատկերները ու բուսական զարդերը կարող են և՛ միասին հրևան գալ, և՛ առանձին, ուստի նույնը կարելի է ասել նաև առանձին-առանձին հանդիպող մոտիվների մասին։

Դրան պիտի գումարել նաև նախորդ գլխում քննված փաստերից արված եզրակացությունը, որանց Հատարակական մոտիվների քացահայտման համար օգտագործել էինք հատկապես մարդկային մոտիվներ։

Ուստի առանձին-առանձին հանդիպող կենդանատատիկները, կենաց ծառերը, տերկրաչափական մոտիվները՝ նույնպես առնչվում են Հատարակական հատկացողություններին հետ։

Բացահայտելով գարդարվեստի մոտիվներում հատարակական հատկացողությունների ընդհանուր բնույթը, տեսանում ենք, թե որքան մեծ տեղ է հատկացված այդպես նախնիների գաղափարին։ Տոհմական ծառերն ամբողջապես հենված են նրանց վրա, նրանցից են տերված, նրանց հետ են միաձուլված։ Նրանց տակա են անգամ այն դեպքում, երբ ցույց է տրված չինում միայն տոհմատարը։ Այս բոլորը նյութական ու պերճախոս տպագույններ են երբեմնի այն ռեալ իրականության, երբ մարդին իրենց արժեկցական կապերին վիճիարի տեղ էին հատկացնում, հիշում էին իրենց տոհմի հիմնադրումն կամ հիմնադրին, կազմում նյութագրական տոհմատառեր, որպեսզի իրենց արտադրական կոլեկտիվն առավել կուռ, միատեսակ, դիմացկուն, համերաշխ և անքակտելի լիներ։

Կղերա-բուրժուական գիտնականները միշտ էլ անտեսել են պատմական այս էջմարտությունը և աշխատել, նրա ազատվածման ու խնդությունման միջոցով, ամրապնդել իրենց հակագիտական, իդեալիստական չինեու տեսակետները։



Նկ. 618

«Տոհմերի ծագումն ընդհանուր նախահայրերից ծանր գլխացավանք պատճառեց գիտնական Ֆիլիատերներին (Warns)։ Թանի որ նրանք, իհարկե, դուռ առաջին էին համարում այդ նախահայրերին, ապա ոչ մի կերպ չէին կարողանում տոհմի ծագումը բացատրել միմյանց կողքի գոյությունն ունեցող, տերբնապես միմյանց հետ նույնական ամենևին ազգակցություն չունեցող բնատիպերից, մինչդեռ այս խնդիրը պետք էր լուծել, որպեսզի միայն բացատրելի տոհմի գոյությունը։ Դրա համար էլ նրանք ընկնում էին գաստրեիստական կախարդական կախարդական շրջանի մեջ, որ հետու չէր գնում հետևյալ նախադատությունից. քեև հյուսե-



Նկ. 619

Քե ինչպես են նրանք գլխիվայր չուռ տվել անցյալի պատմական իրականությունը, խեղդել նախնիների և տոհմատառերի մասին եղած փաստերը, այդ մասին վերին տատիճանի մեծարժեք վկայություններ են հանդիպում մարքսիզմի հյուսիսների մոտ։ Այս տեսակետից, հատկապես նեղ աշխատության համար, ուշագիր պետք ունի Մարքսի և Ենգելսի մարքերի հետևյալ ամփոփ չատրագրանքը.

գրական ծառը մի առաստիլ է, բայց տոհմը գոյություն ունի իրականության մեջ, և դրա համար էլ վերլուծվելու մենք Դրատի մոտ կարդում ենք (փակագծերի մեջ՝ Մարքսի հավելումներն են) հետևյալը. «Մենք միայն հազվագեպ ենք լսում այդ Հյուսագրական ծառի մասին, որովհետև այն հրապարակ է բերվում միայն որոշ, հատկապես հանդիսավոր դեպքերում։ Բայց ավելի պակաս նշանավոր տոհմերն էլ ունեին իրենց ընդհանուր

ֆրանսական արտադրությունները (տարօրինա՞կ է այս, պարո՛ն Պրուա) և ընդհանուր գերմարդկային նախահայրն ու ճյուղաբրական ծառը. ճիշտ այնպես, ինչպես ավելի ակնառվոր տոհմերը (որքա՞ն տարօրինակ է այս ամենը, պարո՛ն Պրուա, ավելի պահա՞ս նշանավոր տոհմերի վերաբերմամբ). հիմնական պլանն ու բդեսական հիմքը (հարգարժան պարո՛ն, ո՛չ քե իդեական, այլ կարևոր, պարզապես՝ մատենագա՞ն) բոլոր տոհմերի մոտ էլ նույնն էր։

Մարդանի պատասխանն այս առթիվ Մարքան սմփոփում է հետևյալ խոսքերով. «Ընդհանրից ազգանվության սիստեմը, որ համապատասխանում է տոհմի նախնական ձևին — և հույներն էլ ունեցել են մի ժամանակ այդ ձևը, ինչպես և մյուս մարվիսացուները—տոհմի բոլոր անդամներին հետաքրքրություն էր տալիս իմանալու իրենց ազգակցական կապերը։ Այս իրենց համար չափազանց կարևոր բանը նրանք լուծում էին գործնականապես, մանկական հասակից սկսած... Տոհմական անունը մի ճյուղաբրություն էր ստեղծում, որի կողքին առանձին ընտանիքի ճյուղաբրություն անընդհատ էր հրնում։ Այսուհետև այդ տոհմական անունն էր, որ պետք է վկայեր նրա կրողների ընդհանուր ծագման իրողության մասին. բայց տոհմի ճյուղաբրական ծառն այնքան հին էր գնում գնալ ժամանակների խորքերը, որ տոհմի անդամներն այլևս չէին կարողանում ապացուցել իրենց փոխադարձ ազգակցության իրական ստիճանը, բացի սահմանափակ քիվով դեպքերից, երբ խնդիրը վերաբերում էր ամենի նոր ընդհանուր նախնիքներին։ Հենց անունն ինքը ընդհանուր ծագման ապացույց էր, և այն էլ՝ անվիճելի ապացույց, բացի այն դեպքերից, որոնք որդեգրության էին վերաբերում։ Պրան հավասակ՝ ամեն տեսակ „ազգակցությունը տոհմակիցների մեջ փաստորեն մերժվում էր, որ տոհմը գոյություն է մի զուտ մտացածին ու հետևյալ ստեղծագործություն,— ինչպես այդ անում են Պրուդոնը և նրանցը,— տիպիկականոն, այսինքն՝ կարիքավորյին դեռևս կանանց արժանի գորե է, նկատի առնելով, որ տերունների չդիմադրությունը, հատկապես մենամուսնության ստորարեր գալով, տանում է դեպի հետզհետե անցյալը, իսկ անցյալ իրականության հրեակայական պատկերացումների մեջ, բացի ֆիլիստերներից ներգաղջին և ներգաղջնում են, քե հրեական տոհմածառն է, որ իրական տոհմեր է ստեղծել»[1]։

[1] Ե. Լ ե գ ի ս ո ն Հիմունքի, մասնավոր սեփականության և պետության ծագման մասին, 1948, էջ 134—138։

Մեզ քե որքան պատմականորեն են իրար հետ կապված տոհմերն ու նրանց ճյուղաբրական տոհմածառերը։ Ինչպես ցույց են տալիս Մարքսն ու Ենգելսը, տոհմածառերի դիցաբանական պատկերացումները իրենց մեջ խտացնում են անցյալի իրականության, այն է՝ տվյալ դեպքում տոհմական կարգերի պատկերն՝ իրենց ազգակցական կապերով։

Ջարդարվեստի այժմ բացահայտվող այս մոտիվները, իրենց բազմազանի և բազմաթիվ փաստերով ծառայում են իրրև իլյուստրացիա այն հանճարեղ տեսության, որ մշակել են մարքսիզմի կլասիկները նախնիների և տոհմածառերի առեղծվածը լուծելիս։

Ժամանակի ընթացքում փոխվել են ընտանեկան ձևերը, մոռացվել են հին նախնիները, առաջ են եկել նրանց նորանոր հարդարները, բայց նախամոր, նախահոր՝ տվյալ ցեղի, տոհմի, ժողովրդի, գերդաստանի, ընտանիքի հիմնադիրների գաղափարները հարատևել են։ Մարդիկ մինչև էլ իրենց կյանքում ու պայքարում, խնամույքներում ու առևտրականություններում, էպոսներում ու երգերում սիրով են հիշել նրանց՝ իրենց նախնիներին որպես գործիչների։ Եվ հենց այդ հիշողություններն է, որ այնքան ուշագրավ ներկով հարատևել է նաև ժողովրդի հոգևոր կուլտուրայի բնագավառներից մեկում՝ նրա բազմազարյա գարգարվեստում։

Հարց է առաջանում. պատմական ի՞նչ կենդանի պայմաններում է առաջացել նախամոր կամ տոհմի հիմնադրումու գաղափարը։ Այս հարցի պատասխանը գտնում ենք Ենգելսի հետևյալ տողերում.

«Երբեմն տրվեն, որ ամուսնության ընտանիքի մասին խոսելիս, մենք տեսանք, քե իր նախնական ձևով ինչուիսի կապ ունի տոհմը։ Նա բազկացած է այն բոլոր անձերից, որոնք ամուսնության միջոցով և նրա մեջ անհրաժեշտաբար իշխող պատկերացումների համաձայն՝ կազմում են մի որոշ նախամոր, տոհմի հիմնադրուհու, բոլորի կողմից ճանաչված սերունդ։ Քանի որ ընտանիքի այս ձևի ժամանակ հայրությունն անհամասատ է, ապա ճանաչվում է միայն կանացի գիծը[1]։

Այս նախամայրերի և տոհմի հիմնադրուհիների գերն ու դիրքը իրենց արտահայտությունն են գտել աստվածուհիների դիցաբանության մեջ։ Այդ մասին ևս մարքսիզմի կլասիկներն ունեն որոշակի ցուցումներ։

[1] Նույն տեղում, էջ 118։

«Նշպես Մարքսն է նկատում,— գրում է Ենգելսը,— ատամնափուշիների գիրքը դիցարանության մեջ պատկերում է մեզ մի ամբողջ վաղ ժամանակաշրջան, երբ կանայք ավելի ուշտ և պատվավոր գիրք էին վայելում, հետագայում մենք կնոջն արդեն ուշադրության գերիշխանությամբ և ստրկուհիների մրցմամբ նվաստացված ենք տեսնում [1]։

Այս դրույթը մեզ կրկին ուշադրում է դնում մայրիշխանության շրջանը։ Առավել հին ժամանակներում նման գաղափարներ որոնելու իրավունք էլ չունենք, որովհետև տոտեմիզմն ավելի հին են, քան ենթադրվող ատելված դիցարանությունն իր աստվածներով ու կիսաստվածներով (Մարքս) [2]։ Իսկ տոտեմիզմ էլ իրենց տնտեսական ձևով, ինչպես ենգելսն է ցույց տալիս, հիմնականում կապվում են ոսկունդության բնաանիքի հետ, որը գոյություն է ունեցել տեղամասյա բոլոր բարբարոսների և կուլտուրական ժողովուրդների մոտ [3]։

Հասկանալի է, որ ինչպես աստվածուհիների ծագումը կապ ունի մայրիշխանության և նախամայրերի հետ, այնպես էլ աստվածների ծագումը կապված է հայրիշխանության շրջանի և նախահայրերի գաղափարների հետ։

Այս տեսակետից ևս մարքսիզմի կլասիկներն ունեն համապատասխան ցուցումներ։ Այսպես, օրինակ, ենգելսը, հունական տոտեմի մասին խոսելիս, գրում է, որ այդ տոտեմն ունեցել է զգեցնուր կրոնական տոնախմբություններ, ինչպես նաև քրմության բացառիկ իրավունք մի որոշ աստծու՝ տոտեմի ներքայացուցիչ նախահոր՝ պատվին զոհաբերական արարողություններ կատարել...» [4]։

Ահա մի ուրիշ վկայություն.

«Նշպես որ ամերիկացիների մոտ էր, ֆրատարիան մի քանի գուսար տոտեմների բաժանված և նրանց միացնող սկզբնական մի տոտեմ էր և հաճախ նրանց բոլորին գլուխ անում էր մի ընդհանուր նախահորից։ Այդպես, ըստ Գրոտի, ազնվատեվնի ֆրատրիայի բոլոր հասակակից անդամները միևնույն աստծուն էին համարում իրենց նախահայր սանսկրիտերեն պորուսա. հետևաբար, այս ֆրատրիայի բոլոր տոտեմները բառացիորեն եղբայրական տոտեմներ էին» [5]։

Այս երկու գնդցումն էլ տոտեմային աստվածների ու տոտեմերի հիմնադիր նախնիների գաղափարները կապակցված են։ Հասկանալի է, որ ինչպես մայր աստվածուհու կերպարն է հետագայում առնչվել տոտեմի հիմնադրության կամ նախամոր մասին նրան պատկերացումների հիման վրա, այնպես էլ տոտեմային աստվածներն են նմանեցվել տոտեմերի հիմնադիրներին, նախահայրերին։

Այժմ աշխատենք համառոտակի ծանոթանալ նախ՝ նախամոր, ապա՝ նախահոր գաղափարների արտացոլման ձևերին և նրանց հետագայում կրած ձևափոխումների հետ։

Տոհմատիրական շրջանի պատմությունն սկսվում և զարգանում է մայրիշխանությամբ, ուր և իշխում են նախամոր հետ կապված պատկերացումները։ Այդ շրջանում է զարգանում նաև տոտեմիզմը։ Բնականաբար, նախամայրերը պիտի պատկերվեին կենդանակերպ կամ նաև կենդանակերպ։ Մեր մենք վերևում ընդհանրապես ծանոթացանք տոտեմ նախնիների մոտիվների հետ, այժմ կաշխատենք ցույց տալ կոնկրետ փաստեր, որոնց վերաբերեն տոտեմ նախամայրերին։

Այս առումով հարուստ վկայություններ կան հատկապես ժողովրդական բանահյուսության մեջ։ Վերցնենք նորից հորալ քալունի մասին պահպանված զրույցը, որի մասին մասամբ խոսված է վերևում [6] տեքստի մեջբերումով։

Հին պատկերացումների համաձայն, նախնիները որպես տոհմի հովանավորներ պիտի հսկեին նաև նրա ամբողջ կյանքի և գոյամիջոցների հայթայթման բարեհաջող ընթացքի վրա։ Այդ պատկերացումները ցայտուն կերպով դրսևորված են նշված զրույցում։ Ընդհանուր պաղաթնությունյան վտանգի տակ գտնվելը բացատրվում է երկու ուժի չեզոքիվ. առաջինը՝ բնության ուժերն են, որոնց մասին արդեն խոսվել է վերևում։ Երկրորդն՝ ինքը հորալն է, որովհետև, ըստ զրույցի, նա գոլորշենք ունի։ Այս երևույթը չպիտի դիտել որպես միջկապության, ինչպես արել է Մ. Արեղյանը [7]։ Միջկապությունը ոչ մի կապ չէր կարող ունենալ պաղաթնությունյան երևույթի, ինչպես նաև հզիությունյան ու ծերության հետ։ Այստեղ խոսքը վերաբերում է սեռական կապին։ Դրա ապացույցներից մեկն էլ այն է, որ քննվող զրույցի առաջին հրատարակողի, Գ. Ալիշանի օգտագործած ձեռագրի մեջ այդ զրույցը նշված է որպես սիմեռակապիս գեմ արտասանվող կախարդահմայական ոգորքը։ Իսկ, ինչպես գիտենք, սիմեռակապը սեռական կարո-

[1] Ֆ. Ենգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 22։
[2] Նույն տեղում, էջ 134։
[3] Նույն տեղում, էջ 37։
[4] Նույն տեղում, էջ 133։
[5] Նույն տեղում, էջ 136։

[1] Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, I, Երևան, 1944, էջ 38։

գուցեեների ժամանակակից քննությունն է, որի դեմ ժողովուրդը մշակել է զանազան միջոցառումներ (սրինակ, հարսանիքի համար գոմված եզան արյունի մեջ քաշխախված դանակը հարսի տոլում պահելը), այդ քվում սպառազրծվել են նաև հնագույն գրույցների համապատասխան բանաձևերը։ Ալեպիսով, ընդհանուր անբնդրդունելությունը կապվել է նաև հարալ ծնողի ծննդաբերական օրգանների ոչնապղծությանս հետ։

Քննվող գրույցի մեջ կա մի ուրիշ մոմենտ ևս, որով այն առնչվում է մայրիշխանության շրջանին։ Հորային այսօրը գիտվում է որպես տանեղբայր քույր։ Հարրը կայանում է ոչ թե պատահական համեմատության մեջ, այլ՝ պատմական իրականության արձագանքի։ Ըստ որում, Հորայի գործարքը պիտի գիտել նաև որպես եղբոր բացակայության արդյունք։ Նա չի պատրաստում որպես տանեղբայր քույրս, ահա գրույցի ուշիղ միտքը։ Այդ նույն գրույցի մի այլ վարիանտի մեջ, որը քնդի է և գրի է առնված XIII—XIV դարերում, շատ Հորայն արդեն փոխարինված է բիբլիական Ջաքոնով, բայց գեռ շարունակվում է գիտվել նաև որպես ազգի կին.

— Ջաքոբ եռանալ ւր ի առնկն բրնազգ,
Լայր գնա լսկիան ազոյ,
Հասպնր գնա ազգի կնէ։
Ոյր Նիսուս Քրիստոս յանդ Լկաց և Լուաց.
— Ջաքոբ'ս,
Է՛ր լաս գնա լսկիան ազոյ,
Կամ եռասկնս գնա ազգի կնէ։
Ասկ Ջաքոբս,
— Ոյր, գնգնալ եմ ասեակց բազգս...[1]

Մի գնգրում Հորային պատկառում է եղբայրը, իսկ մյուս գնգրում նա գիտվում է որպես ազգի կին։ Եվ այդ բոլորն անբնդրդունելության և նրա ծննդաբերական օրգանների կապվածությանն հետ միասին։ Բնականաբար պիտի ենթադրենք, որ ելքրայրը բառն այդ գրույցում համապատ է ամուսին բառին։ Դա երևում է նաև մի ուրիշ մոմենտից։ Հորայը ազգում է, գիմելով երկնային ուիրյալը, որը, ավելոլ գնգրում, ակնարկել է տալիս Քրիստոսին։ Պարզ է, որ Քրիստոսը հետս է մտել այդ գրույցի մեջ՝ որպես Հորայի կենսակցի հաղորդին։ Բայց Հորայը ընդհանրապես անընդհատ քրոջ նման չիննլով հանդերձ, ունենալ է նաև մի ուրիշ ամուսնացու, որին գիմել է։ Դա խոստամուսնության հույլ է։ Ենթ այդ մոմենտն է, որ եղբայրը հասկացողությունը կապում է ամուսնու հետ։ Ենախնադարյան շրջանում քույրն իր եղբոր կինն էր, և այս բանը բուոյական էր.— ասում է Մարքսը [1]։ Ենդհայրերն ու քույրերը, հորեղբոր ու մորեղբոր, հորաքրոջ ու մորաքրոջ զավակները ու ավելի հեռավոր ազգականները բոլորը համարվում են եղբայրներ ու քույրեր միմյանց նկատմամբ և ենենց այդ պատճառով էլ՝ մենը մյուսի համար մարդ ու կին են։ Եղբոր և քրոջ սեռական հարաբերությունն շնասանիքի այս ստադիանում իր մեջ բովանդակում է, իրրև ինքնըստինքյան հասկանալի բան, փոխադարձ սեռական հարաբերության գոյությունը, կարդում ենք Ենգելսի մոտ [2]։

Որ այդպես խոսքը վերաբերում է ամուսնական զույգի մնասնությանը, դա երևում է նաև այդ գրույցի վերջին տողերից, ուր ասվում է.

Ամուսնիքս եղիմէ,
Ամուսնիքս եղիր...

Որտեղ երկինքն ու երկիրը նույնպես երևան են գալիս որպես ծնող-զույգ [3]։

Ծգրտագրությունը պարզ է. Հորայն այս հին գրույցում հանդես է գալիս որպես ալեպիսի կնոջ գազափարական արտահայտիչ, որը համարվում է բոլոր պտղաբերող ոժների հովանավորը։ Իսկ, ինչպես գիտենք, այդպիսի կնոջ գազափարի մեջ

---

[1] Ե. Ն. Գ ե լ ս։ Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 50։

[2] Նույն տեղում, էջ 49—50։

[3] Հայկական հին մասնագրությունների մեջ կան համապատասխան ուրիշ վկայություններ էլ։ Օրինակ, կրակն ու ջուրը գիտվում են որպես ստորին տեսնելի նախնիներ և կոչվում քույր ու եղբայր։ Վ գործ մասնագրության մեջ կարդում ենք.

«Ասուածն գնորեն Քոյրն, և գնգրեին՝ Նշանն.... և կամ տատատատագրության գործ է Նատ-Քոյրն՝ Հասկեն յանդ յորտորուքն ստրեին՝ որ քրնեն յատս յերանգն, որ է յատաց խոստումին.... Եւ գի ասկեն գնորեն Քոյրս և գնգրեին՝ Նշանդ, յերկիր ոչ արտանգեն գմարիրն, այլ արտատատագ եղբորն ընկերնս։

Մինչև այս մասին գրված աշխատությունների մեծ մասը է ուղղություն. բոլոր կենաց ծառերը դիտվում են որպես կրոնական մտածողության արդյունք։ Անկամ ժողովրդական կյանքի ու կենցաղի կենսաձևով բնագավառներից առնված համապատասխան մոտիվներն էլ քննվել են այդ սկզբունքով։ Հավատալի դիպվում որոշ հնդիանքներ կենաց ծառերը համարել են մայր աստվածությունների սիմվոլ, նույնացրել նրանց գազափարների հետ, իսկ այդ աստվածությունների մեջ տեսել Մայր Հողի, երկրի գազափարը։ Որքան էլ այդ հնդիանքները (օրինակ, Վ. Ա. Ֆորտունատովը) հետել են ավելի պարզությունն մոտենալ նշված հարցի մեջ, գործել այն ընդհանրապես մնացել է մշուշապատ, ուստի և բարենպաստ հող է հանդիսացել բյուր եղրակացությունների համար։ Որպես ցայտուն օրինակ հիշենք Գ. Ս. Մասլովայի «Народный орнамент верхнеолзских карел» արժեքավոր աշխատությունը։ Հեղինակն իր ամբողջ նյութը վերցրել է ժողովրդական կենցաղից և հատկապես հարսանեկան հագուստների վրա եղած զարդերից։ Այդտեղ բազմաթիվ գեոմետրիական և բուսական-կենդանական և տերմորալափական մոտիվներ, որոնց բոլորի ոգին էլ ժողովրդական այն առասպել պատկերացումներն են (և նրանց մշակումները), որոնք բնորոշ են ընդհանրապես զարդարվեստին։ Այդ ամբողջ զարդերի կենսորոնական մոտիվը՝ կենաց ծառն է։ Նա հեղինակը, փոխանակ կապեր փնտրելու այդ զարդերի և ժողովրդական հարսանեկան հանգեսների գազափարական բովանդակության մեջ, ուրիշների հետևությամբ, կրոնական պատկերացումների արդյունք է համարում ոչ միայն կարելո-քննական, այլև մյուս բոլոր ժողովուրդների զարդարվեստներում և բանահյուսության մեջ նրան նկող կենաց ծառերը [1]։

Անկախ Գ. Ս. Մասլովայի և ուրիշների քանկությունից, նրանց տալիս են տալիս իդեալիստական կոնցեպցիաներ։ Համաձայն նրանցի մասին է, որ խոսում է Հնգիլոը՝ քննադատելով Յոլիբրանին։

«Յոլիբրանի իդեալիզմն այստեղ այն է, որ նա սեռական սերը, բարեկամությունը, ֆարիկցությունը, ինքնազոհողությունը և այլն, մարդկանց՝ փոխադարձ հակման վրա հիմնված բոլոր հարաբերությունները չի վստահանում բնության այն ձևով, որ նրանք ունեն բարիկյան, անկախ որևէ առանձին կրոնական սիստեմի հետ ունեցած նրանց կապերը [2]։ Հնգիլոը խոսորեն քննադատում է Յոլիբրանի այդ սիստեմը, որովհետև Յոլիբրանի կողմից, այդպես, սերունդ ասոցիանի են բարիբացվում սեռական սերն ու սեռերի միջև եղած հարաբերությունները [3]։

* * *

Ամփոփենք։

Հարսանեկան և զարդարվեստի կենաց ծառերի պատմական առնչության բազահարցումը զարդարվեստագիտության առջև է լայն հնարավորություններ՝ խորանալու նրա կիրառած մոտիվների միջոցով նախնիների դրսևորված հասարակական հասկացողություններն ուսումնասիրելու մեջ։

Այստեղ արդեն հատուկ ուշադրություն են դարձնում զարդարվեստում այնքան մեծ տեղ ունեցող կենդանական մոտիվներին՝ իրենց ենչող մեծամասնությամբ։ Ապացուցվում է, որ այդ մոտիվները ոչ թե լոկ բնական կենդանիների տվերական պատկերներ են եղել, այլ ունեցել են գազափարական բովանդակություն՝ սերտորեն կապված լինելով առասպելիզմի հետ։

Իսկ, ինչպես հայտնի է, առասպելիզմը ծնվել է արհեստագործական հասկացողությունների առաջացման և տերմասարական կարգերի ստեղծման հետ, երբ որևէ տերմ կամ կոչնկիով իր ծագումը սերում էր այս կամ այն կենդանուց։ Տերմի նախնին էլ պատկերվում էր ոչ թե մարդակերպ, այլ կենդանակերպ։

Ուստի զարդարվեստի գլխավոր մոտիվների մի խումբը՝ կենդանականը, կապվելով առասպելիզմի հետ, կապվում է նաև հասարակական տերմաբնաստանական հարաբերությունների գազափարական արտահայտությունների հետ։ Համապատասխանաբար նույնպիսի հասկացողությունների հետ

[1] Г. С. Маслова, Народный орнамент верхнеолзских карел, Москва, 1951, стр. 88.

[2] Ե. Հ ե գ ե լ ո ւ, Հոգեբանություն Յոլիբրանի և գերմանական գլուխի փիլիսոփայության վերնանդ, Երևան, 1948, էջ 88—84։

[3] Նույն տեղում, էջ 84։

են կապվում նաև այդ կենդանիներից անբաժան հանգիստ եկող և նրանց օրգանական մասը ներկայացնող կենաց ծառերը։

Եթե ավելի զարդի մեջ կենդանին զբաղեցնում է տոհմի նախնու կերպարը, ապա նրա հետ միասին պատկերված կենաց ծառն արտահայտում է տոհմի աճման և զարգացման ընդհանուր պատկերը։ Տոտեմ կենդանին և տոհմական ծառը զարդարվեստի մեջ հանդիպում են ամենաբազմազան ձևերով, սակայն միշտ էլ (նախնական իմաստով վերցրած) նույն նշանակությունն ունեն։

Հայտնի է, որ տոհմատիրական կարգերի առաջին շրջանում իշխում էր մայրիշխանությունը, իսկ երկրորդում՝ հայրիշխանությունը։ Առաջին դեպքում տոհմի նախնին պատկերված է որպես կին-նախամայր, իսկ երկրորդ շրջանում՝ տղամարդ-նախահայր։ Դրան համապատասխան էլ տոտեմ կենդանիները մի դեպքում արտահայտում են նախամոր, իսկ մյուս դեպքում՝ նախահոր գաղափարները։ Այս երևույթը բազմազան ձևերով երևան է գալիս ինչպես զարդարվեստում, նույնպես և ժողովրդական ծեսերում, բանահյուսության մեջ և այլ բնագավառներում։

Նախամոր ու նախահոր գաղափարները զարդարվեստում երևան են գալիս նաև մարդակերպով. այստեղ ավելի քան հեշտ է լինում նրանց տարբերել և առանձնացնել միմյանցից։

Հետագայում, հասարակության պատմական զարգացման համապատասխան, նախամայրերին հաջորդած մայր աստվածուհիների, ինչպես նաև նախահայրերին հաջորդած աստվածությունների պատկերները նույնպես առատորեն երևան են գալիս զարդարվեստում։

Այս հին ու բազմերանգ մոտիվները մասնակի մշակման են ենթարկվում քրիստոնեության կողմից, որ նախամայրերի, մայր աստվածուհիների փոխարեն երևան են գալիս բիբլիական նախամայրերը (Եվա, Մարիամ), իսկ նախահայրերի և հին աստվածությունների փոխարեն՝ Ադամը, Քրիստոսը և այլն։

Ստեղծվում են նոր, բիբլիական տոհմածառեր, որոնք այսօր նպաստում են երբեմն հին տոհմածառերի ուսումնասիրության գործին։

Նախաքրիստոնեական և քրիստոնեական կրոնների առաջացումից և նրանց մշակած համապատասխան մոտիվներից առաջ ստեղծված նախնիների և տոհմերի պատկերն արտահայտող գաղափարապատկերները և պատկերացումները հարատևում են երկար ժամանակ։ Նրանք, ինչպես ընտանիքը՝ իր տարբեր ձևերի մեջ, ապրում, զարգանում և փոփոխվելով տարբեր ձևեր են ընդունում։ Ուստի մեզ հասած համապատասխան մոտիվների ճնշող մեծամասնությունը կամ կապ չունի կամ սկզբնապես կապ չի ունեցել կրոնական պատկերացումների հետ, այլ արտահայտել է տոհմա-ընտանեկան և կենցաղային հարաբերություններ և ըմբռնումներ։ Բավական է հիշել հարսանեկան կենաց ծառերը, որոնք իրենց անմիջական ակունքներով կապված են բուն տոհմական կենաց ծառերի հետ։ Նույնը կարելի է ասել նաև ազգաբանական, ճյուղագրական կենաց ծառերի մասին։ Ուստի միանգամայն հակագիտական և սխալ պիտի համարել կենաց ծառերի մասին եղած ուսումնասիրությունների մեջ իշխող այն կարծիքը, որի համաձայն կենաց ծառերը դիտվում են լոկ որպես կրոնական պատկերացումների արդյունք։





ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԴՈՒԱԼ ԵՎ ՖՐԱՏՐԻԱԼ ԿԱԶՄԱԿԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՓԵՐԸ ՋԱՐԴԱՐՎԵՍՏՈՒՄ

Ազատհայտնով գարգարվեստի մոտիվների կապը տոհմական հավատալիքների հետ ընդհանրապես, մեզ հնարավորություն են տալիս մոտիվներում փնտրել նաև տոհմատիպին կարգերի որոշ կարևոր և կոնկրետ երևույթների հետքերը։

Ըստ ինչպես է նախնադարյան հասարակության ծոցում կազմավորվել տոհմը, դեռևս վերջնականապես բացատրված չէ։ Հայտնի է, սակայն, որ տոհմ հասկացողությունը՝ արձևակերպական սիստեմի վրա խարսխված մի հասարակություն է ծնել, որն այլևս է ընկել իր կազմակերպաձևությամբ և դուս միանականությամբ։

Ծուրտանշույր տոհմ, հենց սկզբից, բաժանված է ծնել երկու կեսի, որպիսի սիստեմը գիտնականներն անվանում են զույգ կազմավորումների սիստեմ։ Նույնիսկ տոհմային կարգերից առաջ էլ այդպիսի սատրատաժանման երևույթ ծնել է։ Հինգնիք, որպես օրինակ, ավստրալիական գասկի սիստեմը, պունալուա ընտանիքը և այլն[1]։ Տոհմական համայնքի չրջանում այս երևույթն ավելի է զարգանում և ամրանում։ Ծնդի զարգացմանը զուգահեռ, այդ նոր պայմաններում, տեղի են ունենում նոր սատրատաժանումներ. քան որում ցեղի կամ հիմնական տոհմի նախկին երկու գլխավոր կեսերը չեն կորցնում իրենց նշանակությունը։ Ընդհակառակը, նրանք հզորանում են և գոռնում այն երկու գլխավոր ուժերը, որոնցից բաղկացած է լինում ընդհանուր տոհմը՝ իր ենթատոհմերով։ Այդ կեսերն ընդունված է կոչել հունական ֆրատրիա բառով, որը նշանակում է եղբայրություն։

Մարքսը, խոսելով ամերիկյան բնիկների մասին, այս կապակցությամբ, գրում է.

«Ամերիկյան բնիկների ֆրատրիան իրենից ներկայացնում է ընական զարգացման արդյունք...

[1] Ե. Ն ե ք ւ ս. Հնաոիկքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը. Երևան, 1968, էջ 53։

նա առնին, ցեղին, ցեղի միությանը հանդուրժող կառավարման ֆունկցիաներ չուներ. նա ուներ հասուն սոցիալական ֆունկցիաներ. ուներ առանձնապես կարևոր նշանակություն, երբ ցեղը մեծ էր։ Նա ներկայացնում է ֆրատրիան իր արխայիկ ձևով և արխայիկ ֆունկցիաներով [1]։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծենակել Մարքսի հետաքրքիր նաև իրոքեզյան ցեղի սննդակա տոհմին վերաբերող հետևյալ տողերը, որոնք ցույց է տրված այդ տոհմի ֆրատրիալ պատկանելը.

a) Ֆրատրիա։ Ցոհմեր. 1) Արջ, 2) Գայլ, 3) Կուղբ, 4) Նրիա։

b) Ֆրատրիա։ Ցոհմեր. 5) Նղկերու, 6) Կոցաբ, 7) Ձկնկուլ, 8) Բազե» [2]։

Այս բաժանումների մեջ գլխավոր հարցը՝ ամուսնական հարաբերությունների կարգավորման հարցն է եղել։ Բայց քո՞ն ինչո՞ւ պիտի ամուսնական հարաբերությունները կարգավորվեին կամ ինչո՞ւ այդ կարգավորման համար տարերային կերպով պիտի առանձնացին զուտ և ֆրատրիալ կազմավորումների տիսոմներդը, դա այլ հարց է, որի մեջ խորանալը դուրս է մեր քննությունից։ Նշենք միայն, որ այդ բոլորի հիմքում ընկած է եղել մարդկանց պայքարը՝ բնության դեմ՝ հանուն նյութական բարիքների արտադրության և իրենց ու իրենց հարազատների գոյության պահպանման։ Այստեղից էլ պարզ է, թե ինչպիսի խստությամբ պիտի պահպանվեր տոհմի ներքին կարգն ու կանոնը նրա անդամների կողմից, ընդ որում տոհմն ու նրանց հարաբերությունները սուրբ էին ու անձեռնմխելի, բնությունից տրված, այն բարերարուն իշխանությունն էին, որին անպայման պետք է հպատակվեր անհատ իր զգացմունքների, մտածողության և գործողությունների մեջ,— ասում է Ենգելսը [3]։

Այժմ փորձենք մի քիչ ավելի հանգամանորեն ծանոթանալ տոհմի ներքին կառուցվածքի հետ։

«Տոհմի անդամներից ոչ մեկը չի կարող կին առնել տոհմի ներսում։ Այս է տոհմի հիմնական կանոնը,— ասում է Ենգելսը [4]։ Քանի որ այս հարցը ներկա աշխատության համար վերին աստիճանի հետաքրքրական նշանակություն ունի, ուստի հարկ ենք համարում կատարել համեմատաբար ավելի ընդարձակ մեջբերում՝ Ենգելսի համապատասխան աշխատությունից։

«Ամերիկի հնդկական ցեղերի հետազոտությունը ցույց է տալիս, որ այս ֆրատրիաները մեծ մասամբ այն սկզբնական տոհմերն են ներկայացնում, որոնց բաժանվում էր ցեղն սկզբում. որովհետև նեսոի ունենալով ամուսնության սղգիչը տոհմի ներսում՝ յուրաքանչյուր ցեղ անհրաժեշտաբար պետք է առնվազն երկու տոհմ ընդգրկեր, որպեսզի կարգազանց ինքնուրույն կերպով իր գոյությունը պահպանել։ Ցեղի բաժանումը զուգահեռաբար՝ յուրաքանչյուր տոհմ, իր հերթին, բաժանվում էր երկու կամ ավելի տոհմերի, որոնք այժմ հանդես են գալիս իրրև ինքնուրույն տոհմեր, մինչդեռ սկզբնական տոհմը, որ ընդգրկում է բոլոր գոտւոր տոհմերը, շարունակում է իր գոյությունն իրրև ֆրատրիա։ Սննդկաների և մյուս հնդկացիների մեծամասնության մոտ մինչև ֆրատրիայի տոհմերը համարվում են եղբայրական տոհմեր, մինչդեռ մյուս ֆրատրիայի տոհմերը՝ նրանց ավելի հեռավոր ազգակից տոհմեր են համարվում. այս անունները ամերիկյան ազգագրական տիսոմի մեջ, ինչպես մենք տեսանք, շատ իրական և խիստ արտահայտված նշանակություն ունեն։ Սկզբնապես ոչ մի տոհմիկ իրավունք չուներ ամուսնանալու իր ֆրատրիայի ներսում. բայց այս սովորությունը արդեն վաղուց կորցրել էր իր նշանակությունը և գործում է միայն տոհմի տոհմանների մեջ։ Տոհմիկների մեջ գոյություն ունեցող ամենուրյան համաձայն՝ տարցնս ու տեղծուհս են եղել երկու սկզբնական տոհմերը, որոնցից մյուսվավորվել են մյուսները։ Այս նոր կառուցվածքն արմատանալուց հետո՝ այն ձևափոխվում էր կարիքների համաձայն. եթե մի ֆրատրիայի տոհմերը բնականորեն-մարում էին, այն ժամանակ համալրման համար հաճախ մյուս ֆրատրիաներից մարդիկ տոհմեր նրա մեջ էին փոխադրվում։ Այդ պատճառով էլ մենք գանագան ցեղերի մեջ նույնանուն տոհմերը գտնում ենք ֆրատրիաների մեջ գանագան ձևով խմբավորված» [1]։

Հասկանալի է, որ տոհմային այս կարգն ու կանոնը ընդունել պահպանելու նպատակին պիտի ծառայեին նաև այն ժամանակվա ծեսերը, ավանդական դրույթները, գարգամոտիվները և այլն։ Մանավանդ, որ այն ժամանակ բացակայել են պետական, օրենսդրական գանագան մեխանիզմները։ Ով հենց այդ է պատճառը, որ նախնագարյան գարգարվելուց ոտնձգությունները շատ հազվադեպ են եղել։

[1] К. Маркс. Конспект книги Льюиса Г. Моргана „Древнее общество", Архив Маркса и Энгельса, том IX. Огиз—Госполитиздат, 1941, стр. 73.

[2] Նույն աղբ.

[3] Ֆ. Ենգելս. Ընտանիքի, սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 128։

[4] Նույն տեղում, էջ 114։

[1] Նույն տեղում, էջ 117—118։

կապես նեոլիթի վերջին շրջանում, երբ տոհմային համայնքները դանվում էին իրենց ծաղկման և զարգացման բուռն շրջանում։

Այս գործին մեծապես նպաստել են տոհմային կարգերում տարերայնորեն առաջնված ազատարգանքն և ազգինների տները, ուր զաստիարակվում էր արտադրական կոլեկտիվ մտածողությունը դեռ փոքր հասակից սկսած։ Ինչպես ցույց են տալիս մասնագետները (Ս. Գ. Տոլստով, Վ. Ռա. Պրոպպ և ուրիշներ) այդ զաստիարակությունը պատմական վիթխարի նշանակություն է ունեցել։ Պատանիները ու երիտասարդները այդ տներում արտադրական, ռազմա-սպորտային գիտելիքներ, փորձ, կոփվածություն ձեռք բերելուն զուգահեռ, սովորել ու զարգացրել են նաև իրենց ժամանակի բանահյուսությունը, ժեստը, զարդարվեստը և այլն։

«Նեոլիթյան արվեստը,— գրում է Մ. Օ. Կոսվենը,— հիմնականում զարդանում է դնկոլոգիան ուղղությամբ, այստեղ [նեոլիթի վերջին շրջանում] առյով բարձրագիտ ձևերի առաջացություն։ Այդ էպոխայում յուրն կերպով հանդես է գալիս ձգտումը՝ զարդարել բոլոր առարկաները, որոնք շրջապատում են մարդուն, ծառայում նրան, անգամ ամենօրյա գործածության ամենասովորական և անուշադրավ առարկաները, մասնավորապես կավե ամանները։ Այդպիսի զարդերից առաջանում է ornamentum (լատիներեն ornamentum — զարդարանք)՝ սկսած ամենապարզ ձևերից... մինչև վերին աստիճանի բարդ, բարձրարվեստ ձևերը՝ տարբեր մոտիվներով և այլ ոճերով, տարատեսակ գույներով»[1]։

Ինչպես այժմ է պարզվում, այդ մոտիվների մեջ գլխավոր տեղ գրավող կենաց ծառերը կամ տոհմածառերը՝ իրենց հյուսվածքներով, կենդանակերպ նախնիների գաղափարապատկերներով և այլ հարաբերություններով՝ սերտորեն կապված են եղել տոհմի ներքին կառուցվածքի հետ։ Ուստի և նրանք մեծ դեր պիտի կատարած լինեին տոհմային կարգերի զարգացման, ամրապնդման և նրանց պատկերացումների տարածման գործում։ Ավելին, նրանք կլսնքի են կոչված եղել հենց այդ պահանջով։ Ինակնատեսը, զարդարվեստի մոտիվների մեջ, անխուսափելի կերպով, պիտի իրենց անշնջելի հետքը թողնեին նաև տոհմային կարգերի գոյության և ձևաորիակ պատմությունը, որոնք այնքան բնորոշ են եղել տոհմային համայնքների համար և այնքան խոշոր դեր են խաղացել պատմական անցյալում։

Ենթատի ունենալով այն վճռական դերը,— ասում է Ենգելսը,— որ խաղում է ազգակցությունը բոլոր վայրենի և բարբարոս ժողովուրդների հասարակարգում, անկարելի է այս խիստ տարածված սիստեմից ազատվել չոր ձևականությամբ։ Մի սիստեմ, որ ընդհանուրի կյանքից ճանաչված է Ամերիկայում, գոյություն ունի նաև Ասիայում բոլորովին այլ ռասայի պատկանող ժողովուրդների մեջ, որի ամենի կամ պակաս չափով փոփոխված ձևերին խիստ համառ հանդիպում ենք ամենուրեք Աֆրիկայում և Ավստրալիայում,— այդպիսի մի սիստեմ պատմական բացատրություն է պահանջում. նրանից չի կարելի ազատվել ֆրազներով»[1]։

Մեր նպատակը չէ զարդարվեստում որևէ բոլոր տեսակի ազգակցական հարաբերությունների արտացոլումը, այլ միայն ամենից շատ տարածված, համբնդհանուր բնույթ կրող և համեմատաբար համապատասխան ժամանակներում զարգացած գուսէ ու ֆրատրիալ սիստեմների գաղափարական արտացոլյը՝ այն էլ ընդհանուր գծերով։

Քանի որ տոհմերը կոչվելիս են եղել տեսամ կենդանիների անուններով, ուստի գուսէ և ֆրատրիալ կազմակերպումների գաղափարների հետ առնչվող տոհմածառերի վրա էլ պիտի պատկերվեին հենց այդ տեսակները։ Միայն թե, հետագայում, պատմական զարգացման շնորհիվ, այդ տեսակները պիտի փոխարինվեին մարդակերպ կամ մարդկային ու կենդանական տարրերատներ կրող էակների պատկերներով։ Այս մոմենտը չպիտի մոռանալ։ Բացի դրանից, ինչպես գուսէ և ֆրատրիալ կազմակերպումներն սկզբում ունեցել են պարզ, իսկ հետագայում բարդ տեսք ու կառուցվածք, այնպես էլ զարդարվեստում՝ համապատասխան մոտիվները։ Ավելին, Հնդկեսած բարդ տեսք ստացած զարդամոտիվները հետագայում, անշրաժեշտաբար, ենթարկվել են որոշ փոփոխությունների։ Դա ևս չպիտի մոռանալ։ Հետևաբար, մենք այստեղ զարդարվեստում չենք կարող հանդիպել գուսէ և ֆրատրիալ կազմակերպումների, ինչպես նաև հետագայում առաջացած համապատասխան անառնասանների նուլնական պատկերներին։

Զարդարվեստի նախնական մոտիվները, ծառայելով իրենց կերտողների պահանջներին, սկզբում հետևել են բոլոր հասարակական ձևերի ու սերունդների կյանքի ընթացքին՝ այս կամ այն կերպ միշտ ներդաշնակությունն կազմելով տվյալ ժամանակի ոգու և պահանջների հետ։ Ուստի հասկանալի է, որ նրանց մեջ պիտի պահպանվեին ու զար-

[1] M. O. Kosven, Очерки истории первобытной культуры. Москва, 1953, стр. 143.

[1] Ֆ. Ենգելս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 28.

գանային, ամենից առաջ, պատմական այն երևույթների գաղափարները, որոնք ընդհանուր են եղել բոլոր ժամանակների համար։ Եվ ընդհակառակը, հետին պլան պիտի մղվեին, մնացուկի վերածվեին կամ իսպառ դուրս մնային ու մոռացվեին այն զարդաձևերը, որոնք կապված են եղել ժամանակի բնույթ ունեցող և շուտ մահացած երևույթների հետ։ Այստեղից ենթադրելի է, որ գեղարվեստի մոտիվների մեջ հանդիպող ընդհանուր գծերը միաժամանակ արտացոլում են պատմական ընդհանուր բնույթ ունեցող երևույթների, իսկ մասնակի ձևերը՝ մասնակի, համեմատաբար շուտ վերացած հայեցողությունների։

Ինչպես ցույց են տալիս մարքսիզմի կլասիկները, նախնադարյան հասարակության տնտեսաձևերի հիմքում, որոշ ժամանակից սկսած, ընկած են եղել տարբերային կերպով կազմակերպված այնպիսի միավորները, որոնք բնորոշ են եղել իրենց սիմետրիկ կառուցվածքով։ Թե՛ պատրիարքալ ընտանիքում, թե՛ ավատատիրական գավառի սիստեմում, թե՛ տոհմային կարգերում, անկախ բոլոր տարբերություններից, առկա է եղել հասարակության սիմետրիկ տրոհման փաստը։ Այդ սիմետրիան նախնադարյան ընտանիքի ամենագլխավոր առանձնահատկությունն էր։ Սակայն, որքան էլ փոփոխվել է ընտանիքն իր զարգացման ընթացքում, դարձյալ այդ սիմետրիան պահպանվել է։ Վերջինս մենամուսնական ընտանիքն է, որը, ինչպես ցույց է տալիս Էնգելսը, ընտանիքի վերջին ձևն է և սերվել է վերոհիշյալ ընտանեկան միավորներից։ Եթե առաջ մի զույգ էր ամուսնացած մի ուրիշ զույգի հետ, մի խումբը՝ մյուսի, մի ֆրատրիան մյուս ֆրատրիայի հետ և այլն, ապա այստեղ անհատներ են գտնվում ամուսնական կապերի մեջ։ Ահա այս սիմետրիան, անկախ տարբեր ժամանակներում ունեցած իր տարբեր բովանդակությունից, ընդհանուր է եղել այն բոլոր ժամանակների համար, որոնց միջով անցել են զարդարվեստի մոտիվները։ Պարզ է, որ այս սիմետրիան պիտի, իրոք, ընկած լիներ զարդարվեստի մոտիվների հիմքում։ Դա ծնող-զույգի սիմետրիան է, որը, ինչպես այժմ ենք տեսնում, կապված է շատ ավելի բարդ հայեցողությունների հետ, քան հնարավորություն ունեինք ցույց տալու վերևում։ Վերցնենք մի կենդանական ծնող-զույգ (օրինակ, նկ. 501)։ Արդի հայեցողությամբ կարող ենք այստեղ տեսնել թռչնային մի սովորական զույգ, որը կարող է փոխաբերաբար արտահայտել նաև մենամուսնական ընտանիքի իմաստը՝ ցույց տալով մի կնոջ և մի տղամարդու սերն ու ամուսնական կապը։ Այդ նույն մոտիվը, սակայն, ինչպես տեսանք, կապվում է նաև տոհմատիրական շրջանի և տոտեմիզմի հետ։ Այսպես մոտենալով հարցին, մենք այդ ծնող-զույգի նկարում այլևս չենք կարող տեսնել լոկ երկու անհատից բաղկացած ընտանիքի պատկերը։ Այս դեպքում ամեն մի թռչունը կապվում է մի ֆրատրիայի հետ և երկուսը միասին ներկայացնում են մի ամբողջ ցեղի պատկեր։ Այդ նույն զույգի տակ մենք կարող ենք նկատել նաև պունալուա ընտանիքի և ընտանեկան ուրիշ ձևերի գաղափարները։ Այլ կերպ ասած, այդ ծնող-զույգը ընդհանուր մոտիվ է եղել մի շարք էպոխաների համար։ Նույնը կարելի է ասել նաև զարդարվեստի բոլոր ծնող-զույգերի մասին։

Վերցնենք ծնող-զույգից անբաժան հանդես եկող զավակի մոտիվը։ Եթե միջնադարյան ձեռագրերում և հետագայում ծնող-զույգի և զավակի մոտիվները առնչվել են իր ժամանակի մենամուսնական ընտանիքի հետ, պարզ է, որ զավակի մոտիվն այստեղ դրսևորել է տվյալ զույգից սերված զավակի գաղափարը, որի համար բնորոշ է եղել նաև սեփական հորը ճանաչելու պարագան։ Իսկ եթե այդպիսի մոտիվը քննենք մայրիշխանական տոհմական համայնքի ժամանակի ֆոնի վրա, ապա զավակի գաղափարապատկերի տակ կտեսնենք ամբողջ տոհմի անունը՝ իր սերնդական առումով, ուր երեխաների համար սեփական հոր ճանաչումն անհնար է եղել։ Այսուհանդերձ զարդարվեստում զավակի մոտիվը հարատևել է, որովհետև բոլոր տեսակի ընտանիքներն էլ հարատևել են միայն սերնդական աճման հիման վրա։ Զավակի գաղափարը բոլոր ընտանիքների համար էլ բնորոշ է, միատեսակ, հավերժական։

Այսպես պիտի մտածել նաև կենաց ծառի և երկրաչափական կոչված զարդաձևերի մասին։

Ահա թե ինչ ուժով են հարատևել զարդարվեստի հիմնական մոտիվները՝ բոլոր ժողովուրդների մոտ։ Նրանց հիմքում միշտ էլ ընկած է եղել պատմական իրականությունը, որի հետ նրանք կապված են եղել սկզբում տնտեսական անհրաժեշտությամբ, իսկ հետո որպես իդեոլոգիա, հաճախ կորցնելով իրենց կապերի գիտակցվածությունը՝ այդ ռեալ հիմքերի հետ։

Այստեղ է նաև զարդարվեստի մոտիվների այնքան բնորոշ խոշոր ընդգրկումների և ընդհանրացումների գաղտնիքը։ Առանց պատմական ընդհանուր երևույթների չէին կարող առաջանալ նաև զարդարվեստի ընդհանրացում-մոտիվները։

Մեր առջև դրված խնդիրները քննության առնելու համար կարևոր նշանակություն ունեն, բացի

զարդամոտիվների բովանդակությունից, նաև այդ բովանդակությունից անբաժան ու այն դրսևորող զարդամոտիվների ձևական առանձնահատկությունները։

Վերհիշենք ծնող-զույգերի այն մոտիվները, որ բնության աշխարհին վերաբերում։ Բնորոշն այն է, որ այդ բոլոր օրինակներում էլ ծնող-զույգերի ներկայացուցիչները պատկանում են միևնույն տեսակի կենդանիներին կամ բույսերին։ Այսպես, առյուծը երևան է գալիս առյուծի, արջը՝ արջի, արծիվը՝ արծվի, մարդը՝ մարդու հետ և այլն։ Բայց, ինչպես տեսանք և ինչպես հայտնի է, տոտեմիզմի շրջանում ֆրատրիաները ներկայացվում էին գլխավորապես տարբեր տեսակի կենդանիների միջոցով։ Այդպիսին էր, օրինակ, իրոկեզների սենեկա ցեղը, որի մի ֆրատրիան ներկայացված է համարվել արջից, իսկ մյուսը՝ եղջերվից։ Պարզ է, որ այդպիսի դեպքերում տոհմաբար հետ երևան եկող ծնող-զույգերը պետք է պատկանեին ոչ թե միևնույն, այլ տարբեր տեսակների պատկանող կենդանիների միջոցով։ Քանի որ տոհմական կարգերի համար բնորոշ են տոտեմիզմի և ֆրատրիալ հասկացողությունների այդպիսի տարատեսակ ծնող-զույգերը, ուստի հարց է առաջանում. հապա ինչո՞ւ մեր քննած զարդամոտիվներում առկա են միատեսակ ծնող-զույգերը։ Մի՞թե դրանք, իրոք, կապ ունեն ֆրատրիալ հասկացողությունների հետ։

Ինչպես կտեսնենք քիչ հետո, զարդարվեստի համար միայն այդպիսի ծնող-զույգերը չեն բնորոշ. այնտեղ կան նաև տարատեսակ ծնող-զույգեր՝ բազմապիսի հարաբերություններով, որոնք համապատասխանում են տոհմական կարգերին և ֆրատրիալ սխեմաներին։ Ինչ վերաբերում է միատեսակ ծնող-զույգերին, ապա՛ պետք ասել, որ դրանց մի մասն էլ, իր ծագմամբ, կապվում է նույն վաղեմի ժամանակների հետ։ Որպեսզի հետո կարիք չլինի անդրադառնալ այս հարցին, հարկ ենք համարում այստեղ ամփոփ կերպով ասել հետևյալը։

Ինչպես հայտնի է, տոհմերի զարգացմանը, կոտորակմանը և բազմացմանը զուգահեռ, հաճախ առանձնական կոլումների սահմանի մեջ էլ, անխուսափելիորեն, մտել են փոփոխություններ։ Առաջացել են երբեմն մեկ նախնուց սերված ու նույն անունը կրող երկու և ավելի տոհմեր, որոնք հետո, էնդոգամ դառնալով (միմյանց հետ ամուսնանալով), կազմել են միատեսակ կենդանիներից բաղկացած ծնող-զույգերի գաղափարներ։ Հիշենք Մարքսի կոնսպեկտից մոհիկանների ցեղը՝ իր մեծ, ճահճային, փոքր կրիաներով (էջ 78) կամ ողիբվեյների ցեղը՝ իր ճահճային, բռնող և փոքր կրիաներով (էջ 109), որոնք նույն ֆրատրիայի մեջ առկա են մի քանի տոտեմ կրիաներ։ Անկախ իրենց մականուններից (մեծ կրիա, փոքր կրիա, ճահճային կրիա, բռնող կրիա և այլն), նրանք պետք պատկերվեին, հիմնականում, նույն տեսքով, այսինքն՝ որպես կրիաներ։ Հետագայում, այդ տոհմերի ներքին կարգերի խախտման հետևանքով, նշված զուտ տոհմերը պետք վերածվեին ամուսնական զույգերի՝ համապատասխանաբար թելապրելով նաև տոտեմ նախնիների ծնող-զույգերին։ Հետևապես, կստացվեին միատեսակ ծնող-զույգեր, տվյալ դեպքում՝ կրիաների ծնող-զույգ։

Կա մի այլ մոմենտ, որը նույնպես պետք հաշվի առնել։ Ինչպես գիտենք, յուրաքանչյուր ֆրատրիա բաղկացած էր և՛ տղամարդկանցից, և՛ կանանցից։ Ճիշտ է, նրանք միմյանց հետ չէին կարող ամուսնանալ, բայց փաստորեն նրանք կազմում էին հարազատների ընտանեկան մի կուռ միավոր, որն աճում և զարգանում էր։ Նույնպիսին էր նաև տվյալ տոհմի մյուս ֆրատրիան (կամ ֆրատրիաները)։ Ընդհանուր ցեղի տեսումով, անկախ ամուսնական հարաբերությունների հարցից, յուրաքանչյուր ֆրատրիան երկսեռ էր և իրենից ներկայացնում էր ցեղի զարգացման օղակներից մեկը։ Հենց այդ սեռերն էին պահում և խնամում աճող սերունդը, որը նրանց բոլորի հարազատ սերունդն էր։ Ուստի այդ ֆրատրիան կարող էր իր տոտեմ նախնուց սերված նախնիներին էլ պատկերել այնպես, ինչպես տվյալ ֆրատրիան էր։ Ֆրատրիալ ծառի հիմքում ընկած կլինեին միանման զույգ, որը ցույց կտար «ծնող-զույգի» գաղափարը ոչ թե սեռական առումով, այլ հասարակական, տնտեսական։ Այս տեսակետից հետաքրքրական է, օրինակ, անդրոգինների գծագրանությունը, որի մասին կխոսվի քիչ հետո։

Միանման ծնող-զույգերի մոտիվներն ազատ կերպով զարգանալու ավելի լայն հնարավորություն են ստացել մենամուսնական ընտանիքի պայմաններում։ Այս ընտանիքը, որ առաջացել է մասնավոր սեփականության ծագմանը և զարգացմանը զուգահեռ, զարդարվեստի նախկին մոտիվներին, բնականաբար, թելադրել է իր գաղափարախոսությունը։ Ուստի և տարատեսակ ծնող-զույգերի մոտիվները, այս նոր պայմաններում, հեշտությամբ պիտի վեր ածվեին միանման կենդանիներից բաղկացած ծնող-զույգերի։

Ի վերջո հիշենք նաև պատմական այն երկարատև ժամանակաշրջանը, որի միջով անցել են

զարդարվեստի ծնող-զույգերն ու հատկանշ մեզ։ Պատմական բազմաթիվ հանգամանքներից բացի, այդ հարցում քիչ դեր չեն խաղացել նաև այդ մոտիվների հնադարյան մասամբ չգիտակցված լինելու և ընդհանրապես արվեստ որպես զարդ (ոռնամենտալ իմաստով) օգտագործվելու հանգամանքները։

Այժմ անցնենք տարատեսակ ծնող-զույգերին, որոնք առավել որոշակի կերպով են պահպանված դուալ և ֆրատրիալ հասկացողությունների արձագանքները։

Արդ, ինչպիսի՞ տեսք պիտի ունենար տոհմածառը, որպեսզի կարողանար արտահայտել տվյալ ցեղի երկու ֆրատրիաների գաղափարը, որը, ինչպես տեսանք, տոհմային կարգերի ամենակարևոր հարցն է եղել։ Պարզ է, որ այդպիսի ծառը պիտի ունենար երկու ճյուղ, իսկ նրանցից յուրաքանչյուրի վրա՝ մի առանձին կենդանու պատկեր։ Կամ մի այլ եղանակով այդ ծառը պիտի զրուցեր այն երկու ֆրատրիաների գաղափարը, որոնք կազմում էին տվյալ տոհմի երկու կեսերը և որոնց միասնությունը պայմանավորում էր այդ տոհմի գոյությունը։

Այսպես մոտենալով հարցին, մենք զարդարվեստում հանդիպում ենք նաև ճիշտ այնպիսի նկարների, որոնց ինչ լինելը մինչև օրս մնացել է որպես անլուծելի առեղծված։ Օրինակ, № 6257 ձեռագրի 141ա թերթում պահպանված է մի յու-ղազարդ-կենաց ծառ (Նկ. 668)։ Այդ ծառը, ոճավորված լինելով հանդերձ, ունի մի խիստ ուշագրավ առանձնահատկություն։ Նրա վերին մասն ավարտվում է երկու տարբեր ճյուղերով, որոնցից մեկն ունի թռչնակերպ, իսկ մյուսը՝ կենդանակերպ վերջավորություն։ Այդ թռչունն ու կենդանին դեմքերով դարձած են դեպի միմյանց և արտահայտում են ծնող-զույգի գաղափարը։ Որ նրանք, իրոք, այդ դերով են պատկերված, դա երևում է հատկապես նրանց տարբեր մարմինների ստորին վերջավորություններից, որոնք ունեն պոչի նմանություն և միացած են միմյանց հետ ճիշտ այնպես, ինչպես ծնող-զույգերի պոչերը։ Եվ հենց այդ միասնությամբ է, որ գալար ու կանաչ է տվյալ կենաց ծառը։ Եթե մինչև հիմա մեր քննած ծնող-զույգերը պատկանում էին կենդանական աշխարհի նույն տեսակին, ապա այստեղ ծնող-զույգը բաղկացած է տարբեր տեսակի կենդանիներից։ Բնության մեջ այդպիսի օրինական երևույթ չկա, որպեսզի հնարավոր լինեի այլ բացատրություն տրանել։ Պարզ է, որ դա գաղափարական հատուկ բովանդակություն ունեցող հնագույն զարդամոտիվներից է։ Այժմ, երբ մեզ համար պարզ է կենաց



Նկ. 668



Նկ. 669

ծառի կապը՝ տոհմային հասկացողությունների հետ, ինչպես նաև այդ ծառին առնթեր երևան եկող կենդանիների տոտեմական իմաստը, ինքնին հասկանալի է դառնում նաև այս զարդամոտիվի էությունը։ Դա մի տոհմածառ է, որը ցույց է տալիս, թե ինչպես այդ տոհմը տրոհված է եղել երկու կեսերի, իսկ այս վերջիններս էլ ճանաչել են տարբեր տոտեմներ։ Այլ կերպ ասած, այստեղ գործ ունենք տոհմի ֆրատրիալ կառուցվածքի պատկերն արտահայտող մի զարդի հետ։

Վերցնենք մի ուրիշ նկար՝ նույն ձեռագրի 39ա թերթից (Նկ. 669)։ Այստեղ էլ պատկերված է նմանօրինակ կենաց ծառ, որտեղ ծնող-զույգի ներկայացուցիչները դարձյալ տարբեր տեսակի կենդանիներ են։ Ըստ որում, այդ կենդանիներն ավելի բարդ գաղափարների հետ են կապված. նրանց երկուսն էլ ունեն թռչունի մարմին և ո՛չ թռչնային գլուխներ։ Մեկի գլուխը նման է մի անորոշ կենդանու գլխի, իսկ մյուսինը՝ մարդու։ Թե ի՞նչ հասկացողությունների արդյունք են այս բարդ պատկերները, այս մասին կխոսվի հետո։ Անկախ դրանից էլ, պարզորոշ կերպով այստեղ պատկերված է մի տոհմածառ՝ իր երկու ֆրատրիաների



Նկ. 670



Նկ. 671

իմաստը գրեթե էական նկարներով։ Այդ էական նկարներից էլ իրենցից ներկայացնում են ժեղ-զույգի իմաստը և իրենց պոչերով միահյուսված են միմյանց ու տոհմածառի հետ։

Հետաքրքրական է նույն ձեռագրի 190բ թերթի նկարը (նկ. 670)։ Կենտրոնում պատկերված է հատիկա-էլեմենտային գաղափարանքը, որի տերմինն լորա բյուզանդերից մեկն ավարտվում է քրլոլունի, իսկ մյուսը՝ մարդու պատկերով։ Այստեղ էլ զույգ ունենք ժեղ-զույգի ավելորդ միառնության հետ, որոնց այդ զույգի ներկայացուցիչները պատկանում են տարբեր տեսակի կենդանիների։ Դա էլ տոհմի ֆրատրիալ պատկերն արտահայտող մի հին գաղափար է՝ պահպանված որպես մնացուկ։

կացած է երկու սիմետրիկ միավորներից, որոնց միահյուսումն էլ պայմանավորել է պատկերային այդ սիմվոլը։

Նախորդ մոտիվների համեմատությամբ այստեղ, որպես նոր հանգամանք, երևան է գալիս տոհմի սերնդի ֆրատրիալ պատկերը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Որպեսզի ֆրատրիաները հարատևեին, պետք որ նրանց սերունդներն էլ պահպանվեին համապատասխան ֆրատրիաներում։ Բայց քանի որ գաղթարվեստի այս մոտիվներն էլ խոսում են ընդհանրացման եզրակացությամբ, ուստի չի կարելի այս գաղթի վարագույր-պաշտային սիմվոլի վրա պատկերված սերնդական գաղափարապատկերը դիտել լոկ որպես այդպիսին։ Այդ սերունդը միաժամանակ վազվա արտադրական կոլեկտիվն է կամ ավյալ արտադրական կոլեկտիվի մանկությունը։ Ասած այն, վերջին հաշվով, նորից ցույց է տալիս տոհմի ֆրատրիալ պատկերը։ Ուշագրավ է նաև այն, որ այստեղ ժեղ-զույգ ֆրատրիաների գաղափարը նկարված է այն սֆանտաստիկ կենդանապատկերների նման, որոնք ունեցած են մի մարմին և երկու գլուխ։ Տարբերությունը կայանում է նրանում, որ այստեղ ժեղ-զույգի ներկայացուցիչները՝ տարբեր կենդանատեսակների են պատկանում։

Համապատասխան մոտիվներ շատ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ. հիշենք մի օրինակ՝ ուսական գաղթարվեստից (նկ. 672)[1]։ Այստեղ գոթ ունենք արեամբյա ազատարձի վրա արված գաղթերի հետ։ Ազատարձանը բաժանված է երկու հիմնական մասի։ Ձախ կողմի կեսում պատկերված են երկու զույգ կենդանիներ, նրանցից յուրաքանչյուրում առկա է մի թռչուն և մի այլ կենդանի,



Նկ. 672

№ 995 ձեռագրի 73ա թերթում հանդիպում ենք մի այլ ուշագրավ նկարի (նկ. 671)։ Այստեղ էլ առկա է նման տոհմածառի մնացուկներից մեկը. միայն թե նրա ֆրատրիալ էությունը ցույց է տրված պաշտաթերթային վարագույր-պաշտային գաղափարանքի միջոցով։ Ինչը՝ տոհմածառը բազմապատկելով իրենց միջև բարերացած կենաց ծառի երկլյուզ արմատներին, կենաց ծառն այստեղ ունի համարատապետական սեռավորման տեսք, այն ներկայանում է որպես սյուն և

[1] История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 432, рис. 215—3.



Նկ. 673

կապվում կամարների հետ։ Ստացվում է մի շենք՝ երկու կամարով, որոնց ներսում զետեղվում են տոտեմական ծնող-զույգի ներկայացուցիչները։ Պարզ է, որ այստեղ ցույց է տրված տոհմի ֆրատրիալ պատկերը։

Որ այդ կենդանիները ունեն ծնող-զույգի իմաստ, դա ցույց է տրված նաև այդ ապարանջանի մյուս կեսի վրա արված փորագրությունների միջոցով, ուր սյունաձև կենաց ծառերի երկու կողմերին կանգնած են մարդկային ծնող-զույգերը («мужчина и женщина»)։ Այս վերջին տեսարանը կարծես նախորդի մեկնաբանությունը լինի. և դա հասկանալի է. ընտանիքի նախնական ձևին հաջորդել է նոր ձևը և նրանք երևան են գալիս գրեթե միասին, մեկը՝ տրադիցիայի, իսկ մյուսը՝ առօրյա կյանքի պահանջով։

Մենք արդեն, հատիկա-սերմային մոտիվների մասին խոսելիս և այլ առիթներով, նշել ենք խորանների և ընտանիք, տոհմ, ցեղ հասկացողությունների առնչությունների մասին։ Հետագա էջերում է՛լ ավելի հանգամանորեն կբացատրվի այս հարցը։ Առայժմ այստեղ հիշենք մի օրինակ էլ խորաններից։ № 3793 ձեռագրի 1ը թերթի խորանի ներսում, տոհմային կենաց ծառի երկու կողմերին, կանգնած են երկու կենդանիներ, որոնցից մեկն ունի մարդու գլուխ և գազանի մարմին, իսկ մյու-



Նկ. 674



Նկ. 675



Նկ. 676



Նկ. 677

ով՝ բարենիշանման մի զարդ է։ Պարզ է, որ այստեղ էլ առկա է տոհմի և նրա երկու ֆրատրիաների պատկերը՝ այդ ֆրատրիաների տոտեմների նկարներով (նկ. 673)։

Այս բոլորից հետո, կարելի է ասել, որ իրոք, զարդարվեստում տարատեսակ ծնող-զույգերի մոտիվները սկզբնապես ծագել են ֆրատրիալ կազմավորումների հիման վրա։ Նույնը կարելի է ասել նաև միանման կենդանիներից բաղկացած ծնող-զույգերի մասին, որոնք, անկասկած, հետագայում որոշ մասով խմբագրված են եղել ուշ շրջանի հասկացողությունների համաձայն։ Այդ մասին արդեն խոսվել է վերևում։

Այժմ հետաքրքիր է դառնում բացատրություն որոնել նաև այն զարդամոտիվների համար, որոնք ավելի քան բարդ տեսք ունեն։ Այս վերջիններն էլ, իրենց հերթին, բաղկացած են, համեմատաբար, ավելի պարզ և ավելի բարդ խմբերից։ Առաջ կսկսենք, համեմատաբար, ավելի պարզ խմբերից։

Մենք արդեն բավականաչափ ծանոթ ենք ծնող-զույգերի և զավակների միասնությունը ցույց տվող զարդանկարների հետ։ Արդեն քննված օրինակներում հատկանշականն այն էր, որ ծնողներն ու զավակներն էլ պատկանում էին կենդանական միևնույն տեսակին։ Այսպես, թռչուն ծնողների հետ երևան էին գալիս թռչնաձագեր, մարդկային զույգերի հետ՝ երեխաներ և այլն։ Սակայն զարդարվեստում շատ են նաև այնպիսի մոտիվները, որտեղ զավակն ու ծնողները պատկանում են տարբեր տեսակի կենդանիների խմբերի։ Խոսքը չի վերաբերում բուսական գաղափարաններին, որոնք հաճախ փոխարինում են և՝ ծնողներին, և՝ նրանց զավակներին՝ ամբողջապես կամ առանձին-առանձին։

Չնայած արդեն հասկանալի է այդ խմբերի ընդհանուր ծագման հարցը, բայց և այնպես մեզ համար, այստեղ, տարատեսակ ծնող-զույգերի և զավակների մոտիվներն առաջնակարգ նշանակություն ունեն։ Եթե առաջին դեպքում բազմաթիվ օժանդակ ապացույցների կարիք է զգացվում՝ ցույց տալու նրանց առնչությունը ֆրատրիալ հասկացողությունների հետ, ապա երկրորդ դեպքում այդպիսի դժվարությունները անհամեմատ աննշան են։ Քանի որ զարդամոտիվի միջոցով դրսևորված ընտանիքի կազմում երևան են գալիս կենդանական տարբեր խմբերի ներկայացուցիչներ, դա նշանակում է, որ այստեղ առկա է միայն և միայն մարդկային ընտանիքը և տոտեմիզմի երևույթը։

№ 7451 ձեռագրի 223ա թերթի լուսանցազարդն իրենից ներկայացնում է մի սոճիաձառ, որի հիմքում պատկերված են երկու թռչուն և մարդկային մի գլուխ (նկ. 674)։ Թռչուններդ կանգնած են ծնոտ-զույգի դիրքով և արտահայտում են երկնքի երկու ֆրատրիաների միաձուլման գաղափարը։ Ավելի քան բարդ հասկացողությունների հետ է կապվում մարդու գիմքը։ Այն կարող է ընդունվել տոհմի մասագ տերևի գազափարապատկերի տեր։ Դրանից բացի, այդ պատկերը կարող է արտահայտել նաև ընդհանուր տոհմի կամ քեղի նախնու իմաստը. այն նախնու, որից սերված են այդ երկու տոհմերը. հետևապես թռչնակերպ ծնոտ-զույգը։ Այսպիսով, ևս, այդ զույգի նկատմամբ, կամ ծնոտ է, կամ՝ գավակ։ Ա՛լլ հարց է այդ բնդհանուր նախնու և գավակի գազափարապատկերի մարդակերպ լինելը, որը կապվում է անտրոպոմորֆիզմի երևույթի հետ։ Այդ մասին կխոսվի քիչ հետո։ Նշենք միայն, որ մեզ հետաք գարդերի մեջ, ժամանակի ընթացքում, հաճախ, իր գրաված դիրքով. ոչ չորանի ծնոտով մարդակերպ նախնին երևան է գալիս վազգույն ժամանակների կենդանակերպ նախնիների փոխարեն։



Նկ. 678



Նկ. 679



Նկ. 680

Թռչնակերպ ծնոտ-զույգի և մարդակերպ նախնու կամ գավակի մոտիվները, որպես տոհմային սիստեմի հրորդություն, հանդիպում են բազմապիսի ձևերով և մեծ քանակությամբ։ Ահա և երկու նման այդպիսի գարդերի՝ ընդօրինակված № 6257 ձեռագրի 83ա և 162բ թերթերից (նկ. նկ. 675, 676)։ Ուշագրավ է, որ այս գարդանկարում ևս հանդիպում են նաև սերկրաչափական մոտիվներ։ Եթե այս նկարներում ծնոտ-զույգը պատկերված է թռչնակերպ, իսկ գավակը կամ ընդհանուր նախնին մարդակերպ, ապա կան շատ նկարներ էլ, որտեղ զույգ ունենք հակառակ պատկերի հետ։ Այդպիսիներից հիշենք № 6257 ձեռագրի 53բ թերթի գարդը, որտեղ մարդակերպ ծնոտ-զույգից վերև ցուլք է ուղված



Նկ. 681

ֆարը։ Ավելի քան բարդ հասկացողությունների հետ է կապվում մարդու գիմքը։ Այն կարող է ընդունվել տոհմի մասագ տերևի գազափարապատկերի տեր։ Դրանից բացի, այդ պատկերը կարող է արտահայտել նաև ընդհանուր տոհմի կամ քեղի նախնու իմաստը. այն նախնու, որից սերված են այդ երկու տոհմերը. հետևապես թռչնակերպ ծնոտ-զույգը։ Այսպիսով, ևս, այդ զույգի նկատմամբ, կամ ծնոտ է, կամ՝ գավակ։ Ա՛լլ հարց է այդ բնդհանուր նախնու և գավակի գազափարապատկերի մարդակերպ լինելը, որը կապվում է անտրոպոմորֆիզմի երևույթի հետ։ Այդ մասին կխոսվի քիչ հետո։ Նշենք միայն, որ մեզ հետաք գարդերի մեջ, ժամանակի ընթացքում, հաճախ, իր գրաված դիրքով. ոչ չորանի ծնոտով մարդակերպ նախնին երևան է գալիս վազգույն ժամանակների կենդանակերպ նախնիների փոխարեն։

Թռչնակերպ ծնոտ-զույգի և մարդակերպ նախնու կամ գավակի մոտիվները, որպես տոհմային սիստեմի երրորդություն, հանդիպում են բազմապիսի ձևերով և մեծ քանակությամբ։ Ահա և երկու նման այդպիսի գարդերի՝ ընդօրինակված № 6257 ձեռագրի 83ա և 162բ թերթերից (նկ. նկ. 675, 676)։ Ուշագրավ է, որ այս գարդանկարում ևս հանդիպում են նաև սերկրաչափական մոտիվներ։ Եթե այս գարդերում ծնոտ-զույգը պատկերված է թռչնակերպ, իսկ գավակը կամ ընդհանուր նախնին մարդակերպ, ապա կան շատ նկարներ էլ, որտեղ զույգ ունենք հակառակ պատկերի հետ։ Այդպիսիներից հիշենք № 6257 ձեռագրի 53բ թերթի գարդը, որտեղ մարդակերպ ծնոտ-զույգից վերև ցուլք է ուղված (նկ. 677)։

Այս մոտիվների ազատագործման մեր ձեռնարկած ճանապարհները ստիպել են նաև գարդագործ, ուր գործում օրդնամենտն պահպանված են ծնոտ-զույգ և գավակ հասկացողության նշանները։ Նման գարդագործից են, օրինակ, № 416 ձեռագրի 118բ թերթի «Ա» տառը և № 2329 ձեռագրի 236ա թերթի «Ջ»-ն (նկ. նկ. 678, 679)։ Նման մոտիվներ կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ, ահա մի-մի նման ասորական [1] և նոր-գիտական [2] գարդագործներից (նկ. նկ. 680, 681)։

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. CXXIX, рис. 26.

[2] Г. Шурц, История первобытной культуры, С. Петербург, 1890, между стр. 562—563.



Նկ. 682



Նկ. 683



Նկ. 684

Հիմնականում հենց այդպիսի գաղափարներ են ընկած մեր մանրանկարչության մեջ այնքան շատ սիրված և բարդ ու գեղեցիկ տեսք ունեցող լուսանցազարդերի հիմքում։ № 4674 ձեռագրի 137ա թերթում պատկերված է մի այդպիսի լուսանցազարդ, որի հիմքում կանգնած է տոհմի նախշին (Նկ. 682)։ Այդ նախշու ճյուղերին կան մեկական ոստեր, որոնց գլուխ վեր գնալով, ավարտվում են մեկական թռչնապատկերով։ Այդ երեք էակները միասին ցույց են տալիս ցեղի ընդհանուր գաղափարը՝ իր զույգ ֆրավարդիներով։ Դրանց վրա է ահա, որ բարձրանում է տոհմային կենաց ծառը և ավարտվում վարսանդա-պտղային խոշոր սիմվոլով։

Ինչպես տեսանք, տոհմի զարգանալուն զուգընթաց, ֆրավարդիները բաժանվում են, իրենց ներսում առաջացնելով զուտ տոհմեր, բայց որում՝ ամփոփական տոհմը, որ ընդգրկում է բոլոր զուտ տոհմերը, շարունակում է իր գոյությունն իրեն ֆրավարդիով[1]։ Եթե նախկին հիմնական տոհմը կամ ցեղը բաղկացած էր երկու ֆրավարդիներից, ապա զարգացման հաջորդ աստիճանում այդ ֆրավարդիա-



Նկ. 685

[1] Ֆ. Է ն գ ե լ ս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը։ Երևան, 1948, էջ 137—138։

ներից յուրաքանչյուրը կունենար երկու դուստր տոհմ։ Չմոռանանք, որ միևնույն ֆրատրիայի մեջ ընդգրկվող տոհմերի միջև ամուսնական հարաբերությունները խստիվ արգելված են եղել։ Այսպիսով, ստացվում է մի հիմնական տոհմ կամ ցեղ, որն ունի չորս դուստր տոհմ. վերջիններիցս յուրաքանչյուրը մի ամուսնական միավոր է. ուստի հիմնական տոհմի մեջ մտնում են չորս ամուսնական միավորներ։ Դրանք էլ միմյանց հետ են ամուսնական կապերի մեջ գտնվում՝ ըստ ֆրատրիալ հարաբերությունների։



Նկ. 686

Բնականաբար, մենք պետք է փորձենք պատմական այս իրականության հետքերն էլ գտնել զարդարվեստում։ Եվ, իրոք, այս առումով էլ զարդարվեստը բավականին հարուստ վկայություններ է պահպանել։

№ 3722 ձեռագրի 135բ թերթում գտնում ենք մի խիստ ուշագրավ զարդ (Նկ. 683)։ Այստեղ պատկերված են մի զույգ թռչուններ և մի զույգ մարդիկ. ըստ որում, առաջինները՝ ներքևում, իսկ երկրորդները՝ վերևում։ Եվ որ գլխավորն է, որոշակիորեն ցույց է տրված, թե ինչպես վերևի զույգը անմիջական կապերի մեջ է ներքևի զույգի հետ։ Այդ կապերի շնորհիվ էլ աճել է բազմաճյուղ կենաց ծառը՝ կազմել բարդ հյուսվածքներ և պտղաբերել։

Հատկանշական է, որ այստեղ էլ գործ ունենք տոհմական ծառի հետ, որն արդեն պտղաբերել է ոչ թե երկու, այլ չորս տոհմերի շնորհիվ։

Տոհմեր ցույց տվող պատկերներն էլ որոշակիորեն մատնում են իրենց ֆրատրիալ ծագումը։ Թռչունները՝ նախկին միասնական ֆրատրիայի երկու դուստր տոհմերի գաղափարն են արտահայտում, որոնք իրար հետ ամուսնական հարաբերությունների մեջ գտնվել չեն կարող, մարդիկ էլ՝ մյուս ֆրատրիան են ներկայացնում։

Նույնիմաստ, բայց առավել բարդ ձևերով արտահայտված զարդամոտիվի ենք հանդիպում № 3717 ձեռագրի 282բ թերթում (Նկ. 684)։ Ներքևի աջակողմյան թռչունը միացած է վերևի ձախակողմյան մարդու, իսկ վերևի աջակողմյան մարդը՝ ներքևի ձախակողմյան թռչունի հետ։ Նրանց այդ միացումները ցույց են տրված բարդ հյուսվածքների միջոցով, որոնք էլ իրենց հերթին են միահյուսված կենաց ծառի ճյուղերի համանման հյուսվածքների հետ։ Ահա այդ միահյուսումներն էլ պայմանավորել են տոհմական կենաց ծառի փարթամ աճն ու հարստությունը։ Այստեղ էլ առկա է մի հիմնական տոհմ՝ իր երկու ֆրատրիաների և չորս դուստր տոհմերի գաղափարներով։

Նույն ձեռագրի 55ա թերթում պահպանված է նման մի ուրիշ զարդ, որտեղ դուստր տոհմերը միացած են մի քիչ այլ ձևով (Նկ. 685)։ Էականն այն է, որ այստեղ էլ գործ ունենք երկու ֆրատրիայի և չորս դուստր տոհմերի վրա հիմնված տոհմական կենաց ծառի ուշագրավ պատկերի հետ։

Հատկանշական է, որ նման զարդերը կարող են պատահել նաև ուրիշ ձևերով։ Այսպես, օրինակ, հաճախ առկա են կենդանական մոտիվները, իսկ բուսականը (տոհմածառ) բացակայում է կամ, ընդհակառակը, միայն բուսական ձևերով են ցույց տրված չորս դուստր տոհմերը։ Կենդանիներն էլ հաճախ երևան են գալիս մերթ բոլորովին տարբեր, մերթ էլ բոլորովին միանման։ Երբեմն էլ նրանք իրենց տեղը զիջում են մարդկային չորս պատկերների և այլն։ Բերենք որոշ նմուշ այդպիսի նկարներից։

№ 356 ձեռագրի 92ա թերթում այդ երևույթը ցույց է տրված չորս թռչունների միջոցով, որոնք միահյուսված են իրենց երկար պարանոցներով (Նկ. 686)։ Այստեղ էլ իսպառ բացակայում է կենաց ծառի մոտիվը, որը, սակայն, ըստ էության, միշտ էլ առկա է՝ իր գաղափարական առումով։ Որ այդ այդպես է, դա կարելի է ցույց տալ հենց նույն



Նկ. 687



Նկ. 688

ձեռագրի 80ա և 173ա քերթերում գտնվող նկարների միջոցով (նկ. նկ. 687, 688)։ Դրանցից առաջինում չորս քաշուներները կազմել են երկու ժեղջուղջ և իրենց միահյուսումներով պայմանավորել բավականին բարդ տեսք տնեցող կենաց ծառի պատկերը։ Երկրորդ նկարում կենաց ծառի մոտիվը ոչված է և պահպանված է միայն նեղքնի ժեղջուղջի մնչն՝ որպես նրանց պաշտպանության ցույց տվող զարդամոտիվ։ Հասկանալի է, որ հենց առնինչական պատճառաների կարող էր այսօրվ սովել կենաց ծառի ատրիբուտը, որի պատճառով էլ կատարվեր այնպիսի զարդ, ինչպիսին է, օրինակ, նույն ձեռագրի 82ա քերթի նկարը (նկ. 686)։

Ասացինք, որ նշված հասկացողությունները հաճախ ցույց են տրվել նաև յոկ բուսական մոտիվների միջոցով։ Այսպես, օրինակ, № 7729 ձեռագրի 199ա քերթում պատկերված է մի կենաց ծառ, որն ունի երկհյուղ արմատ, նրանից վերև հասնի, ապա ոսկրաձև ճառագուն, նորից հասնի և վարսանգա-պաշտային խաչոր սիմվոլ (նկ. 689)։ Ոսկրաձև ճառագուն ունի ավելի բարդ տեսք, այր հետազոտողական են հասկացնում այն չորս հյուղերը, որոնք գոտս են գրծել նրա մեջտեղից՝ զույգ-զույգ։ Առաջին զույգն ոսկրված է գեպի վերև, իսկ երկրորդը՝ ներքև։ Նրանք բոլորն էլ պաշտպանել են։ Բավական է մատնել այդ հյուղերը փոխարինել այնպիսի կենդանիների զույգերով, ինչպիսիներն էին վերևում ցույց արված պատկերներում գտնվողները, և ձեռագրիս հասկացողությունների հուշերն իսկույն կարթնանան։

Մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ հասկացնե մանրանկարչության միջոցով պահպանված հյուսածո կենաց ծառերի պատկերներում առաջորեն առկա են նման հասկացողությունների հետքերը։ № 7729 ձեռագրի 481ա քերթում կա մի այլգպիսի կենաց ծառ (նկ. 690)։ Փորձենք հետամուտ լինել նրա հյուսվածքների էությանը։ Այդ ծառի հիմքում գտնվում է հատիկի պատկերը, որն արձակել է ոչ միայն երկու արմատ, այլև երկու հյուղ։ Երանցից աջակողմյանը գոլորշիով գնում է գեպի ծառի գագաթը, որ այնտեղ միանա մի ուրիշ հյուղի հետ և պայմանավորի պաշտպանության գլխավոր սիմվոլի առաջացումը։ Իսկ երկրորդ հյուղը, նույնպես գոլորշիով, գնում է գեպի վեր, բայց շուտով քնքշում է ու, նորից իջնում նեղքև, որպեսզի ծովի նորից գեպի ձախ, ապա՝ վերև և միանալով մի ուրիշ հյուղի հետ՝ պայմանավորի պատկերի կենտրոնում որպես սիրտ գեղարված վարսանգա-պաշտային մի ուրիշ սիմվոլի առաջացումը։ Այսպիսով ավարտվում է ծառի հիմքում գտնվող հատիկից ծլած երկհյուղ ծառի պատկերը. բայց դրանով չի սպառվում բոլորը։ Այդտեղ կան ուրիշ հյուղեր էլ։ Այժմ դիտենք այս պատկերը գլխիվայր. պարզվում է, որ այստեղ կա մի ուրիշ ծառի պատկեր ևս։ Առաջին ծառի գագաթին գտնվող վարսանգա-պաշտային սիմվոլից նեղքև գտնվում է երկրորդ ծառի հատիկը, երանից ոչ ու ձախ մեկնված են մի զույգ արմատ և մի զույգ հյուղեր։ Այս վերջինները նախ մի որոշակի ուղղ են գտնում միմյանց հետ, ապա, հետևելով, գնում են՝ որպեսզի մեկը միանա առաջին ծառի ձախ հյուղի հետ և կենտրոնում պայմանավորի որոշ տեսքով պատկերված վարսանգա-պաշտային սիմվոլի առեղծվածը, իսկ երկրորդը գնում է ավարտվելու երկրյնակ տերևի ձևով առաջին ծառի հիմքում՝ ոչ կողքից։ Համանման մի հյուղ էլ կա ձախ կողքից, որը գոլորշիով, իջնում է ծառի գագաթին գտնվող վարսանգա-պաշտային սիմվոլի հիմքից, ուր նա, միանալով առաջին ծառից այդտեղ եկող աջակողմյան հյուղի հետ, պայմանա-



Նկ. 689



Նկ. 690

վերում է վարսանգա-պտղային տվյալ սիմվոլի առնչությամբ։

Այսպիսով, տեսնում ենք, որ այդ կենաց ծառը բաղկացած է երկու ծառերի օրգանապես միահյուսվելուց։ Չնայած տեխնիկապես նրանց կարելի է միմյանցից անջատել և ունենալ երկու կենաց ծառ, բայց գաղափարապես նրանք անբաժանելի են։ Ուստի ոչ մի դեպքում չի կարելի այս պատկերն ուսումնասիրել մասնատված։ Այն լրիվ կհասկացվի միմիայն իր ամբողջության մեջ. այլապես ի՞նչ էր ստիպել նման զարդամոտիվների առաջին ստեղծողներին ու զարգացնողներին այնպես խնամքով միահյուսել երկու կենաց ծառ. և, որ գլխավորն է, այդ ամբողջության պտղաբերությունը ցույց տալ այն ձևով, ինչպիսին տեսանք ֆրատրիալ հատկացողությունների հետ կապված կենդանական պատկերները քննելիս։ Այստեղ նկարված երկու ծառերն ունեն երկուական ճյուղեր։ Նրանք պտղաբերել են ոչ թե իրենց ներքին առնչությունների շնորհիվ, այլ՝ խաչաձևող կապերի։ Այսպես, օրինակ, առաջին կենաց ծառի ձախ ճյուղը և երկրորդ կենաց ծառի աջ ճյուղը (պատկերը բնական դիրքով դիտելիս) միանում են միմյանց հետ՝ որպես ծնող-զույգ և պտուղ տալիս ծառի կենտրոնում գտնվող վարսանգա-պտղային սիմվոլը։

Այստեղից ինքնին հասկանալի է, թե որքան խոր բովանդակություն կա նաև կենաց ծառերի հյուսումների մեջ։

Վերցնենք մի ուրիշ նկար՝ նույն ձեռագրի 272ա թերթից (Նկ. 691)։ Այս կենաց ծառի արմատի գաղափարը ցույց է տրված ամբողջից առանձնացող ձևով, որպեսզի այն չխանգարի տոհմածառի բուն էությունը ցույց տվող հյուսվածքների ներդաշնակությանը։

Այժմ սկսենք վերևից։ Ի՞նչ ուժեր են պայմանավորել այդ ծառի գագաթին գտնվող վարսանգա-պտղային սիմվոլի գոյացումը։ Դրանք երկու ճյուղեր են, որոնք շատով հեռանում են միմյանցից և ձուլվում ծառերի բարդ պատկերի արտաքին եզրերի հետ։ Ամբողջ ծառաբունը մի խոշոր վարսանգա-պտղային արգանդի տեսք ունի, որի ներսը լցված է պտղաբերող հյուսվածքներով և հիշեցնում է ծնող-մոր որովայնը պատկերող տեսարանները (Նկ. նկ. 625, 626)։

Որքան էլ բարդ ու խճողուն է այդ ամենը, բայց և այնպես հեշտությամբ նկատում ենք, որ



Նկ. 691

այսօրվա էլ առկա է հիմնական սխեմարման։ Ոչ և ձախ ֆուժմերից, որոի ձևով, միմյանց են նգվում վերևից ներքև իջնող արտաքին փեղրը, որոնք ներքևում արտվում են Յ-ական էլուզներ։ Վերջիններս, արմատի և միմյանց հետ միահյուսվելով, կազմում են ուժր, եռանկյունի և այլ ձևեր։ Այդ չորս էլուզներից մի զույգը բարձրանում է վեր և տեսարանի կենտրոնում առնչվում վարսանգապաշտային զարդաձևեր՝ ուղղահայաց դիրքով։ Ներանցից վերինը (վերևինը) արձանում է երկու էլուզ՝ գնգի ոչ ու ձախ ձգված գալարներով և պատուհերով։ Նշված չորս էլուզերի մյուս զույգը ներից է կազմում վարսանգա-պաշտային ավելի մեծ զարդաձևեր, որոնք նույնպես գնգի վեր են նգվում ուղղահայաց դիրքով։

Ոչ բոլորից պարզ է, որ այսօրվա էլ կենաց ծառն ունի երկու հիմնական էլուզներ, որոնք արտահայտում են ֆրատրիաների իմաստը։ Այդ էլուզերից յուրաքանչյուրն էլ իր հերթին է բաղկացած երկու էլուզից. զա էլ արտահայտում է զուտ տոտեմների իմաստը։ Ահա այս հիմնական ուժերի շնորհիվ է, որ տեսում ու պաշտպերում է ամյսւ կենաց ծառը։ Պարզ է, որ զա էլ տոտեմաձև է՝ տոտեմի ներքին կառուցվածքի հիմնական գծերի պահպանումով։ Պարզ է նաև, որ այսոևս էլ հյուսումներն ունեն գաղափարական հարուստ բովանդակություն։ Այդ հանգամանքը, որ այսոևս ծառատունը, անվերջվող, ստացել է ինչ-որ սրովայնի տեսք, ինքնին խոսում է այն մասին, որ այսոևս առկա են նաև մայրիշխանության հուշերը։ Այս ծառն իր զարգամոտիվներով, զուտահետաքր, վերարտադրում է հղի կնոջ էության. և հենց այսպիսի պատկերացումների հետևանքով է, որ շատ ժողովուրդների մոտ ծագված ծառերը դիտվել են որպես հղի կանայք և նրանց մոտ արգելված է եղել ագմկելն ու խրատանքումը՝ որպեսզի պտուղների վիճում տեղի չունենա [1]։

№ 3722 ձեռագրի 53բ թերթում գտնվող յուսանգապարդը պատկանում է համանման այն մոտիվների քվին, որոնք ավելի քան իշխող են հյուսվածքները, իսկ ծառային տեսքն անհամեմատ ավելի քան կորած է (նկ. 692)։

Վերոհիշյալ օրինակների հիման վրա քննիքցողն ինքն էլ արդեն կարող է նկատել այս զարդի մեջ ևս չորս էլուզներ, որոնք մի-մի զույգ կազմած, միահյուսվել են միմյանց հետ և պայմանավորել պաշտպերության և մշտապատրաստության երևույթի պատկերումը։

Համանման գաղափարապատկերներից մեր թերթում ևս մի օրինակ № 7729 ձեռագրի 358ա թերթից (նկ. 693)։

Զարդարվեստը հարուստ է նաև այնպիսի զարդերով, որոնք չորս նման կամ տարբեր կենդանիների և չորս բույսերի փոխարեն հանդիպում են մարդկային չորս գեմքեր։ Այս վերջիններս էլ երևան են գալիս նախորդ մոտիվներին հատուկ հարաբերություններով և դարձյալ կապվում ֆրատրիալ հավաքականությունների հետ։

Քե ինչպես է պատահել, որ պատմության մեջ հատարակական բովանդակություն ցույց տվող կենդանական մոտիվները փոխարինվել են մարդկային մոտիվներով, զա արդեն հարցի է։ Մասնագետները ցույց են տվել, որ մարդին նախ՝ որպես տոտեմների և ապա՝ աստվածությունների բե-

[1] Дж. Фрезер, Золотая ветвь, выпуск I, Москва, 1928, стр. 142. „На Молуккских островах беременное дерево в цвету рассматривается, как беременная женщина. В плоды его нельзя шуметь... для того, чтобы дерево не испугалось, чтобы его плоды не попадали слишком рано, как это бывает с женщиной, преждевременными родами...".



Նկ. 692



Նկ. 693

գունել են կենդանիներին և հետո միայն մարդկանց։

«Հույն փիլիսոփա Քսենոֆանեսը սխալվում էր,— ասում է Գ. Վ. Պլեխանովը,— թե մարդը միշտ իր աստծուն ստեղծում է իր պատկերի նման։ Ո՛չ, սկզբում նա ստեղծում է նրան կենդանու պատկերի նման։ Մարդանման աստվածները ծագում են միայն հետագայում, որպես հետևանք մարդու նոր հաջողությունների՝ իր արտադրական ուժերի զարգացման գործում»[1]։

Պատմական այս իրականությունն իր անջնջելի հետքերն է թողել համարյա բոլոր ժողովուրդների գեղարվեստության, ծեսերի, հին պատկերացումների, զարդարվեստի և նման ուրիշ բնագավառների վրա։

Քանի որ այս հարցը ներկա աշխատության համար կարևոր նշանակություն ունի, բերենք որոշ փաստեր։

Նոր-Մեքսիկայի մոկերի ցեղում պահպանված է եղել այս տեսակետից մի վերին աստիճանի մեծարժեք ավանդություն, որը գրավել է Մորգանի ուշադրությունը։ Իր կոնսպեկտում նա գրում է.

«Միացյալ Նահանգների բանակի կապիտան բժիշկ դ-ր Տեն Բռուկը Սկուլկրաֆտին հայտնել է մոկերի ցեղի լեգենդը՝ նրանց գյուղերի ծագման մասին։ Նրանց տատը իր ծննդավայրից բերում է մարդկանց ինը տեսակ, առաջինը՝ եղջերուի և այլն... Զետեղելով նրանց այն տեղերում, որտեղ այժմ գտնվում են մոկերի գյուղերը, նա նրանց (այսինքն՝ Եղջերուին, Ավազին, Անձրևին, Արջին և այլն) դարձնում է մարդ, որոնք էլ ստեղծում են տարբեր պուեբլոներ. տեսակների այդ բաժանումը (Եղջերուի տեսակ, Ավազի տեսակ և այլն) պահպանվում է մինչև ներկա ժամանակը։ Մոկերը հավատում են հոգու տեղափոխմանը և ասում են, որ մահից հետո իրենց կրկին փոխարկվում են արջերի, եղջերուների և այլն»[1]։

---

[1] Գ. Վ. Պլեխանով, Հոդվածներ կրոնի մասին, Երևան, 1939, էջ 43—44։

[1] К. Маркс, Конспект книги Льюиса Г. Моргана „Древнее общество", Архив Маркса и Энгельса, Огиз—Госполитиздат, 1941, стр. 115—116.



Նկ. 684



Նկ. 685

Կարևորն այն է, որ մոկերի քեղում այդ ավանդությունը դրի է առնված այն ժամանակ, երբ գեռ իրականում նրանց աստվածը կռվընկիս են նրել հենց այն աստվածների անուններով (տե՛ս Ոզդեղու, 2) Ավազ, 3) Անձրև, 4) Արև, 5) Նապաստակ, 6) Տափաստանային գայլ, 7) Բոժոժավոր օձ, 8) Միախոտա, 9) Պրոտեյ)[1], որոնք նշված են այդ ավանդության մեջ։

Համանման շատ ավանդություններ բնորոշ են պահպանվել նաև Հայկական դիցաբանական գրույցների, երգերի, հեքիաթների մեջ և Մասունքի Դավիթ էպոսում։ Այսպես, օրինակ, XIX դարում գրի է առնված հետևյալ գրույցը, որը պատմվել է որպես իրական գեպքի նկարագրություն. «Հարսը գնդեն ուզա մը Հնդեն գնդ երթալուն, անհայտ եղած էր... Հախտյդց Հայտնեցին, թե ուզան՝ չիներ (ոզին) հափշտակեր տարեր ըրեր են վայրի էրնց Հովիվ։ Որտերդ մ՝ ալ կը վնայե, թե էրե մը տեսա յեղը, պիտի գարնեի Հրացանովս, մարդու պես կերևար այլես. Հրացանս վար դրի, էրե եղավ. երթեն ուզի գարնելու, մարդ գարձավ. Հարցուցի՝ դու ո՞վ ես. ասաց՝ ես հայտն եմ ու անտնուլի եղավ»[2]։

[1] К. Маркс. Конспект книги Льюиса Г. Моргана „Древнее общество". Архив Маркса и Энгельса, Огиз—Госполитиздат, 1941, стр. 115.

[2] Գ. Գրիգորյան, Մոկաստան, Ն. Գոլիս, 1878, էջ 118։

Կերպարանափոխման (մետամորֆոզ) այս երևույթը առասպելի հետ կապված պատկերացումների մնացուկ է։

Ահա համապատասխան մի վկայություն էլ Մասունցի Դավիթ էպոսից.

Մեր Հոգի Բարեգին Հոգ— Քոգի Բարեգ,
Օդդրան Գնդուդ ես գիմերով մարդ է.
Կառուս կդնես՝ թռչուն կդնես՝ գիշատ կդնես՝
Մեկ գիմերով մարդ է.
Ամա ար կը մոհնես Բաղամ՝
Գիշատ դնես, կառուս դնես,
Ինչ ար դնես, պղանես, ձի դդղնես։
Մատ Բաղամ, ինչ կա գիս՝ բերագը պղանես։
Օդդրան Գնդուդ գնես Երազ ես կառուս,
Գրնաց մերի կդես, նառավ կեռանես...
Մեր Հոգ—անեղ եղարդ,
Օդդրան Գնդուդ պղանես...[1]

Մետամորֆոզի այս երևույթն ամենահաճախ և ամենաբազմազան ձևերով պահպանված է հեքիաթներում։ Օրինակ, «Ոխիկը Հեքիաթում»[2] հերոսը մերթ գառնում է ոմին լավ հրեղեն ձիս (ներքին գառնում մարդ), մերթ ոմին հրեղեն չամուչս (ներքին գառնում մարդ)։ «Ճանկը քուր տուն տասը ոսկե անասուն ձգառնա, Հոր կշտով կփախնի։ Որ կհասնեն տուն, ազեն կասի.— Ալ Հեր, ես քո ազեն իմ ձի, չամուչ, մարալ գառնում, կշտովդ Հա փախնում. իմ փեչակս էլ ես ա»։

Կերպարանափոխման երևույթն այս հեքիաթի հաշորդ էջերում զարգանալով, հասել է խիստ ծայր աստիճանի։

Մեր քեմալյից գտած է այս երևույթների ուսումնասիրության մեջ խորանալը. սակայն այսքանն էլ բավական է ցույց տալու այն հարուստ մնացուկները, որոնք կապված են աստվածների, անտրոպոմորֆիզմի և մետամորֆոզի հետ։

Այդպիսի մնացուկներ կան նաև զարգարվեստում։ Դրա հետ այս պատճառով է, որ հաճախ մեծյանց հետ հանդիպում են և՛ մարդակերպ, և՛ կենդանակերպ, և՛ կիսամարդակերպ-կիսակենդանակերպ, և՛ երբեմն էլ բոլորովին մարդակերպ զարդամոտիվներ, որոնց բոլորի արմատները էլ թաղված են նույն հեռավոր ժամանակների խորքում։

№ 2414 Հետապրի 82ա թերթի լուսանցագարդը՝ մի կենաց ծառ է, որի վրա, որպես այդ ծառի գոյությունը պայմանավորող ուժեր, ցույց են տրված մարդկային չորս գեմքեր (նկ. 686)։ Նրանցից եր-

[1] Մասնա Ծռեր, I, Երևան, 1936, էջ 287։

[2] Հայ ժողովրդական հեքիաթներ, կազմեց և խմբագրեց Ս. Ղանալանյան, 1940, էջ 328։



Նկ. 696



Նկ. 698



Նկ. 697

կուսը զետեղված է վերևում, իսկ երկուսը՝ ներքևում. իրար մոտ գտնվող զույգերը, համաչափորեն, դասավոր տոհմերի իմաստն ունենալով, ամուսնական կապերի մեջ են հետևյալ ձևով. ներքևի աջակողմյանը՝ վերևի ձախակողմյանի և վերևի աջակողմյանը՝ ներքևի ձախակողմյանի հետ: Բայց քանի որ նրանք բոլորն էլ նույն տոհմական օրգանիզմի բաղկացուցիչ մասերն են և սերտորեն առնչված են միմյանց հետ, ուստի դա ևս արտահայտություն է գտել ավելյալ զարդում՝ ուրիշ կապերի միջոցով: Այժմ ճշտորեն որոշել, թե որ կապն է ցույց տալիս ամուսնական և որը՝ ազգակցական հարաբերությունները՝ դժվար է: Սակայն իրենց ամբողջության մեջ այդպիսի մոտիվներն արդեն հասկանալի են: Համանման ուրիշ նկարներից հիշենք նաև № 6257 ձեռագրի 249ա, 186ա, 82ա թերթերի զարդերը (Նկ. Նկ. 695, 696, 697):

Հաճախ էլ կենաց ծառի մոտիվը համարյա թե իսպառ բացակայում է, իր տեղը զիջելով միայն չորս գլուխներին: Այդպիսի օրինակներից է № 3722 ձեռագրի 320բ թերթի զարդը (Նկ. 698): Դա իրենից ներկայացնում է մի շրջանակ, որի ներսում, խաչաձև սիմետրիայով, ցույց են տրված չորս գլուխները: Կենաց ծառի մոտիվն այստեղ պահպանված է թույլ գծիկների ձևով, որոնք զետեղված են այդ գլուխներն իրար միացնող քառաբլթակ շրջանակի ծոցիկներում: Կենաց ծառի փոխարեն, ինչպես տեսնում ենք, այստեղ շեշտը դրված է հատրիկային մոտիվի վրա. ընդ որում, այժմ որպես տոհմերի իմաստ ցույց տվող զարդանշաններ գիտվող չորս գլուխները միաժամանակ հիշեցնում են նաև չորս էլեմենտների գաղափարը: Եվ հենց այս հանգամանքն էր, որ նկատի ունեինք՝ չորս էլեմենտների մասին խոսելիս, երբ անդրադառնում էինք, թե այդ զարդամոտիվների մեջ առկա է նաև հասարակական հասկացողություն:

Հարց է առաջանում. հենց սկզբի՞ց են այդպիսի մոտիվները ցույց տվել թե՛ տոհմի կառուցվածքի պատկերը և թե՛ չորս էլեմենտների գաղափարը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է ճշտորեն որոշել, թե ե՞րբ են առաջացել դուալ և ֆրատրիալ կազմավորումները, և ե՞րբ՝ չորս էլեմենտների մասին եղած գիտելիքները: Այս հարցը կարոտ է հատուկ ուսումնասիրության, որը դուրս է գալիս ներկա աշխատության շրջանակներից: Այսուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում փոքր ինչ անդրադառնալ դրան, որովհետև, քննվող մոտիվների առնչությամբ, դրա կարիքն արդեն առաջացել է:

Հողի, ջրի, ոդի և արևի կենսական նշանակությունը մարդկության համար հայտնի պիտի լիներ հենց այն ժամանակներից սկսած, երբ նրանց գիտակցությունը, անհատական կարիքի մղումով, սկսել է պատվիր կյանքի համար նպաստավոր և անքաւենպատա պայմանների քննության չուրջը։ Դեռ քափառական կյանքի օրերին, երբ մարդիկ քոչնում էին մի վայրը և տեղափոխվում մի ուրիշ վայր, անհրաժեշտաբար, իրենց զգալ պիտի տային այն պայմանները, որոնց շնորհիվ տեղափոխվելիք վայրը գերազանվել է նախկին վայրից։ Պարզ է, որ, տարերային կերպով, մարդկանց մտածողության մեջ այդ ժամանակ արդեն կարող էին իրենց հատուկ տեղը գրավել բնության չորս ուժերը, ինչպես նաև այլ հանգամանքներ ժամանակի ընթացքում մարդիկ կենսատեին, որ կարևոր ու որոշիչը ոչ քե երկրորդական հանգամանքներն են, որոնց կարոն չեն, այլ բնության գիտավոր ուժերը։ Այս գիտակցությունը հետագայում պիտի հատկապես արժանավորվեր և էական նշանակության առանար անհանգստությանն և երկրագործության զարգացման հետևանքով։ Այդ մասին արդեն բավականաչափ խոսված է նեղնա աշխատության երրորդ գլխում։ Ուստի կարող ենք ասել, որ տոհմական համայնքից առաջ էլ մարդիկ կարող էին հանդիպած և գիտակցած լինել բնության չորս գործոնների կենսական նշանակությունը։

Այս կապակցությամբ անդրադառնանք նորից հորալ քոչումի հետ կապված գիտաբանական դրույթին։ Ինչպես տեսանք, այդտեղ որոշակի կերպով ասված է բնության չորս ուժերի կարևորության գիտակցությունը։ Այժմ ուշադրություն դարձնենք այն ժամանակաշրջանի վրա, որի մասին խոսվում է այդտեղ։ Վերևում ցույց տրվեր, որ այդ դրույթի մեջ հորալը նրանում է գալիս որպես քոչանկերը նախամայր. ուստի և այդտեղ ասված է մայրիշխանության հպոխան։ Միևնույն կողմից՝ այդ դրույթի մեջ ցույց և նշված հասկացողությունները համապատասխանում են այն հետևյալ ժամանակներին, երբ քույրերն ու եղբայրները ամուսնանալ էին։ Նրանց անգամ այդտեղ փորձելու չենք տեսնել պատկերացնել բնականների հետքերը (որոնք արդեն արդելված էր քրոջ ու եղբոր ամուսնությունը), գործնական գործ կունենանք տոհմատիրությանը նախորդած ժամանակների հետ։ Ուշադրության գարձնենք նաև այդ դրույթի մեջ նկատվող անհանգստացնական կյանքի քոչվորական բնույթի վրա, որն արդեն նկատվում է տոհմական համայնքի շրջանում։ Համեմատաբար հին ու նոր ժամանակների մասին նշած ամբ բոլոր վկայություններից երևում է, որ, տանքվածն անհանգստացնության սկզբնական շրջանի արձագանքների հետ միասին, այդտեղ տակա են նաև բնության չորս ուժերի մասին մարդկանց ունեցած գիտելիքները։ Այդ բոլոր ժամանակներում էլ կարող էր գոյություն ունենալ նաև բնականների քառաբաժան գաղափարը, օրինակ, ամբարտավանական չորս գառակարգերի սիմանեմը, քառատոհմ ֆրատրիաները, քեզի չորս ֆրատրիաներից բաղկացած լինելը և այլն։ Ուստի ժողովրդական հենց նույն ժամանակներում էլ կարող էին մարդկանց գիտակցության մեջ առանձնահատուկ տեղ գրավել քե՛ բնության և քե՛ հասարակական չորս ուժերը։ Հորալի գրույցում հենց այդպես էլ վկայվում է։ Հորալն իր մեջ մարմնավորում է տոհմի գաղափարը։ Նա մտահղված է տոհմի և՛ անասունների, և՛ մարդկանց պաշտպանության հարցով։ Չկա անհանգստացնական ամ, չկա նաև մարդկանց ամ. չեն ծեսում հղիները, չեն հղիանում երիտները. Հետևապես հորալն անեղջյուր է, զուրկ է ամուսին-եղբորից, և տատապում է ոդոզարգկյունից։ Ճիշտ է, այդտեղ որոշակի ակնարկ չկա բնականական կոնկրետ ձևի մասին, քայլ դա կարևոր չէ. կարևորը տոհմի շնչհանուր զարգացման հարցն է, որը կապված է չորս էլեմենտների հետ։ Ինչ վերաբերում է բնականական ձևին՝ այն պայմաններում, որ հնչատի ունի այդ դրույթը, ապա ոչ մի կասկած չկա, որ այդտեղ կարող էր առկա լինել զուտ և ֆրատրիալ կազմակերպում ունեցող բնականական որևէ ձև։

Հորալի մասին պահպանված դրույթում պիտի հատուկ ուշադրության գարձնել նաև վերջին տողերի իմաստի վրա, ուր ասվում է.

Առանիկաս երկին,
Առանիկաս վտին,
Առանիկաս հատչի սատանել։

Այստեղ էլ, ինչպես տեսանք, առկա է ծեզ-զույգի գաղափարը՝ արտահայտված բնության ուժերի միջոցով, որոնք, ասկայն, նրանք ներկայացված են նրան խմբավորմամբ՝ երկինս և ոգեղեն։ Այդ ուժերի զնապվածությունս է համարվում անբերրիության պատճառը։ Եվ գա իր մեջ պարունակում է մի մեծ ճշմարտություն. առանց այդ կոնկրետ ճշմարտության, մարդկությունը գարեր շարունակ երկինքն ու երկիրը չէր դիտի որպես ամուսնական զույգ և նրանց հետ չէր կապի իր գոյության հարցը։ Եվ նեն երկինքն ու երկրին էլ ոգիներ են վերագրվել, նրանց էլ մարդին պատկերացրել են որպես ասեղծագործին զույգ-

պի, ապա դրա նյութական հիմքն էլ հենց նրանց, այսինքն՝ երկնքի և երկրի բնական հատկություններն են եղել։

Հիշենք նաև վերևում քննված այն դրույցները, որոնց կրակն ու ջուրը հանդես են բերված որպես ջուրը ու եղյուրը և միաժամանակ որպես ամուսիններ։ Այդպես էլ պահպանված են շատ ավելի հին ժամանակների արձագանքներ, քան տոհմային հասարակարգն է։ Բայց, ինչպես տեսնում ենք, այստեղ էլ բնության ուժերը մասամբ ճանաչված են և կապված հասարակական-բնառանեկան հավաքագործությունների հետ։

Իսկ որ հետո հասարակական ձևերն ու կոմունոզնական հավաքագործությունները իդեոլոգիացում, սովորաբար, դրսևորվել են ասոցացված ձևով, այդ մասին Մ. Պ. Տոլստովը գրում է. «Ինչպես և սեռական տոհմիզմը, դուալ կազմակերպումը («дуальная организация») հանդես է գալիս ընկած ոչ միայն գենեալոգիական, այլև կոմունոզնի պատկերացումների հիմքում։ Աշխարհի բաժանումը երկու կեսի, որոնցից մեկը ասոցացվում է մի ֆրատրիայի, իսկ մյուսը՝ մյուսի հետ [1]։ Այդպիսի միտք է հայտնում նաև Ն. Ա. Բոգորազը։ Նա, նկատի ունենալով դուալ և ֆրատրիալ կազմակերպումները, գրում է. «Իզհալոգիայում այդ օրրոցան ավելի քան հետու գնաց. բնության և կուլտուրայի բոլոր երևույթները կիսվեցին երկու մասի. մի կեսը վերագրվեց մի արխայիկ տոհմին, մյուսը՝ մյուսին [2]։

Մ. Պ. Տոլստովը նշում է, որ հատկապես բնական երևույթները երկուսներին էին ենթարկվում այդպիսի խմբավորման. նա, որպես օրինակ, բերում է նաև երկինքն ու երկիրը։ Պետք ավելացնել, սակայն, որ լոկ անալոգիայով չէր կատարվում այդպիսի մոտեցումը։ Դրա հետ պետք էր հիշել նաև այն հանգամանքը, որ մարդին հետաքրքրում էին ոչ թե հետաքրքրությունները, երբ նրանք ունեցած պատկերացումներ։ Մոտեցողության այդ եղանակը, բնականաբար, հարատևել է նաև հետագայում, հատկապես տոհմական կարգերում, որոնց բնառանեկան-ազգակցական հարաբերությունները խիստ վճռական դեր էին կատարում։

Այդ հավաքագործությունների մեջ ընդհանրացման համար առիթ էին մի կողմից կենսական հարցեր շոշափող հանգամանքները, և մյուս կողմից՝ քվական քանակը։ Դուալ և ֆրատրիալ հավաքագործությունները սերված էին հասարակական ձևերից, բայց այդ հասարակարգի գոյության նյութական հիմքը բնությունն էր, իր հավերժական ու անփոխարինելի ուժերով։ Իրենց հերթին քե՛ մեկը և քե՛ մյուսը սրտված էին երկու խոշոր խմբերի. նրանց հասարակական առումով այդ երկուսն ընկած են նախնական բնառանեկի հիմքում (օրինակ, ավրորալիական գոտերը, պունալուա բնառանեկը, ֆրատրիալ սիստեմը և այլն), ապա, կոսմիկ առումով, դա իմաստավորում է երկինքի և երկրի զուգոփարը։ Գործոլ ծնող-զույգի ընդհանրացնող մոտիվն է, որ գրսևորում է այդ հավաքագործությունների իմաստը և ցույց տալիս նրանց ներգաղթ գուգորդումը։

Ահա վերջապես այն ամբողջը, որ կազմում է գարգարվեսի սիմվորիկ կոմպոզիցիայի նյութական հիմքը։ Անշուշտ, այստեղ տարբեր ժամանակներում մուտք են գտել նաև ուրիշ հավաքագործություններ, որոնք, սակայն, էական նշանակություն չունեն։

Բայց, ինչպես գիտենք, գարգարվեսի սիմվորիկ կոմպոզիցիայի հիմքում ընկած այդ նյութական հիմքերն էլ իրենց հերթին են բաժանվում նոր խմբերի։ Երկինքն ու երկիրը համազոր են բնության լորս ուժերին, ուստի և հանուր նրանք պատկերվում են հենց այդպես։ Մտացվում է, քվական առումով, լորսի ընդհանրացման գաղափարը։ Հատարակական կյանքում դրան համապատասխանել են դուալ կազմակերպումների ներքին հատկանիշները։ Ցեղի կամ տոհմի յուրաքանչյուր կես մասում առկա են և՛ ազգամարդիկ, և՛ կանայք, որոնք բոլորն էլ, անկախ սվյալ ցեղի կամ տոհմի կարգ ու կանոնից, գտնվում են ամուսնական կապերի մեջ։ Ուստի, ընդհանուր առումով, տոհմի կամ ցեղի ստեղծագործ ուժերը բաժանվում են լորս խմբերի և նրանք են գալիս դուալ կամ ֆրա-

[1] С. П. Толстов, Пережитки тотемизма и дуальной организации у туркмен, Проблемы истории докапиталистических обществ, 1935, № 9—10, стр. 30.

[2] Родовое общество, Москва, 1931, стр. 17.

սրինալ խմբավորումներով։ Ահա այս հիմքի վրա էլ առնչվել են չորսի իմաստաբանական ընդհանրացումներ։ Այստեղ էլ նկել են երկդրական հանգամանքներ, որոնց մասին չենք խոսում։

Հարց է առաջանում, զարգարվեստի մոտիվներում երևան եկող համապատասխան զարդերի մեջ մի՞շտ էլ նկատված են նկել հատարակության և բնության այդ երկու կամ չորս ուժերը։ Այս հարցին պատասխանելու համար պիտի նկատի ունենալ մարդկային պատմության ընդհանրապես և ամեն մոզովրդի ու նրա նախորդների պատմության առանձնապես։

Քանի որ բնության չորս ուժերը միշտ էլ կազմոն են եղել, իսկ տնտեսական համապատասխան միավորները՝ ոչ, ուստի եասկանալի է, որ զարդարվեստում ավելի հաճ իշխող պիտի լիներ բնության չորս ուժերի գաղափարը։ Ըստ որում՝ նախնական շրջանում մի՛ մնկը և մի՛ մյուսը կարող էին միաանպրար հանդես գալ, բայց հետագայում՝ ոչ։ Մանավանդ, որ հետագա ժամանակներում զարդանում է հատուկ պետություն՝ բնության ուժերի մասին, ստեղծվում է համապատասխան փիլիսոփայություն, վերջապես հանդես է գալիս քրիստոնեությունը՝ չորս էլեմենտների իդեալիստական ուսմունքով և այլն։ Մյուս կողմից էլ հատարակական համապատասխան միավորները էին վերանում։ Այսպիսով, զարդարվեստում պահպանված համապատասխան մոտիվների մեջ, ի վերջո, պիտի իշխեր բնության չորս ուժերի գաղափարը։

Այդ իսկ պատճառով էլ մենք նկատում ենք մեջ հիմնական չնչոր դրել ենք այդ հարցի վրա։ Մասնավոր, ինչպես ասեցանք, համապատասխան մոտիվների ստեղծման գործում որոշակի դեր են կատարել նաև հատարակական-բնական հանգամանքները, որոնց մասին և խոսվում է այստեղ։

Ինչ վերաբերում է զարդարվեստի զույգ (մի զույգ) մոտիվներին, ապա դրանք մեջ, ընդհանուրը, իշխող դեր է վիճակվել հատարակական հանգամանքներին։ Երկնքի և երկրի միասնության գաղափարի փոխարեն զարդացած չորս էլեմենտների ուսմունքը քիչ չի ազդել, որ այդ հին պատկերացումներն ավելի քան զոմինական լինեին։ Բացի դրանից, հատարակական կյանքում զույգի մոտիվը հենց սկզբից իշխող է նկել և հետագայումն էլ այն չի վերացել։ Անկախ նրա դրսևորման ձևերից, նա միշտ էլ առկա է նկել։ Ուստի և զարդարվեստում այնքան մեծ տարածում ընդունած զույգի հանգամանքը, որ դրսևորվել է տեսարկի կոմպոզիցիայի միջոցով, հիմնականում, արտահայտել է ծնող-զույգի գաղափարը։ Այդ իսկ պատճառով էլ, մենք համապատասխան մոտիվները քննելիս հենց այդ տեսանկյունով։

Իրենց հերթին, չորսի և երկուսի մոտիվները էլ միմյանցից անկատ չեն եղել։ Քա՛ զարդարվեստում և քա՛ մարդկային պատկերացումների մեջ նրանք համաչ զուգորդվել են միմյանց հետ։ Ավելին, նրանք հարաբերվել են նաև ուրիշ հասկացողությունների հետ, առնչվել իրենց կրկնակի քվազանանգով, նորից զուգարվել միմյանց հետ և այլն։ Ասացի արդեն վերևում է տեղեկատվական բոլոր մոտիվների մեջ նաև հատարակական հասկացողությունների երկիմնի ազդությունը։

Քանի որ այս մոտիվների հետ արդեն հանդամանորեն ծանոթացել ենք, ուստի ընթերցողն առանց նորահոր փաստերի էլ կարող է պատկերացնել, թե որքան բարդ ու բազմազողմանի բովանդակություն է խտացված եղել զարդարվեստի մոտիվների մեջ։

Այս մասնակի, բայց խիստ անհրաժեշտ ընդհատից հետո, անդրադառնանք զարդարվեստի այն մոտիվներին, որոնց առկա է չորսի գաղափարը և այն կապվում է նաև արտաքրական չորս միավորների հետ։ Վերցնենք նախորդ օրինակը (նկ. 895)։ Մենք արդեն նման մի չարք մոտիվներ քննել ենք երկնային կաղապի մասին խոսելիս։ Ինչպես տեսանք, երկնային կաղապի գաղափարը սերտորեն կապված է քրիստոնեության հետ և իր հիմքում ունի չորս էլեմենտների կամ բնության չորս ուժերի իմաստը։ Սակայն, չի կարելի պնդել, թե այդ մոտիվը զարդարվեստում ստեղծվել է միայն բնության ուժերի հիման վրա։ Քանի որ զարդարվեստի ձևերի մեջ, գեռ շատ հետք, ուղ են գրավել նաև հատարակական հասկացողությունները, ուստի քառակերպ սիրոի համար նլուքի ժառանգած նախնական ձևերում էս պիտի իրենց տեղը գրավելին նաև բնականության քառատրոհ սիստեմները։

Նվ հենց այս հանգամանքն էր, որ նկատի ունենանք չորս էլեմենտների և քրիստոնեական սիմվոլների մասին խոսելիս, երբ ասում էինք, թե նրանց հետ կապված են եղել նաև հատարակական հասկացողություններ։

Այժմ մի քիչ ավելի հանգամանորեն անդրադառնանք այս հարցին։

Այս կապակցությամբ վերին ասթիճանի մեծարժեք վկայություն ենք հանդիպում Մարքսի նշված կոնսպեկտում։ Այդտեղ Մարքսը կանգ է առնում ազտեկների կոնֆեդերացիայի հետ կապվող դիցաբանական մի զրույցի վրա և տալիս նրա բա-

ցատրությունը։ Պարզվում է, որ տոհմա-ցեղական քաղաքաշեն սիստեմը ազդեցություն է թողել ճարտարապետական այնպիսի խոշոր ձևավորումների վրա, ինչպիսին է բնակավայրի հատակագիծը։ Այդ գրույցի համաձայն, ամերիկյան Մեքսիկո քաղաքն իր չորս կվարտալներով առաջացել է այդ քաղաքի բնակիչների պաշտած կուռքի կամքով։ Այդ կուռքը նախ պահանջել է, որ բուրգն իր (կուռքի) համար քարից ու կրից տուն շինի, զետեղի իրեն այնտեղ, իսկ ցեղի ղեկավարները բաժանվեն իր շուրջը՝ չորս կողմերի վրա և հաստատվեն այդպես բնակվելու։ Այդպես էլ առաջացել է Մեքսիկո քաղաքը՝ չորս կվարտալներով։ Մարքսն այնուհետև ասում է, որ այստեղ գործ ունենք պատմական անցյալի հետ, որտեղ, ամեն այն, դեպքերը կատարվել են, ոչ թե այդ գրույցի նշած կարգով, այլ ընդհակառակը. «Իրականության մեջ այդ պրոցեսն ընթացել է հենց հակառակ հաջորդականությամբ, առաջ տոհմերն են բաժանվել ըստ ֆրատրիաների (եղբայրությունների) և ապա առաջացել է նշված գրույցը»։ Այսպիսով, տեսնում ենք, որ ֆրատրիալ սիստեմն իր կնիքն է դրել բնակավայրի հատակագծի վրա. ավելին. այդպես են բաժանվել նաև հողամասերը։ «Մեխիկո պուեբլոն,— ասում է Մարքսը,— աշխարհագրորեն բաժանվում է չորս կվարտալների, որոնցից յուրաքանչյուրն զբաղված է մի «ծնկով» («коленом», ֆրատրիայով)»[1]։ Նա նման վկայություն հիշում է նաև ացտեկյանների ցեղի վերաբերյալ։ Այս վերջինի կապակցությամբ նա նշում է, որ նրանց պուեբլոն (բնակավայրը) բաժանված էր չորս մասի (ըստ ֆրատրիաների)։ Այստեղ կա մի կարևոր վկայություն ևս. «Յուրաքանչյուր կվարտալ ուներ յուր «Տեուկտլի»-ն (գլխավոր զորահրամանատարը — «главного военачальника»), յուր հատուկ զինվորական համազգեստը, յուր դրոշը և զերբը...»[2]։ Իսկ, ինչպես գիտենք, նրանց զերբերը հիմնականում բաղկացած էին լինում տոտեմ կենդանիների պատկերներից։ Օրինակ, ացտեկների ղեկավարի (Մոնտեզումա) մասին խոսելիս, Մարքսը նշում է. «Այն տանը, որում ապրում էր Մոնտեզուման, պատկերված էր գերբ-արծիվ կամ տոտեմ»[3]։ Այսպիսով, չորս կվարտալը կունենա չորս տոտեմային գերբ, իսկ ամբողջ ցեղի կամ բնակավայրի ընդհանուր խորհրդանիշը, բնականաբար, պիտի իրենից ներկայացներ այդ չորս սիմվոլների միասնությունը։

Ուշագրավ է նաև մի ուրիշ հանգամանք։ Հայտնի է, որ Ամերիկայի գյուտից հետո եվրոպացիներն այնտեղ տարան նաև իրենց լուսավորությունն և տարածման մի ուրիշ հզոր միջոցը՝ քրիստոնեությունը։ Եվրոպական այս կրոնը վերահաս պատուհասի նման իջավ բնիկների ուսերին, որի պատճառով էլ նրանց հին հավատալիքները փոխարինվեցին նորով։ Եվ եթե Մեքսիկոն առաջ ուներ չորս կվարտալ՝ իր չորս կուռքերով, ապա այդ չորս կուռքերին, Մարքսի կոնսպեկտի տվյալներով, հետագայում փոխարինեցին քրիստոնեական չորս սրբեր՝ ս. Հովհաննես, ս. Մարիամ, ս. Պողոս և ս. Սեբաստիան...[1]։

Ահա փաստեր, որոնք ցույց են տալիս արտադրական-հասարակական միավորների ազդեցությունը մարդկանց մտածողության և գործունեության վրա։ Այստեղ անգամ քառակերպ աճում մի նոր բացատրության հնարավորության ենք հանդիպում։

Այս կապակցությամբ հիշենք նաև նախշերի էպիկական պատումում իշխող չորս աստվածները, չորս աստվածուհիները, չորսական տոտեմ կենդանիները և այլն, որոնք կապվում են նաև հասարակական հասկացողությունների հետ։

Համապատասխան ուշագրավ վկայության ենք հանդիպում նաև բյուզանդական հին ծեսերի մեջ։ Բ. Ա. Ռիբակովը նշում է, թե ինչպես Բյուզանդիայում, նոր տուն կառուցելիս, սովորություն է եղել, այդ տանը հատկացված տերիտորիայի վրա գծել մի ռոմբ, բաժանել այն չորս մասի և առաջացած ռոմբիկների մեջ դնել մի-մի քար՝ վերցված այդ տերիտորիայի չորս կողմերից[2]։

Միաժամանակ այս հնավանդ արարողության մեջ ևս առկա է նույն երևույթը, որը հիմք է հանդիսացել Մեքսիկոյի չորս կվարտալների ծագմանը, նախշերի էպիկական պատումում չորսական ուժերի երևան գալուն և այլն։

Պարզ է, որ այս բոլորի հետքերը պիտի պահպանված լինեին նաև զարդարվեստում, որի ապացույցն են արդեն մեջ բերված բազմաթիվ և բազմազան նկարները։

Ինչպես կտեսնենք հաջորդ գլխում, այս տեսակետից եզակի արժեք ունեն հայկական խորանները ու մուտքապատկերները։ Այստեղ ընդօրինա-

---

[1] К. Маркс, Конспект книги Льюиса Г. Моргана, Архив Маркса и Энгельса, Огиз—Госполитиздат, 1941, стр. 124.

[2] Там же, стр. 124.

[3] Там же, стр. 129.

[1] Там же, стр. 124.

[2] Б. А. Рыбаков, Прикладное искусство и скульптура, История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 402.



Նկ. 699ա

կենք երկու մուտքապատկեր՝ բուլղարական միջնադարյան մանրանկարչությունից, որ այնքան ցայտուն կերպով է պահպանված ցեղի կամ ցեղախմբի չորս արտադրական կոլեկտիվների պատկերը (նկ. 699ա, 699բ)[1]։

Այդ չորս կոլեկտիվները պատկերված են չորս զույգ թռչունների ու կենդանիների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներկայացրել է կամ մի ֆրատրիա (իր տղամարդկանցով ու կանանցով), կամ մի ֆրատրիալ կազմություն ունեցող ցեղ (տոհմ)՝ ցեղախմբի մեջ։ Կարող է պատահել, որ միջնադարում ընդօրինակված այս մուտքապատկերում տեղի են ունեցել նաև որոշ փոփոխություններ, որոնք նույնպես պիտի հաշվի առնվեն։ Բոլոր դեպքերում էլ այստեղ գործ ունենք արտադրական չորս միավորների գաղափարապատկերի հետ։

Հենց այդ չորս ումերի կապն ու փոխհարաբերություններն են ցույց տվել նաև այդ տեսարաններում գտնվող հյուսածո գծերն ու զարդերը։ Պարզ է, որ այս չորս ումերի միասնության կենտրոնում գտնվող քառաթև զարդերը, ամենից առաջ, իմաստավորել են հենց այդ չորս ումերի գաղափարը։ Բայց քանի որ հետում հասարակական հասկացողությունները արմատորեն մոռացված են եղել նաև չորս էլեմենտների իմաստի հետ, որն այնքան մեծ դեր է խաղացել քառաթև և քառաբաժան զարդաձևերի ստեղծման գործում, ուստի այսպի-

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древняго и новаго времени, С. Петербург, 1887, таб. XI, рис. рис. 1, 6.



Նկ. 699ը

ակ մոտիվների մեջ ևս բնության ուժերի գաղափարն առկա է եղել։ Պետք նկատել, սակայն, որ միշտ էլ, նման հարցերը քննելիս, անհրաժեշտ է կատարել որոշ վերապահում, որովհետև հայտնի չէ յուրաքանչյուր նման զարդանախշի անցած ճանապարհի ամբողջ պատմությունը։ Ընդհանուր գծերով այս զարդն իր նախնական շրջանում պետք արտահայտեր և՛ հասարակական, և՛ բնության չորս ուժերի գաղափարը. քրիստոնեության շրջանում, սակայն, այդտեղ պետք իջնեին բնության չորս ուժերը՝ իրենց կրոնա-սիմվոլիկ բացատրությամբ։ Չպետք մոռանալ, որ քրիստոնեությունից առաջ էլ այդտեղ պատկերված կենդանիներն արդեն շատ էին հեռացել սովորական տոտեմ կենդանու նմանակությունից, կապվելով կրոնական պատկերացումների հետ։ Ուստի հենց այդ իմաստով էլ նրանք պետք հարմարեցվեին քրիստոնեության ոգուն, որի ապացույցներն են այն բազմաթիվ մուտքապատկերները, ուր չորս ավետարանիչների սիմվոլները երևան են գալիս երկուական



Նկ. 700



Նկ. 701

կենդանիների զույգային միավորությամբ։ Իսկ իրենք, այդ ավետարանիչները, ինչպես տեսանք, գծվում են նաև որպես չորս էլեմենտների անձնավորումներ։

Ահա այն ամենը, ինչ որ կարելի էր այստեղ նշել չորսի գաղափարն արտահայտող զարդերի մասին։ Անշուշտ, հետագայում հնարավոր կլինի ավելի քան հանգամանորեն անդրադառնալ այս մոտիվների քննությանը։

Այժմ անցնենք համապատասխան գաղափարների հետ կապված զարդաձևերի մի այլ խմբի քննությանը։

Կա զարդերի մի խումբ էլ, որտեղ կենաց ծառին առընթեր հանդես եկող կենդանական և մարդկային պատկերների թիվը հավասար է հինգի։ Այդպիսի մոտիվներում, սովորաբար, նկատվում է մի ընդհանուր օրինաչափություն, այն է՝ նրանցից չորսը դասավորված են լինում ծնող-զույգի ձևով, իսկ մեկը ցույց է տրված լինում նրանցից վեր, որպես ընդհանուրի վրա իշխող գաղափարապատկեր։ Պետք է կարծել, որ այսպիսի դեպքերում էլ գործ ունենք նախորդ խմբում քննված զարդամոտիվների հետ։ Ինչ վերաբերում է չորս գումար տոհմերի իմաստն արտահայտող նկարներից վերև զետեղված էակի պատկերին, ապա դա տոհմի կամ ցեղի ընդհանուր նախնու, հետագայում տոտեմի իմաստն է արտահայտում։

Որքան էլ որ ֆրատրիաները և նրանց մեջ ընդգրկված գումար տոհմերը կոտորակվում և բազմանում էին, դարձյալ նրանք չէին կարող մոռանալ ընդհանուր նախնու գաղափարը, որովհետև ընդհանուր տոհմը կամ ցեղը շարունակում էր ապրել և իր մեջ ամփոփել այդ բոլոր ֆրատրիաներին՝ իրենց գումար տոհմերով։ Հիշենք աթենական տոհմերն ու ֆրատրիաները, որոնք այս առումով խիստ բարդ տեսք ունեին։ Յուրաքանչյուր ցեղ բաղկացած է եղել երեք ֆրատրիայից, իսկ յուրաքանչյուր ֆրատրիա՝ 30 տոհմից։

Մարքսը, խոսելով աթենական տոհմի այս բարդ պատկերի մասին, միաժամանակ նշում է. «Նույն ցեղի բոլոր անդամները, որպես կանոն, ունեցել են ընդհանուր ծագում և կրել են ցեղային ընդհանուր անուն»[1]։ Հենց այս ցեղային ընդհանուր անվան հետ կապված է եղել ընդհանուր նախնու անունը, որի գաղափարը, բնականաբար, պիտի կապվեր տոհմածառի կամ ցեղածառի պատկերի հետ։ Սուսի զարդարվեստում ընդհանուր նախնու գաղափարը պիտի պահպանվեր և երկար գար այն բոլոր հնարավոր ձևերով, որոնք բնորոշ են զարդարվեստի համար։

Բերենք օրինակներ։

№ 7451 ձեռագրի 399ա թերթում պատկերված է մի թռչնախումբ (Նկ. 700)։ Նրանցից ներքև ցույց է տրված կենաց ծառային ոճավորմամբ մի անոթ՝ մրգերով։ Վերևից դեպի այդ անոթը են ուղղվել նշված թռչուններից երկուսը, կազմելով մի սիմետրիկ զույգ։ Նրանց միջև գտնվող տարածության վրա պատկերված է մյուս թռչնազույգը։ Այստեղ արդեն ծնող-զույգի գաղափարը շատ հստակ է. նրանց միահյուսումից սերված են բուսական պտղաբերության սիմվոլները։ Միաժամանակ նկատելի է, որ այդ չորս թռչուններն էլ միացած են միմյանց հետ և կազմում են միասնական մի ամբողջություն։ Այդ բոլորից վերև թևատարած իշխում է մի ավելի մեծ թռչուն։ Դա նրանց մայրն է, նրանց բոլորի հովանավորը։ Դատելով վերևում շարադրված նյութից, բնականաբար, պիտի այս տեսարանի երկու զույգ թռչունները դիտենք որպես տոհմի երկու

[1] К. Маркс, Конспект книги Льюиса Г. Моргана „Древнее общество", Архив Маркса и Энгельса, том IX, Огиз—Госполитиздат, 1941, стр. 72.



Նկ. 702



Նկ. 703



Նկ. 704

ֆրատրիաների մեջ գտնվող չորս գուսար տոհմերի գաղափարապատկերներ, իսկ նրանցից վերև գտնվող թռչունի պատկերը՝ ընդհանուր նախամոր կամ նախահոր։ Միջնադարում այս պատկերը, իր նախկին բովանդակության մոռացման պատճառով, հավանաբար, դիտվել է որպես թռչնային ընտանիքի պատկեր։

Նման մի այլ զարդի ենք հանդիպում № 6257 ձեռագրի 247ա թերթում, միայն թե այստեղ ծնողները և ընդհանուր տոտեմ նախնին տարբեր տեսակի կենդանիներ են (Նկ. 701):

Հիշենք նաև № 6257 ձեռագրի 27ա, 41բ թերթերի նկարները (Նկ. Նկ. 702, 703):

Հենց այս նկարներում, ինչպես տեսնում ենք, առկա են նաև այսպես կոչված երկրաչափական ձևերը (ռոմբ, եռանկյունի և այլն), որոնց նույնպես կապված են հասարակական հասկացողությունների հետ։

Վերցնենք մի օրինակ № 3722 ձեռագրի 205ա թերթից և փորձենք այս առումով բացատրել նրա էությունը (Նկ. 704): ***Այս լուսանցազարդ կենաց ծառը բաղկացած է, հիմնականում, երկու եռանկյունիների միահյուսումից, որոնց կենտրոնից նայում է տոհմի նախնու կամ նրա սերնդի գաղափարապատկերը։ Այստեղ արդեն եռանկյունիների յուրաքանչյուրը, ըստ երևույթին, արտահայտում է մի ֆրատրիայի իմաստ։ Ըստ որում յուրաքանչյուր ֆրատրիա բաղկացած է երկու հյուղից, այսինքն՝ երկու տոհմից։ Ուշագրավ է մի ուրիշ մոմենտ։ Այդ երկու ֆրատրիայի եռանկյունիները միմյանց հետ հյուսվելով առաջացրել են համաման ութ կետ, որոնց բոլորից էլ սերված են պտղաբեր ոստեր։ Այդ ութ կետերը, ամենայն հավանականությամբ, տվյալ տոհմի ամուսնական ութ զույգերի կամ դրան համապատասխանող ութ գլխավոր ուժերի իմաստն են ցույց տալիս։ Որո՞նք են այդ ութ ուժերը։***

Այստեղ առկա է մի ընդհանուր ցեղ. նա ունի երկու ֆրատրիա, իսկ ամեն մի ֆրատրիան՝ երկու տոհմ. ուստի բոլոր տոհմերի թիվը հավասար կլինի չորսի։ Բայց, ինչպես գիտենք, յուրաքանչյուր տոհմի մեջ առկա է արտադրական-ամուսնական երկու միավոր (կին, տղամարդ), որոնց ընդհանուր քանակը կլինի ութ։ Ահա այդ ութ ուժերն են, որ կազմում են տվյալ տոհմի գոյության և զարգացման նյութական հիմքը՝ հասարակական առումով։

Այս է այն հիմնական նյութերը, որ պիտի ազդի մեզ այցելիչի մոտիվների էության բացատրման ժամանակ։ Անշուշտ, միշտ էլ կարող են բացառություններ, աղավաղումներ և այլ մոտեցումներ հանդիպել, որոնք պիտի հաշվի առնվեն։

Այսպիսով, մոտեցել ենք զարգարվեստի նաև այսպես կոչված, երկրաչափական մոտիվների մեջ հասարակական հասկացողություններ ցույց տալու հարցին։

Բանի որ կենաց ծառը կապված է եղել տոհմի և ընտանեկան հասկացողությունների հետ, բնականաբար, նրա հետ հանդիպող մյուս բոլոր մոտիվներն էլ պիտի ունեցած լինեն նաև դրան համապատասխան բովանդակություն։

Վերցնենք հավքի գաղափարը։ Ասացինք, որ այն համազոր է եղել նախնու կամ աստվածության գաղափարին. ինքնին հասկանալի է, որ այն միաժամանակ ունեցել է տոհմի իմաստը։ Նույնը կարելի է ասել նաև վարսանգա-պտղային սիմվոլի մասին։ Եթե այդ պտուղը համազոր է եղել սերունդ հասկացողությանը, ապա հասարակական հասկացողություն ցույց տվող տոհմածառի վրա այն պիտի դրսևորեր նաև տոհմի սերնդի գաղափարը։ Այդպես և ծաղիկը։ Արմատի մասին արդեն խոսել ենք։

Ինչպես տեսանք, չորսի գաղափարը կապված է եղել նաև տոհմա-ընտանեկան հարաբերությունների հետ. ուստի ռոմբը, քառակուսին, քառանկյունին, խաչը և նման այլ ձևերը միաժամանակ պիտի արտացոլված լինեին նաև հասարակական հասկացողությունների հետ։ Միշտ այդպես՝ նաև երկրաչափական համարված մյուս ձևերն՝ իրենց բոլոր հարաբերություններով։

Բանի որ այդ բոլոր մոտիվներն արդեն քննվել են, ուստի այս հարցի վրա առանձնապես ծանրանալու կարիք չկա, մանավանդ, որ արդեն բավականաչափ ծանոթ ենք նաև զարգարվեստում հասարակական հասկացողությունների հետ կապված կարևորագույն հարցերին։

Կարելի է բավական համարել փաստերը։ Նրանք, հենց այս սահմաններում էլ, արդեն որոշ պատկերացում են տալիս, թե ինչպես զարգարվեստի մոտիվների մեջ, իրոք, պահպանվել են վկայություններ նաև տոհմատիրական շրջանի այնպիսի հասարակությունների մասին, ինչպիսիք են դուալ և ֆրատրիալ կազմավորումները։ Այս նույն ձևով էլ կարելի է հատուկ ուսումնասիրությունների միջոցով վեր հանել նաև այնպիսի զարդեր, որոնք պահպանել են վկայություններ է՛լ ավելի շատ քանակով տոհմեր ընդգրկող ֆրատրիաների և այլ նման հասկացողությունների մասին։

Հետագայում, տոհմային կազմավորումների քայքայման հետևանքով առաջացած տոհմածառերն էլ, համապատասխանաբար, բարդ տեսք են ստացել։ Այնուհետև տնտեսական միավորների և համապատասխան հասկացողությունների այլևայլ փոփոխությունների պատճառով փոփոխության են ենթարկվել նաև տոհմածառերը։ Ավելի ուշ շրջանում այդ զարգածառերի նախկին բովանդակության մոռացման և նրանց վերագրված նոր հասկացողությունների պատճառով նոր կարգի փոփոխություններ են մտել քննվող մոտիվների մեջ։ Այս բոլորի արդյունքն է այն, որ այնքան առատորեն և այնքան բազմապիսի ձևերով հասել է մեզ հատկապես սկավառակային լուսանցազարդերի ձևով։

Լուսանցազարդ ասելով սովորաբար հասկացվում են այն զարդերը, որոնք արված են ձեռագիր գրքերի լուսանցներում։ Սակայն լուսանցներում արված ոչ բոլոր զարդերն են արտահայտում մեզ այստեղ հետաքրքրող հարցերը։ Սովորական լուսանցներում կարող են հանդիպել ամեն կարգի զարդեր և նկարներ։ Մեզ վերաբերում է սկավառակային լուսանցազարդերին, որոնք զետեղված են լինում ձեռագրերի այն մասերում, որտեղից անմիջապես սկսվում է նյութը, տալս գլուխը, որպես կանոն, իրենցից ներկայացնում են կենաց ծառեր։ Դրանք, հաճախ, մանավանդ ավետարաններում, խիստ բարդ ու ճոխ տեսք են ունենում։ Հենց դրանց մեջ է, որ ամենից շատ են երևան գալիս տոհմածառի բազմահարուստ մոտիվները։ Այստեղ կարելի է հանդիպել նրանց ամենաբազմազան տեսակներին, որոնք մերթ միանգամայն արխայիկ են, մերթ մշակված քրիստոնեական ոգով, մերթ պարզ ֆրատրիաների իմաստն են դրսևորում, մերթ էլ խճողված են բազմաթիվ պատկերների միահյուսումով, որտեղ կարելի է ցույց տալ և՛ տոհմ նախնիներին, և՛ ֆրատրիաների ու զույգ տոհմերի հիմնադիրներին, և՛ մայր աստվածության, Մարիամի և շատ սուրբերի նկարները։ Երբեմն էլ մոտիվներն այնքան առատ ու բարդ են լինում, որ այլևս դժվար է կոնկրետ կերպով նշել, թե տվյալ էական ինչ իմաստ է ունեցել, կամ ինչպիսի հաջորդականությամբ են նրանք տեղ գրավել տվյալ կենաց ծառի վրա։ Մենք այս հարցերի մեջ խորանալն այժմ հնարավոր չենք համարում։ Բոլոր դեպքերում էլ մի բան պարզ է. այդ զարգամոտիվները երբեմնի տոհմերի ներքին կառուցվածքի պատկերն են արտահայտել և գալիս են շատ հեռավոր դարերից։ Հատկապես հայկական



Նկ. 705



Նկ. 706

միջնադարյան մանրանկարիչներն այս առումով անգնահատելի ծառայություն են մատուցել, մեծ խնամքով և վարպետությամբ փոխանցած այն բազմահազար տոհմածառալուսանցազարդերով, որոնք, ինչպես նշում են մասնագետները, աչքի ընկնող տեղ ունեն համաշխարհային զարդարվեստի պատմության մեջ։

Այստեղ զետեղում ենք մի քանի նմուշ ակնվածքային այդպիսի լուսանցազարդերից, ընդօրինակելով № 4674 ձեռագրի 464ա, № 4890 ձեռագրի 1ա և № 2930 ձեռագրի 17ա թերթերից (նկ. նկ. 705, 706, 707)։



Նկ. 707



Նկ. 708



Նկ. 709

Այս յուռանգագործները, որոնց հիմքում ընկած են հնագույն ժամանակների տոմմահասկն ու տոտեմիզմի մնացուկները, բնականաբար, սկսա ազիրաներ են քաղաքներում համապատասխան հուշարձանների հետ։ Այդպիսիների հիշենք ամերիկյան հնդկացիների տոտեմական սյուները[1] կանգնած նրանց բնակարանների մուտքերի առջև (նկ. 708)[2] և այլ տեղերում։

Այդպիսի սյուներ կան նաև նրանց գերեզմանոցներում, որոնցից մեկի յուռանգագրը գետեղում ենք այստեղ (նկ. 709)[3]։

Ինչպես այս սյունի հիմքում ընկած, նույնպես և նրա վրա պատկերված մարդկանց ու կենդանիների պատկերները քույլ են տալիս գվանկրուալ տոմմի նախնիներին։ Ահա նաև մի տեսարան նույն տոմմի բնակարանների մոտ գետեղված համանման տոտեմական սյուներից (նկ. 710)[4]։ Նույն ազգությում կան նաև ուրիշ նկարներ, որոնք քույրն էլ հիմնականում նույն տեսքն ունեն։ Այն, ինչ որ մեզ մոտ պահպանված է որպես առեղվածային ծագում ունեցող և զուտորեն յուռանգագրը, այն իր առարկայական ձևերն ունի զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ցեղերի և տոմմերի մոտ։

Ի՞նչ են վերլուծում Մ և ռվիչագրը և նման մյուս հնագիտաններդ, եթե ոչ տոտեմական սյուներ, որոնց վրա առկա են մարդակերպ և կենդանակերպ նախնիների պատկերները։ Այս կապակցությամբ հիշենք Մարքի գտնագիտի հետևյալ տողերը.

«Ձի բանից հետո, երբ կանացի գեղ կատարվող ծագման հաշիվը փոխարինվում է քան ազամարդու, տոմմերի անուններդ, որոնք ամենայն հավանականությամբ, փոխ էին առնված կենդանի-

[1] Ю. П. Аверкиева, Рабство у индейцев Северной Америки, Москва—Ленинград, 1941, между стр. 2—3, „Индейское селение".

[2] Там же, стр. 9, „Тотемный столб у могилы вождя одного из родов квакиютль Альберт Бей, 1930 г. (фото автора)".

[3] Там же, стр. 79, „Тотемные столбы около домов индейцев квакиютль в селении Альберт Бей"

ների կոլումնների, իրենց տեղը զիջում են անհատական անունների։ Տոհմի պատմության մեջ հարյուրի տրվել ակնառավոր անձնավորության գառնում է նրա նախնին-էպոնիմը, որը, ինչպես կարծվի է ենթադրել, մեծ ժամանակամիջոցից հետո, իր հերթին զուրս է մղվում ուրիշի կողմից[1]։ Ահա իրար փոխարինած, բայց չմոռացված այդ կենդանի որքան անջուր է գոնվել քրիստոնեական մշակույթը հետագայ կուլտուրական արագիլյանների վիրջնական խմբագրման և վերափոխման գործում։ Համաձա էլ խմբագրման և այլափոխման կարիքի անգամ չի զգացվել, որովհետև շատ մոտիվների երբեմնի իմաստը բոլորովին մառնված է նրան մոռացության։



Նկ. 710

նախերգ ու մարգանիրգ նախնիների պատկերների հույների են, որ պահպանվել են համապատասխան կոթողների և յուռանգազարդ-կենաց ծառերի վրա։

Միանգամայն բնական է, որ այդտեղ, քրիստոնեության ժամանակ, սկսի իրենց տեղը գրավելն նաև քրիստիական նախնիները, մի բան, որն այնքան հարուստ հնարք է քողել ձեռագրերում։ Մենք այս առումով որոշ փաստեր արդեն տեսել ենք, ուստի այստեղ նոր նկարներ զեռնելու կարիք չկա։ Կարևոր ենք համարում նշել միայն մի հանգամանք։ Յուռանգազարդ-տոհմածառերը, անցնելով երկար ճանապարհ, կրել են բազմապիսի փոփոխություններ. նրանց վրա մերթ պահպանվել են առանձ նախնիները ու էպոնիմները, մերթ հնթանոսական առասպելությունները, մերթ քրիստոնեական սրբերը, մերթ էլ այդ բոլորի տարբեր հարաբերությունները։ Ընդհամենայնիվ, մեր մինչև այդ երկուսների հիման վրա զարգացած դիցաբանական պատկերացումների։ Բոլոր դեպքերում էլ նրանք ունեցել են իրենց նյութական կամ գաղափարական հիմքը։ Եթե ծառ-զույգերի մասին խոսելիս, սխեմայի բնույթ ստացած տերմինների կապակցությամբ, այդ հարցի վրա կանգ չառանք, ապա դրա պատճառն այն էր, որ անհրաժեշտ էր նախապես քննել, թե ինչպես այդ-

* * *

Զարգարվեստում հանդիպման տեղ են գրավում նաև այսպես կոչված այն քառատասիկ կենդանիների պատկերները, որոնք ավելի բարդ տեսք ունեն, քան ծառ-զույգերի մասին խոսելիս քննված սրինակները։

Վերևում շարադրված նյութի հիման վրա կարող ենք ասել, որ մի գլուխ և երկու մարմին կամ մի մարմին և երկու գլուխ ունեցող ծառ-զույգային կենդանապատկերները էլ կապ ունեն ֆրատրիայ հասկացողությունների հետ։

Մնում կլիներ կարծել, թե երկգլխանի կամ երկմարմին ֆիգուրների պատկերներն այդպիսի տեսք են ստացել լոկ զարգարվեստի մեջ՝ ոճավորման շնորհիվ։ Զարգարվեստի մոտիվների քննությունը ցույց է տալիս, որ նրա բոլոր կայուն ձևերը արդյունք են համապատասխան երևույթների կամ այդ երևույթների հիման վրա զարգացած դիցաբանական պատկերացումների։ Բոլոր դեպքերում էլ նրանք ունեցել են իրենց նյութական կամ գաղափարական հիմքը։ Եթե ծառ-զույգերի մասին խոսելիս, սխեմայի բնույթ ստացած տերմինների կապակցությամբ, այդ հարցի վրա կանգ չառանք, ապա դրա պատճառն այն էր, որ անհրաժեշտ էր նախապես քննել, թե ինչպես այդ-

[1] К. Маркс, Конспект книги Льюиса Г. Моргана, Архив Маркса и Энгельса, Огиз—Госполитиздат, 1941, стр. 166.

պիսի ֆիգուրները ոչ քի վերացական, ֆանտաստիկ մտածողության արդյունք են, այլ իրական և արտաքին ուժերի միասնության: Այժմ մատնանշենք մի շարք վկայություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես դիցաբանական գրույցների մեջ էլ կարևոր տեղ են գրավել այդպիսի երևակայական համադրված էակները և ինչպես այդտեղ էլ նրանք ներկայանում են որպես ծնող-զույգեր՝ կապված հնադարյան նախնիների գաղափարի հետ:

Հունական հին փիլիսոփաներից Պլատոնի (427—347 թ. մ. թ.) ընկճույցը ստեղծագործության մեջ հանդիպում ենք հետևյալ կարևոր վկայությանը, որը մեզ ենք բերում ոչ բառացի թարգմանությամբ:

Հին ժամանակներում եղել են մի ուրիշ տեսակի մարդիկ...: Այժմ այդ տեսակը վերացել է և մնացել է միայն նրա անունը՝ անդրիոգին...: Այն ժամանակ մարդու ամբողջ կերպարը գեղեցիկ էր, մեջքն ու կողքերը՝ կլորացած. ձեռքերը չորս էին, ոտքերը՝ նույնպես. մի պարանոցի վրա զետեղված էին երկու միանգամայն նույնանման գլուխներ, որոնք նայում էին գնալի հակառակ կողմեր. նրանք երկուսն էլ պատկանում էին նույն գլխին: Ականջները չորս էին և ծննդաբերական օրգանները՝ երկու. այլապես նաև բոլոր մյուս անդամները: Քայլում էին ուղիղ, ինչպես հիմա՝ որ կողմ որ կամենային: Երբ-ցանկանում էին արագ փախչել գլորվում էին որպես անիվ...: Այս տեսակ մարդու ծնունդը պայմանավորված էր նրանով, որ տղամարդկային սերունդը սերված էր արևից, կանացի սերունդը՝ երկրից, իսկ լուսինն օժտված էր և մեկով և մյուսով, որից էլ սերված է նրան անդրիոգինը: Մարդիկ կլոր էին, որովհետև նմանվել էին իրենց ծնողներին: Նրանք ունեին ահռելի ուժ, ամբարտիշտ և բարձր մտայնություն (ΜΕΓΑΘΟΦΡΟΝΕ ΠΟΛΥΤΡΟΠΟΣ) մինչև այն աստիճանի, որ լավ էին խորհում աստվածների մասին. նրանք որոշել էին մուտք գործել երկինք՝ աստվածների վրա հարձակվելու նպատակով:

Այն ժամանակ Զևսը և մյուս աստվածները խորհրդակցում էին նրանց դեմ համապատասխան աշխարհի միջոցների մասին, որ նրանք իսպառ չոչնչանային, որպեսզի իրենց պաշտողները լինեին և տաճարները չվերանային: Վերջապես Զևսը որոշում է այդ մարդկանցից յուրաքանչյուրին կիսել երկու մասի, որպեսզի նրանք քայլեին երկու ոտքի վրա և նրանց ուժը կիսվեր: Այդպես էլ անում է և հրամայում Ապոլոնին՝ կիսված մարդկանց դեմքերը շրջել դեպի կիսված կողմը (որպեսզի նրանք համեստ լինեն) և բուժել նրանց վերքերը:

...Դրանից հետո կիսված մարդկի վազում, գրկում էին միմյանց և այդպես մնալով՝ մահանում, որովհետև այլևս ոչինչ անել չէին կարողանում: Այդ տեսնելով Զևսը, մտածում է նրանց օգնության մասին. տեղափոխում է նրանց ծննդաբերական օրգանները ետևի կողմից՝ առջևի կողմը, այնպես, որ եթե այդ կիսված մարդիկ նորից գրկեն միմյանց՝ տեղի ունենար բեղմնավորման պրոցես: Այսպիսով, բոլոր մարդիկ, նույն էակի կեսը լինելով, ձգտում են միանալ միմյանց հետ, քանի որում ազամարդիկ հակում ունեն կանանց հետ միանալու, իսկ կանայք՝ ազամարդկանց: Եվ ահա կրկին ամբողջացման մղող այդ ձգտումն է, որ կոչվում է էրոս (սեր) [1]:

Որքան էլ ֆանտաստիկ թվա այս գրույցը, դարձյալ նրա մեջ նկատելի կերպով պահպանված են վաղնջի իրականության փոխակերպված հույզերը:

Այժմ փորձենք, մեր ունեցած ծանոթությունների սահմաններում, հասկանալ անդրիոգինի մասին եղած այդ ասացվածքաբանության առաջացման նյութական հիմքը և նախ՝ հնում նրա դրսևորած գաղափարական բովանդակությունը: Վերհիշենք նրա պատկերը: Անդրիոգինը մի սֆանտաստիկ էակ է՝ մի մարմնով, մի գլխով, երկու զույգ ձեռքով, երկու զույգ ոտքով, տրսական և իգական սեռական անդամներով: Մենք արդեն գիտենք այսպիսի հավաքացողությունների տոտեմա-ֆրատրիալ ծագումը: Արդ, տոտեմային ինչպիսի՞ երևույթների արդյունք պիտի համարել անդրիոգինները: Ինչպես ասված է գրույցում, նրանց վիթխարի ուժ են ունեցել, և հզոր գիմացկունությամբ: Բացի դրանից, նրանք առանձնահատուկ են եղել: Նույնիսկ աստվածները երկյուղ են կրել նրանցից: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ անդրիոգինները ավելի վաղ ժամանակների արդյունք են, քան աստվածները: Երևում է նաև, որ աստվածները նրանց հակառակորդներն են համարվել. նրանց մրցակիցներ են եղել. ուստի անդրիոգինները ոչ թե սովորական մարդիկ են եղել, այլ տոտեմային ենթաբաժին, որոնց գաղափարները հետո խորտակվել են իգնույոգինական պայքարում: Արդ, ինչո՞ւ են այդ էակները պատկերվել երկտես, միացյալ և անբաժան զուտապարտված: Ուշադրավ է հատկապես երկտեսության հարցը: Նրանք, երկտես լինելով հանդերձ, էքզոգամ կյանք են վա-

[1] Сочинения Платона, IV, издание второе, С. Петербургъ, 1853, стр. 173—179. Ընտրել ենք բառացի կլոր մարդին անվանող էակները վերցնում են ներկա աշխատության 228-րդ երեսից:

րել, այսինքն՝ ինքնաբերաբար զարգանալ չէն կարողացել։ Նրանց տեսական զրպանները զինազերծած են եղել այդ բարդ զրպանիդմի հանճարեղ կողմերի վրա։ Բացի դրանից, նրանց մտքով այդպիսի բան չի անցնում նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք Ջնսի կողմից արդեն կիսված և Ապոլլոնի կողմից բուժված են լինում։ Եվ դա պատահականության արդյունք չէ. դա խոսում է հասարակության կյանքում տեղի ունեցած համապատասխան հասկացողություններն և նրանց արդյունաբերական տեխնոլոգիայի մասին։ Հենց այդպիսին էին տոմեռն իրենց ֆրատրիաներով։ Ինչպես տեսանք, յուրաքանչյուր ֆրատրիա ուներ քն՛ արական և քն՛ իգական անդամներ, որոնք, սակայն, միմյանց հետ ամուսնանալ չէին կարող։ Այդ ֆրատրիաները տեսականորեն մի կուռ ամբողջություն էին կազմում և միշտ հանգես գալիս միասին։

«Ֆրատրիայի ֆունկցիաները իրականության մեջ մասամբ հասարակական բնույթ ունեն, մասամբ կրոնական։ 1. Ֆրատրիաները գնգակոխազգը խաղում են միմյանց դեմ... և իրար հետ գրավ են գալիս իրենց մրցորդների հաղթության վերաբերմամբ։ 2. Ծեսային խորհրդում յուրաքանչյուր ֆրատրիայի սահմաններն ու ազդեցության առարկաները միանգամին են նասում, մեկ խումբը մյուսի դեմ...ը և այլն,— ասում է Ենգելսը [1]։ Ուշագրավ է, որ ֆրատրիաները, ինչպես հույների և նույնպիսի տոհմական միությունները գիրեանացիների մեջ, միևնույն ժամանակ ռազմական միավորների նշանակություն ունեին [2]։

Ենգելսը, խոսելով հունական տոհմի մասին, մեջ է բերում նաև հետևյալ կարևոր տեղեկությունը. «Այդպես, ըստ Պրոտի, եշենմատվի ֆրատրիայի բոլոր հասակակից տղամարդիկ միևնույն ատտուն էին համարում իրենց նախահայր տոհմվիքորդ պորոսմե [3]»։

Ահա այդպիսի կուռ ամբողջություն ներկայացնող ֆրատրիաները, միաժամանակ էքզոգամ լինելով, չէին կարող կազմակերպել ամուսնական հարաբերություններ իրենց ներսում։ Ի՞նչ էր ներկայացնում իրենից այդպիսի միավորը, նկատ ոչ մի անդրիոգին։

Պարզ է, որ այդպիսի երևոնս, էքզոգամ և միաժամանակ արտադրական կոլեկտիվի նախնին կամ ատավաձը պիտի պատկերվեր մեզ այնպես, ինչպես անդրիոգինը։

Արդ, ինչո՞ւ Ջնսը կիսում է նրանց։ Այս մասնաճ ընդգրկում է մարդկության պատմության մի պատկառելի հատված, երբ արդեն խորհրդվում են տոհմային կարգերն՝ իրենց ներքին երկբյուր դիոցիպլինայով, և նախկին էքզոգամ ֆրատրիաները զատնում են ենթդամ։ Դա արդեն խոսում է պատահարքային հարաբերությունների և պետության առաջ գալու մասին։ Մի էպոխա, որը բարձրացավ տոհմական համայնքի փլատակների վրա։ Մանգիվենգին նոր իրավունքներ, նոր գաղափարներ, ուստի և առաջ նկան նոր ատավաձություններ, որոնք, բնականաբար, պիտի չլսանկին իրենց նախորդներին՝ այնպես, ինչպես Ջնսը՝ անդրիոգիններին։

Այս առասպելի նման բազատությունն ազնում է նաև հնագիտության զարգացվեսի համապատասխան մոտիվները։ Կեչանակի բարդ հնապատկերները մինչ չէ, որ ընկալվել են որպես ռավորական ժեռզ-զույգ, այլ մի ժամանակ նրանք մի մասը գրաված է միևնույն ֆրատրիայի պատկերը, ուր, չնայած կային և՛ արական, և՛ իգական ուժեր, բայց նրանք ամուսնական առումով ժեռզ-զույգ չէին։ Հասկանալի է, որ նաև հենց այդպիսի բարդ հնկենների զույգերից էլ պիտի կազմվեին ժեռզ-զույգերի գաղափարները։

Համապատասխան դիցաբանության արդյունք է նաև պարսկական Ջրվանի հետ կապված գրույցը, որտեղ նա երևան է գալիս ոչամարդու տեսքով, բայց հնացած արդանդով, որտեղից էլ սերվում են նրա երկվորյակ և հակառակ զավակները։

Գրիգոր Մագիստրոսը (XI դ.), հայհոյելով քոնդրակյան շարժման հետ կապվող ոմն նեղոսի, գրում է. «Չի՞նչ բարբառես. զերկուսո՞ւ երդնուս պաշտել, ո՞ զայս յանգգնեալ երբէք՝ զատուտած մատնել, զորովքեզ հայհոյել. մանաւանդ եթէ զիսկեան Ջիւռակ...ը [4]։ Այստեղ բացահայտ կերպով հակադրված են երկու պաշտամունք. երկվորյակների և ատտու, քրիստոսի, սերովբեների։ Հասկանալի է, որ Գ. Մագիստրոսն իր հակառակորդին փորձել է կապել հնհանուսական հնագույն հավատալիքների հետ, որպեսզի իր ժամանակի կրոնական վարագույրի տակ ավելի քան հնչող չինար պատասպարվել։ Համենատաբար, քոնդրակեցիներից առաջ այդպես են մեզադրվել նաև Պավլիկյանները, որոնց հիմնադիրներին էլ ժամանակին այդպիսի մեզադրանք է վերագրվել [5]։

---

[1] Ֆ. Ենգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը։ Տրևան, 1948, էջ 118։

[2] Նույն տեղում, էջ 118։

[3] Նույն տեղում, էջ 196։

[4] Գրիգոր Մագիստրոսի թղթերը։ Հրատ. Ե. Կոստանյան, Ագնցոնեղբայրք, 1910, էջ 91։

[5] Բ. Մարգարեան, Տաճատիոսեցիները Մանիքէա-Պաւլիկեան քոնդրակիզներէ ազատները, Վենետիկ, 1852, էջ 83։

Մեր մատենագրության մեջ պահպանված են նաև համանման ուրիշ զրույցներ և մեկնաբանություններ։ Անհայտ մի մեկնիչ, փորձելով պատասխանել «Ո՞րք և զերկամարմինսն» հարցին, այսինքն՝ ովքեր են երկմարմինները, գրում է.

«Որ ասացեալքն, թէ է՛ ինչ, որ երկու մասունք խառնեալ են ի միմեանս, որ անձն մի լինի և գլուխն երկու, կամ թէկուզեւ մի և ոտանն երկու և այս ասեն, թէ ի միաւորական բնութեան զօրութենէ լինի. կամ որ մարգին առնեն հարկից կամ լինին ի ծնընդենէ պատահմամբ. կամ ասացեալքն, թէ արուաց յարուս վերանալով լինին երկմարմինք։ Դարձեալ այսպիսիքս ասեն, որ այլ և այլ մասանց եկեալ են, զիպաս անջատին և չուծեալ քակտին, որ է ասացեալն այսպէս սոցա քակտին ի սակաւուց մանկունքն և տափողքն նոցա»[1]։

Անկախ մանրամասնություններից, այստեղ էլ երկվորյակների մոտիվը կապվում է ամուսնական հարաբերությունների հետ։

Հիշենք վերջապես հնդկական դիցաբանության մեջ խոշոր տեղ գրավող Սիվա (Շիվա) աստծուն որպես «դիենգամ», այսինքն՝ որպես արական և իգական, պատկերացնելու մասին վերևում մեջ բերված վկայությունը։ Միասեռ բույսերի ծաղիկների նման, Սիվա (Շիվա) աստվածն էլ միաժամանակ կիսով չափ արու է, կիսով չափ՝ էգ։ Նա էլ հին է և կարող էր արտահայտել, ինչպես հունական դիցաբանության մեջ նախատատիպ մարդիկ՝ Զևսի նման աստվածների կամքով։ Այստեղ էլ որոշակի երպով ցույց է տրված նախնիների ծնող-զույգը՝ որպես մի օրգանական ամբողջություն։

Այսպիսով, զուգահեռաբար բացատրություն է ստանում նաև բիբլիական դիցաբանության հիմնական առասպելներից մեկը։ Խոսքը վերաբերում է Ադամ նախահորը, այն նախատատիպ մարդուն, որից ստեղծված անջատվեց նրա մի մասը և դարձավ նրա համար կին, անվանելով նրան Եվա։ Ինչպես հասկանալի է, որ այստեղ էլ գործ ունենք մոտավորապես նույն առասպելի հետ, ինչ որ տեսանք Պլատոնի «Անդրոգյունոսում»։ Ադամի և Եվայի լեգենդը անդրոգինի դիցաբանության մի վարիանտն է, ուր Զևսի փոխարեն երևան է գալիս Իսրայելացիների հայր աստվածը։ Նախ ինքն՝ Ադամն իր նախնական վիճակով պատկերվում է որպես մի երկսեռ էակ. նա և՛ տղամարդ է, և՛ կին։ Նա մի անդրոգին է։ Եվ քանի որ յուրաքանչյուր դիցաբանություն պատմական իրականության, թեև ոչ ուղղակի արտացոլումն է, ապա բիբլիական դիցաբանությունը չէր կարող այդպիսի ծագում չունենալ։ Ադամն էլ անդրոգինի նման պիտի կիսվեր, և դա՝ ոչ թե աստծու անբացատրելի կամքով, այլ որպես հնավոր արձագանք էքզոգամ ֆրատրիաների բաժանման։

Այժմ ավելի հասկանալի է դառնում Ադամի ու Եվայի լեգենդի հետ կապված արգելված պտղի գաղտնիքը։ Ո՞րն էր այդ արգելված պտուղը։ Ամուսնական հարաբերությունները և որդեծնությունը։ Եթե Ադամն ու Եվան, ըստ զրույցի, պահեին աստծու պատվիրանը և չուտեին արգելված պտուղը, այսինքն՝ չկենակցեին միմյանց հետ, ապա նրանք զավակներ չէին ունենա և հավիտենապես կապրեին դրախտում։ Բայց այդպես չի լինում։ Հենց որ Եվան անջատվում է Ադամի մարմնից՝ աստվածային պատգամն էլ կորցնում է իր ուժը։ Այստեղ նորից գործ ունենք անդրոգինի երևույթի հետ, միայն որոշ տարբերությամբ։ Էականը, սակայն, այդ դիցաբանական ծնող-զույգերի երբեմնի էքզոգամ, ապա էնդոգամ կյանքն է։ Սկզբում նրանց միջև ամուսնական կապերը արգելված են եղել։ Հենց այդ արգելքի իմաստն ունի նաև արգելված պտղի առասպելը։ Սակայն, հետագայում, ֆրատրիաների ներսում վերացող արգելքի համաձայն, պատմական անհրաժեշտությամբ, Եվան ու Ադամն ուտում են արգելված պտուղը։

Ինչպես հայկական, նույնպես և ուրիշ ժողովուրդների զարդարվեստներում երևակայական համարված կենդանապատկերները երևան են գալիս նաև ավելի բարդ տեսքերով։ Դրանցից են, օրինակ, այն կենդանապատկերները, որտեղ հանդես է գալիս մի ամբողջական կենդանի, ասենք, առյուծ կամ վագր, որի պոչը, սակայն, ավարտվում է մի ուրիշ կենդանու, օրինակ, թռչունի գլխով։ Այս և նման ուրիշ մոտիվները քննելու ժամանակ մենք պիտի դիմենք զարդանկարն անալիզի ենթարկելու մեթոդին։ Այսինքն, փորձենք այդ բարդ ձևերը վերլուծելով, առանձնացնել այն պարզ ձևերը, որոնցից բարդված են իրենք։ Բավական է հիշել երկու գլուխ և մի մարմին ունեցող զարդամոտիվները։ Ինչպես հարուստ փաստերի միջոցով հնարավոր եղավ ցույց տալ նրանց տոտեմական միացումը և վերջապես միաձուլումը, պարզ է, որ այդպես էլ կարող ենք հակառակը կատարելով անջատել միաձուլված նկարներից և տոտեմանշանները հասնել ավելի բնական տեսք ունեցող ծնող-զույգերին։ Վերցնենք մի օրինակ. № 5947 ձեռագրի 220բ թերթում նկարված է թռչնային մի ծնող-զույգ. նրանց պոչերը միացած են միմյանց

[1] Ձեռագիր № 2270, թերթ 188բ (երևում է, որ մեկնիչը հայ է)։

հետ, իսկ մարմինները՝ ոչ (նկ. 711)։ Նրանց մեջ բնական տարաձայնությունից բարելացել է կենաց ծառ։ Մենք այժմ մտովին կարող ենք այս գույցը՝ բոլորովին անշատել՝ տատանելով երկու թռչուն, և՝ միանալով՝ տատանելով մի մարմին և երկու գլուխ ունեցող թռչունի պատկեր։ Դրա համար վերնում մեզ բերված օրինակները տալիս են լրիվ հիմք։

Այժմ վերցնենք ավելի բարդ մոտիվ։ Այդպիսինները է, օրինակ, № 7451 ձեռագրի 270ա թերթում գտնվող տավուժի պատկերը, որը, սակայն, ունի թռչնագլուխ պոչ (նկ. 712)։ Բացի դրանից, այդ տավուժն ունի նաև թևեր, որոնք պատկերված են բուսական ոճավորմամբ և արտահայտում են կենաց ծառի գաղափարը, որովհետև գեպի վեր հզվելով, ավարտվում են ծաղկա-պտղային հյուրերով։ Կենաց ծառի գաղափարը ցույց է տրված նաև այդ կենդանապատկերի ետևի ոտքերից ելած նման հյուսերի միջոցով։ Այսպիսով, այստեղ գործ ունենք երեք հասկացողության միահամուրյան հետ. այն է՝ տավուժ, թռչուն և կենաց ծառ։ Եվ մտովին հետացնենք բուսական ատրիբուտները և պոչի թռչնային գլուխը, ապա կստացվի տավուժի լրիվ պատկեր։ Եվ մտովին հետացնենք տավուժի պատկերը և բուսական մոտիվները, ապա կստանանք թռչունի գլուխ, թռչունի պարանոց և թռչունի թև, ունկոտ իր ատրիբուտային տեսքից, այսինքն ատկա է լրիվ թռչունի գաղափարը։ Նույնը կարելի է ասել նաև կենաց ծառի մասին։ Մանավանդ, անցանելով հանգիրժ, մենք իրավունք կունենք նրանց դիտել առանձին-առանձին, որովհետև նրանք օրգանական ամբողջության մեջ են։ Արդ, ի՞նչ ամբողջություն է դա։ Մեր ունեցած ծանոթությունը գործարվեստի մոտիվների մասին՝ լիուլի հիմք է տալիս ասելու, որ այստեղ գործ ունենք ծնող-զույգի գաղափարի հետ։ Ծնող-զույգ, որի մի ներկայացուցիչը թռչուն է, իսկ մյուսը՝ տավուժ։ Դրա լավագույն ապացույցը հենց նրանց միահամուրյունն է և այդ միահամուրյունից ծնրված կենաց ծառը։ Ինքնին հասկանալի է, որ այս մոտիվը, իր բովանդակությամբ, համապատասխանում է այն մոտիվներին, որոնց գործն ունի ծաղկյին ձև՝ իր վրա կրելով տարբեր կենդանիներից բազկացած ծնող-զույգ։ Տարբերությունն այն է, որ այնտեղ կենաց ծառին մեծ տեղ է տրված, իսկ այստեղ՝ ոչ, մի բան, որն, ըստ գեղագիտական բովանդակության, առանձին նշանակություն չունի։ Քննվող մոտիվի մեջ հանդիպող էակների ծնող-զույգ լինելու պարագան կարելի է ապացուցել նաև վերնում մեզ բերված նկարների միջոցով։ Վերցնենք հենց 822-րդ նկարը (մեջ բերված № 2722 ձեռագրի 132ր թերթից)։ Համեմատելով հետագա նկարների հետ, մենք կտեսնենք, որ այդ նկարում ևս կենաց ծառի գաղափարը ցույց է տրված նույն ձևով, ինչպես և մյուս նկարներում։ Ուրեմն, մենք ունենք երկու տավուժ, որոնք ծառի երկու կողմերում են գտնվում։ Ինչպես տեսանք, տավուժը ներկայացնում է արական սեռը, իսկ թռչունը՝ էգ սեռը։ Ուրեմն, մենք ունենք ծնող-զույգ։ Ինչպես տեսանք, կենաց ծառի գաղափարը ցույց է տրված նաև ետևի ոտքերից ելած հյուսերի միջոցով։ Այսպիսով, մենք ունենք երեք հասկացողության միահամուրյան հետ. այն է՝ տավուժ, թռչուն և կենաց ծառ։ Եվ մտովին հետացնենք բուսական ատրիբուտները և պոչի թռչնային գլուխը, ապա կստացվի տավուժի լրիվ պատկեր։ Եվ մտովին հետացնենք տավուժի պատկերը և բուսական մոտիվները, ապա կստանանք թռչունի գլուխ, թռչունի պարանոց և թռչունի թև, ունկոտ իր ատրիբուտային տեսքից, այսինքն ատկա է լրիվ թռչունի գաղափարը։ Նույնը կարելի է ասել նաև կենաց ծառի մասին։ Մանավանդ, անցանելով հանգիրժ, մենք իրավունք կունենք նրանց դիտել առանձին-առանձին, որովհետև նրանք օրգանական ամբողջության մեջ են։ Արդ, ի՞նչ ամբողջություն է դա։ Մեր ունեցած ծանոթությունը գործարվեստի մոտիվների մասին՝ լիուլի հիմք է տալիս ասելու, որ այստեղ գործ ունենք ծնող-զույգի գաղափարի հետ։ Ծնող-զույգ, որի մի ներկայացուցիչը թռչուն է, իսկ մյուսը՝ տավուժ։ Դրա լավագույն ապացույցը հենց նրանց միահամուրյունն է և այդ միահամուրյունից ծնրված կենաց ծառը։ Ինքնին հասկանալի է, որ այս մոտիվը, իր բովանդակությամբ, համապատասխանում է այն մոտիվներին, որոնց գործն ունի ծաղկյին ձև՝ իր վրա կրելով տարբեր կենդանիներից բազկացած ծնող-զույգ։ Տարբերությունն այն է, որ այնտեղ կենաց ծառին մեծ տեղ է տրված, իսկ այստեղ՝ ոչ, մի բան, որն, ըստ գեղագիտական բովանդակության, առանձին նշանակություն չունի։ Քննվող մոտիվի մեջ հանդիպող էակների ծնող-զույգ լինելու պարագան կարելի է ապացուցել նաև վերնում մեզ բերված նկարների միջոցով։ Վերցնենք հենց 822-րդ նկարը (մեջ բերված № 2722 ձեռագրի 132ր թերթից)։ Համեմատ



Նկ. 711 Նկ. 712

է հետացնել կենաց ծառի մոտիվն իր ցանցահյուսվածքով և պարզ կերտա նման ձևով միացած էակների երկու զույգ։ Դրանցից յուրաքանչյուրը մի ծնող-զույգ է և մենք մյուսի համեմատությամբ կարող է գիտվել նաև որպես պոչ՝ համապատասխան ատրիբուտով։ Հարցն այնքան պարզ է, որ կարելի է այս և նման տեսք ունեցող ուրիշ նկարների մասին բավարարվել այսքանով։ Միայն քե ընդհանրապես անհրաժեշտություն է առաջանում վերանայել ժեծող-զույգը արտահայտություն։ Այդ արտահայտության տակ մենք սկզբում, բնականաբար, հասկանում էինք երկու տեսակի ամուսնական միահամուրյունը՝ նրանց մեկական ներկայացուցիչների միջոցով։ Միանամանակ տեսանք, որ այդ ընդհանրացումն էլ միայն կենդանական ու բուսական աշխարհին չի վերաբերում. նրա մեջ ընդգրկվել են նաև բնության այլ ուժերի (օրինակ, երկնքի և երկրի) հետ կապվող համապատասխան հասկացողություններ։ Այժմ էլ վերչնականապես բացահայտում է մի ուրիշ օրինաչափություն, որի համաձայն ժեծող-զույգը ընդհանրացումը ցույց է տալիս արտագրական երկու միավորների միահամուրյունը, ուր երկու անհատի կամ երկու էակի փոխարեն երկուսն են գալիս հատարակական երկու կազմավորում, տոհմա-բնատեսական երկու խոլեկտիվ։

Քանի որ զարգացման ժեծող-զույգ մոտիվների մեջ այդ հասկացողություններն ընդհանրաց-



Նկ. 713

վամ են հազարամյակների ընթացքում և այսօր էլ կարելի նրանց որոշակիորեն միմյանցից անջատել, ուստի մենք նպատակահարմար ենք գտնում պահպանել ծնող-զույգ արտահայտությունն այդ բույսերի համար։

Վերևում բերված մոտիվների խմբին են պատկանում նաև ուրիշ զարդեր, որոնք առաջին հայացքից կարծես ոչ մի առնչություն չունեն նրանց հետ։ Այդպիսիներից են, օրինակ, մարդու գլուխ և թռչունի կամ որևէ այլ կենդանու մարմին ունեցող էակների պատկերները։ Ճիշտ է, վերևում, տարբեր առիթներով հանդիպեցինք նաև այդպիսի նկարների, բայց այնտեղ նրանց քննությամբ չզբաղվեցինք։ Ուստի այժմ փորձենք ավելի հանգամանորեն անդրադառնալ այդ զարդամոտիվների քննությանը։

Ահա մի այդպիսի նկար № 5458 ձեռագրի 86բ թերթից (Նկ. 713)։ Դա մի մարդագլուխ թռչուն է կամ թռչնամարմին մարդ՝ բուսական տարրերով։ Նշանակալի, այս պատկերն ստեղծվել է թռչունի, մարդու և բույսի բաղադրումից։ Ձևափոխումների և ընդհանրացումների հարցն էլ հաշվի առնելով, կարող ենք այս մոտիվը վերլուծել և կոտորակել մարդ, թռչուն, բույս։ Պարզ է, որ սկզբնապես մարդիկ այս պատկերի փոխարեն գործ են ունել մարդու, թռչունի և բույսի առանձին պատկերների միասնությունը և ապա նրանցից էլ ստեղծել այսպիսի պատկերներ։ Կամ, ասենք թե, հենց սկզբից էլ մարդիկ այսպես են ստեղծել այս պատկերը։ Այս դեպքում էլ նյութական հիմքը նույնն է եղել. այսինքն՝ նրանք նկատի են ունեցել բնության մեջ գոյություն ունեցող մարդու, թռչունի և բույսի կոնկրետ հասկացողությունները։ Այլ պատասխան որոնելու իրավունք չունենք, որովհետև բնության մեջ այդպիսի հավաքական էակներ չեն եղել, իսկ արվեստն էլ գոյություն չունեցող առարկաներ նկարել կամ պատկերել չէր կարող։

Այժմ, վերլուծելով այս բաղադրյալ պատկերը, տեսնենք, թե ի՞նչ հասկացողությունների հետքեր կբացվեն։ Կառուցվի մի մարդ, մի թռչուն և մի բույս։ Բույսը, իր պտղաբերության սիմվոլներով, կներկայանա որպես կենաց ծառ կամ տոհմածառ։ Կանաչ մարդն ու թռչունը, որոնք միացած են միմյանց հետ հենց այդ կենաց ծառի շնորհիվ։ Դեռևս հասկանալի է, որ այստեղ մարդն ու թռչունն էլ երևան են գալիս որպես ծնող-զույգ։ Դա արդեն մեզ այնքան ծանոթ ծնող-զույգի և կենաց ծառի մոտիվն է, որը, ինչպես տեսանք, կապվում է նաև ֆրատրիալ հասկացողությունների հետ։ Մարդը մի ֆրատրիայի նախնին է, իսկ թռչունը՝ մյուս. կենաց ծառն էլ այդ ֆրատրիաների ընդգրկող ընդհանուր տոհմի կենաց ծառը։ Հարց է առաջանում. կարո՞ղ էր պատահել, որ նույն տոհմը միաժամանակ ճանաչեր և՛ կենդանակերպ, և՛ մարդակերպ նախնի։ Այս հարցի պատասխանը գտնելու համար պետք է նկատի ունենալ պատմական այն մեծ ժամանակաշրջանը, երբ սկսել են աստիճանաբար առաջ գալ հասկացողությունները՝ մարդակերպ նախնիների մասին։ Դա, իհարկե, միանգամից չի կատարվել, այլ տևել է ունեցել հազարամյակների ընթացքում. ուստի և ոչ միայն հնարավոր, այլև զարգացման անհրաժեշտ մի աստիճան է եղել դա, և այն էլ՝ բավականին խոշոր իրադրությունների հետևանք, որը չէր կարող իր հետքը չթողնել զարդարվեստում։ Նման հետքեր կան նաև հրաշապատում հեքիաթների մեջ։ Հիշենք այն օրինակները, երբ հեքիաթի հերոսն ու հերոուհին երևան են գալիս մեկը որպես մարդ և մյուսը՝ կենդանի։ Խորանալով այս հարցի մեջ, տեսնում ենք մի ուրիշ հանգամանք ևս. այդպիսի զույգերի մեջ եղած կենդանիներն էլ արդեն ապրում են մարդակերպավորման երևույթը։ Հեքիաթներում նրանք վաղ-ուշ մի կողմ են նետում իրենց «հավ-քեղեն հալավը», կենդանական մորթին, այն պատյանը և ներկայանում որպես մի «հուրի-փերիի աղ-

չին կամ մի ուրիշանգուր պատանի. Այստանձնայինով, նրանք, համաձայն, առանց իրենց կենդանական ոգիների, որը նրանց օրգանական բազկացուցիչ մասն է, ապրել չեն կարողանում։ Համաձայն էլ նրանք առանց այդպիսինների ապրում են, բայց արգելն որպես բոլորովին մարդ։ Այս բոլորը ցույց են տալիս առանձնահատկությունների մարդակերպավորման երևույթի խաչաձև ու երկարատև զարգացումը, որանք երիտասարդ հնդուը սկզբով է դուրգուրում իր ազգականների սկզբունքով, իսկ չզբնադրածը ապրիկը՝ իր սեռապատյան սովորության։

Պարզ է, որ զարգացվածությունն էլ, համապատասխանաբար, կարող էին ծնող-զույգ կազմել մարդն ու զանազան կենդանիները և թռչունները։

Արդ, ինչպե՞ս է պատահել, որ մի մարդու և մի թռչունի ֆիզիսներից առաջվել է մարդագլուխ թռչուն, այսինքն՝ մի բարդ էակի պատկեր։ Առաջինը, որ դա ինքը հենց ծնող-զույգի պատկեր է։ Դրա ստեհանական զարգացման հետ ծանոթանալու նպատակով, վերհիշենք մի մարմին և երկու գլուխ կամ մի գլուխ և երկու մարմին ունեցող կենդանապատկերները։ Դրանք էլ, ինչպես տեսանք, և՛ ծնող-զույգերի պատկերներ են, և՛ միաժամանակ հավելական կազմություն ունեն։ Քանի որ հնարավոր է եղել մի մարմնով երկու մարմին ցույց տալ, կամ մի գլխով երկու գլուխ, ապա միանգամայն հնարավոր կլինեին նաև մի մարմնով և մի գլխով արտահայտել երկու մարմին և երկու գլխի իմաստը։ Բայց այս դեպքում, որպեսզի ցույց տրվիր, որ, իրոք, այդտեղ երկու էակ է եղել, պահպանվել է մի էակի մարմինը և մյուսի գլուխը, քանի որ այդ էակները տարբեր տեսակների են պատկանել, ուստի առաջվել է տարբեր կենդանիներից բազկացած էակի պատկեր, որը և հնարավոր, իր հին բովանդակության մոտացման հետևանքով, համարվել է ֆանտաստիկ կամ երևակայական մտածողության արդյունք։

Այս կապակցությամբ հիշենք № 4514 նետաղրի 355բ քերթի նկարը (նկ. 714)։ Այստեղ մեր առջև է մեզ հետաքրքրող բարդ կենդանապատկերների մի նախնական օրինակը, որտեղ թռչնային նույն մարմնի վրա պահպանված են և՛ այդ թռչունի, և՛ նրա զուգակից մարդու գլուխները։ Որ դա ծնող-զույգի գաղափարապատկեր է, անվիճելի է։ Որ այդ ծնող-զույգի ներկայացուցիչներից մեկը մարդ է և մյուսը՝ թռչուն, դա ևս անվիճելի է։ Ահա հենց այսպիսի դեպքերումն է, որ հնարավոր է եղել զարգացող ոճավորման հետևանքով հրաժարվել այդ էակի գլուխներից մեկից, այն է՝ թռչունի գլխից, որովհետև թռչունի գաղափարն արտահայտված է մարմնի միջոցով։ Բավական է ազատվել այդ թռչունի գլխից և արդեն պատրաստ է այն կենդանապատկերը, որի նմանները ոչնչված են մեր միջնադարյան ձեռագրերը։



Նկ. 714

Այս է այն ուղիներից մեկը, որոնցով զարգացել են երկու տարբեր կենդանիներից բազկացած կենդանապատկերները։ Այս բացատրությունը նոր է և մասամբ հակադրվում է գոյություն ունեցող այն կարծիքներին, որոնց համաձայն նման մոտիվները ցիավում են լոկ որպես անտրոպոմորֆիզմի արդյունք։ Ըստ որում ենթադրում են, թե մարդակերպ աստվածությունների երևան գալով, նախկին աստվածների վրա ավելացել են մարդկային գլուխները։ Այստեղ, իհարկե, կա որոշ ճշմարտություն, որին կանգրագառնանք ստորև։ Սակայն դա միակ բացատրությունը չէ։ Եթե այդպես լիներ, ապա ինչպե՞ս պիտի բացատրվեին այն մոտիվները, որտեղ անտրոպոմորֆիզմի հետք անե-



Նկ. 715



Նկ. 716



Նկ. 717



Նկ. 718



Նկ. 719

գանական գլուխ։ Առաջին խմբի նկարներն ընդօրինակում ենք № 2929 ձեռագրի 125բ, № 3708 ձեռագրի 285բ, № 2843 ձեռագրի 150ա, № 4125 ձեռագրի 186ա և № 4815 ձեռագրի 125ա թերթերից (նկ. նկ. 715, 716, 717, 718, 719), իսկ մյուս մասը՝ № 2843 ձեռագրի 171ա և № 985 ձեռագրի 5ա թերթերից (նկ. նկ. 720, 721)։ № 3717 ձեռագրի 95ա թերթում պատկերված է մի ուրիշ նման էակ, որի մարմինը գազանային է, իսկ գլուխը մասամբ գազանային, մասամբ էլ թռչնային (նկ. 722)։ Այս վերջինը № 4514 ձեռագրի 355բ թերթից մեջ բերված 714-րդ նկարի մի յուրահա-

գամ չկա, բայց կան երկու կենդանիներից բաղկացած էակների պատկերներ։ Քանի որ այսպիսի նկարներն էլ մեծ տարածում են ունեցել մեր զարդ-



Նկ. 720



Նկ. 721



Նկ. 722

արվեստում, հարկ ենք համարում այստեղ ընտրել մի շարք համապատասխան նմուշներ։ Դրանց մի մասն ունի թռչնային գլուխ և կենդանական մարմին, իսկ մյուս մասը՝ թռչնային մարմին և կեն-

տուկ վարիանտն է, որտեղ երկու գլխի զուգափա-րը ռնամորվելով վեր է ածվել մի այնպիսի գլխի, ուր նկատելի է երկու տեսակի կենդանիների գլուխ։ Գազանային գլխի հետքերը պահպանում են հենց



Նկ. 723



Նկ. 724

այց կենդանու մարմնին, իսկ թռչնային՝ այն թռչունի, որի մարմինը և գլխի մի մասը ավելի ու դուրս է ընկել մոտիվից։

Համանման կենդանիների պատկերները շատ տարածված են եղել նաև ճարտարապետության մեջ։ Այդպիսիններից են, օրինակ, Դվինի պեղումներից հայտաբերված գիպսե ծուլածո մի շարք քանդակապատկերները[1], Աղթամարի եկեղեցու բարձրաքանդակների մեջ գտնվող ֆանտաստիկ կենդանիները (նկ. նկ. 723[2], 724[3]) և այլն։

Զարդարվեստում կան նույն ձևով ստեղծված նաև ուրիշ կենդանիների հարաբերություն ներկայացնող նկարներ էլ, որոնց մասնանշելն ավելորդ է։ Կարելի՞ է արդյոք այսպիսի նկարների մեջ անտրոպոմորֆիզմ որոնել. միանգամայն ո՛չ։ Կարելի՞ է անտեսել այս մոտիվներում երկու առանձին կենդանիների զուգակցումը, որն ամեն անգամ ցույց է տալիս իրեն և մատնում իր ծնող-զույգային երբեմնի իմաստը։ Դարձյալ ո՛չ։ Ուստի



Նկ. 725

այլևս անկասկած է դառնում այսպիսի բարդ տեսարաններում ևս ծնող-զույգի առկայության փաստը։

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 190—191։

[2] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950, стр. 77, рис. 60.

[3] В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, табл. 65.



Նկ. 726



Նկ. 727



Նկ. 728

Այս վիրյին խմբի նկարները, որոնք երկու էակներն էլ կենդանիներ են և մարդն իսպառ բացակայում է, իրենց ժամանակ, ավելի վաղ ժամանակների արդյունք են, քան այն նկարները, որոնք երկու էակից մնկը մարդ է։ Նույն նշանակով առնդիվել են նաև ուրիշ պատկերներ, որոնց մարդու գլուխը միացած է ոչ թե թռչունի մարմնի հետ, ինչպես բերված օրինակներում, այլ տարբեր կենդանիների։ Այդպիսիներից են, օրինակ, № 4080 ձեռագրի 8ա, № 2744 ձեռագրի 278բ, № 4206 ձեռագրի 178ա և № 4820 ձեռագրի 271ա թերթերից ընդօրինակված նմուշները (նկ. նկ. 725, 726, 727, 728)։



Նկ. 729

Հասկանալի է, որ այսպիսի պատկերները, ամենից առաջ, կապվում են հատարակական հավատացողությունների իմաստն ունեցող ձեռ-գործերի հետ։

Տրատրիալ հավատացողություններին հետ են կապվում նաև կենդանական այն հատարատրված մոտիվները, որոնք նկատելի են ոչ թե երկու, այլ երեք կենդանու հետքեր։ Այդպիսի գեղքերում, սովորաբար, գլուխը վիրյված է լինում մի կենդանուց, մարմինը՝ մի ուրիշ, իսկ պոչն ավարտվում է մի երրորդ կենդանու գլխով։

Այսպես, օրինակ, № 1282 ձեռագրի 45ա թերթում հանդիպում ենք մի էակի պատկերի, որի գլուխը թռչնային է, մարմինը՝ գազանային, իսկ պոչը՝ օձագլուխ (նկ. 729)։ Պարզ է, որ այստեղ էլ գործ ունենք իրական կենդանիների տարբեր մասերի հատարատրման միջոցով ստեղծված մի հավատական կենդանապատկերի հետ։ Այդ հավատական ամբողջությունը, առաջին հերթին, խոսում է հենց այդտեղ տանա երեք կենդանիներին երբեմ վերագրված հատարատական նշանակություն մասին։ Այժմ ուշադրություն գարձնենք այդ էակի ատջերի և թևերի հիմքերում գտնվող վարսանգապաղպային սիմվոլներին. գրանք կենաց ծառի ատրիբուտներն են։ Եթե փորձենք վերլուծել այս բարդ պատկերը, ապա կստանանք մի օձ, մի գազան, մի թռչուն և մի կենաց ծառ։ Իսկ եթե փորձենք այս մոտիվները գրտնորել ավելորական յուատացապարդերի ձևով, ապա կունենանք կենաց ծառի գետնի վրա, ապա կստանանք մի ավելորական այնպիսի գազանապատկեր, որի նմանները չատ են տրգեն առնել ենք։ Նոսքը վերատրում է այն կենաց ծառերին, որոնց վրա կային երեքական կենդանա-



Նկ. 730



Նկ. 731

պատկերներ։ Ուստի այդ երեք էակներից երկուսը կենդանական որպես ժնող-զույգ, ապատահական-լով ֆրատրիաների խմասագ, իսկ երրորդը կենդանական որպես ընդհանուր նախնի, կամ զավակ (անբոնդ)։

Հնոագրությամբ, մարդակերպ նախնիների զարգացման պատճառով, բնականաբար, այսպիսի կենդանապատկերները պիտի երեին համապատասխան փոփոխություններ։ Նրանց վրա իր տեղը պիտի գրավեր նաև մարդկային գեմքը։ Այս տեսակետից ևս զարգարվեստում հարուստ փաստեր կան։ Բերենք որոշ օրինակներ հենց նույն (№ 1332) ձեռագրից։ Այդ ձեռագրի 21բ թերթում հանդիպում ենք մի այդպիսի կենդանապատկերի. նրա պոչը թռչնապոչ է, մարմինը գազանային, իսկ գլուխը՝ մարդկային (նկ. 730)։ Այս բարդ կենդանապատկերի վրա էլ տակա են վարպանդապաշտային սիմվոլները, այսինքն՝ կենաց ծառի գազափարը։ Նման մի ուրիշ նկար էլ կա նույն ձեռագրի 85ա թերթում (նկ. 731)։ Աչառեղ արգեն կենաց ծառի գազափարն ավելի ցայտուն տեսք ունի և երևան է գալիս այդ կենդանապատկերի մարդկային գլխին դրված թագի վրա (մատենադի կերպով նաև ազգրին)։

Վերին աստիճանի ուշագրավ է նաև Ավետարանի Մաշտոցեանցու պատմության մեջ խոշոր գեր կատարող ցլապլուխ կամ գուտրափակցուխ մեու մոտիվը։ Դա մի դիցարանական էակ է, որն ըստ այդ պատմության, մի չինգով հանգերձ, տեսնված է նաև ցուլի գլխով։ Ձեռագրերում հանախ այդ մեն պատկերվում է ոչ միայն երկու, այլև երեք գլխով։ Այդպիսիներից է, օրինակ, № 5472 ձեռագրի 32բ թերթի նկարը (նկ. 732)։

Ընդհանրապես հեթանոսներում և հին գրության մեջ ամպամի նժույգները և ուրիշ կենդանիները մեծ գեր են խաղում։ Այդ բոլորի ծագումն էլ կապված է աստվածային կարգերի և տոտեմիստական պատկերացումների հետ։ Ժամանակի ընթացքում մոռացվել են այս պատկերների առաջացման նյութական հիմքերն ու կոնկրետ պատճառները։ Բայց չեն մոռացվել, չեն անհետացել այդ բարդ էակների պատկերներն ու նրանց մասին եղած զրույց-



Նկ. 732

ները, որոնք, գնալով, կրոնական քանոր գորով են պատուազվել։ Ի վերջո, մարդկի երբեմնի տոտեմապատկեր-սիմվոլներին համարել են հրաշագային էակներ, գրել նրանց գործողություններ մեջ և



Նկ. 733

պատմել նրանց մասին, որպես երբեմնի գոյության ունեցած առանձին էակների՝ զանազան զրույցներ։

Տոտեմական համանման պատկերացումների ուժեղ մնացուկները պահպանվել են նաև գերեզմանոցներում, մահարձանների կամ տապանաքարերի վրա։ Այստեղ, որպես մի նմուշ, հիշենք XVII դարի մի գերեզմանաքար՝ Հին Ջուղայից, որն իրենից ներկայացնում է խոյանման մի կենդանու քանդակ (նկ. 733) [1]։

Այս մահարձանն իր ազդրերի վրա գտնվող պղզարերության արձ[...]ներով հիշեցնում է վերևում մեջ բերված նկարներից հատկապես երկրորդը (ձեռագիր № 1382, թ. 31բ)։ Ուշագրավ են առջևի և ետևի ոտքերի վրայով ձգվող զարդաշարերը, ուր փորագրված է նաև մի արևանիշ, որը նույնպես դիցաբանական մոտիվ է։ Այդպիսին է նաև խոյանման կամ արջանման կենդանիների զույգը, որի նման մի ուրիշ նկար մեջ ենք բերել այստեղ ձեռագրերից։ Այդ մահարձանի վրա կան նաև կյանքից առնված առօրյա տեսարաններ (հեծյալներ, խնճույք և այլն)։

Այսպիսով, այդ շիրմաքարը դարձել է մի ընդհանուր ֆոն, որի վրա իրենց տեղն են գտել տոհմային պատմության զանազան խոշոր դրվագները։ Խոսք չկա այն մասին, որ տվյալ շիրմաքար պատրաստողները հետևել են միայն տրադիցիային, բայց հին ժամանակներում նման կոթողները պատրաստվել են գիտակցված ձևով, ուր նրանց կեր-



Նկ. 734

տողները փորագրվող մոտիվներով մատնացույց են արել իրենց տոհմի անցյալի դիցաբանական դրվագները։

[1] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 428, «Շիրիմ խոյայ Մանուկ Նազարայ»։

Այժմ վերցնենք բարդ տեսք և կազմությունն ունեցող կենդանամոտիվների մի ուրիշ խումբ, որի ներկայացուցիչները բաշխված են երկու կենդանական մարմիններից և մի մարդկային գլխից։ Օրինակ, № 985 ձեռագրի 4ա թերթում ցույց է տրված թռչնային մի էակ-դուլդ, որանց նրանց



Նկ. 736

մարմինները անչատ են, բայց գլուխները միացած են մի ամբողջության մեջ և վեր են ածված մարդկային դեմքի (նկ. 734)։ Երկու թռչուններն այստեղ երկու ֆրատրիաների խմասան ունեն, իսկ նրանց միացյալ դեմքը՝ այդ ֆրատրիաների միասնության իր գոյությունը պահպանած տոհմի։ Միամամանակ այս տոհմն էլ զարգացման նոր էպոխա է թևակոխել. նա այլևս կենդանակերպ նախնի չի ճանաչում, այլ՝ մարդակերպ, ընդամենը հիշում է այդ նախնու ծնունդը՝ երկու թռչուններից։ Մի քան, որը նույնպես իր հարուստ հետքերն է թողել նաև դիցաբանական հին գրույցների մեջ։ Թռչնային երկու մարմին և մարդկային մի դեմք ունեցող այսպիսի նկարները կարևոր տեղ են գրավում նաև խորանների և կիսախորանների։ Ահա երկու նման № 206 ձեռագրի 545ա և № 197 ձեռագրի 3ր թերթերից (նկ. նկ. 735, 736)։



Նկ. 736

Նման մոտիվները համախ օգտագործվել են նաև զարդագրության մեջ, որպիսի երևույթի լավ օրինակներից է № 3722 ձեռագրի 262ր թերթի տեսարանը (նկ. 737)։ Այստեղ ուշագրավ է մի ուրիշ մոմենտ ևս. ծնող-դուլդ թռչունները միացած են միմյանց հետ ոչ միայն գլուխներով, այլև պարանոցներով և կրծքերով։ Այս երևույթն է, որ, զարգանալով, տալիս է նաև մարմիններով միմյանց հյուսված էակների պատկերները։



Նկ. 737

Այդ մասին բավականին փաստեր տրված են նաև այս երևույթի հետաքրքրությամբ է, որ ստեղծվել են այնպիսի կենդանապատկերներ, ինչպիսիներից են թռչունի մարմնով և մարդու գլխով երևան եկողները, որոնցից մի օրինակ բերեցինք վերևում։ Այժմ ավելի քան համոզեցուցիչ է դառնում այդ կապակցությամբ մեր հայտնած կարծիքը։ Բավական է այս վերջին չորս նկարներից մտովին հեռացնել երկու թռչուններից մեկի մարմինը (այսինքն՝ նրա գաղափարը հույզ մյուս թռչնամարմնի մեջ) և կստացվեն մարդագլուխ ու թռչնամարմին պատկերներ, որոնցով, ինչպես նշեցինք, սկզբված են հետագայում մեր միջնադարյան ձեռագրերը։

Մի շարք ձեռագրերում նման պատկերները պահպանել են որոշ առանձնահատկություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի բնագավառներից են իրենց փոխանցվել մանրանկարչության մեջ։ Այսպես, օրինակ, № 155 ձեռագրի 126ր թերթում գտնվող Համապատառախան նկարի համար որոշակի կերպով կարելի է ասել, որ այն արձանագրության բնագավառից է փոխ առնված (նկ. 738)։ Այստեղ նույնիսկ պահպանված է այն պատվանդանը, որի վրա ժամանակին դրված է եղել նկարված էակի արձանը։ № 1850 ձեռագրի 260ա թերթում գտնվող նկարն էլ ունի գորգա-



Նկ. 740



Նկ. 739



Նկ. 741



Նկ. 742

գործական կամ անկվածագործական ծագում (նկ. 739)։ Դա առավել համոզիչ է գտնում, երբ ուշադրություն ենք դարձնում նաև այդ ձեռագրում գտնվող ուրիշ նկարների վրա, որոնք նույնպես ունեն նման պատմություն։

Այս և նման ուրիշ փաստերը ցույց են տալիս հետևյալ մտքերի մոտիվների շատ տարածված լինելը, միաժամանակ նրանց կապելով ավելի հին ու հնադար ժամանակներից նկող բնագավառների հետ, քան մանրանկարչությունն է։ Մատենադարանական հին հուշարձանների վրա ևս նման պատկերներ շատ են պատահում, որոնց մասին ևս նույնը կարելի է ասել։

Հետևելով հատկապես մարդագլուխ քուրմների կամ քուրմամարմին մարդկանց մոտիվներին, մենք փորձեցինք տալ նրանց և նման ուրիշների առաջացման պատճառները։ Բայց հենց սկզբից էլ նշեցինք, որ դա միայն բացատրությունը չի լինելու։ Մասնագետների կողմից ընդունված է ասել, որ անտրոպոմորֆիզմի հետևանքով նախկին կենդանակերպ նախնիները սկսում են երևան գալ մարդկային տարրերատիպերով։ Ձգում փորձենք խոսել այս հարցի մեջ, որը նույնպես պիտի որոշ դեր խաղացած լիներ։ Ինչ է մատենագրությունը անվ անտրոպոմորֆիզմը, որն իրոկապես տեղի է, բայց ինչպե՞ս պատահեց, որ մարդկի նախկին քուրմն ստանձին սկսեցին նկարել կամ քանդակել մարդու գլխով։ Արդյոք նրանք սկսեցի՞ն պատկերացնել այնպես, ին իրենց նախնին ունեցել է այդպիսի կերպարանք։ Եվ այս, ապա ի՞նչ գոնե բնությական հիմքի վրա։ Մենք այս կապակցությամբ քույլ ենք տալիս անել հետևյալ եզրակացությունը։ Հավանաբար, այն ժամանակ, երբ նախնիների ծնող-զույգերը պատկերվել են մարդու և որևէ կենդանու միջոցով, հետևյալ է եղել եղիազրել, քի երանցից կարող էր ծնվել ոչ քի ամբողջական մարդ կամ ամբողջական կենդանի, այլ կիսով չափ մարդ, կիսով չափ կենդանի։ Քանի որ խոսքը հետզուն անցյալի մասին է եղել, և մարդին ունեցել են երանական որոշ պատկերացումներ, ուստի գուցե և՝ այս ճանապարհով առաջանային համապատասխան մոտիվները։ Մենք այս կարծիքը հայտնելով հանգիտ, գտնում ենք, որ ինչպես քննվող, նույնպես և մյուս բարդ կենդանական մոտիվները ստեղծվել ու զարգացել են ֆետտիշով հասկացողությունների հիման վրա, որի մասին բավականաչափ խոսվեց վերևում։ Կարծում ենք, որ հետագայում, մարդկի չկարողանալով բացատրել այդ բարդ մոտիվները, մոռանալով նրանց նախկին իմաստը, բայց տրադիցիոն կեր-

պով հարգելով և երբեմն էլ պաշտելով դրանց որպես սիմվոլների, միչա էլ կարող էին նրանց կրոնական մնեմոնիկական տալ։ Ամենից, կրոնական ցորը նրանց վրա կարող էր նատած լինել հենց սկզբից, երբ այդ հատկացությունները համարվում էին տվյալ առարկի խորհրդանիշը։ Ուստի և կրոնական մշուշը վաղ-ուշ այդ բորդ կենդանապատկերները պիտի ներկայացներ որպես դիցաբանական առասնին ուժերի պատկերներ։ Պիտի խոսվեր նրանց մասին այնպես, ինչպես, ասենք, Հնդկաստանում ենք հանդիպում բազմագլուխ և անթևանի այնպիսի կենդանիների, որոնք գտնվում են գործող անձանց դեմում։



Նկ. 743 Նկ. 744

Ջորգարվեստում մեզ տարածում գտած քաչնամարմին և մարդագլուխ էակներին, այս տեսակետից, ինչպես երևում է հատուկ գիր է պատկանել։ Նրանք էլ հետագայում հանդես են եկել որպես առասնին դիցաբանական էակներ։ Դրանք կարծես, իրո՛ք, հնդկաքաչին քաչուններ են՝ մերթ ծածկված ծաղկաթիթ և պոզակիր ասեղով, տերևներով, մերթ քնատարած այանալիս, մերթ էլ մոտիտով նայելիս։ Ահա այդպիսի մի քանի նկար № 2229 ձեռագրի 147բ, № 198 ձեռագրի 270ա, № 256 ձեռագրի 245ա քերթերից (նկ. նկ. 740, 741, 742)։

Ինչպես տեսանում ենք, այս էակներն ունեն կանացի գեմք, ուսերի և արտաճայտում են ազնիվ գաղափարներ, որոնք կապված են հզել նախամայրերի և նրանց հաշտրդած մայր աստվածուհիների հետ։ Մենք արդեն տեսել ենք մայր աստվածուհիների մի շարք նկարներ (նկ. նկ. 641—648 և այլն) և խոսել նրանց մարմիններից ելած բուսական պաղարիր ճյուղերի մասին։ Այդ նույն երևույթն է ցույց տրված նաև այստեղ՝ առաջին և երկրորդ նկարներում։ Նույնը կարելի է ասել նաև քաղերի մասին։

Ահա մի ուրիշ նկար № 823 ձեռագրի 83ա քերթից (նկ. 743)։ Համեմատեն մի նկար էլ մեզ էր բերված նեպալ աշխատությանց սկզբում (նկ. 30)։ Այնմ արդեն հատկանշել է այս մոտիվների համարյա ոչ էական։ Այս դիցուհին էլ՝ մայր աստվածության պատկերներից է, որի գլխին բուսած ոստերի նայակը միացնող եռանկյունին Աստաբատայի Հայտնի եռանկյան պատկերն է, որի մասին նույնպես արդեն խոսվել է վերևում։

№ 303 ձեռագրի 210բ քերթում նկարված է մի այդպիսի աստվածուհու պատկեր, որն ուշագրավ է քե՛ իր վարսանդա-պաղպաղին սիմվոլներով և քե՛ հատկապես բերանում բռնած խնձորով (նկ. 744)։ Նման մի ուրիշ նկարի ենք հանդիպում նաև № 198 ձեռագրի 274ա քերթում (նկ. 745)։ Ինչպես երևում է բերանում խնձոր ունենալն էլ պաղպաքության աստվածուհիների հատկանիշներից մեկն է համարվել։ Ժողովրդական դիցաբանական հին երգերից մեկում կարդում ենք.

Ատրա, խատա ատրանի,
Երկանավիզ ատրանի...
Ատրան չուներ՝ ինչ կուներ.
Ատրա ատեր երկարեր,
Ու ան չիվար ին չաներ։
Ընի նրան գատրանկե էր,
Ընդերան մար բերանե էր,
Ոսկի խնձոր բերանե էր...[1]

Եթե այս վկայությամբ խնձորը համարվում է հորատա դիցուհու սիմվոլը, ապա քան մի ուրիշ վկայության տեսնորս, երբեմն չնատղակ չնորհ-

[1] Ա. Տ ե ր - Ղ ա զ ա ր յ ա ն, Գանգուխա Վահեկյան, Ե. Գալթ, 1898, էջ 127—128.



Նկ. 745



Նկ. 746



Նկ. 747



Նկ. 748

նալ, ու միայն կնոջն հասանիլ ուզեցաց, այլն գինուն չնորհնալ պատմիչն մաշուս [1]։

Այս էանապատկերների կապը ասավածուհինների հետ որոշակի կերպով երևում է նաև № 5458 ձեռագրի 155բ թերթի նկարի միջոցով (նկ. 748)։ Այդ էակի գլուխն ուռնված է ղուսապատկին մեջ միայն այնպես, ինչպես քրիստոնեական սրբերի գլուխներըւ № 6400 ձեռագրի 107ա թերթում նման մի ուրիշ նկար կա, որտեղ ղուսապատկին փոխարեն երևան է գալիս թագը՝ մոմերով (նկ. 747, նմմտ. նկ. 647)։

Ինչպես հայտնի է, այս էակները գրականության մեջ կոչվում են սիրեններ և կապվում գեղեցկուհիների, սիրո գաղափարների հետ։ Նրանց միաժամանակ վերագրվում է նաև կախարդող երաժշտության ու երգի հնչեցնողին կարողություն։ Համանատար հենց այս մոմենան է, որ ընդգծված է № 4627 ձեռագրի 148բ թերթում գտնվող նկարում, որտեղ սիրենը բերանին ունի սրինգ կամ նման մի այլ գործիք (նկ. 748)։ Այս պատկերացումները, անշուշտ, հիմնված են պատմական իրականության վրա և խոսում են գեռ շատ հին ժամանակներում կանացի սեռի խազացած վճռական գերի մասին նաև երգի ու երաժշտական արվեստի զարգացման բնագավառում [1]։

[1] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Ս. Եսայանյան, Պետերբուրգ, 1910, էջ 80։

[1] Համապատասխան վկայություն ենք հանդիպում նաև № 7127 ձեռագրի հետևյալ տողերում. «...Ի՞նչ կա՞նչ է ոգեկուկք ի զատկացն Կայենի հետո ինքան և զարթարիցն չինեցաւս, պետքին, գեղեցին, նայիցքին և բարում արուեստս արարին։ Երգարան, ասդ և տանուտանիցքին, զաս և գինարուի, քաշուի, ժոխոյ, փող և ժը[ն]իկա։ Ինչն այն ժամանակի զուր զարթարին, պետ



Նկ. 749



Նկ. 750



Նկ. 751

Ձեռագրերում, չնայած սակավ թվով, բայց և այնուամենայնիվ պահպանված են նման նկարների այնպիսի օրինակներ էլ, որտեղ կանացի գլուխների փոխարեն պատկերված են տղամարդկային գլուխներ։ Դա արդեն կապված է հայրիշխանությունից եկող հասկացողությունների հետ։ Այդպիսի նկարներից այստեղ զետեղում ենք երեք օրինակ՝ արտանկարված № 4827 ձեռագրի 50բ, № 5458 ձեռագրի 60ա և № 4514 ձեռագրի 244բ թերթերից (նկ. նկ. 749, 750, 751)։ Նման փաստեր կան նաև այլ ժողովուրդների մոտ. հիշենք ռուսական մի մանրանկար՝ XII դարի մի ձեռագրից (նկ. 752) [1]։

Հնագույն ժամանակների առհմային տոտեմների, նրանց զանազան հարաբերությունների, համապատասխան աստվածությունների և այլ նմանների հուշերը շարունակել են ապրել ժողովրդական բանահյուսության մեջ հազար ու մի ձևով։ Քրիստոնեության օրոք, բնականաբար, այդ



Նկ. 752

բոլորը պիտի դիտվեին թշնամական դիրքերից և ներկայացվեին որպես արտառոց այլանդակություններ։

և գեղել ոչ գիտէին, ոչ սող և ոչ ատենք. Նոքա զարդարեցին և զմեհեցին, խաղալով և խայտալով, ցնծալով և զարթնլով, ասելով և տաղանեալով...։

Ձեռագիր № 7287, թերթ 60ա—60բ։

Այս վկայությունը կարող է նշանակություն ունենալ նաև զարդարվեստի ուսումնասիրության համար։

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. LIV, рис. 5.

Այս առումով վիրին ասպիճանի մեծարժեք ստացագիրքներից մեկը Հանգիստում № 1495 ձեռագիրն է։ Այդ գրույցի մեջ երեսն են գտնվում բարդ տեքստ ունեցող մի շարք էակներ, որոնք մի կողմից կապվում են հին ասորվածուհիներին, իսկ մյուս կողմից՝ միջնադարյան ազանգավորներին հետ, ընդհանուր մինչև քանդրակներները։

Ահա այդ վկայությունի սկզբի մասը.

«Ասան հերձուածողաց բանք և գրույցք իրրև առաստգիտքանութենից, քանզի ի մէջ միտում հայոց գրքի տեսի գայս յառաջակայ գրեցեալ բանքս, որ գրիրն հայերէն էր և գրանն հայերէն։ Վասնայնորիկ և ես այլ առեալ գրեցի ի մէջ գայս գրքիս իրրև զօրինակ. բայց գայս ոչ ևքէ ճշմարտապէս գիտելով և հաստատելով, այլ միայն քէ զկնի իմոյ ձկողացն տեսութիւն լինի, որ բազում հարցաքննութեամբ հարցանիցեն յամենայն ազգաց քրիստոնէից և տեսցեն, քէ ճշմարտապէս ճշիա՞յ են գայս բանք և գրոյցք, քէ ստոյգ առաստգիտքանութիւնք են։ Վասնորոյ խնդրեմ ի ձենջ, զի անմեզգիր լինիցիք քինէն, քանզի որպէս տեսի գործեսին, նոյնպէս և ես այլ գրեցի։ Քանզի ամենայն ճշմարիտ բանք միայն աստուծոյ է գիտելի. այլ և կատարեալ իմաստուն փիլիսոփայից և վարդապետաց հին և նոր կոտակրաներաց և համագունից։ Իսկ որք հաստեցին՝ զօրինակն տացեն և ընդնդրգրեն, տգա քէ ոչ՝ անընդունակ լինի իրրև առաստգիտից առաստգէտ։

Եւ գիտելի է, քէ զի՞նչ են հերձուածողք և կամ ուսո՞ր ընեալքեան։ Պատասխանեալ գայս, գրեմ, Մանզի սատանայ նէնգ զիրենս իւր ի խաւարի որպէս ջնջեսոն ի մոր ջփայուէ կախեալ. նոյն օրինակաւ յղացեալ, ենաւ սատանայ զնանգիարն կայեն ի ծովն։ Եւ կայեն յղացեալ ենաւ զմիզղ չունեն՝ երեք զլիեն, որ երկու-զլխովն որսայր և միւսովն ուտէր անչագաբար և ոչ կարէր յագենալ. նոյն օրինակաւ և մանիքեցիքն, որք կամէին զգրիստոսեան մոլորեցուցանել ի ճանապարհն իւրեանց։ Եւ ապա Սիզղ չունեն յղացաւ և ենաւ զմիզկապարիկն։ Եւ հաստոյ արմատ ասէ. զմիզկապարիկն, քէ գլուխ նորա է որպէս չան և ականջ նորա որպէս իշոյ և կնճռոյք նորա որպէս արագոյ և ոտք նորա որպէս փողգրոց և ի մէջացն ի խառնարհ որպէս կին պատշաճաւոր, յի գործովք անօրէնութեամբ, քէաւոր, քաղցրաճաշակ։ Եւ յորմամ ձայնէ ի ծովուն, և գնէ զրեքեան իւր ի քնամէչն, այնչափ ձայնէ, զի յորմամ լսեն նաւավարքն գնալեն, գազարեցուցանեն զնաւան, որ ի ծովն են։ և կանայքն, որ ի ցամաքի են, իրրև լսեն գնալեն, գլուխիենան զնգ մէլսն անցուցանեն։ Իսկ անիծեալ քազաւորացն պարսից Վէչեն և Վնուկն նէնալ ի յորս և լուան զնալն նորա և ձկեն առ նաւավարքն և ասեն. ոմէ նզրարգ, որսացէք մեզ զգազանն զայն զանուշաձայնն և ըզզարմանալին, և մեք սամք մեզ մինչև քեզէս քազաւորութիւնն մերս։ Իսկ նաւավարքն նէնալ մեծաւ չանիւ ի յորս և բերեալ սատանայի զէգն Ուչկապարիկ և նման զնգզիմ նորա։ Եւ նորա առեալ բերին զպիզծ գազանն առ պիզծ քազաւորացն պարսից և տեսեալ զարմացան և քանկացան նմայ և գազա ի միմեանց շնացան երկոցունն զնգ Ուչկապարիկն՝ անիծեալ քազաւորն։ Իսկ անիծեալ Ուչկապարիկն չզացեալ ի սերմանց անիծեալ քազաւորացն, ենաւ գՊոպոզն մարգ. իսկ անիծեալ Պոպոզն ենաւ չարաչունչ և չարաձայն, չարանիւքն և չարագնացն չարագիմ և չարամիտս, զի և գիրք մարգագիմ գազան անուանեն զնայ։ Իսկ Պոպոզն ենաւ զանիծեալն Մանէս, և անիծեալն Մանէս ենաւ զՄանակ, և անիծեալն Մանակ ենաւ զՄանի, և անիծեալն Մանի ենաւ զՄիմոն կախարդն, և անիծեալն Միմոն ծընաւ զՃանկոս, և անիծեալն Ճանկոս ենաւ զՍշեցկին, և անիծեալն Աշեցկին ենաւ զԿաշեցկին, և անիծեալն Կաշեցկին ենաւ զՊոնտրկեցկին, և անիծեալն Պոնտրկեցկին ենաւ զՊուլկիանէն, և անիծեալն Պուլկիանէն ենաւ զՊարտևպատոն, և անիծեալն Պարտևպատոն ենաւ զԱրևապատոն, և անիծեալն Արևապատոն ենաւ զՄանէոն, և զանիծեալ Մանէոն ենաւ զՔերքրացն, և անիծեալ Քերքրացն ենաւ զՄագքոզն, և անիծեալ Մագքոզն ծընաւ զՊատքոզն։

Մոգա ամենեքեան զգործ սատանայի ունէին և չենուանդ նորա, զի սոքա ոչ ծառայեն աստուծոյ կենդանոյն և անհասին, անեռանելոյն և անվատնելին, այլ՝ սատանայի. և պաշտելիք նորա, զոր պաշտեն՝ նզովեալ հոգիքեն յամենատուր երրորդութենէն և ի միաստուածութենէն...»[1]։

Բերված փաստերը համոզում են, որ, իրոք, հնագույնում տումարներից ստեղծված բարդ գազափարների հիման վրա ստեղծվել են համապատասխան ասպվածութիւններ, որոնք նույնպես ունեցել են բարդ բազադրություն կամ կառուցվածք։ Այս վերջիններս էլ իրենց հերթին են տրոհվել երկու մասի՝ արական և իգական։ Այստեղից էլ պարզ է, որ այս երևույթի հիմքում նույնպես ընկել է ծնող-զույգի գազափարը։ Մեզ ընդունենք, որ այս ամենը տեղի է ունեցել գործող տումարատիրական ընդարձակ ժամանակաշրջանի

---

[1] Ձեռագիր № 1495, քերթ 178ա – 178բ, ժամանակ 1678 թ. տես՝ Նազրխանապոլիս։ գրիչ՝ Նիկոլ վարդապետ։ Մատն տեքստը լրիվ հրատարակված է Գ. Տ. Մկրտչյանի կողմից (Ս.Էջմիածին, 1888 – 1909 թթ.)։

Համեմատաբար ուշ մի ժամանակում, ապա կառուցվի Հետևյալ պատկերը։ Այսպես առՀմի Հիմնադիրները պատկերվել են որպես մի արտաքին և մի իրական բարդ ատավանություն։ Պատկերված փոփոխությունը միաժամանակ խոսում է նաև այն մասին, որ գա այլևս մայրիշխանության ժամանակաշրջանի չի պատկանում։ Նույնը չի կարելի ասել Հայրիշխանության շրջանի մասին, որովհետև այստեղ գնալով շատ գեղերում պատկերացումների մեջ իշխող դեր է կատարում նաև նախամայր գաղափարը։

Թանի որ այդպես է եղել, ապա նախամայր ու նախահայր գաղափարները կարող էին նաև միասին Հանդես գալ։ Դրա ապացույցը պիտի Համարել գեղարվեստական գրույցներում, Հեքիաթներում և միֆերում, որպես գլխավոր Հերոսների, միասին գործող ծնող-զույգերին։ Այս Հարցի մեջ խորանալը մեզ շատ կշեղեր մեր նյութից, ուստի այստեղ էլ բավական Համարելով, անցնենք զարգացման արտահայտված Համապատասխան փաստերի քննությանը։ Խոսքը վերաբերում է բարդ տեսք ու բազմազանություն ունեցող ծնող-զույգերի մոտիվներին։



Նկ. 753



Նկ. 754

Վերցնենք այսպես կոչված ռախբեններին մի քանի ծնող-զույգերի նկարներ։ № 3722 ձեռագրի 127բ թերթում պատկերված է մի այդպիսի ծնող-զույգ (Նկ. 753)։ Նրանց պոչերը միացած են միմյանց Հետ Նիշտ այնպես, ինչպես թռչնային ծնող-զույգերի մի շարք մոտիվներում։ Նրանց միացումը ցույց է տրված նաև մի բազմանկյան շրջանակի միջոցով։ Աճա այդ միասնությունից էլ սերված է կենաց ծառը՝ պտղաբերության ընդգծված արժևորումով։ Տոհմային կամ ցեղային նախնիների այս ծնող-զույգը որոշակիորեն կապված է կրոնական ուժեղ պատկերացումների Հետ։ Այս նախնիներն արդեն աստվածություններ են, որի ընդգծված է Հատկապես նրանց լուսապսակներով միջոցով։ Առանց դրանց էլ, այստեղ առկա է աստվածության գաղափարը, որովհետև նման նախնիներ պատկերացնողները Հավատացած պիտի լինեին, որ իրենց Հովանավորներն ունեցել են կամ մարդկային գլուխ և թռչնային մարմին։ Իսկ դա արդեն ցույց է տալիս երկնային էակների մասին ստեղծված Հավատալիքների առկայությունը։

Համանման օրինակներ բերենք նաև ուրիշ ձեռագրերից։ № 4514 ձեռագրի 68բ թերթում նկարված է մի ուրիշ ծնող-զույգ, դարձյալ պոչերի միաՀյուսմամբ (Նկ. 754)։ Բացի դրանից, այստեղ միաՀյուսված են նաև նրանց գլխարկների սուր վերնածայրերը, որոնցից և սաացվել է կենաց ծառը։

Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ ծնող-զույգերի պատկերների մի բնորոշ առանձնաՀատկությունն էլ այն է, որ դժվար է զանազանել էգն ու արուն, կինն ու տղամարդը։ Նույնն ենք տեսնում նաև այստեղ։

Այդպիսի ծնող-զույգերի գողտրիկ նկարներ կան № 356 ձեռագրում, որոնցից ընդօրինակում ենք երկու նմուշ, մեկը 165բ, իսկ մյուսը 27ա թերթից (Նկ. Նկ. 755, 756)։

Հատկանշական է, որ նման ձևով պիտի ստեղծվեին նաև այնպիսի ծնող-զույգեր, որտեղ թռչնա-



Նկ. 755



Նկ. 756



Նկ. 757

յին մարմնի փոխարեն պատկերված լինեն որևէ կենդանու մարմին։ Այդպիսի շատ փաստեր էլ կան, որոնցից այստեղ մեջ ենք բերում № 356 ձեռագրի 174ա թերթի նկարը (Նկ. 757)։

թյունը անգի ունեցած լինեն լոկ կենդանական մոտիվների միջոցով, առանց մարդկային տարրերի։ Այդպիսի բազմաթիվ նկարներից այստեղ հիշենք երկու նմուշ՝ ընդօրինակելով № 6257



Նկ. 759



Նկ. 758



Նկ. 760

Բնականաբար, պիտի առնչված լինեին նաև այնպիսի զույգերի պատկերներ, ուր թարգմանու-

ձեռագրի 190ը և № 985 ձեռագրի 10ա թերթերից (Նկ. Նկ. 758, 759)։



Նկ. 761



Նկ. 762



Նկ. 763

Այս մոտիվներն էլ, որպես հաստատակական զույգ միավորների իմաստ արտահայտող մոտիվներ, ապրել են նույնպիսի ոճավորման պրոցեսներ, ինչպիսին բնորոշ էր պարզ պատկեր ունեցող ծնող-զույգերի համար։ Այս առումով ուշագրավ են, օրինակ, երկու գլուխ և մի մարմին ունեցող պատկերները, որոնցից մեկը ենք բերում մի նմուշ՝ արտանկարելով № 3822 ձեռագրի 245բ թերթից (Նկ. 760)։

№ 356 ձեռագրի 98բ թերթում պահպանված է մի ուրիշ նկար, որտեղ գործ ունենք ավելի քան բարդ տեսք ունեցող հարաբարդման երևույթի հետ (Նկ. 761)։ Ներքևում՝ թռչնային ծնող-զույգն է, նրանց պոչերի բարդ միահյուսումից ստեղծված է մի ուրիշ զույգ, որտեղ այդ զույգի յուրաքանչյուր ներկայացուցիչն ունի թռչունի մարմին և մարդու գլուխ։

Խիստ բարդ հակադրությունների հետ է առնչված նաև № 7451 ձեռագրի 447բ թերթի նկարը (Նկ. 762)։ Պատկերված է թռչունի մարմնով և մարդու գլխով մի էակ, որը հավանաբար հայրիշխանության հետ է կապված, որովհետև մարդու գլուխը ամփոփված է, սուրբ և ակնարկում է նրա արքական սեռի ներկայացուցիչ լինելը։ Համեմատաբար ուշ շրջանում առնչված այս նախնու գլխին նկարված են զույգ թռչուններ։ Վերջիններս պոչերով միացած են միմյանց հետ և դրսևորում են ծնող-զույգի գաղափարը։ Այդ թռչունները, իրենց պոչերի միացմամբ և նրանցից սերված վարսանդա-պտղային սիմվոլով, կազմում են մի տեսակ գլխարկի նախատիպ։ Ընդհանրապես այդ թռչունները ավելի հին են (իրենց ծագմամբ) և արվյալ էակապատկերի վրա պահպանված են որպես ատրիբուտ։ Նրանք տոտեմ նախնիների մնացուկներ են։ Ուշագրավ է նաև այդ սֆինքսի թևերի քանակը։ Նա ունի չորս թև, որոնցից երկուսն ուղղված են դեպի վերև, իսկ երկուսն էլ ծալված են մարմնի վրա՝ իրենց բնական դիրքով (դրանցից մեկը երևում է, իսկ մյուսը՝ ոչ, որովհետև այդ էակը պատկերված է պրոֆիլ)։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ այստեղ էլ առկա է ծնող-զույգի գաղափարը։ Եթե վերլուծենք պատկերը, ապա կտեսնենք թռչնային երկու մարմին և մարդկային մի գլուխ ունեցող էակի պատկեր, որպիսիների շատերը տեսանք վերևում։

№ 595 ձեռագրի 296ա թերթում գտնում ենք մի ուրիշ նկար, որտեղ նույնպես գործ ունենք թռչնային զույգի գաղափարն արտահայտող գլխարկի հետ (Նկ. 763)։ Այդ զույգը առնմի ֆրա-



Նկ. 764



Նկ. 766



Նկ. 765

արձանների խմասան է արտահայտում, իսկ մարդը, որի գլխին գտնվում են նրանք, ատամի նախնու, նրա հիմնադրի գաղափարը, որն այլևս կենդանական չէ։

№ 5546 ձեռագրի 108բ թերթում պահպանված է մի ուրիշ նկար, որտեղ տափրենների ծնող-զույգի գլուխների վրա դրված է ատամի ընդհանուր նախնու խմասան արտահայտող մի քար (նկ. 764)։

№ 4514 ձեռագրի 261բ թերթում կա տյուպիտի մի ուրիշ նկար (նկ. 765), որտեղ նեղգևում քալնակերպ ծնող-զույգը պատկերված է մի մարմնով, երկու գլխով և չորս թևով (թևերը համեմատելի են 762-րդ նկարում ցույց տրված էակապատկերի թևերի հետ)։ Այդ ծնող-զույգի գլուխների վրա նկարված են նաև կոշմերով իրար միացած մարդկանց երկու գլուխ, որոնք միանգամից և՛ գլխարկի, և՛ վարսանգա-պաղալին սիմվոլի գեր ունեն։ Այս վերջիններս էլ ծնող-զույգի խմասան ունեն և պատմականորեն ավելի ուշ ժամանակների հետ են կապվում, քան իրենցից նեղգև պատկերված քալնակին ծնող-զույգը։

Եթե փորձենք վերլուծել այս պատկերը և ցույց տալ նրա մեջ ընդգրկված էակներին յուրաքանչյուրով, ապա նեղգևում կստանանք երկու քալուն (ծնող-զույգ), իսկ վերևում՝ նրանցից սերված և գործող ծնող-զույգի գաղափարն արտահայտող մի տղամարդ ու մի կին։ Պաղարկերովյան վարսանգա-պաղալին սիմվոլի փոխարեն, այդ չորս էակների վերև, կատարվի մանկան պատկերը։

Այստեղից պարզ է, որ զարգարվնասում պետի պահպանված լինելն նաև հիշյա այդպիսի գործեր են, իրոց, Գ. Ալիշանը հրատարակել է մի պատկերագրագիր, որը կարծես վերհիշյալ գործի, եթե կարելի է այսպես ասել, քարգմանությունը լինի։ Հրատարակիչը նրա մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Իսկ հին Թորգանալ մատ՝ հիմայ յԱւագ վանս պահուի գեղջուկ կոչուած քարեղէն քանդակ մի, որ այլ ամէն գիշատրանական չորգորդ ունիս (նկ. 768)[1]։

Այս տեսարանի հիմքում ընկած է կենաց ծառի գաղափարը՝ երկնչուղ պատկի ձևով՝ կենտրոնում ծաղիկ։ Նրա վրա բարձրացել է սրծիվների ծնող-զույգը։ Աջակողմյան սրծիվը գնացի վեր գիրանել է կենց պատկերի, իսկ ձախակողմյանը՝ տղամարդու։ Նրանց կենտրոնում էլ ցույց է տրված մանկան պատկերը։ Հետաքրքրական է, որ սրծիվների և մարդկանց մարմինները սերտորեն ձուլված են միմյանց հետ, մի կողմից կազմելով սրծիվ-տղամարդու, իսկ մյուս կողմից՝ սրծիվ-ծնող պատկեր։ Ի՞նչ է նեղգևյացիների վերլուծն հաշվով

---

[1] Գ. Ալիշան, Հին հատոց, Վենետիկ, 1868, էջ 441։ Նկարը տես 443-րդ էջում։



Նկ. 767

դրանցից յուրաքանչյուրը, եթե ոչ մի սիրենա, բայց գոնե լրիվ չնմանվորված միմյանց։ Բավական է մտովին կրճատել թռչունների գլուխները և մարդկանց մարմինները, որպեսզի առաջանա սիրենային մի ծնող-զույգ։ Դրանցից յուրաքանչյուրը, ներկա վիճակով, ոչ այլ ինչ է, քան մի մարմին և երկու գլուխ ունեցող մի բարդ էակ, որի գլուխներից մեկը մարդկային է, իսկ մյուսը՝ թռչնային։

Այսպանով կարելի է բավական համարել կենդանական մոտիվների այն խմբի քննությունը, որը կապված է ֆրատրիալ կազմակերպումների հետ։ Դրանք զարդարվեստի ամենաբարդ ու ամենախրթին մոտիվներն են։ Այստեղից էլ պարզ է, թե որքան բարդ հասկացողություններ են ամփոփված համապատասխան կենաց ծառերի մեջ։ Այդ տոհմածառերի պատկերները ներկայանում են որպես մի-մի ողնաշար, որոնց վրա իրենց տեղն են գրավում այդ տոհմերի բոլոր գոնե անհետ չմոռացված կենդանակերպ ու մարդակերպ նախնիները՝ իրենց պարզ կամ բարդ տեսքով և նրանց ակնբախ օրինաչափ միահյուսումներով։

Որքան էլ ժամանակի ընթացքում որոշ փոփոխություններ և աղավաղումներ են կատարվել, բայց և այնպես այսօր նրանց՝ այդ տոհմածառերը ներկայանում են մեզ ո՛չ այնքան որպես անհասկանալի առեղծվածներ, այլ որպես հեռավոր անցյալի պատմության և մտածողության մասին կարևոր տեղեկություններ հաղորդող մեծարժեք հուշարձաններ։

Հայկական միջնադարյան մանրանկարչությունը պահպանել է այդպիսի տոհմածառերի այնպիսի բովանդակալից և գողարիկ օրինակներ, որոնք արժանի են ամենամեծ ուշադրության։ Եթե մինչև այժմ մենք դիտմամբ ընդօրինակում էինք այդ զարդերից այնպիսիները, որոնք օգնում էին մեզ մոտիվ առ մոտիվ բացահայտելու նրանց էությունը, ապա այստեղ արդեն կարող ենք մեջ բերել նաև առավել բարդ ու առավել խրթին լուսանցազարդ-տոհմածառեր։ Ահա դրանցից երկու օրինակ՝ արտանկարված № 4217 ձեռագրի 12ա և № 206 ձեռագրի 370բ թերթերից (Նկ. Նկ. 767, 768)։

Անկախ մոտիվների առատությունից և հյուսվածքների բարդությունից, ամեն ինչ արդեն հասկանալի է. ուստի ավելորդ կլինեի մեկ առ մեկ ծանրանալ այս լուսանցազարդերի մանրամասնությունների վրա։ Վերհիշենք միայն, որ այս բարդության միջով էլ կարմիր թելի նման անցնում է ներդաշն ու կուռ սիմետրիկ կոմպոզիցիան, որի



Նկ. 768



Նկ. 758

Հիմքում ընկած է առհմային ֆրատրիալ կազմակերպումը։

Ահա թե որքան բարդ է կենդանի ծառ հասկացողությունը։ Սակայն այսքանով էլ դեռ լրիվ բացահայտված չէ նրա իմաստը։ Այդ մասին դեռ առիթ կունենանք խոսելու։

Մեզ այստեղ զբաղեցնող հարցերի կապակցությամբ անհրաժեշտ վկայություններ կարող ենք բերել նաև աստվածաշնչից։ Մարքսիստական գիտությունը մի կողմ է նետում Աստվածաշնչի գերբնական ծագման և սրբության մասին եղած հեքիաթները և մոտենում է նրան որպես հին գրականության հուշարձաններից մեկի, որը տալիս է բազմապիսի նյութեր հին հասարակարգի սոցիալական բնութագրման, նրա էկոնոմիկայի, քաղաքական կառուցվածքի և իդեոլոգիայի մասին¹։

Աստվածաշնչում նույնպես բազմապիսի ձևերով երևան են գալիս ինչպես բնական, նույնպես և անբնական (հարաբարդված) տեսք ունեցող կենդանիներ ու գազաններ՝ դրսևորելով հասարակական հասկացողություններ և մատնելով իրենց առնչությունը տոտեմիզմի հետ։

Հիշենք Դանիել մարգարեի տեսիլքը, որտեղ նկարագրվում են «չորս գազանք մեծամեծք... այլակերպքը։ Նրանցից մեկը նման է մատակ առյուծի և ունի արծվի թևեր, որը հետո նմանվում է նաև մարդու։ Մյուսը նման է ինձ գազանին, բայց ունի չորս թև և չորս գլուխ։ Այդ կենդանիների թվում

¹ БСЭ, том 5, второе издание, 1950, стр. 158.

կա նաև տասնակել այլակերպած գազան՝ եղջյուրներով, որոնց վրա տերևացել են նաև աչքեր իբրև գլուխ մարդոյ... և բերանս (Դանիել, է, 2—8)։

Ուշագրավ է, որ հենց բիբլիայում էլ այդ կենդանիները դիտված են որպես պետական միավորներ. «Այդ գազանք մեծամեծք՝ չորք թագաւորութիւնք» (Դանիել, է, 17—19)։ Հենց այդպես էլ ընկալել ու բացատրել են այդ տեսիլքը նաև միջնադարում։ Օրինակ, II—III դարերի հույն հեղինակ Հիպողիտ Բոստրացու մեկնության համաձայն, այդ չորս գազանները «Թագաւորք յաշխարհի նշանակէ»։ Նա նույնիսկ նշում է, թե ո՛ր պետությունների և ո՛ր թագավորությունների մասին է խոսքը. «այս են՝ մարք և պարսիկք և բաբելացիք... և հելլենացիքն»։ Նա համապատասխան ամեր է նկատել տալիս նաև եղջերավոր գազանի եղջյուրների և մատների (մատիների) թվաքանակի մեջ¹։

Թող չասո բան աղավաղված և փոփոխված լինեն մինչև բիբլիայի ձեռակերպումն ու գրի առնվելը, թող չասո բան էլ հեշտ մեկնաբանված չլինեն Հիպողիտ Բոստրացու կողմից, և թող որոշ ավանդումներ էլ կատարված չինեն այդ գործի թարգմանության և ընդօրինակությունների ժամանակ։ Դա մեզ համար առանձին կարևորություն չունի։ Կարևորն այն է, որ տոտեմիզմի մնացուկները հետագայում ևս չեն վերացել այնպիսի բնագավառներում, ինչպիսին է, օրինակ, պետության հասկացողությունը։ Տոհմերի, ցեղերի զործնական միավորները, բնականաբար, պիտի փոխանցվեին նրան։

Անշուշտ, այստեղ արդեն այդ կենդանակերպ միավորներն ա՛յլ իմաստ ունեին։ Եվ հենց այդ պատճառով է, որ երկար ժամանակ պետական զերբերի և դրոշների վրա պահպանվում են համապատասխան միավորները։ Այս տեսակետից հատուկ ուշադրություն է գրավում ավանական հին դրոշը, դա եռոյի վրա ամրացված մի այնպիսի պարկ է, որը, որոշնթաց արշավի ժամանակ, լցվում է օդով և առանում առյուծի տեսք։ Ահա նաև այս նախնական դրոշներն են, որ հետագայում մշակվելով վեր են ածվել համապատասխան նկարներ կրող գունավոր կտորների։

Անշուշտ, մանրանկարիչ պրպտումները կարող են զարգարվեստում հայտաբերել նաև այնպիսի մոտիվներ, որոնք առնչվել են Աստվածաշնչի համաձայն։ Այդպիսիններից է, օրինակ, № 4551 ձեռագրի 79բ թերթի նկարը (Նկ. 759)։ Դա, մեր

¹ Ձեռագիր № 316, թերթ 187ա—188ա։

կարծիքով, Դանիել մարգարեի տեսիլքում հիշվող չորս գազանների պատկերն է։ Այս կարծիքն անառարկելի պիտի համարել հատկապես այդ մոտիվի շնորհիվ, որն իր բերանում ունի երեք կողաշար, ինչպես նշված է տեսիլքի մեջ։

Հետաքրքրական է, որ հայ նկարիչը, փորձելով տալ Դանիել մարգարեի տեսիլքում նկարագրված գազանների պատկերը, նրանց նկարել է ո՛չ այնպես, ինչպես Աստվածաշունչն է նկարագրում, այլ այնպես, ինչպես ինքն է կարողացել, օգտվելով համապատասխան հին մոտիվներից։ Նա, փոխանակ նկարելու չորս տարբեր տեսք ունեցող գազաններ, նկարել է մի բազմագլուխ բարդ գազանապատկեր։ Այսուհանդերձ գարմայլ այստեղ առկա է մի բարդ մոտիվ, որը նորից հիշեցնում է հասարակական գաղափարների հետ կապված հասկացողությունները։

Զարդարվեստում հաճախ են հանդիպում նաև այնպիսի կենդանապատկերներ, որոնց վրա արտակարգ ձևերով ընդգծված են նրանց եղջյուրները և երբեմն էլ մազերը։ Այսպես, օրինակ, Լեռնային Ալտայում գտնված և սկյութական ծագում ունեցող զարդանմուշների մեջ հանդիպում ենք մի այնպիսի տեսարանի։ Թևավոր գրիֆոնի բերանում պատկերված է մի եղջերուի գլուխ, որի մի եղջյուրի վրա գտնվում են թռչնային բազմաթիվ գլուխներ (նկ. 770)[1]: Ելնելով Աստվածաշնչից մեջ բերված համապատասխան օրինակների մեկնաբանությունից, կարելի է ենթադրել, թե այդ եղջերուն որևէ առհմի կամ ցեղի տոտեմն է, իսկ նրա եղջյուրի վրա գտնվող թռչնագլուխները՝ այդ ցեղի ֆրատրիաների կամ ենթատոհմերի սիմվոլները։ Նույնը կարելի է ասել նաև այն «թռչնածառերի» մասին, որ արդեն մեջ են բերված նախորդ գլխում՝ հայկական զարդարվեստից (նկ. նկ. 662, 663):

Հաջորդ էջերում մեջ է բերվելու Լեռնային Ալտայի [illegible] պատկերը, որն ունի մարդկային գլուխ և կենդանական մարմին (նկ. 778): Ապացուցված է, որ այդ էակի ձևերն ունեն միայն [illegible] մասեր։ Դա ցույց է տրված շատ ընդգծված կերպով։ Հիմք կա մտածելու, որ այստեղ էլ, այդ ձևով, նշված է ցեղի մեջ մտնող միավորների քանակը։

Համապատասխան հուշ պիտի համարել նաև հեքիաթներում հանդես եկող զանազան հրեշների և էակների մի քանի գլուխ և մի մարմին ունենալը։ Այդ գլուխներից յուրաքանչյուրը առհմային մի միավորի (ֆրատրիա, ենթատոհմ) իմաստն է ունեցել։ Դրա ապացույցներից մեկը „հենց այն հանգամանքն է, որ այդպիսի կենդանին չի մահանում, երբ կտրում են նրա գլուխներից անգամ կեսից ավելին։ Դա կարող է առնչվել պատմական այն իրականության հետ, երբ որևէ տոհմ, զրկվելով իր որոշ ենթատոհմերից և ֆրատրիաներից, բնականաբար, շարունակել է ապրել և զարգանալ։ Նույնը կարելի է ասել նաև այն դեպքերի մասին, երբ հեքիաթը վկայում է, թե ինչպես կտրված գլուխների փոխարեն աճում են նորերը։ Այսինքն՝ տոհմը լրացնում է իր կորցրած անդամական միավորների պակասը։



Նկ. 770

Իսկ վերաբերում է այդ էակների հեքիաթներում բացասական ուժերի խորհրդանիշ համարելուն, ապա դա պիտի բացատրել հասարակական զարգացմամբ։ Հիշենք Զևսի և [illegible] օրինակը, ուր ակներև է հին և նոր իդեոլոգիայի մահացու թշնամությունը։ Հիշենք նաև քրիստոնեական և նախաքրիստոնեական աստվածությունների վերապրված թշնամությունը։ Այն բոլոր հեթանոսական աստվածությունները, որոնք մի ժամանակ պետական սրբություն էին համարվում, նոր իրադրությունների հետևանքով, քրիստոնեության կողմից համարվում էին չար և վիշապներ։

Ահա թե նաև ինչպիսի կերպարանափոխված ձևերով են պահպանվել հնագույն ժամանակների առհմային հարաբերությունների արձագանքները։

Ձևական առումով, ինչպես տեսանք, տոտեմները և նախնիները երևան են գալիս կամ կենդանի ծառերի կամ միմյանց հետ միահյուսված և հա-[illegible]։ Հատկանշական է, որ նրանք կարող էին պատկերվել նաև անչափ-անչափ՝ ներկայացնելով համապատասխան պատկերների մի խումբ։ Այսպիսի դեպքերում արդեն բավականին դժվար է բացահայտել տվյալ տեսարանի առհմային և տոտեմական բովանդակությունը։ Նրանք կարող են

[1] С. И. Руденко, Горноалтайские находки и скифы, Москва—Ленинград, 1952, стр. 221, рис. 124—б, „Голова оленя в пасти грифона".

համարվել կենդանիների բնական խումբ, մարդկանց կամ գիշատիչների մի կոլեկտիվ և այլն։ Բայց և այնպես այդպիսի տեսարաններում էլ կարող են առկա լինել տոհմերի և նրանց ֆրատրիաների գաղափարները։ Այս կապակցությամբ բերենք մի օրինակ՝ պիկտոգրաֆիայի (պատկերային գրության) բնագավառից։ Պիկտոգրաֆիան գրագրությունների կամ գրչության առաջին տեսակն է, որով նախամարդիկ գրանորել են իրենց մտքերը։ Այստեղ էլ տոհմերի և նրանց խմբավորումների գաղափարը ցույց է տրված կենդանատեսակների միջոցով։ Օրինակ, ամերիկյան հնդկացիների՝ գնչավարների տոհմային յոթ խմբերը, ցանկանալով օգտվել հարևան մի լճից, իրենց խնդրագիրը ձևակերպել են պատկերային գրությամբ։ Յոթ տոհմախմբերն այստեղ պատկերված են իրենց առանձներով՝ առյծից արտգել, ագռավ՝ երեք կղզիներ, արջ, ծովային մարդ և ծովային կատու։ Նրանցից ներքև նկարված է այն լիճը, որտեղ ապրում են անգափոխվել իրենք։ Նրանց բոլորի աչքերն ու սրտերը միացած են ապագիլի աչքերի և սրտի հետ [1]։

Ահա մի ցայտուն օրինակ տոհմային առարկայից, որտեղ տոհմի և նրա խմբավորումների գաղափարն արտահայտված է տոտեմ կենդանիների միջոցով։ Հենց նման հասկացողություններն հետևանքով է, որ հետագայում քաղաքականություններն ու պետություններն էլ նշանակվել են կենդանիների միջոցով, ինչպես կարելի է գա տեսնել Դանիել մարգարեի տեսիլքում և հետագա այլ ապրյուններում։

Համապատասխան մոտիվներ կարելի է գրանել նաև գրամների վրա, որոնք նորից առնչվում են պետության և քաղաքականության գաղափարի հետ։ Հատկապես հետագայում գրամները հարուստ են թե՛ կենդանական պատկերներով և թե՛ կենաց ծառով։ Ինքնին հասկանալի է, որ կենաց ծառն էլ այս նոր պայմաններում պիտի արտահայտեր պետության գաղափարը։ Ինքնին մի վկայություն Աստվածաշնչից։ Նախադրոնոսոր արյան երազում տեսնում է մի վիթխարի ծառ և առավոտյան ցանկանում, որ այդ երազը մնծնամանվի։ «Ծառն զոր տեսեր մնծացեալ և զորացեալ,— ասված է մնծնության մեջ,— որոյ բարձրութիւնն հասանէր յերկինս և լայնութիւնն նորա չամենայն երկիր, տերև նորա գեղեցիկ և պտուղ նորա բազում, և կերակուր ամենայնի ի նմա, ի ներքոյ նորա բնակեալ էին գազանք անապատի, և յոտս նորա հանգուցանել քոլոնք երկնից, զու նա, արքայ (Դանիել, Դ, 17—18)։ Աշնուհետև խոսվում է այն մասին, թե ինչպես այդ ծառը կտրել ցանկացողները նպատակ ունեն պատանել նրան և նրա քաղաքորած պետությունը։

Ահա թե որքան բազմապիսի հարցերի հետ են կապված նրել ինչպես պարզ ու բարդ կենդանագործերը, այնպես էլ կենաց ծառերը։ Այժմ ավելի քան հասկանալի է գառնում Հատարակական այն խոր բովանդակությունը, որ ունեցել է ելնել ցենայ նավի ու ծխատր պատերը և նրա հետ կապված արտարոլությունների ամբողջությունը։ Դա ցեղային, ցեղախմբային երբեմնի հիմներից մեկն է, որ գործից-գործ անցնելով, հասել է մեզ։ Այս ֆոնի վրա առավել հասկանալի են գառնում նաև հարատևման կենաց ծառերը՝ որպես վաղեմի կենսաքաջակ հասկացողություններ հետ կապված մնացուկներ։ Նույնը կարելի է ասել նաև այդ ծառերի ճյուղերին բազմող կաքավների, նրանց ճյուղերին նստած զանազան թռչունների և նրանց գովքին մասնակցող այլ կենդանիների մասին, որոնց հետ ծանոթացանք վերևում (ոզնան արծվյուն, ձագն ի գարշնա, ընձենի գայլուկս, ոլորտը մեղուս և այլն)։

Այսօր, երբ հետազոտ ժամանակներում առնչված հասկացողություններն հետ կապված գործոմոտիվների մեջ մենք կարողանում ենք տեսնել այդ անցյալի մոտեցողության որոշ մանրամասնություններ, չենք կարող չուրացնել մոտիվ վերլուծել ամենայն ճշմարտությամբ և խստապահ հետևողականությամբ։ Դրա պատճառը ժամանակի այն պատճառն է միջոցն է, որով անցել են այդ մոտիվները, միշտ կրելով նորանոր փոփոխություններ և ենթարկվելով նորանոր հարաբերություններին։ Մանավանդ, որ հետագայում գրանցից շատերն արդեն դիտվել են որպես առանձին բովանդակություններ գործ գործեր։ Մեր նպատակն է նրել միայն ընդհանուր ճերմակով բացատրել այդ մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցը, որը կարող է բազմակողմանի ուսումնասիրության։

* * *

Վերևում քննված մոտիվները պատահում են զանազան քնքնակի ճերմակով ժանրանալ մի քանի սեռական հարցերի վրա, որոնք կապված են քննված գործառնների հետ։

762, 763, 764, 765-րդ նկարներում, ինչպես տեսանք, թե՛ թռչնակերպ և թե՛ մարդակերպ նախնիների պատկերները երևան են գալիս նաև գլխարկ-

[1] М. О. Косвен, Очерки истории первобытной культуры, Москва, 1953, стр. 155—156.

ների վրա։ Նյութական կուլտուրայի հին հուշարձանները պահպանել են այս տեսակետից ևս հարուստ վկայություններ։ Բերենք մի քանի օրինակ։ № 4806 ձեռագրի 5ր թերթում պատկերված է Քրիստոսի ծնունդը և մոգերի թագավորների ընծայաբերումը։ Այդ թագավորներից մեկը՝ Բաղդասարը նկարված է յուրահատուկ գլխարկով, որի վրա նստած է մի թռչուն (Նկ. 771)։ Եգիպտական հին քանդակներում քուրմերի և աստվածությունների գլխարկների վրա նույնպես առատորեն երևան են գալիս թռչունները և նրանց փետուրները (Նկ. Նկ. 772, 773, 774) [1]։

Պարսկական հին հուշարձանների վրա նրանց թագավորները հաճախ երևան են գալիս խոյագլուխ թագերով։ Հատուկ ուշադրություն է գրավում Լեռնային Ալտայի պեղումներից հայտնաբերված սկյութական ձիու մի գլխարկը, որի վրա ամրացված են եղջի թռչունի և այծի գլխի նմանությամբ պատրաստված սիմվոլիկ հարմարանքներ (Նկ. 775) [2]։



Նկ. 771

Այս հին հասկացողությունների մնացուկներից մեկն է նաև գլխարկների վրա փետուրներ կրելու սովորությունը, որը պահպանվել և մասամբ հասել է մինչև մեր օրերը։

Մեր բերված նկարներից մի մասում մարդկային գծագրերի վրա կան երկուական կամ երեքական սև ու կլոր նշաններ։ Անգամ զարդատառերի միջոցով գրանցված մարդկային գծագրերի վրա հաճախ պահպանվում են այդ նշանները. այդպիսիններից է, օրինակ, № 6519 ձեռագրի 303ր թերթի «Ջ» տառը (Նկ. 776)։ Կարծում ենք, որ դրանց արմատները էլ թաղված են նախնադարյան հասարակության և հատկապես տոհմատիրության ընդերքում։ Հասակային դասերի մասին խոսող մասնագետները նշում են, թե ինչպես երիտասարդության դաստիարակչին՝ նրանց մարմինների վրա նաև անջնջելի խարաններ էին դրոշմում։ Համանաբար դրանց գործնական նպատակներից մեկն էլ պիտի



Նկ. 772



Նկ. 773



Նկ. 774

լինեին նրանց ֆրատրիալ պատկանելիության որոշակի զարդերը, հասակային մի դասից արդեն մյուսն անցած լինելը և այլն։ Համեմատաբար ուշ շրջանում այդ սովորությունը կարող էր պահպանվել՝ կապված կրոնական սնոտիապաշտությունների և տրադիցիայի հետ։ Նկատելի է, որ աստվածությունների գծագրերի վրա էլ դրոշմված են նման նշաններ. այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև մարդիկ իրենց հովանավոր աստվածներին պատկերացնում էին իրենց նման։ Եվ եթե իրենց համար անհրաժեշտ էր արհեստական խալը, ապա նրանք պիտի իրենց աստծուն էլ խալով նկարեին։



Նկ. 776

Ուշագրավ է, որ Քրիստոսն էլ հաճախ նկարվում է նման նշաններով (օրինակ, Նկ. 463)։ Ժողովրդի մեջ այդ հին սովորությունը տրադիցիոն

[1] История религий, тайных религиозных обществ, обрядов и обычаев древнего мира, III, второе изд., С. Петербург, 1883, стр. 115.

[2] Карл Оппель, Чудеса древней страны пирамид, С. Петербург, 1867—1868, стр. 222.

[3] С. И. Руденко, Горноалтайские находки и скифы, Москва—Ленинград, 1952, стр. 185, рис. 99.



Նկ. 778

կնքագով նույնպես պահպանվել էր մինչև վերջերս ժողովրդական հին երգերի մեներգումների մեջ այդ խայծերին, որոնք նաև ապխնկ են կոչվել, հատուկ կարևորություն է տրված.

Ելլուստ մի սիրտ ևմ ես,
Լայն ներսէ ներ'մ պնդկ ուխ...[1]

Ամենի ուշ ժամանակներում, հնագիտան քուլտացող տրապիզիայի հետևանքով, խայծերի անհրաժեշտությունն աստիճանաբար վերացել է. ուստի ժողովրդական երգերի մեջ էլ կատարվել են համապատասխան փոփոխություններ.

Ու ձիճ ելալը իղ կանի,
Միտուկը խայծ իղ կանի.
Միտանը պրատով ըլնի.
Ալիսատի մալճ իղ անի՞:

Այս հարցի հետ անբաժան կապված է ևս մի հարց, որը վերաբերում է վարսահարդարանքին: Մեր բնորված նկարներից մի քանիսում հատուկ ուշադրություն է նվիրված գրան. օրինակ, 748-րդ նկարում պատկերված տղամարդ-քուշտնի գեմքը մաքուր սափրված է, բայց պահպանված է բարակ ու երկար մորուք: Մեչպես երևում է, մասամբ սափրված է նաև նրա գլուխը. պահպանված են գագաթից գնալ ծոծրակ իջնող մազերը, որոնցից կազմված է ծամ: Հայորդ և ուրիշ նկարներում տղամարդկանց երևան են գալիս բոլորովին սափրված մազերով: Դրանք ևս պատահականության արդյունք չեն: Հասարակական գործունեության բույլ է տալիս, որ հետևի վարսահարդարանքը շատ մեծ նշանակություն է ունենում և գործից-գործ ընդունել է այլ ձև: Վարսերը ծառայել են որպես տարբերանշան: Քանի որ մազերը քողնելու և խուզելու ծեսերը կապված են եղել գործից-գործ անցնելու հետ, ուստի այդ արարողությունն էլ իր արձագանքն ունի հարսանեկան ծեսերում, նույնը փեսացուին սափրելու հատուկ ժխտակատարության մասին է: Ահա մի նման այդ արարողության նկարագրությունը. ջնդնկոչին կը կատարվի փեսացուին սափրելու արարողությունը, որ բազմած է հարսու: Երջապատված աղջիկներն և մանչերն, որք կը պարեն ու գայլս կերգեն.

Ինր ցագուն, ցագուր ապրար.
Եր Ինչ գոլիմ գլուխդ ի վար.
Ամենց գնու մալուդ ցանիմ,
Եր արմայի ինչ ևմանի.
Ամենց գնու հոնդ ցանիմ,
Եր լուսունկի կալ ևմանի.
Ամենց գնու ալիդ ցանիմ,
Եր հնդկնկի բալ ևմանի.
Ամենց ցանիմ ակոսներդ,
Եր մարգարան շատ ևմանի.
Ամենց գնու պոչդ ցանիմ,
Եր չքնաղի ասղ ևմանի:

Մեջ բերված կենդանական նկարների հիմնական մասն ունի նաև այլքի ընկնող մի այլ առանձնահատկություն. նրանց գլուխները կարծես արհեստական կերպով են պրված նրանց մարմինների վրա: Դա որոշակի կերպով է այլքի ընկնում, երբ ուշադրությամբ նայում նրանց պարանոցներին, որոնք գծերով անջատված են նրանց մարմիններից: Այդպես գործ ունենք առանձնահատկությունների և նրանց հաջորդած պարզ կամ բարդ տեսք ունեցող ատավաժությունների հետ, որոնց ներկայացրել են հատուկ գեղակատարները: Իսկ գեղակատարները, որպեսզի ժամերին բրենց և ցույց տային պահանջվող էակի պատկերը, պիտի գիտակավորվեին և հագնեին համապատասխան զգեստ: Հենց այս պատճառով էլ մեջ բերված կենդանապատկերների մեծ մասի պարանոցները որոշակիորեն անջատված են նրանց մարմիններից և մասնում են բրենց գիտակային ծագումը:

Նախորդ գլուխներում կատարված համապատասխան աշխատանքի շնորհիվ արդեն հասկանալի է, որ ներկա գլխում քննված առավել բարդ մոտիվների մասին գոհացուցիչ բացատրություններ տրված չեն եղել: Ոչին նախորդ գլուխներում քննված պարզ և հնագիտան բարդացող մոտիվները միակողմանի կամ սխալ են մեկնաբանվել, բնականաբար, նրանց խրթնագույն հարաբերությունները պիտի մնային որպես առեղծված: Դրա լավագույն ապացույցը կարող է լինել, օրինակ, բարդ կենդանապատկերներին ֆանտաստիկ կոչում

[1] Մ. Աբեղյան. Դուստանական ժողովրդական ստեղծ., Երևան, 1940, էջ 188:

[2] Մ. Աբեղյան, ժողովրդական խոսքիններ, Երևան, 1940, էջ 388:

[1] Վահան Փորք. Մ. Մխիթարյան, Ընդհ. գործունեություն, Վ. Պոլիս, 1933, էջ 69 (—89):

տալը։ Դա ինքնատիպության ոչինչ չդադարող և իր հիմքում կրոնա-իդեալիստական նկարագիր ունեցող մտածողության արդյունք է։ Ինչպես տեսանք, այդպիսի մոտիվների արդ մասը դիտված է նաև որպես առասպելիզմի, անթրոպոմորֆիզմի և նման ուրիշ հասկացողությունների հետ կապված մնացուկ։ Սակայն, այս բնորոշումն էլ մինչև որս հանգամանորեն հիմնավորված չի եղել։ Այդ իսկ պատճառով նման մոտիվների էության հասկանալ ձգտող ամեն մի դիտողություն անգամ կանգնած են եղել մեծ դժվարության առաջ։ Բնթնդ մի երկու փաստ միացած են միմյանց՝ իրենց պոչերով, որոնք կոչված են վերին ատամների բարդ ու բովանդակային հյուսվածքներ։ Առանձնապես ուշագրավ է պատկերի կենտրոնում առնչվող հատիկա-էնմնասային զարդը, որը գրավում է ամբողջ գոյքի գավակի իմաստը։

Ըստ Բ. Ա. Ռիբակովի ներկայության, այս տեսարանը, հավանաբար, ցույց է տալիս իշխանների արտաքին ատրյան՝ տեսանելին հյուսվերի կամ քանդարձակների գանգերի հետ միասին նա հյուսվերի և քանդարձակների տեղ է ընդունել ծառ-գույների, ֆրատրիաների կապերը և



Նկ. 777

Մովսեսյան խոշոր հետազոտող Բ. Ա. Ռիբակովը, նկատի ունենալով մի շարք գործեր, որոնց պատկերված են տարբեներին ծառ-գույներ, գրում է. «Լայնակ մենք տեսնում ենք սիմետրիկ կոմպոզիցիա բազկացած երկու մարդ-թռչունից՝ հյուսվածքի մեջ, ինչպես նեստորյան գլխազարդերում»[1]։

Նրա համար պարզ չէ տ՛չ այդ մարդ-թռչունների ծառ-գույը լինելը, տ՛չ նրանք իրար միացնող հյուսվածքների ամուսնական կապեր ցույց տալը, տ՛չ էլ այդ սիմետրիկ կոմպոզիցիայի փոլոփռական բովանդակության իսկ արմատները։ Ուստի, նա, փորձելով ապ որոշ մեկնաբանության այդպիսի մոտիվների, հանգում է ոչ հին եզրակացությունների և նիքատրությունների։ Վերցնենք նրա քննած առարկի զարդամոտիվը (նկ. 777)։

Աչսանկ զարդ ունենք մարդպատկեր և թռչնամարդին էակների մի ծառ-գույքի հետ։ Նրանք

[1] Б. А. Рыбаков, Прикладное искусство и скульптура, История культуры Древней Руси, II, Москва—Ленинград, 1951, стр. 432.

պատարկության սիմվոլներ ցույց ավող հյուսվածքներ։ Անկախ դրանից, նա ընդհանրապես զարդարվեստի մեջ հանդիպող զանազան հրեշների և թռչունների պատկերները՝ միահյուսված տարօրինակ հյուսվերով համարում է զուտ բացատրելի[1]։

[1] Տես նր. стр. 428. Ահա Ռիբակովի խոսքերը. „Кроме растительного орнамента, в эту эпоху в дружинно-боярском быту находит себе все больше и больше применения так называемый „звериный стиль", изображение различных чудовищ и птиц, переплетенных причудливыми ветвями. Пока трудно объяснить появление этого стиля. Возможно, что он связан с княжескими ловами, когда и дружинники и сами князья превращались в охотников, рысковавших по лесу и высматривавших среди веток различных зверей или вынимавших пойманного зверя из тенет...".

Դրօրդական քանդերի հետ կապվող այս բացատրությունը հիշեցնում է Ն. Մառրի այն մեկնաբանությունը, որ նա տվել է ասրերի և լշխոների բարդ գաղափարակարգերին, այդպես անունով ասված և քրոջորդ ձկներ։



Նկ. 778

Վերցնենք մի ուրիշ օրինակ։ Լեռնային Ալտայի Պազիրիկյան դամբարանաբլուրներից հինգերորդի պեղումների ժամանակ գտնված են գորգի բեկորներ, որոնք պատկանում են V դարին (Ն. Մ. Թ.) և ունեն սկյութական ծագում։ Այդ գորգի զարդերի մեջ հատուկ ուշադրության են գրավում «Լեռնային Ալտայի սֆինքսի» պատկերները, որոնցից մեկի լուսանկարը հրատարակել է Ս. Ի. Ռուդենկոն (Նկ. 778) [1]։ Նա հանգամանորեն նկարագրում է այդ սֆինքսի մանրամասնությունները, համարելով այն կես մարդ — կես առյուծ և թռչուն ֆանտաստիկ էակ, որն իր գլխին ունի եղնիկի եղջյուրներ (այստեղ կոմբինացված է ոչ թե երեք, այլ չորս կենդանիների գաղափար)։

[1] С. И. Руденко, Горноалтайские находки и скифы, Москва—Ленинград, 1952, стр. 191, рис. 101, „Горноалтайский сфинкс".

Այժմ, երբ մեզ համար պարզ է այն մոտավոր ուղին, որով անցել են նման սֆինքսները, հետաքրքրական է նաև մի ուրիշ կարևոր հանգամանք։ Յուրաքանչյուր ժողովրդի զարդարվեստում երևան եկող նման մոտիվների առեղծման և զարգացման հարցերը պետք է, ամենից առաջ, որոնել տվյալ ժողովրդի անցյալի պատմության մեջ։ Ուստի սկյութական այս սֆինքսը պետք է դիտել որպես սկյութացիների և նրանց նախորդների տոհմատիրական էպոխայի համապատասխան արտադրանքներից մեկը։

Քանի որ Ս. Ի. Ռուդենկոյի համար պարզ չէ նման մոտիվների առաջանալու պատմությունը, ուստի նա, որպեսզի բացատրի այս մոտիվի ծագումը, ձգտում է որոնումներ կատարել ուրիշ ժողովուրդների մոտ։ Եվ ահա նա այդպիսի շատ սֆինքսներ է հանդիպում Առաջավոր Ասիայում՝ երկրորդ հազարամյակի սկզբում (Ն. Մ. Թ.), խեթական հին քանդակագործության և բարձրաքանդակների մեջ՝ XIV դարում (Ն. Մ. Թ.), հին բաբելոնյան և խալդական գլանակնիքների և հատկապես ասորեստանյան հուշարձանների վրա և այլն։ Ուստի և նա եզրակացնում է, որ այդ մոտիվի երևան գալը Լեռնային Ալտայում պետք է դիտել որպես հետևանք այն կուլտուրական կապերի, որ ունեցել են սկյութացիները Առաջավոր Ասիայի հետ։ Նա հետաքրքիր է համարում նաև ուրիշ ժողովուրդների կուլտուրական որոշ ազդեցությունները այդ հարցում։ Իսկ հետո՝ փորձում է խոսել այդպիսի ծագում ունեցող մոտիվի սկյութական յուրահատուկ մշակման մասին [1]։

Ս. Ի. Ռուդենկոյի ուսումնասիրության այս մեթոդը, թե՛ այստեղ և թե՛ բուսական մոտիվների քննության ժամանակ, որի մասին խոսել ենք վերևում, հիմնականում, ճիշտ չէ։

Մի օրինակ էլ հիշենք հատկապես հայկական միջնադարյան լուսանցազարդերի կապակցությամբ։ Լ. Ա. Դուրնովոն, որ երկար տարիներ զբաղվել է հայկական մանրանկարչության ուսումնասիրությամբ և զգալի աշխատանք է կատարել այդ ուղղությամբ, իրավացիորեն շատ բարձր է գնահատում մեր միջնադարյան լուսանցազարդերը։ Պիտի նկատել, սակայն, որ երբ նա փորձում է պարզաբանել, թե ինչպե՞ս են առաջացել դրանք, հանգում է չհամոզող եզրակացության։ Ըստ նրա՝ այդ զարդերն առաջացել են հետևյալ կերպ. որպեսզի մանրանկարիչները կարողանային իրենց ընդօրինակած գրվածքների գլուխներն ու ենթա-

[1] С. И. Руденко, Горноалтайские находки и скифы, Москва—Ленинград, 1952, стр. 189—192.

գլուխները անկյունի դարձնել, լուսանցներում գըրված համապատասխան թվանշանները վերցրել են շրջագծի մեջ, ապա այդ շրջագծերի վրա արել զանազան զարդեր, որոնց ճանապարհով և ստեղծվել են այդ բարդ զարդամոտիվները։ Ահա նրա տողերը. «Տեքստի առանձին գլուխների կամ հատվածների համարի թվանշանը նշող պարզ բոլորակ շրջանից աստիճանաբար մշակվել է լուսանցազարդի շատ օրնամենտալ մոտիվը, որը միշտ զարդարում է հայկական ձեռագրերի լուսանցքները և նրա առանձնահատկությունն է հանդիսանում»[1]։

* * *

Ամփոփենք։

Զարդարվեստի մոտիվները, հնագույն ժամանակներից սկսած, արտահայտել են ոչ միայն բնության դեմ մղված պայքարում մարդկանց ձեռք բերած գիտելիքների ու աշխարհհայացքի կարևոր մոմենտները, այլև նրանց հասարակական-քաղաքական հարաբերությունների էական առանձնահատկությունները։ Հատկապես դուալ և ֆրատրիալ կազմավորումները հսկայական ազդեցություն են թողել զարդարվեստի մոտիվների վրա։ Այն հանգամանքը, որ դուալ և ֆրատրիալ կազմավորումների հիմքում ընկած են եղել տոտեմական որոշ միավորումները՝ սիմետրիկ տրոհմամբ, պատճառ է դարձել, որպեսզի զարդարվեստի համապատասխան մոտիվներն էլ ստանան սիմետրիկ կոմպոզիցիա։ Այստեղ է ահա, որ նորից երևան է գալիս ծնող-զույգի մոտիվը։ Քանի որ վերջինս կապված է եղել ընտանիք հասկացողության հետ, ապա տարբեր էպոխաներում այն տարբեր բովանդակություն (երբեմն էլ՝ ձև) է ունեցել, նայած թե տվյալ էպոխայում ընտանեկան որ ձևն է իշխել և զարգացել։ Անկախ այդ ձևերից, ընտանիք հասկացողությունը միշտ էլ ունեցել է սիմետրիկ կերպարանք, ուստի և ծնող-զույգի մոտիվը, որպես ընդհանրացում, հարատևել է զարդարվեստի մեջ։

Տոհմատիրական շրջանում ֆրատրիալ միավորումների համատարած տարածվածությունը՝ իր գլխավոր ձևերով՝ հիմք է հանդիսացել, որպեսզի զարդարվեստի մեջ իրենց արտացոլումը գտնեն նաև այդ ավելի բարդ երևույթները։ Այդպիսիներից են, օրինակ, այն զարդաձևերը, որոնք հիմնված են հասարակական չորս միավորների գաղափարների միասնության վրա։ Հասարակական համապատասխան միավորները առկա են եղել նույնիսկ դուալ կազմավորումների նախնական ձևերում։ Նրանք ավելի քան խոշոր դեր են կատարել տոհմական համայնքի զարգացման ընթացքում։ Հիշենք անգրիացինի գիտարանության հետ կապված պատմական իրականությունը։ Հենց ինքը, անգրիացին էակը, միայնակ գոյատևել չէր կարող, նա պիտի ամուսնական կապերի մեջ մտներ իր նման մի ուրիշ էակի հետ։ Նրանց զույգը, չնայած երկու էակ է համարվել, բայց նրանք միաժամանակ դրսևորել են արտացոլող չորս միավորների գաղափար, որովհետև նրանցից յուրաքանչյուրը երկսեռ է եղել, իսկ այդ սեռերն անմիջապես կապված են եղել նրանց սնման և զարգացման հետ։ Պարզ է, որ այդ գիտակցության հիմքում ընկած պատմական իրականությունը, որպես հասարակական-արտադրական կարևորագույն գործոններ, ճանաչել է ոչ միայն ֆրատրիաների թիվը, այլև նրանց ներսում գործող ուժերը։ Եվ դա՝ ոչ միայն ամուսնական, այլ ընդհանրապես արտադրական իմաստով։ Բայց, որովհետև այն ժամանակ մարդիկ, տարերային կերպով, ճանաչել էին նաև բնության չորս ուժերի ստեղծագործ դերը, ուստի թե՛ հասարակական և թե՛ բնական այդ չորրական ուժերի գաղափարները արտացոլվել են զարդարվեստի մեջ և իրենց կնիքը դրել նրա վրա։ Այստեղից էլ պարզ է, որ նայած թե տվյալ էպոխայում այդ հասկացողություններից ո՛րն է իշխող եղել, ըստ այդմ էլ համապատասխան զարդաձևում արտահայտությունը տրված է եղել այս կամ այն հասկացողությանը։ Ընդհանրապես, ֆրատրիալ ձևերը վերացել են, իսկ բնության ուժերը՝ ընդհանրապես՝ ավելի են ճանաչվել և ուսումնասիրվել։ Ստեղծվել է համապատասխան փիլիսոփայություն. ուստի զարդարվեստի համապատասխան մոտիվներում խտացվել է չորս էլեմենտների, այսինքն՝ բնության չորս ուժերի գաղափարը՝ հիմք հանդիսանալով նման նորանոր ձևերի և նրանց հարաբերությունների։ Ծնող-զույգի գաղափարն էլ իր հերթին է առնչացված եղել բնության ուժերի հետ նրանց երկնային և երկրային խմբավորումների միջոցով։ Բայց որովհետև իրականության մեջ ծնող-զույգը հարատևել և ի վերջո ավելի է ընդգծվել, իսկ երկինք և երկիր հասկացողությունները անցել են ավելի չորս էլեմենտներին, ուստի ծնող-զույգի մոտիվներում, վերջին հաշվով, իշխող են հանդիսացել ընտանեկան հասկացողությունները։ Այդպիսով, թե՛ հասարակական և թե՛ բնական գործող ուժերը զարդարվեստից դուրս չեն մնացել, ընդհանրապես նրանք, անկախ որոշ գաղափարական ենթարկվելուց, ավելի քան շատ են զարգացել ու տարածվել։ Ընդհանրապես այդ մո-

[1] Հայկական հին մանրանկարչություն, Երևան, 1957, «Առաջաբան»։

ակիների քան նյանակությունը ժառանգվել է. նրանք չարունակել են զարգանալ տրադիցիան կերպով, հարաբարդվելով նաև քրիստոնեական պատկերացումների հետ։

Քարգարվեստի մոտիվների երկրի հասարակական բովանդակություն ունեցած լինելու հարցի բացահայտման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն կենդանական մոտիվները։ Այստեղ գոր ունենք առտնիների և նրա հետ կապվող այլ երևույթների հետ։ Ցուցահատուկ կարեվորություն ունեն հատկապես տարատեսակ ծնողգույգերը։

Այժմ հասկանալի են գառնում նաև զարգարվեստում այնքան մեծ տարածում գտած և բարդ տեսք ստացած այն կենդանապատկերները, որոնք սովորաբար կոչվում են ֆանտաստիկ կամ երևակայական էակների պատկերներ։ Պարզվում է, որ այս բոլորի հիմքը գտնվել անցյալի պատմական իրականությունն ու մոտեցությունն է եղել։ Այդտեղ էլ տոկա են տոհմա-բնականական հարաբերությունների, գուսալ և ֆրատրիալ կազմավորումների հույները՝ գառնալան ձևերով։ Նրանց վրա իրենց կնիքն են գրել նաև կրոնական պատկերացումները, հիմք գառնալով զարգերի նորանոր վերիաձևերի։

Պարզվում է նաև, որ զարգարվեստի այսպես կոչված երկրալափական մոտիվներն էլ կապված են եղել նաև հասարակական հասկացողությունների հետ։ Այդ զարգերն էլ այս առումով տարբեր էպոխաներում տարբեր բովանդակություն են ունեցել։

Այս բոլոր մոտիվները և նրանց հետ կապված հասկացողությունները, սերված լինելով մարդկային կյանքի և պայքարի հարցերից, բնականաբար, սերտորեն առնչվել են կենաց ծառ հասկացողության հետ, ուստի համապատասխան մոտիվներն էլ զարգարվեստում երևան են եկել հատկապես կենաց ծառերի և նրանց ատրիբուտների զուգորդումով։ Այդպիսի զարգամոտիվների լավագույն օրինակներից մեկը՝ զարգարվեստում՝ սկավառքային բարդ ու գեղեցիկ լուսանցազարդերն են։ Ուշադրության արժանի լուսանցազարդ, իր հնամվոր ծագումով, տոհմային մի խոսա ամփոփ հիշատակարան է, որտեղ մերթ պարզ, մերթ էլ խճողուն գաստավորվածությամբ իրենց տեղն են գտավել անցյալի պատմության գարագլխային երևույթների մարմնացումները՝ գանազան ձևերով։

Քննված հարցերի մասին հարուստ վկայություններ կան ոչ միայն զարգարվեստում, այլև դիցարանական առասպելների, ծեսերի, հին պատկերացումների մեջ և այլ աղբյուրներում։ Այս վերջինները մի կողմից օգնում են զարգարվեստի մոտիվների մեկնաբանությանը, իսկ մյուս կողմից՝ իրենք ևս որոշ չափով բացատրություն են ստանում։

Այժմ ավելի քան որոշակի է գառնում զարգարվեստի թե՛ այս և թե՛ նախորդ գլուխներում քննված մոտիվների կապակցությամբ առաջ քաշված տեսակետների միանգամայն անհիմն ու սխալ լինելը։ Այդ մոտիվների մեջ, ինչպես տեսանք, խտացված են այնպիսի հասկացողություններ, որոնք բնորոշ են ոչ թե մի կամ մի քանի, այլ բոլոր ժողովուրդների անցյալի պատմությանը։ Ուստի և պատահական չէ, որ այդպիսի մոտիվներ կան համարյա բոլոր ժողովուրդների մոտ՝ այդ ժողովուրդներին հատուկ ոճական միջոցներով։





ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ

ՄՈՒՏՔ, ԽՈՐԱՆ, ՍՑՈՒՆ, ՄԱՏՈՒՌ, ԳՄԲԵԹ, ԱՇՏԱՐԱԿ, ՏԱՃԱՐ, ԳԱՎԱԶԱՆ, ՏԱՐԱԶ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱՐԴԵՐԸ

Մենք փաստորեն արդեն մասնակի ծանոթություն ունենք նաև այս գըլխում քննվելիք հարցերի մասին, որովհետև նախորդ գլուխներում հաճախ առիթ ունեցանք հանդիպելու նաև դրանց։ Մուտքերը, խորանները, գմբեթները, մատուռները և մյուսները զարդարվեստի ամենաբարդ մոտիվներն են, որոնք սերտորեն կապված են ճարտարապետության հետ։ Ներկա աշխատության մեջ նրանց ուսումնասիրության հարցն արդեն բավականաչափ նախապատրաստված է, ուստի փորձենք խորանալ նրանց էության մեջ։

Մասնագետները, առհասարակ, հատկապես մանրանկարչության բնագավառում, այստեղ խմբված մոտիվները միասին չեն քննում։ Չնայած նրանք հաճախ են խոսում մուտքերի և խորանների մասին՝ որպես ճարտարապետական հասկացողությունների հետ կապված մոտիվների, բայց երբեք չեն փորձում այդ հարցը քննել նաև ճարտարապետական տեսանկյունից։ Մինչդեռ նրանց բուն էությունը հասկանալու միակ ճանապարհը կայանում է հենց դրանում։

Սկսենք մուտքերից։

Մեզ մոտ ընդունված է այս զարդերը կոչել կիսախորաններ, մի բան, որը ճիշտ չէ։ Ինչպես կտեսնենք, խորան հասկացողությունն ընդգրկում է ամբողջական շենքի գաղափարը, իսկ մուտքը՝ շենքի միայն մի մասն է և ոչ երբեք նրա կեսը։ Ավելին, զարդարվեստում մեծ տարածում գտած մուտքերը արտահայտում են ոչ թե ամբողջ մուտքի, այլ միայն նրա վերին մասի գաղափարը։

Ինչպես ճարտարապետության մեջ, այնպես էլ զարդարվեստում մուտքերը լինում են մի քանի տեսակ, այն է. կամարաձև, գմբեթաձև, արխիտրավային, ինչպես նաև այս հիմնական ձևերի կոմբինացումներով։

Թե ինչպես են ծագել մուտքերն ընդհանրապես, դա այլ հարց է։ Մեզ այստեղ հետաքրքրում

է միայն մուտքերի զարդարվեստային կողմը, նրանց միջոցով արտահայտված գաղափարների հարցը։

Թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ճարտարապետության մեջ մինչև հիմա էլ առկա է մուտքերը հատուկ եղանակով զարդարելու պրակտիկան։ Հատկանշական է, որ տարբեր էպոխաներում և տարբեր կառույցների վրա տարբեր զարդամոտիվներ են հանդես գալիս։ Հենց այս տարբերությունն ինքնին ակնարկում է այդ զարդերի գաղափարական հատուկ բովանդակության պարզաբանումը։ Եթե ուշ շրջանում այստեղ էլ այդ զարդերը չեն գիտակցվել և պահպանվել են զուտ ճաշակի ու տրադիցիայի, ապա նույնը չի կարելի ասել հին ժամանակների մասին։

Այժմ փորձենք ընդհանուր գծերով ծանոթանալ մուտքերի վրա տարածված հիմնական զարդամոտիվների և նրանց ու այդ մուտքերի գաղափարական առնչությունների հետ։

Այստեղ էլ ամենաարժեքավոր փաստերը բերվելու են մանրանկարչությունից, որովհետև մանրանկարչության մեջ պահպանված են ավելի հին ծագում ունեցող, բազմապիսի և բազմաբնույթ վկայություններ։

Ձեռագրերում խիստ հազվադեպ են այն մուտքերը, որոնք արտացոլում են առօրյական, անզարդ շենքերի համապատասխան մասերի պատկերը։ Մեզ ծանոթ այդպիսի նկարներից մեկը զետեղված է № 333 ձեռագրի 2ա թերթում (նկ. 779)։



Նկ. 779

Դա զույգ սյուների և մի գերանի պարզ միացումով կառուցված մուտքի նկար է, որի միջին մասին տրված է կանոնավոր կամարի ձև։ Այս պարզ ու անշուք մուտքը, այլ առումներով, անշուշտ, կարող է մեծ արժեք ներկայացնել մասնագետների համար։ Զարդարվեստագիտության համար, սակայն, այդ և նման ուրիշների առանձին նշանակություն չունեն։ Նրանք բնորոշ էլ չեն զարդարվեստին։ Վերջինիս համար հատուկ են զարդարուն մուտքերը։



Նկ. 780

Վերցնենք № 7729 ձեռագրի 495ա թերթում նկարված մուտքը (նկ. 780)։ Այստեղ կա մի շրջանակ, երկու այծ և երկու կենաց ծառ. այդ բոլորը, սակայն, օրգանապես կապված են միմյանց հետ և իրենցից ներկայացնում են մի անբաժանելի ամբողջություն։ Մուտքի վերին աջ և ձախ անկյուններում կան մեկական կենաց ծառեր. նրանցից յուրաքանչյուրն իր հիմքում ունեցող հատիկից արձակել է մի զույգ արմատ, որոնք, ուղիղ անկյուն կազմելով, միանում են միմյանց հետ և ստեղծում՝ ամբողջ շրջանակը։ Ըստ որում, վերջինիս ստորին մասի գմբեթաձև բարձունքը, իր հերթին, վեր է աճում մի կենաց ծառի, որի զույգ ճյուղերը ձգվում են դեպի մուտքի շրջանակավոր ճակատի ներս և այնտեղ, տրոհվելով երկուական ճյուղերի, պտղաբերում են։ Պտուղներից երկուսը բուսական ձև ունեն, իսկ երկուսը՝ կենդանական։ Այս վերջինները մի-մի առյուծագլուխներ են, որոնց երկար



Նկ. 781

նշույլներ, միահյուսվելով, քարերառում են վեր և դուրս գալիս շրջանակից։ Մուտքի առաջին մասի գմբեթաձև փոքրատիպ դիմերը, իրենց հերթին, արտահայտում են այս վերջին կենաց ծառի սրմատների գաղափարը և միացած են մուտքի վերին անկյուններում գտնվող փոքրիկ կենաց ծառերի սրմատների հետ։

Մի պահ մոռանանք այս մուտքի կապը հարատարակոսական կառույցի հետ և նայենք նրա վրա որպես զարդամոտիվի։ Պարզ է, որ այստեղ գործ ունենք ծնող-զույգի, կենաց ծառի և պտղաբերության գաղափարների հետ։ Քանի որ ծնող-զույգն էլ կենդանակերպ է, ուստի այստեղ առկա է առասպելի մեծարումը, որը խոսում է ատմոսֆերական կորցերի և ֆրատրիալ կազմակերպումների մասին։ Այժմ վերհիշենք նաև այդ ամբողջի կապը հարատարակոսական կառույցի աշխարհի կարևոր մասի հետ, ինչպիսին է շենքը, մուտքը։ Այդ շենքը արդեն ոչ թե մի սովորական բնակարանի իմաստ է արտահայտել՝ իր տնտեսական առումով, այլ ամբողջ ատեմի։

Վերցնենք մի ուրիշ օրինակ՝ նույն ձեռագրի 590ա թերթից (նկ. 781)։ Այս մուտքի շրջանակը բազկացած է քուսական պաղպտիր էլուզերից, որոնք, միահյուսվելով, կազմել են թե՛ ոչ մուտքի համատի նեղսում և թե՛ նրա վերին ծայրերին գտնվող զարդերը։ Դա կենաց ծառն է՝ իր սիմետրիկ կոմպոզիցիայով։ Այդ ծառն էլ, սակայն, կապված է կենդանակերպ ծնող-զույգի հետ, որը նրման է գալիս հենց մուտքի համատի կենտրոնում՝ խաչավորման պրոցեսում։ Այստեղ էլ առկա են առասպելի, ատմոսֆերային հատարակության և ֆրատրիալ կազմակերպման գաղափարական մեծությունները։

Ծնող-զույգի գաղափարը միշտ չէ, որ ցույց է տրվում մուտքի կենտրոնում, շրջանակի նեղսում, այլ, սովորաբար, պատկերվում է նաև մուտքի վերին մասում։ Ալդպիսինքներից է, օրինակ, նույն՝ № 7729 ձեռագրի 377ա թերթի մուտքը, որն ընդօրինակում ենք Հատվածաբար (նկ. 782)։ Այստեղ էլ ամբողջ մուտքի էությունը ցույց է տալիս հենց այդ զույգի միասնությունը, այսինքն՝ արտահայտում է ատեմի և նրա բազկացուցիչ մասերի գաղափարը։

Բերենք ևս մի վկայություն, այս անգամ ընդօրինակելով № 5537 ձեռագրի 90ա թերթից (նկ. 783)։ Մուտքն այստեղ որոշակի կերպով տարհված է երկու կեսի. այդ կեսերը, սակայն, որոնանգիս կապված են միմյանց հետ և հենց այդ կապի արդյունքն է նրանց կենտրոնում գտնվող



Նկ. 782

կենաց ծառը։ Նշված կեսերից յուրաքանչյուրի վրա կանգնած է մի սիրամարգ. նրանք հանդիսանում են ատեմային ընտանիքի երկու կեսերի (ֆրատրիաների) առաջնորդ ներկայացուցիչները, որոնց միասնությունից էլ հենց սերված է նրանց միջև բարձրացած ատեմաձառը։

Այսպիսով, տեսնում ենք, որ գաղափարական հարուստ բովանդակություն կա ոչ միայն մուտքերի վրա պատկերված կենդանական ու բուսական



¼. 783



¼. 784



¼. 785



Նկ. 786

մոտիվների մեջ, ոչն այն չղյուսակներում կամ չղյուսանկարներում, որոնք իրենց մեջ են ընդգրկում ամբողջ մուտքը։ Ուստի, նկն նման դեպքերում բացակայեն բուսական և կենդանական մոտիվները, ապա չղյուսանկարչին գծերի սիմետրիկ կոմպոզիցիան նորից կարող է ապահովել տարածա-ընտանեկան հարաբերություններ հետ կապված որոշ հատկացություններ։ Այսանկից էլ պարզ է, որ զարդարվեստի երկրաչափական ճոչված մոտիվների մեջ այնքան շատ տարածված գծերը և նրանց կանոնավոր միահյուսումները նույնպես ունեցել են գաղափարական բովանդակություն։

Մանրանկարչության, քանդակագործության մեջ և այլ բնագավառներում մուտքային զարդամոտիվների այն անմիջական կապը, որ տեսանք վերևում, հաճախ մատռեր խախտված է, հաճախ էլ խիստ ազատվածված։ Բայց և այնպես մեր ձեռք բերած այս ծանոթություններն չեզոքիվ հնչատությամբ նկատվում են նրանց փոխադարձ կապերը։

№ 3033 ձեռագրի 198ա թերթում պատկերված մուտքի տեսարանում քաղաքային ծեզ-զույգը կանգնած է մուտքի վերին մասում և առանձին կապ չունի այդ մուտքի հետ (նկ. 784)։ Թվում է թե, դա մի բնական տեսարանի վերարտադրություն է։ Մանրն մեջ արդեն քաղ հայտնի է գաղափարական այն կուռ ազերը, որ կա այդ թվությունների և մեզանում բոլոր զարդերի միջև։ Նույնը կարելի է ասել նաև № 378 ձեռագրի 7բ թերթի համապատասխան նկարի մասին (նկ. 785), որի նմանները այնքան շատ են զարդարվեստում։

Ինչպես արդեն տեսանք նախորդ դյուսնկարում, տարմային կենաց ծառերի վրա միանգամից երեսան են գալիս ավելի բարդ մոտիվներ, զուտ քանակով ավելի բարդ հատկացություններ։ Նույն երևույթը, բնականաբար, իր զրոշմն է դրել նաև մուտքերի պատկերների վրա։ Այսպես, օրինակ, № 7729 ձեռագրի 450բ թերթում գտնվող մուտքի վերևի մասում գտնվում է թռչնակերպ ծեզ-զույգը, իսկ մուտքի ներսում, երկմյուղ կենաց ծառի միահյուսումից սերվել են ինչպես բուսական, նույնպես և կենդանական-առյուծագլուխ պատկերներ (նկ. 786)։

Քանի որ այս մոտիվների հարցն առանձին-առանձին, հիմնականում, արդեն քննված է, ուստի կրկնություններ չենք կատարում։

№ 1278 ձեռագրի 2ա թերթում հանդիպում ենք տարմային և ֆլատրիավոր հատկացություններ հետ ավելի սերտ կապեր ցուցաբերող մուտքապատկերի (նկ. 787)։

Տարմի երկու ֆլատրիաններով պատկերված են



Նկ. 787

վիշապանման կամ առյուծանման երկու գազանների միջոցով, որոնց պոչերը, ճյուղավորվելով, միահյուսվել են միմյանց հետ և առաջացրել ամբողջ տեսարանով մեկ սփռված գալարահյուս շղթաների, եռանկյունիների և այլ զարդերի բարդ կոմբինացիա։ Այդ բոլորի կենտրոնից նայում է տոհմի մարդակերպ նախնու կամ նրա սերնդի գաղափարապատկերը։ Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, ճարտարապետական կառույցի մուտքի ճակատը, իր զարդերի միջոցով, դրսևորում է տոհմի ներքին կառուցվածքի պատկերը։

Մուտքազարդերի մեջ էլ վերին աստիճանի մեծ տարածում ունեն մարդագլուխ և կենդանամարմին էակների պատկերները։ Այդպիսիներից հիշենք մի քանի օրինակ։

№ 5651 ձեռագրի 52ա թերթում գտնվող մուտքազարդի աջ և ձախ կողմերում կանգնած են գազանամարմին և մարդագլուխ երկու էակներ (նկ. 789)։ Նրանց միջև, զավակի կամ պտղաբերության գաղափարապատկերի փոխարեն, նկարված է վեցանկյան կամ զույգ եռանկյունիների մոտիվը։ Ինչպես յուրաքանչյուր կենդանին արտա-



Նկ. 788

№ 7452 ձեռագրի 2ա թերթում գտնվող համապատասխան զարդի միջոցով էլ դրսևորված են նման գաղափարներ (նկ. 788)։ Մուտքի վերին մասում կանգնած են երկու թռչուններ, որոնց միջև զետեղված է տոհմի պտղաբերության գաղափարը՝ մարդկային պատկերների և բուսական զարդերի միջոցով։

հայտում է տոհմի կես միավորի կամ ֆրատրիայի գաղափարը, այնպես էլ՝ այդ եռանկյունիներից յուրաքանչյուրը։ Այդ միահյուսված եռանկյունիներից դեպի ներքև, մուտքի խաչաձև փորվածքի ի վար, կախված է մի կանթեղ, որն իր մեջ ամփոփացնում է օջախի գաղափարը։ Մուտքի վերևում կանգնած է թռչունների ծնող-զույգը՝ պտղաբեր

կենաց ծառի չուրջը։ Այս նկարում վերին ասոր-Հանի ուշագրավ է գազանամարմին էակների գեմքերի նրբությունն ու մարդկային գեղեցկությունը արտահայտությունը։ Նրանք երիտասարդներ են և պատկված են ամուսնական քաղցրով։ Տոհմի տրտղող ուժերի, երիտասարդության գազափարների ընդհանրացման գաղարիկ մի տեսարան է դա։

Ինչպես տեսանք, երիտասարդական համարված մոտիվների միջոցով էլ արտահայտված են եղել հասարակական հանգամանքներ։ Այդպիսին էր նաև վերևում քննված մուսքի կենտրոնում գտնվող վիշապակրտների կամ զույգ առանցյունների միասնությունը։ Ուստի զարմանալի չէ, որ այդ կենտրոնական մասում, ծնող-զույգերի միջև հաճախ էլ պատկերվում են պարզ կամ բարդ հյուսածոներով առանցված հատիկապատկերներ, տարբեր ուշադարձ փոչված մոտիվներ, խաչանման գարդեր, ծաղիկներ և այլն։

Վերցնենք № 4858 ձեռագրի 151ա թերթի մուսքապատկերը (նկ. 730)։ Նրա գմբեթաձև փորվածքի ող և ծոմ կողմերում կանգնած են քաչնամարմին և մարդագլուխ թռչուն էակներ։ Այդ ծնող-զույգի միջև, կենտրոնական մասում նկարված է մի հյուսածո հատիկապատկեր, որը ճյուղեր է արձակել և գալարահյուս զարդերով իրար միացրել թե՛ մուսքի երկու կեսերը և թե՛ այդ կեսերում գտնվող էակներին։ Հետաքրքրական է նաև այդ ծնող-զույգի դիրատարածը, որն, անշուշտ, կապ է ունեցել առարյա կենցաղի հետ։

Առավել ծեծարժեք մուսքապատկերի ենք հանդիպում № 4878 ձեռագրի 3ա թերթում (նկ. 731)։ Գաղարիկության սիմվոլն այստեղ իրենից ներկայացնում է ծաղիկա-հատիկային մի բարդ և հյուսածո զարդ։ Նրանից գեպի ող ու ծոմ ոսկված են բուսական պաղարիկ և գալարուն ճյուղերը, որոնց գաղարիկ գեմի վրա պատկերված է մարդագլուխ և քաչնամարմին ծնող-զույգը։

Մանրակրկիտ զննությունն այստեղ, ընդհանրացնս ասվածի հետ միասին, հաստատում է նաև մի այլ հրեւույթ։ Ծնող-զույգերից մեկը (ասլանդուխտը) ունի այնպիսի պոչ, որը ճյուղավորվելով ծածկել է ամբողջ մուսքի կեսը։ Միւս էակն այդպիսի պոչ չունի, նրա պոչից ոչ մի ճյուղ չի ածել։ Այս էակի չորքը տարածված գալարահյուս և պաղարիկ ճյուղերը կապված են նրա կրծքի և կրծքազարդի հետ։ Այս տարբերությունը պատահական չէ. այստեղ արտահայտված է մեր կարծիքով, հայրիշխանության գաղափարը։ Ըստ որում, ձախակողմյան էակն արտահայտում է մոր իմաստը, որը գավակների հետ



Նկ. 730

կապված է յոկ որպես սնունդով՝ իր կրծքի միջոցով։ Աջ կողմում պատկերված էակը պրանորում է հայրության գաղափարը, որին էլ հենց վերագրված են բոլոր պաղպաքերության սիմվոլները, նրա պոչի միջոցով։ Այս կարծիքն ավելի համոզիչ է գառնում նաև նրանով, որ աջակողմյան էակի ոտքերի և պոչի միջև ընկած տարածության վրա ցույց է տրված նրա արական ցուցիչը։ Ձախակողմյան էակը, բնականաբար, զուրկ է այդպիսի նշանից։ Վերհիշենք հին քանդակներում պատկերված մայրության և հայրության մոտիվները, որտեղ առաջինները հրեան են գալիս իրենց կանացիական տեսքով, իսկ երկրորդները՝ արամարդկային։ Պատահական չէ այստեղ որդանապես կապված են հոր հետ, ուստի և ժառանգությունը պատկանում է հորը։

Այս տեսարանում մեծ արժեք ունեն նաև ծնող-զույգի գլխաշորերը և կրծքազարդերը, որոնք կապված են միմյանց հետ և հիշեցնում են չինական Բուդդա աստծու տարազի համապատասխան մասերը (նկ. 630)։

Ինչպես տեսանք, մուսքապարզերում միշտ նույն ժամանակների հետքերը չէ, որ պիտի որոնել։ Մեզ մենք այդ մոտիվները քննելու լինենք հնագույն ժամանակների գեմի վրա, ապա այնտեղ կտեսնենք մայրիշխանության պատկերը, իսկ մեզ ավելի ուշ շրջանի առումով պիտենք նրանց, ապա այնտեղ հրեան կգան հայրիշխանության շրջանի տարբեր էտապները։ Ասացի, իհարկե, չի վերաբե-



Ill. 790



Ill. 791



Նկ. 792

բում այն անատրանների, որոնց որոշակի է ժամանակի կնիքը (համն անատրանները խիստ տախտակով են), այլ' զորքերվածում ընդհանրության կազմող այն մուտքապատճենների, որոնց ծնող-զույգերի ներկայացուցիչները պատկերված են միանման։ Այդպիսիների մեջ ընդհանրացված է բնատների զարդարանքը իր պատմական առումով, ուր կարելի է անանց անցում ձևնամուսնական բնատների իմաստը՝ որոշ պայմանականությամբ։ Ուշադրության չէ, որ ինչպես յուրաքանչյուրում, այնպես էլ այստեղ, երեսն են գալիս նաև այնպիսի ծնող-զույգեր, ուր տակավ է ձևնամուսնական բնատները։ Այդպիսիներից մեկն է, որ 1375 թվականին Գյումրում նկարված մի ձեռագրի հետևյալ մուտքապատճենը (նկ. 792) [1]։ Ալստեղ մուտքի վերևում ցույց է տրված երկպատճենների մի զույգ։ Այս հարսն ու փեսան այլևս կապ չունեն հետագույն ժամանակների հետ։ Դա իր ժամանակի բնատնեական հարաբերությունների արտահայտությունն է, ուստի մուտքապատճենն էլ այդ ժամանակվա տան իմաստն ունի։ Սակայն չի կարելի նման անատրաններն համարել հարսանեկան կնիքներ գնդքերի և կնիքներ ամուսնությունների նվիրված գործեր։ Ինչպես յուրաքանչյուր գնդքերում, այնպես էլ այստեղ գործ ունենք նրանց և հանգամանքների բնութագրման հետ։ Իր ամրողջության մեջ յուրաքանչյուր մուտք արտահայտում է բնատնեքի գաղափարը։

Այսպիսով, տեսնում ենք, որ, բովանդակության անատնեական, մուտքերն ու տոհմանուն-յուրանշագործերը կոչան տարբերություններ չունեն։ Մի գնդքում տոհմային կնիքը նման հարմարեցված է հարսատրապետական շենքի հանատին, իսկ մյուս գնդքում' այդ շենքի մոտ կանգնեցված ավանդական քամ տոհմական սյուներն։

Հետաքրքրական է, որ մուտքապատճենների մեջ, գեռ շատ հին ժամանակներից սկսած, պահի տեղ պրավների նման տոհմային նախնիների հարգարժան գանազան տապավառությունները, բնդհուպ մինչև Մաթոսը։ Եվ, իրոք, այս առումով, մեր միջնադարյան ձեռագրերում հանդիպում ենք վերին աստիճանի բազմազան վերաբերությունների։

Ահա մի օրինակ № 4820 ձեռագրի 160ա թերթից (նկ. 793)։ Այս մուտքապատճենի աջ և ձախ կողմերում կանգնած են մի-մի տիրեն, որոնց ծագումն, ինչպես տեսանք, թաղված է տոհմային և ֆրատրիալ հասատատությունների բնագրում։ Այդ ծնող-զույգի միջև գտնվող տավորական պատկերությունն սիմվոլն այս նկարում փոխարինված է Մարիամի և Հիսուսի նկարներով, որն արդեն խոսում է քրիստոնեական պատկերացումների մասին։

Որպեսզի կոնկրետ կերպով ցույց տանք, թե ո՞ւմ են փոխարինել քրիստոնեական տապավառությունն ու տապավառողին, բերթրինակենք № 5505 ձեռագրի 176ա թերթի մուտքապատճենը (նկ. 794)։ Այստեղ էլ տակա են ծնող-զույգ տիրեները, տակաց, նրանց միջև, Հաստիկային շրջագծի մեջ, պատկերված է մի եղնիկ։ Տոտեմիզմի և հնքնատական տապավառությունների արտահայտությունն են այս ամրողջը, որ այնքան վառ գույներով չարտահայտվել են տարածվել քրիստոնեական միջնադարում, համաձայն ներքարկվելով համապատասխան վերամշակման։ Այդ մշակումներն էլ, ինչպես ցույց են տալիս փաստերը, շատ չնչին թիվ են կազմում։ Մեր միջնադարյան մանրանկարիչները սիրով պահպանել են ժողովրդի ստեղծած գարավոր մոտիվները' առանց ազգակից մշակույթների և խնդրյուրումների։ Նրանք, անշուշտ, ոգևված են հատկապես ճարտարապետությունից, ուր մինչև ուշ ժամանակներն էլ գործածում էին այդ հին մոտիվները։

Թե որքան մեծ է եղել մանրանկարչական և հարատրապետական մուտքերի առնչությունը' պա կարելի է ցույց տալ պահպանված համապատասխան վիճակներով համեմատելով։

Այս հարցի մանրակրկիտ քննությունը նեղ աշխատություն սահմաններում անհնար է կատարել, ուստի, որպես օրինակ հիշենք միայն մի քանի նմուշ։

Վերցնենք № 5147 ձեռագրի 11ա թերթի մուտքապատճենը (նկ. 795)։ Այս մուտքի փորվածքի ամրողջ մեջ հիշեցնում է գմբեթավոր կառույց, միաժամանակ արտահայտելով նաև կենաց ծառի ու պտղաբերության գաղափարը։ Վերջին մոմենտը շեշտված է հատկապես փորվածքի վերին մասերին



Նկ. 795

պատկերված վարսանգա-պալաչին ոճավորմի միջոցով։ Նման փորվածքների և ճարտարապետական խորշերի (նիշա) առնչությունը ցույց է տրված վերևում (Նկ. Նկ. 170, 171, 172, 173)։ Բավական է մտովին անջատել այս անսարանից փորվածքի ձևը՝ վարսանգա-պալաչին ոճավորով, որպեսզի առաջանա մի այնպիսի գմբեթի կամ մատուռի վերին մասի պատկեր, որպիսիներից շատերն արդեն տեսել ենք և շատերն էլ կտեսնենք առաջը։

Մատյանի և ճարտարապետական կառույցների առնչությունները ավելի ցայտուն են Հետևյալ օրինակներում։

№ 5556 ձեռագրի 12ա թերթում գունավոր մատքապատկերի աջ և ձախ կողմերում պատկերված են մեկական սիրեն՝ յուրահատուկ դիրքով (Նկ. 796)։ Նրանք կարծես այն էակներն են, որ հսկում են ավելալ մատյանի վրա։ Ճարտարապետության մեջ այս մոտիվին համապատասխանում են այն մատ-



Նկ. 794



Նկ. 795

քերը, որոնց աջ և ձախ կողմերին կանգնած են նման էակների արձաններ։ Այդպիսիներից է, օրինակ, Կիլիկիայի Թասվլու կամ Թասվլուպոլիս քաղաքի մի հին տաճարի մուտքը՝ իր արձաններով (նկ. 797) [1]։

Հետաքրքրական է նաև այս տաճարամուտքի աջ կողմում երևացող երկգլխանի թռչունի քանդակը, որը, ինչպես տեսանք, կրոնական տարբեր դավանալուց առաջ, արտահայտել է ծնող-զույգի իմաստը՝ պատմա-հասարակական առումով։

[1] Հ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 287։



Ill. 196



Ill. 197



Նկ. 798

Ռումինական մանրանկարչությունից հիշենք մի օրինակ, որը նույնպես կապ ունի այդպիսի մոտիվների հետ (Նկ. 798)[1]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն գործ ունենք ուշ ժամանակների հասկացողության հետ·

Համանման ծագում ունի նաև բուլղարական մանրանկարչությունից մեզ բերվող հետևյալ մուտքապատկերը (Նկ. 799)[1]:

Այս բոլորից հետո կարելի է ասել, որ, իրոք, մանրանկարչության մեջ այնքան մեծ տարածում



Նկ. 799

Հին մոտիվներն այստեղ փոխարինված են մարդկային ծնող-զույգով:

գտած մուտքապատկերները ճարտարապետական ծագում ունեն: Դրանց վրա կատարված զարդերը ցույց են տալիս, որ այստեղ էլ առկա են ինչպես տոհմատիրական կարգերի, այնպես էլ ֆրատրիայ

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. XL, рис 7.

[1] Там же, таб. IX, рис. 7.



կազմավորումների գաղափարական մեկնություններ։ Իրենց հերթին, այդ գարդերը օգնում են գաղափար կազմելու նաև այն շենքերի էության մասին, որոնց հախճանների վրա նրանք են եղել դրված, ունենալով գաղափարական հատուկ նշանակություններ։ Նրանք իրենք մեզ ամփոփել են բնուածների, գիրքաստանի, տոհմի, քնդի, ինչպես նաև ժողովրդի միասնության գաղափարը։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ ձեռագրային կուլտուրան, որպես ամենահամապարփակ և ամենախրելի գրչախազարդ, օգտագործել է այդ մոտիվները՝ յուրահատուկ մշակումներով և կոմպոզիցիաներով։



Նկ. 800

Ուշագրավ ձեռագիր, որի այն նկարազարդված է քիչուց շատ հատ-րան կիրառով, որի ոչ բոլոր առանձին նյութերի սկզբներում, գոնե առաջինի սկզբում ունենում է մուտքագիր։ Միչին դարձարվածության գեպքում, նոր նյութի սկզբից վերև, պատկերվում է մի գաղտրիկ մուտք, որտեղից դեպի ալ, ամբողջ էջի լուսանցքով մեկ, նկարվում է մի տոհմածառ-լուսանցազարդ։ Մուտքի տակ գրվում է նյութի խորագիրը և ապա բուն նյութը։ Սովորաբար նյութի սկզբի տառերը, առաջինը, հաճախ էլ ողջ էջը գրվում է զարդատառերով։ Ահա մի սովորական մուտքապատկեր՝ իր ամանգակ պարագաներով՝ ընդօրինակված № 7558 ձեռագրի 132ա թերթից (նկ. 800)։

Այս ճոխ ու հարուստ մուտքերի փոխարեն հաճախ էլ հանդիպում ենք քառակուսի, քառանկյունի, կամ ուղղակի ժապավենաձև զարդերի, որոնք էլ երբեմն ընդունում են ուղիղ, բայց զարդարուն գծի տեսք։

Բնականաբար հարց է առաջանում. ինչ մուտքերն իրենց զարդերով այդքան սերտորեն կապված են տոհմի, ընտանիքի, պետության և համապատասխան կրոնական պատկերացումների հետ, ապա նրանք պիտի վերնում քննված ձեռքով, բայց ազգային յուրահատուկ ոճով, երևան գային նաև ուրիշ ժողովուրդների մոտ։ Եվ դա՝ ամենից առաջ, որովհետև այն հասկացողությունները, որոնց ընկած են մուտք կոչված զարդերի հիմքում, բնորոշ են բոլոր ժողովուրդներին և նրանց նախորդներին՝ սկսած բնականիքի ամենանախնական ձևերից և վերջացրած մինամուսնական ընտանիքով։ Եվ, իրոք, փաստերն այսօրվա էլ ակնհայտ են հարուստ ու բազմազանության են, որ առանձին բացատրությունների կարիք չի զգացվում։

Այս տեսակետից վերին աստիճանի հետաքրքիր և հավակցրտա աշխատանք է կատարել ռուս նշանավոր գիտնական Վ. Վ. Ստասովը։ Խոսքը նորից նրա հրատարակած «Славянский и восточные орнамент...» աշխատի մասին է, ուր հանգամանորեն է հատկացված մուտքապատկերներին՝ ընդօրինակված տարբեր ժողովուրդների հին ու միջնադարյան ձեռագրերից։ Ընթերցողն ինքն էլ կարող է, թե՛ այդ ժողովածուի և թե՛ տարբեր ժողովուրդների զարդարվեստների նվիրված ուրիշ ժողովածուների օգնությամբ, հետևել այստեղ առաջ քաշված հարցերին։ Այնուամենայնիվ, հարկ ենք համարում, անմիջական համեմատության նպատակով, կատարել որոշ մեկնաբանություններ։ Ընդհանրապես նկատելի է, որ սլավոնական զարդարվեստում պահպանված համապատասխան նմուշները շատ ավելի խոսուն են, ուստի հիշենք ռուսական, բուլղարական, սերբական մանրանկարչությունից մի քանի օրինակ։

Հյուսիսային-ռուսական միջնադարյան մանրանկարչության մուտքապատկերներից մենք (XIV—XV դդ.) իրենից ներկայացնում է մի քա-



¼. 803



¼. 803



Նկ. 804

ոսկուի գարգ՝ վարսանգա-պաղպաչի և համապատասխան այլ մոտիվների հարաբարդումներով (նկ. 801) [1]: Նեքսում պատկերված են երկու քրոջուհիներ՝ պարանոցներով փարված միմյանց: Ամբողջ մուտքի պատկերն, ըստ էության, արտահայտում է այդ ժող-ղուլդի միասնությունը:

Առավել բարդ տեսք ունի Թյաղանի XVI գարի ձեռագրերից մեկի մուտքը (նկ. 802) [2]: Այս մուտքի հիմնական ուժերը երկու զույգ էակներ են, որ մի ժող-ղուլդը մարդպետին և քաշնամարմին է, իսկ մյուսը քաշնագլուխ կամ գազանագլուխ էակ, որի մարմինը վիշ է ածված ամանման գալարների: Այդ երկու զույգ ուժերի սիմետրիկ և համաչափ միահյուսումների ամբողջությունն է, որ պայմանավորել է այդ մուտքի գոյությունն ու իմաստը:

Ի լուսի բարդ տեսք ունեցող մուտքապատկերներից հիշենք XIV դարում նովգորոդում ընդօրինակված ոսկեայան մի ձեռագրի հետևյալ մուտքապատկերը (նկ. 803) [3]: Ցմահներով մանրամասնությունների մեջ, որոնք էլ ամենևին ևս էլ անկարևոր չեն վերջին տարբերակված են վիհրևում, նկատենք, որ այս մուտքն ամբողջապես մի տոհմային պատկեր է՝ իր ֆրատրիաների և ենթաֆրատրիաների բարդ ու արհեստական հարաբարդություններով:

Ծառայան ֆոլկլորային հին հուշարձանների մեջ հայտնի է մի երգախումբ, որը պատկանում է XII դարին (նկ. 804) [1]: Այս հուշարձանն էլ կարևոր է գոնե այն առարկաների թվին, որոնց միջոցով պատկերված են եղել առհասարակ սիմվոլները՝ իրենց ենթակա սիմետրիկ կառուցվածքով: Հետաքրքրական, անշուշտ, այսպիսի ձևերն արդեն առարկված պիտի լինեին արտիքքային ուժով:

Կարևոր նշանակություն ունեն ռուսական մանրանկարչության նաև այն մուտքապատկերները, որոնք զուրկ են արդեն բնականից հետագա ձևի պայքարը՝ նախորդ ձևի դեմ: Այդպիսիներից են, օրինակ, Նովգորոդի ձեռագրերից ընդօրինակված նմուշները: Այդպես նման մուտքերի մեջ երևում են մեկական ուղամարդիկ, որոնք ամբողջ ուժով սեղմում են իրենցից աջ ու ձախ ձգված երկրների

[1] В. В. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, табл. LXXV, рис. 28.

[2] Тай же, табл. LXXXV, рис. 1.

[3] Там же, табл. LXVI, рис. 1.

[1] По следам древних культур, Древняя Русь, Москва, 1953, между стр. 112—113. „Бронзовая арка XII века...".



Lt. 805



Lt. 806



Նկ. 807

ֆրատրիանների կենդանակերպ նախնիների կոչերը (նկ. 805)[1]: Անուշտ, այստեղ գործ ունենք տոհմատիրական կարգերի քայքայման և հայրիշխանության, մասնավոր սեփականության ու պետության գարգացման հպնելակի արձագանքների հետ:

Օրինակները աստանդան մանրանկարչությունից՝ համարենք բավարար:

Նման նկարներ շատ կան նաև ավրոպական մանրանկարչության մեջ: Այդպիսիներից է, օրինակ, XIII—XIV գարերում ընդօրինակված մի ձեռագրի մուտքապատկերը (նկ. 806)[2]:

Նիստ մեծարժեք և հազվագյուտ նմուշներից մեկը պիտի համարել մոլդովո-վլախական մանրանկարչության նմուշներից մեկը (նկ. 807)[3]:

Այս մուտքապատկերում ցույց է տրված մի ամբողջ տոհմի կերպարանքը՝ իր երկու հիմնական ֆրատրիաներով, որոնցից մեկը գտնվում է մուտքի մի կեսում, իսկ մյուսը՝ մյուս կեսում: Յուրաքանչյուր ֆրատրիայի ներսում նկարված են չորսական ժող-գույգեր, որոնք և գրանորում են տոհմային է՛լ ավելի փոքր միավորների գագաթները և նրանց փոխհարաբերությունները: Ընդհանուր գծերով այս բարդ ու նրանի տեսարանն արդեն հասկանալի է:

Մեզ մի քիչ ավելի տեսք են տվեցել հին գարգարան մուտքերը հարտարապետության մեջ, որոնց մնացուկների այնքան առատորեն հրնան են գալիս մանրանկարչության բնագավառում:

Մուտքապատկերների նկարա ուսումնասիրությունը հնարավորություն է տեղիքում հասկանալու ոչ միայն խորանների, այլև հարտարապետական հագում ունեցող այն մյուս մոտիվների հնությունը, որոնց նվիրված է ներկա գլուխը:

Վերցնենք խորաններըց: Մենք բնչը խորան բա-

[1] В. В. Стасов. Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени. С. Петербург, 1887, таб. LXIX, рис. 1.

[2] Там же, таб. XIX, рис. 1.

[3] Там же, таб. XXXVII, рис. 1.

ոչ, քան Հայկազյան քառատրանի, նշանակում է. ուխտան. տաղաստար. կազմած ի կատուց կամ ի մորքոյ՝ կատուցնալ ի բացի՝ որպէս խուզ կամ տուն շարժական. որոյ մնծն և լուսն լինի գմբեթատոր... Իրք տանէաց տաստուսոյ շարժական... Նկնծոցի, և տանէաց... Սնդանն կամ քնին ի մէջ տանէաց... Դիւան, գմբեթատոր տանան խորհրդոց. գահիճ արքունի... Խորշք տաճարական ազիւտակաց...»։

Մատենագիտները այս հանգամանքի վրա հաճախ են ուշադրություն գործել, քայլ և ալիսպես խորանների ուսումնասիրության գործը մեացել է խիստ անբավարար վիճակում, տեղի տալով մի շարք ոչ ճիշտ եզրակացությունների։

Մենք արդեն տեղի ենք ունեցել նշելու, որ առանձին-առանձին հանդիպող և վերևում քննված բոլոր մոտիվները խորաններում և մուտքերում երևան են գալիս մեասին և տարբեր հարաբերություններով։ Թանի որ այդ մոտիվները արդեն իրենց մանրամասներով մեզ համար հասկանալի են, ուստի առանձնապես դժվար չէ նաև նրանց այդ յուրահատուկ խառնուրդների էության հասկանալը։

Խորաններն էլ իրենց ձևերով տարբեր են լինում։

Նրանց բոլորի համար էլ բնորոշ են սյուները, որոնց քիվը գործակալ կապուն չէ։

Սյուները մեացած են լինում միաձույց հետ քառանկյուն կամ կամարաձև վերնամասերով։ Այս վերջիններս ևս, իրենց զարդամոտիվներով, մուտքերի նման, գործարվեստի ամենահետաքրքիր կողմերից մեկն են։

Չափերի կտրվել, թե այդ կողմերը քրիստոնեական հարատարապետության ժեռնգն են։ Նրանք ևս, իրենց ծագմամբ, կապված են հնագույն ժամանակների հետ։

Գր. Տաթևացին, խոսելով ընդլիական խորանի մասին, որը պատրաստվում է, իբր թե, ատտու կամքով և Մովսեսի նախանձախնդրությամբ, գրում է. «Ամենը էին զառաքաւս կողն գործարել, վասնոր առաւել քան զնուա գործարէ զնորանն [1]։ Այս վկայությունը մի կողմից խորանային կուլտուրան կապում է հնթանոսական արվեստների հետ, իսկ մյուս կողմից՝ ցույց է տալիս առաջինների գործածման արվեստի ազգությունը վերջիններիս վրա։ Նրկու առումով էլ այս վկայությունը մեզ համար կարևոր է։

Իրենց գործարվածությամբ խորաններն էլ, մուտքերի նման, լինում են խիստ բազմազան, մեկի պատրանքով մեանգամայն պարզագույն գործեր, մեկի էլ խիստ բարդ և հարուստ գործերի համադրեալներ։ Ալստեղ էլ հաճախ բոլորովին բացակայում են կենդանական մոտիվները՝ իրենց տեղը զիջելով բուսական և երկրաչափական մոտիվներին։ Այս վերջիններն էլ, անկախ իրենց արտաքնապես պարզ քվացող տեսքից, կապված են ամենարարդ հասկացողություններ հետ։ Վերցնենք մի այդպիսի խորան՝ ընդգրկելով № 8205 ձեռագրում պահպանված մագաղաթյա պահպանակից, որը կարող է պատկանել IX—X դարերին (նկ. 808)։ Այդ խորանը մեզ հրատարակում են մատենադի փոքրացումով և նրա գույների պահպանմամբ։ Դա մի նուագյուն խորան է, որի վերին մասում, ամենաալյքի ընկնող տեսքով, ցույց է տրված մի մեծ շրջագիծ՝ լցված փոքրիկ շրջագծերով և խաչազարդերով։

Այդ խոշոր շրջագիծն ունի չորս գալարաթել, որոնց օգնությամբ նա միանում է իրեն ընդգրկող քառանկյան շրջանակի չորս կողմերի հետ։ Մենք արդեն տեսնում ենք նման զարդերի հատիկա-էլիմինացիոն էության բոլոր մանրամասնությունները։ Արդեն հասկանալի են նաև քե՛ նրա ներսում պատկերված փոքրիկ շրջագծերն ու խաչազարդերը (հատիկա-էլիմինացիոն զարդեր) և քե՛ նրան ընդգրկող շրջագծից դուրս գտնվող ծալկապատկերները։ Բացի դրանից, մենք արդեն տեսնում ենք նաև այդպիսի մոտիվների միջոցով գրանորված հատարակական որոշ հասկացողությունների հետ։ Այս տեսարանում իշխող չորսի գաղափարը ժամանակին սերտորեն առնչված է եղել նաև արեմի չորս տարիների իմաստի հետ։ Այլ կերպ ասած, այստեղ խառնված են բնության և հատարակության այն խոշոր ուժերի գաղափարները, որոնցով ապրել ու գործել է տոհմը։

Քրիստոնեությունը, նոր իմաստ հաղորդելով քառակի և քառալյակ գործերին, հատիկապատկերներին և մյուսներին, այդ բոլորն ալ աշխատել է տարածել ըստ իր գաղափարախոսության։ Հատիկ՝ ինքը Քրիստոսն է, աստված են ավետարանիչները, և նրան նեղեալացնում քամմուզների, ալիքների և հատիկային մյուս տատվածությունների փոխարեն։ Սակայն դժվար է ասել, թե ժողովուրդն այդպիսի գործերի մեջ քրիստոնեության ժամանակ միայն Քրիստոսին էր տեսնում։ Նա այդտեղ տեսնում էր մի հին, նվիրական, ավանդական արքունյուն, որը կապվում էր նրա ընտանեկան-փրկատուական զգացմունքների հետ և ատոցացվում իր սեփական տան ու հայրենիքի գաղափարների։ Հատկապես քննվող խորանը, այս առումով, պահպանել է հազվագյուտ վկայություններ

[1] Գր. Տաթևացի. Գիրք հարցմանց. կ. Պոլիս, 1729, էջ 343։



հասցը վերաբերում է նրա այտերի հիմքերի մոտ, գնանի վրա տարածված բուսատևային մշակույթներին։

Համեմատե մի ինքնատիպ զարդի մեջ հանդիպում № 4302 ձեռագրի 191ա թերթում (նկ. 1029), որտեղ վիշապ-ձկի նրանը գտնվում է մի ոչխարգոի կենդանու գլխի վրա։ Այդ կենդանու մարմինն էլ զարդանախշեր է։

Հանախ էլ հանդիպում են երկգլխանի վիշապների ձիաձևատեսակ զույգեր, որոնք հետմ սրատեսությունը են նրանց զարդել ցեղի ֆրատարիայ պատկերը։ Աշտիսխնկերից է. օրինակ, № 1522 ձեռագրի 161բ թերթի նկարը (նկ. 1030)։



Նկ. 1030

Հազվի «վիշապագլուխ» մանգիրի բուն իմաստը։ Որոշ մատենագիրներ կարծում են, թե այդ բառը (վիշապագլուխ) ունի ժողովրդական վիշապա-



Նկ. 1331

ապան իմաստը և բարդված է ավիշապ ու գազան բառերից, ուր վերջինն, իբր քն, ունի քաղել, վեր հանել նշանակությունը։ Որոշ մասնագիտներ էլ կարծում են, թե վահագնը վիշապաքաղ է կոչվում այն պատճառով, որ նրա ծագումն առնչված է նշել վիշապ և քաղ կենդանիների հետ։

Ղ. Ալիշանը գրում է. «Ճիգպրանալ քոռին Վահագնի համար այլ երգերն վիշապազանց հետ կտրիչը. իսկ իր վիշապաճառ կոչումն՝ յայտ չէ. քէ զա՞յս նշանակէ, եթէ վիշապէ և քաղէ կերպացնալ հրեշ մի, ինչպէս Ոչխրուագործն[1]։ Քնայած այսոցիկ նա որոշակի կարծիք չի հայտնում, բայց նույն գրքի 174-րդ էջում, զնոսիկներով քաղի գլուխ և սնանձ պոչ ունեցող էակի նկատ, տակը գրել է. «վիշապաքաղը։ Բացի դրանից, նա մեջ ի բերել մի շարք այնպիսի էակների անուններ, որոնց մեջ կա գազան բառը ոչ քի բարդական, այլ գոյականական իմաստով։ Օրինակ, Աղբերվագազի մասին գրում է. «Ենթադրի, որ յԱղբերոյ և ի Քազէ է կամ կէսն Ոչխրոյ և կէս Քազէս[2]։ Վիշապաստան քաղի մասին՝ գիրք բազարկալ յերից. գլուխն Քազի, մարմինն և էիրանցն Ասիոյս, տուաւ՝ Վիշապի[3] և այլն։

Հետագայում այդ հարցին անդրադարձել է Բ. Առաքելյանը. և այն, ինչ երկմտությամբ էր նշված Ղ. Ալիշանի մոտ, նա ցույց է տվել որոշակիությամբ. «Վիշապաճառը հարաբերված է վիշապ և Վաղ բառերից,— գրում է նա[4]։

Մեր կարծիքով նա հիմք է այս վերջին բացատրությանը։ Այժմ, երբ աշխատությունը քոչել է տալիս ավելի հստակ կերպով պատկերացնել վիշապաքաղ հասկացողությունը։ Տոհմային մի ցրատարիան կոչված է նշել ան-վիշապի, իսկ մյուս-

[1] Ղ. Ալիշան, Հին հավատք, Վենետիկ, 1888, էջ 122—123։

[1] Նույն տեղում, էջ 170։

[2] Նույն տեղում, էջ 173։

[3] Բ. Առաքելյան, Դիտողություններ վիշապաքաղ Վահագնի մասին, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ թ (հասարակական գիտություններ), Երևան, 1951, № 2, էջ 72-ից։



Նկ. 1032

որ՝ քաղի անունով, և հենց այդ միասնությունն էլ կոչվել է մի բառով՝ վիշապաքաղ։ Այս առումով հետաքրքրական է № 7729 ձեռագրի 596բ թերթի մատրապատկերը (Նկ. 1031)։ Այդ տեսարանում ցույց է տրված երկու այծ կամ քաղ, որոնց սնամեջ մարմիններով միացած են միմյանց հետ և կազմում են երկգլխանի մի էակի պատկեր։ Այդտեղ կան նաև երկու վիշապներ, որոնց մարմինները բարդ օղակներով միացած են միմյանց հետ, իսկ պոչերը ավարտվում են ռնգեղջյուրի՝ գալար ճյուղերով։ Այծերը բերաններով բռնել են վիշապների թևերից, իսկ վիշապները՝ այծերի վզերից։

Վերևում մեջ բերված համապատասխան բազմաթիվ օրինակների հիման վրա այստեղ իսկույն երևում է տոհմի ֆրատրիալ պատկերը, որտեղ և՛ վիշապները՝ իրենց պտղաբեր մարմիններով, և՛ այծերը՝ տոտեմ կենդանիներ են։ Ահա մի տոհմ կամ ցեղ, որը, եթե կոչվելու լիներ մի բառով, պիտի կոչվեր վիշապաքաղ։ Այստեղ, սակայն, կա մի ուրիշ մոմենտ. վիշապներն ու քաղերը կարծես կռվի մեջ են միմյանց դեմ։ Այս հանգամանքն առանձին նշանակություն չունի. դա կապված է հետագա ժամանակների հետ։ Թերևս հենց միջնադարյան նկարիչն է նրանց պայքարի մեջ դրել։

Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ հեքիաթներում նկարագրվող յոթ գլխանի վիշապներն ու դևերն էլ պատկերվել են երբեմնի տոհմային տոտեմների հետ կապվող հավաքականությունների հիման վրա։ Լեռնագավառում, երբ պայքար է ծավալվել հին կարգերի դեմ, չար ու վնասակար են համարվել ինչպես այդ կարգերը, այնպես էլ նրանց սիմվոլներն ու աստվածությունները։ Ահա այս և այլ պատճառներով չար ուժերը, վիշապ-դևերը մեր զարդարվեստում հանդիպում են նաև օձային յոթ գլուխներով։

Վերցնենք մի այդպիսի հրեշի նկար № 1770 ձեռագրի 177բ—178ա թերթերից (Նկ. 1032)։

Եթե շատ հին ժամանակներում այսպես կարող էր պատկերվել մի ցեղ կամ տոհմ՝ իր տոտեմա-



Նկ. 1034



Նկ. 1033



Նկ. 1035

բանահավաքներով, ապա այստեղ պատկերվել են քրիստոնեության կոչվից շատ հեռավոր ժամերը։

Տոտեմ վիշապ-ձկների և նրանց բազմապիսի հարաբերությունների մեջտեղներին հանդիպում ենք նաև ուրիշ ժողովուրդների զարգացման մեջ։ Այստեղ հիշենք միայն մի նմուշ մոլդովլաչական միջնադարյան մանրանկարչությունից (նկ. 1033) [1]։

Բնականաբար, հին դիցարանության և զարգացման համապատասխան մոտիվները պիտի անցնեին նաև բիբլիական առասպելաբանություններին և քրիստոնեությանը։ Դրա քայլերն երևանին է մովսիսական պշնձե ձևը, որ նույնացվում է Քրիստոսի հետ։ Ահա մի այդպիսի նկար № 6249 ձեռագրի 181ա թերթից (նկ. 1034), որին համապատասխանում են նույն թերթում գտնվող տեքստի հետևյալ տողերը. «Եվ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն անապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդոյ մարդոյն»[2]։ Այստեղից էլ հասկանալի է, որ զարգացման պիտի քրիստոնեական խալ-ֆենաց ծառն էլ հանգես բերևան գալ ամվիշապների և այլ զարգամոտիվների փոպոխիկ հարաբերություններով։ Այդպիսի նմուշներից է, օրինակ, № 313 ձեռագրի 81ա թերթի նկարը (նկ. 1035)։

Օձ-վիշապների առասպելական բազման մասին հարուստ վկայություններ կան նաև ժողովրդական բանահյուսության, հավատալիքների, սովորությունների և պատկերացումների մեջ։ Այստեղ հիշենք միայն մի երկու օրինակ։

«Օձ-Մայիլյ» հերքվի հերոսն ած է, բայց այդ անը ենվում է քաշտնի ձվից, ամառանում է քաղավորի ապրկա հետ, պատռում է իր անկեն շապիկը, գտնում մի չքնաղագեղ ու կորիճ ագռավ նա է, որ բոլորից քաջուն (բացի կնոջից), ճի նստած, մասնակցում է ծիսական մրցություններին և միշտ հաղթանակով դուրս գալիս այնտեղից[1]։ Պարզ է, որ այս «Օձ-Մայիլյս» մեջ պահպանված են երբեմնի տոտեմ նախնու հետ կապված հավատացողությունների հետքերը։

Տոտեմ անդի և վիշապների մասին նշած հին պատկերացումների բազատևոր մեջտեղներից են նաև, այսպես կոչված, ոդովլաթ-անդը։ Դրանք այն անդն են, որոնք բնակվում էին անտառում, պարտեզներում, այգիներում, և որոնց մարդիկ չէին հավատում, կարծելով, որ իրենց հավատացյալը,

[1] B. B. Стасов, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. XXXIX, рис. 8.

[2] Ս. Գ. Տեղեկ այս մասին գրած է. „Такими образом известийский конфликт в полном объеме развивается перед нами в библейской генеалогии, с той, однако, разницей, что в конечном счете тотем-змея выступает здесь в мифе о Моисее на первый план в качестве доброго начала...".

С. П. Толстов, Древний Хорезм, Москва, 1948, стр. 200.

[1] Հայ ժողովրդական հեքիաթներ, հավաքեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1959, էջ 237—281։



Նկ. 1036



Նկ. 1036ա



Նկ. 1037

հրշանկությունը, առագաստությունը պայմանավորված է հենց այդ սձևերի գոյությամբ։

Համաձայնարար այսպիսի պատկերացումների հետ են կապվում նաև սձևերն ու վիշապների (մեծ սձևերի) խոնարհվելումները, որով հետևում դրսևորվել են քովիչները և կախարդինները։ Նուրբը պիտի ասել նաև այն անատրամների վերաբերյալ, ուր երեսն են գալիս զանազան առասպելությունները՝ սձևերի հետ միասին, ոչ թե որպես քշեամիներ, այլ երաբնկամներ (նկ. 1038)։

Նախորդ գլխում մեջ բերված 222-րդ նկարում պատկերված ցիրանկատարը այցպիսի մի առասպելության կամ կախարդի գաղափարը ցույց տվող յավաղուլն օրինակներից մեկն է։ Նման բազմաթիվ օրինակներից մեկն է նաև № 197 ձեռագրի 29բ թերթի սձև գարդատարը (նկ. 1038ա)։

Հայկական քրիստոնեական դիցաբանության մեջ այդ հին պատկերացումները վերագրված են Գր. Լուսավորչին։ № 1220 ձեռագրի 27բ թերթում պատկերված է այդ սուրբը՝ Տար-Վիրապում, իսկ նրա շուրջն ու ոտքերի տակ խոնարհվել են սձևերը-վիշապները։ Համապատասխան նշումներ կան նաև պատմիչների մոտ։ Գահպանված է վաղ քրիստոնեության շրջանին վերաբերող մի բանաստեղծություն, ուր նույնպես նկարագրվում է Գր. Լուսավորչի և վիշապների հաշտ հանդիպումը Տար-Վիրապում։

Օրինակները բավական են։

Ուշադրությունը պարզ է. հայ ժողովրդի և նրա նախնիների հնատիպ անցյալում, որպես տոտեմ, մեծ տեղ են գրավել նաև վիշապ-սձևերը։ Ուստի և մեր գարդարվեստում հանդիպող վիշապ-սձևերի մի մասը կապված է այդ պատկերացումների հետ։ Այս մոմենտը չպիտի մոռանալ հատկապես պայքարի մոտիվները և վիշապամարտի դիցաբանությունը քննելիս։

Ինչպես նշվեց վերևում, հայ ժողովրդի դիցաբանության, գարդարվեստի, պատկերացումների մեջ, որպես շար ու քշեամի ուժերի իշխող մասնացում, նույնպես երևան են գալիս վիշապ-սձևերը։ Գլխավոր հատկանիշը, որով հետևողող է տարբերել տոտեմ, այսինքն՝ բարի վիշապ-սձևերին՝ շար, քշեամի ուժերի սիմվոլ վիշապ-սձևերից, հետևյալն է։ Եթե այդ էակները պատկերված են ծնող-զույգերով, կենաց ծառերով, առասպելն, ապա դրանք պատկանում են առաջին խմբին, իսկ եթե նրանք հանդիպում են զանազան կենդանիների և մարդկանց դեմ կռվելիս, կենաց ծառերը կլանելիս և այլ նման դիրքերով, ապա դրանք շար ուժերի մարմնացումներ են։

Հատկապես հայկական գարդարվեստում վիշապամարտի մոտիվների մեջ, որպես սխոյանների, մեծ տեղ են գրավում սձևերն ու սրապիկները։ Այս հարցում, հավանաբար, վճռական գեր է խաղացել նաև կռնկրեա էթնոլոգիական բնությունը։ Հենց բնության մեջ էլ նրանք քշեամիներ են, և հենց այդ



Նկ. 1038



Նկ. 1039



Նկ. 1040

պատճառով է, որ ժողովրդական առասպել աստված է. ամպի փուչն առագիլն է մատնում: Անշուշտ, հնագույն ժամանակներից սկսած, մարդիկ կարող էին պատկերել նաև համապատասխան բնական տեսարաններ: Մանավանդ, ինչպես ցույց են տալիս փաստերը, զարգացված հիմնական մոտիվներում տեղ են գտել ոչ թե բնական տեսարանների վերարտադրությունները, այլ գաղափարական ընդհանրացումները:

Վերցնենք մի նկար № 2808 ձեռագրի 4ր թերթից, որը մասամբ վնասված է[1](նկ. 1037): Այստեղ պատկերված են միմյանց կռվարար սեղմող մի առ և մի արագիլ: Հասկանալի է, որ նրանցից մեկի մեջ ամփոփված է ջուր, իսկ մյուսի մեջ բարի ոգեների գաղափարը:

№ 4892 ձեռագրի 114ա թերթում հանդիպում ենք պայքարող նման մի ուրիշ զույգի նկարի (նկ. 1038): Այստեղ, սակայն, կա մի էական տարբերություն. արագիլի մեջքի վրա պատկերված է կենաց ծառը: Եթե նախորդ նկարը մինանգամայն բնական տեսարանի տպավորություն է թողնում, ապա նույնը չի կարելի ասել այս նկարի մասին: Այստեղ արագիլն արդեն, որպես կենաց ծառ կրող էակ, անասարկելի կերպով ցույց է տալիս իր կարգը տառեմական հասկացողություններին հետևելը կարելի է ասել նաև № 4551 ձեռագրի 304ա թերթից մեջ բերվող զարդի (նկ. 1039) և շատ ուրիշների մասին:

Համանման մոտիվի ենք հանդիպում նաև Դվինի պեղումներից հայտաբերված իրերի վրա: Այդպիսին է, օրինակ, միքնաբերդի մեծ շինության հողերից մեկում գտնված ինվ. № 1734/314 քնարափապատ քրեզանը՝ սեմամարտ արագիլի պատկերով, որ նույնպես առնչ է սնավորված կենաց ծառը [1]:

№ 5736 ձեռագրի 10ր թերթում հանդիպում ենք ավելի պերճախոս վկայության (նկ. 1040). խորանի գերատեսակարին պատկերված է սեմ և արագիլի պայքարը: Այս պայքարի կապը խորանների հետ, ինքնին ենթադրել է տալիս մի պայքար, որն առնչվել է աստվածի, գերի, ժողովրդի կենսական շահերի հետ: Մյուս կողմից՝ այս տեսարանը կապվում է ներկայացումների հետ, կատարվ տալով, որ նման բեմերի վրա ներկայացվել են նաև պայքարի այլպիսի մոտիվներ: Ի՞նչ էր, վերջին հաշվով, 822-րդ նկարի տեսարանը, որ գերատեսարը պատկերված է սեմերով: Կան ուշագրավ այլպիսի խորաններ էլ, որոնց մարդին կռվում են սեմերի գեմ: Այս բոլորը համոզում են, որ սեմ և

[1] Ն. Ղ-ֆ-ց-յ-ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 218:

արագիլի պայքարի մոտիվները ոչ թե սոսկ բնական անասնաբանների վերարտադրություններ են, այլ պայքարի գաղափարը ցույց տվող ընդհանրացումներ։ Եղջիրն ավելի համոզիչորեն կգտնար, եթե հիշենք մի հին վիպասության էլ ժողովրդական բանահյուսությունից, որտեղ արագիլը կապվում է աստեմիստական պատկերացումների հետ։

Բուլանուխի ժողովրդական պատկերացումների համաձայն, արագիլները էլ մարդիկ են, ունեն իրենց հիշիչը և այնտեղ գրավվում են Հոգեզորությամբ, վար ու ցանքով։ Գրի է առնված մի պատմություն, թաս որի Բուլանուխում, իբր թե, պատահել է այսպիսի դեպք։ Մի հին, պրոստ լվացվելիս հանում է իր ատամնաշարը և գնում քարի վրա, որ այն լվիշվի։ Տուն վերադառնալիս, նա մոռանում է ատամնաշարը վերցնել։ Հետո հիշում է, գալիս է ատամնաշարի մոտից, բայց իզուր։ Թե՛ ինքը և թե՛ ամուսինը շատ են փնտրում, ատամնաշար չեն գտնում։ Ամուսինը ոտքաթոր տոհմատոհ տալով հասնում է մի ծովի, նստում է նավ, ալեկոծությունից հոգով փրկվելով, անցնում է ծովի մյուս ափը։ Այնտեղ տեսնում է մի գյուղացու՝ արտը վարելիս և մոտենում է նրան. վերջինս հին ծանոթի նման ժպտում է, տալիս է նրա անունը և զարմացած հարցնում. «Ու այստե՞ղ»։ Ապատանդան պատասխանում է, թե ատամնաշարը չի հանում, ուստի դիմացինը նրան ասում է. «Ես ձեր գյուղ ծառի վրա լվիշվու չափ եմ»։ Պարզվում է, որ ապատանդան պատասխանը, իբր թե, բնիկ է արագիլների հրիչները, որոնց նրանք ապրում են մարդկային ոլորտի ամենամոտ կշռանքով, ինչպես բուլանուխցիները՝ Բուլանուխում։ Ապատանդան պատասխանը մի ժամանակ մնում է նրանց մոտ, մինչև հասնում է արագիլների չվելու շրջանը։ Հավաքվում են այդ հրիչատիպները և ապատանդան պատասխանը բուլանուխցու հետ ընկնում հանապարհ։ «Ընկանք,— պատմվում է այդ բուլանուխցու անունից,— գնում ենք մեր յոգիլանը։ Ասածս հրամանով մեկ-մեկ հավքս փռաք (մորքի) իջավ վրը մրգի, ես չի ազոնց հետ նշանը լսեկանք։ Այս արագիլները քալելով անցնում են ծովը և հասնում Բուլանուխ։ Ապատանդան պատասխանը հանձնում է իր հավքներիքը և խնդրում, որ իրեն նորից մարդ դարձնեն և քույլ տան՝ գնալու տուն։ Նրանք իջնում են մի գետի մոտ, լողանում, ուր և բուլանուխցին ազատվում է իր քալնային մորթուց, վերադառնում տուն։ Նշենք նաև, որ բուլանուխցի այդ մարդը արագիլների աշխարհում իրենց բանի ժամի վրա ապրող և վար անող արագիլից իմացել էր նաև կորած ապատանդանի անդր։ Պարզվել է, որ, իբր թե, այդ ապատանդանը արագիլն է վերցրել և գրել իր բնի տակ, որ չկորչի[1]։

Այսօրեղ հատկապես ուշագրավ են հետևյալ մոմենտները։

Արագիլները էլ, ժողովրդական պատկերացումների համաձայն, դիտվում են որպես մարդիկ, բայց կերպարանափոխված. Նրանք էլ ունեն հովիտ այն կողմ գտնվող իրենց հրիչը, որտեղ գրավվում են հրիչագործությամբ։

Մարդ-արագիլները կերպարանափոխվում են ոչ թե հատուկ հրաշքով, այլ հավքու փոսմով, այսինքն՝ թռչնային դիմակներ հագնելով։ Հիշյալ նկարում ևս տոտեմիզմի նման շատ մնացուկներ կան։

Արագիլը հանգիստ է գալիս որպես հովանավոր, նա հսկում է մարդկանց կյանքի վրա, որ նրանց գժբախտություն չպատահի։ Եվ բուլանուխցի կինն իր ապատանդանը մոռացել էր գրասում, որը կարող էր գողացվել, ապա տար հրիչում գտնվող այդ տան հովանավոր արագիլը խնդրի օգնության էր հասել, վերցրել ապատանդանը և պահել իր բնում, որպեսզի այն չկորչի։

Արագիլները ընդհանրապես բարի և սիրելի էակներ են, որոնց մասին հորինված այս գրույցը մարդկանց լցրել է բարեկամական վերաբերմունքով դեպի նրանք։

Պարզ է, որ այդպիսի պատկերացումները ուժեղ կերպով արտահայտում են հրրեմնի տոտեմական մտածողության մնացուկների գոյությունը բուլանուխցիների մոտ, որը պահպանվել է մինչև XIX դարի վերջերը։

Արագիլները հայ ժողովրդի սիրած թռչուններից մեկն են, որոնց նրանք չեն վնասում և նրա միսը չեն ուտում։ Ամեն գյուղ ավերություն է ունեցել հյուրընկալելու արագիլներին, համաձայն նրանց համար արհնատական բներ չինելով։ Այդպիսի ավերության փաստերն արձնակ կարող է համարվել Աշտարակի շրջանի Օշական գյուղի արագիլի բուները։ Դա մի հնագույն պատահարող է, որի վերաբերյալ գյուղացիները ամրացրել են մի կարով, լցրել խոտով, ուր և բնակվել են արագիլները։ Այդ բուները գյուղացիների հիշողության մեջ կապվում է Մորիկ քաղաքորի պատմության հետ։ Այնտեղ ամեն տարի վերադառնում են արագիլները, ձու ածում, ձագեր հանում, թռցնում նրանց, չվում, որպեսզի հաջորդ տարին նորից վերադառնան։

Արագիլն էլ, շատ ուրիշ թռչունների նման,

---

[1] Ազգագրական հանդես, VI, էջ 43—44։



Նկ. 1041

գարնան գալու սիմվոլն է համարվել։ Եթե մարտի 7-ին չիվավ, 8-ին չի մնա, ասում է ժողովուրդը նրա մասին։ Իսկ, ինչպես գիտենք, գարունը ժողովրդի սիմնամնեի նրագն է եղել ոչ թե իր սիմվոլիկ, այլ իր ուղղակի նշանակությամբ։ Ժողովրդական բազմաթիվ երգեր կան, որոնք մեզ գովերգում է արագիլը հենց այդ իմաստով։ Ահա դրանցից մեկը.

— Եռկլուկ,
Հոգի բնիկ,
Հասան'ն կիգաս։
— Ես սարերուց։
— Ինչ ես բերի։
— Թուզը մի տագան։
— Ալի'ր կասկիս։
— Հոգի մամաս'
Լիս լուլի,
Թոլի գլխուն,
Նիս գարուն է։

Այստեղ արագիլը կարծես պատկերված է ոչ թե որպես գարնանը նկող թռչուն, այլ որպես գարնանանոր էակ։ Բացի դրանից, այստեղ հնչակությամբ նկատվում է մի զիցարանական գրույցի հետք։ Այդ գրույցում կա երկու գլխավոր ուժ, մեկը ինքն՝ արագիլն է՝ ջրայի բնկոնը, մյուսը նրա զուգակիցը՝ ջրայի մարշը, որին գարուն գալու բերելու համար ինքը միլոցների է գիմել։ Ծնողի մոտիվը, անշուշտ, ուշ շրջանի ներմուծում պիտի լինի, որը մաել է այստեղ մի ուրիշ, ավելի հին հասկացողության փոխարեն։ Ընդհանուր գծերով այստեղ էլ նկատվում է այն բոլոր հրաշապատում հնդիաքների գլխավոր հարցը, որը կապանում է մեռած կապանքներից, ստորերկրյա աշխարհը տարված և գների գերության մեջ գտնվող կույսերին ազատելու հերոսական սխրագործություններ մեջ։ Այս երգը ուշագրավ է նաև իր գիտողական կատարվածքով, որը խոսում է նաև նրա բնմագրված լինելու մասին։ Համանատար գարնանային տոնահանգիստներում երեան են գալի երկու գերակատարներ և խոսել միմյանց հետ։ Նրանցից մեկը ներկայացել է որպես արագիլ, որը և' գարուն բերող, և' հերոսուհուն ազատող հերոսին է ներկայացրել։

Այսպիսով, կարող ենք ասել, որ, իրո՛ք, արագիլն էլ հայ ժողովրդի զիցարանական պատկերացումների մեջ մեծ տեղ է գրավել որպես վիշապամարտ, գարնանանոր էակ։ Նրա միջոցով ևս հայ աշխատավորությունը գրանորել է իր կիրառած բազմազարդ այն գիցարանությունը, որտեղ ցույց է տրված նրա մղած պայքարը բնության ուժերի դեմ։

Քնոագրերում քննվող մոտիվները համեմ կապվում են ավելի լայն ու խոր հասկացողություններնի հետ, որոնց շնորհիվ նման գարդերի մեջ առավել որոշակի կերպով են գրանորվում հասարակական ընդհանրացումները։ Այսպես, օրինակ, Մ 2829 ձեռագրի 117բ քերթում պատկերված է մի այտնանն կենաց ծառ, որի ծայրին կանգնած է արագիլը, իսկ բնին փաթաթված է օձ և ուզում է գնալ վեր (նկ. 1041)։ Այստեղ օձն ապատնում է ոչ միայն արագիլին, այլև նրա ձագուկներին, որոնք գտնվում են նույն ծառի վրա, բնի մեջ։ Պարզ է, որ նման տնապրանքները, տոտեմ կենդանու հետ միասին, հին պատկերացումների համաձայն, գրանորել են նաև նրա հովանավորության տակ համարվողներին, նրանից ոսկրվածներին։

Համոզվելու համար վերցնենք Մ 6288 ձեռա-



Նկ. 1042



Նկ. 1043

գրի 12-րդ թերթի խորանը (Նկ. 1042)։ Նկարը մեջ ենք բերում հատվածաբար։ Հենց այս հատվածում գտնում ենք մի կողմից, ներքևում, կենաց ծառի, վիշապի, թռչունի ու թռչնամարդերի գաղափա-րական գրավորումը, իսկ մյուս կողմից՝ վերևում սիրենանկերպ նախամայրը՝ հուզված և անհանգիստ վիճակում։

Ժողովրդական հավատալիքների առկայությունն այս և նման ուրիշ մանրանկարներում անտարակույս է։ Հետաքրքրական է, որ ստեղծագործաբար մոռացվել է նրանց բուն նշանակությունը։

Ձեռագրերում շատ հաճախ էլ խորանային կենաց ծառերի վրա միանգամից ցույց է տրված լինում պայքարի ամբողջ տեսարանը, որպես մի առանձնական զարդամոտիվ։ Հիշենք դրանցից մեկը № 7347 ձեռագրի 9-րդ թերթից (Նկ. 1043)։

Մեջ բերված վերջին նկարները միաժամանակ ցույց տվին, որ վիշապամարտի տեսարաններում, պատկերներից բացի, երևան են գալիս նաև ուրիշ թռչուններ և ուրիշ էակներ[1]։ Դա միանգամայն հասկանալի է, որովհետև տարբեր ազգեր, տարբեր ժամանակ, տարբեր տոտեմներ են ճանաչել։ Այս

[1] Հմմտ. Գ. Հովսեփյանը մեզ ցույց տվեց մի ցուցանմուշ՝ Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի Մոխրաբլուրի պեղումներից, որտեղ նույնպես պատկերված է թռչունի և վիշապօձի պայքարի մի գողտրիկ տեսարան։



Նկ. 1045

մոտիվներն ավելի քան անհերքելի են դարձնում վիշապամարտի տեսարաններում պատկերվող վիշապ-օձերի ախոյանների հասարակական բնույթը։

Հայկական զարդարվեստում վիշապամարտի ամենապերճախոս վկայություններից մեկին հանդիպում ենք № 7729 ձեռագրի 261ա թերթում, որը մեջ ենք բերում գունավոր ընդօրինակությամբ և մասամբ փոքրացված (Նկ. 1044)։

Այստեղ պատկերված է մի հյուսքեղ ու ոճավորված կենաց ծառ՝ հավքերով, արմավով, տերևներով և պտղաբերության սիմվոլներով։ Այս ընդհանրացում կենաց ծառի վրա, վերևից բացված է վիշապային մի ահռելի երախ՝ սպառնալով կլանել նրան։ Սակայն ներքևից, հենված այդ ծառի սաղարթին, դեպի վեր է խոյացել մի արծիվ և կտուցով սեղմել վիշապի կոկորդը։

Որ արծիվն էլ ամենատարածված տոտեմ թռչուններից մեկն է եղել, այդ մասին անհամեմատ շատ վկայություններ կան՝ ինչպես բանահյուսության, դիցաբանության, պատկերագրումների, ծեսերի, այնպես էլ զարդարվեստի բնագավառներում։ Մ. Խորենացին մատնանշում է դիցաբանական մի զրույց, ուր Արծրունիների տոհմի նախնին ներկայանում է որպես մի երեխա, որին հովանավորել և սնել են արծիվները[1]*։ Դրա յուրահատուկ դրսևորումների մնացուկներից մեկը կարող է լինել հենց այն դեղթափ քարաքանդակը, ուր երեխայի ծնողները ներկայացված են մասամբ զույգ արծիվների կերպարանքով, մասամբ էլ՝ մարդակերպ* (Նկ. 766)։ *Ընդհանրապես փաստերն այնքան շատ ու հանրածանոթ են այս տեսանկյունից, որ նրանց վկայակոչման անհրաժեշտությունը չի զգացվում։*

Համանման նկարի ենք հանդիպում նաև սերբական միջնադարյան մանրանկարչության մեջ (Նկ. 1045)[2]։

Հայկական ՍՍՌ Պետական թանգարանում պահպանվում է մի կարևոր հուշարձան՝ վիշապամարտի մոտիվով։ Դա իրենից ներկայացնում է մի քարի բեկոր, որի վերին մասը փորված է թռչունի բնի ձևով[3]*։ Նրա մեջ քանդակված է նաև մի ձու, որը կոտրվել է և միջից դուրս է եկել թռչունի ձագը։*

Այդ քարի վրա, թռչունի բնից ներքև, փորագրված է մի օձ, որը գալարվելով սողում է դեպի բույնն ու ձագը։

Այս հուշարձանը հայկական ժողովրդական ստեղծագործության մի եզակի նմուշ է ոչ այնքան իր կատարման տեխնիկայով, որքան իր գաղափարական բովանդակությամբ։ Չնայած այստեղ չի պատկերված ծնող թռչունը, բայց նրա ներկայությունը ինքնին զգացվում է. ժողովուրդը երբեք նման դեպքերում անպաշտպան չի թողնում անմեղ ձագուկներին։ Եթե անգամ բացակայում է ծնողը և ընդհանրապես պաշտպանող ուժը, ապա դա մարդկանց մեջ ավելի քան սրում է պաշտպանության հարցը, լցնում է նրանց անզուսպ ցանկությամբ՝ օգնելու ձագին։

Այսպիսով ընդհանրացնող մոտիվները ոչ մի դեպքում չպիտի դիտել որպես սոսկ բնական տեսարանների վերարտադրություն։ Դրանց բոլորի մեջ ամփոփված են հասարակական կարևոր գաղափարներ։

---

[1] Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփխիս, 1913, էջ 129։

[2] В. В. Стасов. Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, С. Петербург, 1887, таб. XIV, рис. 4.

[3] Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարան, Հնագիտական բաժին, ինվենտար № 412։



Ill. 1844



Նկ. 1046

Հատկանշի պատճառներով զորգորվհատում Հանդիպում ենք վիշապամարտի նաև այնպիսի տեսարաններին, որտեղ վիշապ-սեռերի գեմ մարտնչում են ուրիշ կենդանիներ։ Այս վիշրիններին ավելի քան որևէանի կիպով են դուրգ տալիս նման զորգերի բնդհանրացնող, Հատորակական բնույթին ու էությունը։

Վերևում, սյունախոզուցիչյան մասին խոսելիս, նշեցինք, որ Հնում կարող էին սյուն-կենաց ծառերի վրա տրման գալ նաև կենդանիներով գեղաքանդակներ։ Ահա մի այդպիսի նկար № 7471 Հնոցերի 403ր քնրիից, ուր ծառ-սյունի վրա նեղֆորմացված է կապկանման գերտասեր՝ գերտասնական դիտարկով (նկ. 1046)։ Այստեղ մեկտեղված դուրգ է տրված նաև գեղի այդ անհնարությունը ստղտղող տեր։ Ինչ վերտերում է կապիկի մասին, ապա գա էլ, ի վերջո, վազելի պատկերացումների արդյունք է, որը, ամեմն, Հնոտգում կապվել է ուրիշ Հատկացողությունների Հետ և դրանցից նոր իմաստ։

№ 378 Հնոցերի 7ր քնրիի խորանի կենտրոնում նկարված զույգ առյուծներն իրենց ատրների ատակ Հզմում են նրիոտ տեր, վերջիններս էլ, տակից, փորնում են իրենց նրանց (նկ. 1047)։

Այստեղ տեղս է ամրողջ տոհմի Հույշ՝ իր ֆրատրիալ կառուցվածքով։ Նման մեռ ել պատճառված նաև չար ուժերի սիմվոլներ։ Ինչ վերաբերում է առյուծների առատ Համարված չինելյուն, ապա կարելի է ասել, որ այս առումով ևս վիպավերլուծիչները չ՛ չատ են, և՛ Հանրաճանաչ. Ուրարտական գարգարվհատում ևս առյուծը առանձին տեղ է գրավում (նկ. 1048) [1]։ Մեր կարծիքով Մատենքի Դավիթի էպոսում Մեհ Մհերը Առյուծանե է կոչվում ոչ թե առյուծ սպանելու (մեռնելու) պատճառով, այլ իր հզրնմեի գիցարանական առնչությամբ՝ առյուծ առանձի Հետ։ Հետագայում է, որ ժողովրդական առասպարանությամբ տեղի է ունեցել այդ փոփոխությունը։

Այս զույգ առյուծների և նրանց թաթերի տակ Հզմվող զույգ սեռերի մասին բնդհանուր սկզբունքով է գեպգրված նաև խաչափան Հնոցյոչ գարգարպատկերը (նկ. 1049) [2]։



Նկ. 1048

Ամեն ինչ այնքան ծանոթ ու Հատկանշի է, որ առանձին բացատրության կարիք չի զգացվում։ Նկատենք միայն, որ կենտրոնում, ամամրված կենաց ծառի գազափարապատկերի վրա նկարված է Հավատատան թռչունը, որի մասին նույնպես արդ անգնդությունների արդեն ունենք։

[1] Б. Б. Пиотровский, История и культура Урарту. Ереван, 1966, стр. 137, рис. 13. Մի գեռալ էջմիածնի արդի Քաղաքի բրոնզե վահանից (տես նե. стр. 138).

[2] Н. Ф. Лорене, Орнамент всех времен и стилей, С. Петербург, 1868, таб. 61, фиг. 15.



Նկ. 1049

Մ 197 ձեռագրի 265ա թերթում հանգիպում ենք վիշապամարտի մի ուրիշ, ինքնատիպ տեսարանի, որը մեզ ենք բերում ոչ թույլ գարգերի ժանրամանր ընդօրինակությամբ (նկ. 1050)։

Դա մի կիսակորան է կամ մուտքապատկեր. նրա կիսաբոլոր շրջանակն ազատ են կազմել երկու վիշապներ կամ երկգլխանի մի վիշապ։ Վերևի մասում նստած է մի ալծյան կամ կիսատար, որի երկու կոզմերից, նրան կուլ տալու դիրքով, բացված են նշված վիշապների երախները։ Երկու վառնգված կենգանու պաշտպաններ, ալ և մոխ կոզմերից վիշապների վրա են հարձակվում երկու թռչուն։ Մեչ վիշապների մեջտեղում է տեսարանի շրջանակված տարածության ներքին, ապա այլտեղ նկարված են չորս կենգանիներ՝ ընդհանուր շրջագծի չորս կոզմերին՝ սիմետրիկ դասավորությամբ։ Միամամանակ այդ շրջագծի ներսը լցված է ալեպտի զարդերով, որոնք կապվում են տեմատիզատորիակ հասկացողություններին հետ։ Ուսոի վիշապ-ամերն էլ այստեղ ցույց են տրված ֆրատրիաների ձևով։

Մ 5528 ձեռագրի 28բ թերթում պահպանված է մի ուրիշ արժեքավոր նկար (նկ. 1051)։ Մեծ ու հյուսնատար տեմատեսակի վրա բազմել են բազմաթիվ թռչուններ, իսկ ծառի բեն երկու կոզմերին կանգնած է սիրենաձին ձեռը-գույքը, որը, ինչպես արդեն գիտենք, պատահաչում է տոհմի ֆրատրիալ պատկերը։ Նույն ծառի վրա, միահյուսված միմյանց և ծառի ճյուղերին, բազմացել են երկու ոձեր, որպես շատ ուժերի ձեռը-գույքեր և պատրաստ սպասում են հարկը առնելիք։

Հարցնես հենց այս տեսարանի մասին է, որ խոսում է Հեռնկալ գրույցը.

«Ես մի կայր ի Հնդիկս, որ կոչէր պորոխիոս։ Եւ է ծառն այն մեծ և բազմաճիղ և վայրաւոր և բազըրատուղ։ Եւ ամենայն թռչունք երկրին և բնակիչն ի նմայ և Հովանի նորայ, և կերակրին ի պտղոյ նորա։ Ապա և ո՛ր արտաքս հյանէ ի Հովանոցէ նորա, նա անդ խորամանկք հարկապ սպանցեն զնա։

Այս գրույցի հիմքում էլ բնկած է հին գիցաբանական հասկացողություն, որը գրի առնգի կոզմից իմրագրվել է քրիստոնեական գազափարախոսության համառաչ։ Ըստ նրա մեկնաբանության, այդ ծառը կենաց ծառն է և համապատ է Քրիստոսին, որի Հովանու տակից չպիտի դուրս



Նկ. 1059

դալ, որովհետև ոչով հրանէ ի հավանալ պատուիրա-
նաց Նորա և գործել զինքս և անդնդոյ մեռալ, սա-
տանայ սէն Հարկալ սպառանէ զնա և կորչեցնէ [1]։

Այսոքիզ տեսնում ենք, թե ինչպես կենաց ծա-
ռը, վիշապամարտը և մյուս Հարաճիկ մոտիվները,
քրիստոնեության մշակումով, տարցել են միան-
գամայն Հակառակ բովանդակություն։ Դրանք ոգ-
ևորվել են ոչ թե ժողովրդի չարչերը պաշտպա-
նելու, այլ նրան ենչելու, կեղեքելու նպատակով։

Այդ նկարում, տանձի, վիշապ-ձևերն էլ
պատկերված են ֆրատարխոյ Հասկացողություններ
Համապատասխան։

Ընդհանրապես չար ուժերին այդպես պատ-
կերելն իր Հիմքում ունի տոհմային Հատուցակու-
թյան Համապատասխան կազմակերպումները։ Նման
մոտիվները նախապես կապված են եղել Համ
տարրեր ցեղերի ու տոհմերի միչև ծագած, Համ
հենց նույն ցեղի մեջ առնի ունեցած կռիվնե-
րի հետ։

Մարդին, անձնավորված բնության ուժերը,
նրանց կյանքն էլ դիտել են իրենց կյանքի նման։
Այդ վերագրական բնըհանրացումներին Հատուց-
ական Հարաբերություններ են վերագրվել, որոնք
և չոփվել են իրանցում գոյություն ունեցած
մարդկային փոխհարաբերությունների կազապա-
րի վրա։ Ուստի նաև այդ պատճառով չար ուժերը
պիտի պատկերվեին բարի ուժերի գազափարը գեր-

[1] Ջեռագիր № 633, քեր. 306բ – 307ա։

անցող մոտիվների նմանությամբ։ Ու քանի հենց
այսպիսի հրեությունների արտահայտության մի-
ջոցներ են ձեռագրերում պահպանված այնպիսի
գործերը, ինչպիսիներից են № 358 ձեռագրի 102ա
և 143ա թերթերի նկարները, որոնց նույն միտ-
նությամբ մեզ գանվող տոտեմ կենդանիները բանել
են միմյանց կռիվրդից (նկ. նկ. 1052, 1053)։ Նույ-
նը պիտի ասել նաև այն բազմաթիվ նկարների ու
պատկերների մասին, որոնց միմյանց են Հյու-
սում գոհազան բնական ու ֆանտաստիկ Համար-
ված կենդանիները։ Միչա է, այդպես կարող են
պատահել նաև բնական տեսարանների վերարտա-
դրություններ, բայց Հատկապես խորանների ու
մուտքապատկերներում դրանք չեն կարող տարբե-
րված լինել տոհմային պատմության և Հասարա-
կական Հասկացողությունների հետ։ Նվ, իրոք,
մի՞թե տոհմերը կարող էին իրենց Հպարտանալիների
դրվագները չմարմնավորել իրենց զարդերի մեջ։
Դրա մասնավոր արտահայտությունը պիտի Հա-
մարել բնչպես զազանների տեսարանները,
այնպես էլ խորանների, կիսախորանների կամ
մուտքերի, յուսաղացազարդ-տոհմանշանների պատ-
կերներում ցույց տրված պայքարի մոտիվների
որոշ մասը։

Ջար ուժերին տոհմա-ֆրատարխոյ գազափա-
րանձնավոր պատկերելու հրեության պատճառներից
մեկն էլ պիտի Համարել տոհմային ծիսական մեր-
ցույթյունները, որոնք կազմակերպվում էին ֆրա-



Կ. 1661



Նկ. 1052



Նկ. 1054



Նկ. 1053



Նկ. 1055

տրիտների միջև և հաճախ կրում արյունալի բնույթ, ավարտվելով մրցության մեջ պարտվողի սպանությամբ։ Այդպիսի ձևերի և հասկացողությունների հետ կապված զարդամոտիվներ նույնպես շատ կան հայկական զարդարվեստում, որ պատկերված են ինչպես զինավառված, նույնպես և մերկ գոտեմարտողները։

Անա այդպիսի երկու նկար № 3722 ձեռագրի 280ա և № 5472 ձեռագրի 50բ թերթերից (նկ. նկ. 1054, 1055)։

Աստիճանաբար ձևափոխվող չար ու բարի ուժերի մասին առնչված պատկերացումների հա-մանային, իրական, սակայն ուժերի տեղ արդեն երևան էին գալիս դիցաբանական անձնավորումները։ Բարի աստվածները էին հաղթում չար աստվածների դեմ։ Սակայն բարի աստվածներին մարդիկ պատկերացնում էին դարձյալ իրենց հասարակական միավորումների և համապատասխան հասկացողությունների ազդեցությամբ։ Բնականաբար, նրանք այդպես պիտի պատկերեին նաև չար աստվածություններին։

Այս բոլորը զարդարվեստի մեջ հարազատ էին մնում թե՛ անմիջապես և թե՛ բնական համա-



Նկ. 1056

պատասխան արարողությունների և ներկայացումների մեջտեղվ։

Այսպիսով, միանամանակ տեսնում ենք, որ զարգարվեստի սիմետրիկ կոմպոզիցիայի հիմքում ընկած են նաև պայքարի որոշ մոտիվները։

Զարգարվեստում հաճախ հանդիպում են վիշապամարտի այնպիսի մոտիվներ, որոնք նյութը կարծես առնված է հրաշապատում հնդկաթնեղից, էպոսներից և այլ նման ավյուրներից։ Նման զարդերի ուշագրավ նմուշներից է, օրինակ, ժամանակին Մեքրատեսյում գտնված հին գրոշների մեկի վրայի փորագրությունը (նկ. 1056)։ Այստեղ պատկերված են երկու վիշապ-ոձեր, որոնց գեմ մարտում են բևեռաձև հնդկաթնային քուլուններ, այնպես էլ մարդ-հերոսը՝ հրնդեն նժույգների օգնությամբ։

Համանման մի ուրիշ տեսարան է փորագրված Կոլանի գերեզմանոցի պեղումներից գտնված մեծաղյա մի կացնի վրա (I դ. ն. ա. թ.), որտեղ,



Նկ. 1057

բևեռաձև երևում է նկարիչը, մարդ-հերոսը նետաձգությամբ պայքարում է վիշապ-ոձերի գեմ՝ հանուն ջրի և պաղատկրության (նկ. 1057) [1]։

Նկատելի է, որ ձեռագրերում նման բուն հնդկաթային գիցաբանական սյուժեներով արված նկարները, հոգևոր հայրերի կատաղի պայքարի շնորհիվ, շատ չեն տարածվել։ Դրանց փոխարեն լայնորեն ընդգրկնակվել ու զարգացել են քրիստոնեական մշակած կանոնիկ մոտիվները, որոնց մասին կխոսվի ստորև։

* * *

Թե՛ հայկական և թե՛ ուրիշ ժողովուրդների գիցաբանության և զարդարվեստի պայքարի մոտիվներում իր առանձին տեղն է գրավում, հատկապես, նետը։ Նետն ու ոձ-վիշապի պայքարը հայտնի է համարյա այն բոլոր ժողովուրդների մոտ, ուր մարդին հանդիպ են եղել նետ կենդանուն։

«Այսպիսով,— գրում է Մ. Պ. Տոլստովը,— մեր հանդեպ բտրիարանում է իրար գեմ մարտնչող գիցաբանական հերոսների վերին ատաձանի բնորոշ կոմպլեքսը... նետ և ոձ, այս հակառակ թշնամիները... մեր գեմ են նետում որպես միջին ասիական և արևելյան իրանական գիցաբանության

[1] Б. Б. Пиотровский, Ванцзы, Ереван, 1939, стр. 29.

ամենից հիմնական ֆետիշներից[1]։ Նա այդ միջատաուրյան տարածման ասոցիկ մեծ չրչաններ է ցույց տալիս, նկատի ասնելով ոչ միայն նան տնտեսական, հոգեկան-իրատեսական խորհրդի ծագումնային, այլև այդ խորհրդից գուրս գտնվող շատ ուրիշներին[2]։

Ոչ գա հատկանշի է, որովհետև եգել իր մեջ պահպանել և պահպանվեր ժողովրդի թե՛ երեւ-տագործական և թե՛ անասնապահական կյանքի իմաստը։ Դարեր շարունակ գեղջուկի կյանքի հետ-ևո հնարան է եգել այդ ֆետիշին։

Ռոմանական գիտնական Տ. Ռ. Գասանկը եգի և նրանից տեղական հետևո ենող ցեղի պաշտա-մունքային տարբեր չինելու պատճառները բացա-տրում է տնտեսական այն խոշոր գերով, որ կա-տարել են նրանք տարբեր ժողովուրդների կյան-քում[3]։

Ոգր, որպես տյդպիսին, խոշոր տեղ ունի տա-հատարակ Հին Արևելքի ամրողջ գիցաբանության մեջ։ Ուշադրավ է հատկապես Ոգիրիսը, որն իր նախատեսական ունի ի գեմս Ապիս արդազան եգան։ Ապիսի երկվորյակները Հայտնի են նան Հունա-կան գիցաբանության մեջ և այլ երկրներում։ Հի-չենք նան ետատար աստվածուհուն, Ոգիրիսի զուգակ-ցին, որը պատկերվում է կովակերպ։ Համանման վիճարկություններ շատ կան նան իրանական ու Հոգեկան գիցաբանություններում։ Հոգեստաս-նում մինչև հիմա էլ պահպանված են արդազան համարվող եգներ։ Ոգր, որպես տնախաշեր, հան-գիպում է բազմաթիվ ժողովուրդների գիցաբանա-կան գրույցներում։ Ս. Գ. Տայլորը այդպիսի շատ օրինակներ է բերում իր աշխատությունների մեջ. օրինակ, մանկության մի գրույցի համաձայն, մա-նուկները ակրված են համարվում եգից և ծագել-են (ծագելից ետված) մի ոչխարից։ Ոգից և մի ոչխարից էլ ակրված համարվել, շատ գիցարա-նության, նան բուրյաթների։ Նույնպիսի պատկե-րացում կա նան քուրդների մոտ, որանց նա-խահայրը կոչվում է «Ոգուզ» («Огуз-Каган») և նկարվում է որպես եգ, քան տղայոց շատ ուշադրի նշանակություն է եգ[4]։

Համանման բազմապիսի վիճարկություններ են պահպանվել նան Հայկական ազգությունների մեջ, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ տեղ է գրավել եգը մեր նախնիների տնտեսության մեջ, ուստի և պատկերացումներում։

«Ազգագրական Հանդես»-ում տպագրված է մի ուսումնասիրություն «Ոգի պաշտամունքը Հայաս-տանում» խորագրով, որտեղից ուշադրավ են հե-տևյալ վիճարկությունները.

ա) Ն. Հակոբյանը, Գեղարքունիքի Մրգուշների մոտ կատարած պեղումների ժամանակ, հայ-տնաբերել է եգի գանգատան՝ ֆետիշին իրերով և անոթներով։

բ) Շիրակի Գիրաքլար գյուղում փորված յուղ-րի միջից գտնվել է քրմապետի կմախք, պատանե-ցին՝ պղնձե հորքի տրնանով չորս և առանձին մի պղնձե եգի գլուխ։

գ) Ուրմիա չեի մոտ, Գուշչի գյուղում, հողի տակից գտնվել են եգի ու ցուլի արձաններ (գլուխ), ինչպես և եգի մումիացած կմախք ու բրոնզե սե-նյակ տնտում գտնված է գտած՝ եգան և տարած պատկերների փարատությամբ։ «Ոգուլերի մեջ կանգ-նած են ոսկեհատ, գունաշատ հագուհատիճների տրտեր»։

դ) Ախալցխայում (Վարցիա գյուղի մոտ) գտնվել է եգի տրնան գեղեցիկ գլխով և պրիմիտիվ մարմնով։

ե) Այդ ուսումնասիրությունը գրելու ժամա-նակ գեռևս մի շարք վանքերում պահվել են եգներ և գոմեշներ, որպես արդազան տնտասներ։ Այս-պես, Պզնունի վանքում պահել են ահրեի, ոսկեգույն գոմեշ։ «Ոսկեգույն եգ էլ պահվում մինչև վերջին գարը Մյու Առաքելոց վանքում, Մաճուի ս. Թա-գեոսի վանքում, Վանի վանքերում...», Նոր Ջու-գայի Ապահանի վանքում և այլն[5]։

Ուրարտական Մուսասիրի տաճարի մուտքերի տոչո տասնյակ-տասնյակ ֆանգված գոմեշ (Հորինի տնեչիս) և ցուլի արձաններ ցույց են տալիս նման երևույթ նան ուրարտացիների մոտ, որ, անշուշտ, եգն ու գոմեշ գուգակից աստվածություններ են։ Այդ գլխի գարգով կարող է գանված Կարմիր-Բլուրից, նման գաթար՝ Հայաստից և այլ վայ-րերից։

---

[1] С. П. Толстов. Древний Хорезм, Москва, 1948, стр. 298.

[2] Նա ա.ե., стр. 299.

[3] „Бык, игравший в хозяйстве Триполья значительную роль, как животное, доставляющее большое количество мяса, и корова, дававшая молоко, являлись объектом культа, существовавшего в эту эпоху во всем Средиземноморье и Дунайско-Днепровском бассейне, чем и объясняется распространенность изображений этих животных".

По следам древней культуры (сборник), стр. 63.

[4] С. П. Толстов. Пережитки тотемизма и дуальной организации у туркмен, журн. Проблемы истории докапиталистического общества, 1935, № 9—10, стр. 16—17.

[5] Արարատյան Հանդես, XXIII, էջ 114—124։



Նկ. 1058

Ահա մի նմուշ ուրարտական զարդարվեստում այնքան մեծ տեղ բռնող եզի պատկերներից (նկ. 1058) [1]։

Այս կապակցությամբ վերհիշենք նաև 231, 232, 233, 294, 300-րդ նկարների միջոցով ներկայացված հուշարձանները, որոնց մասին խոսվեց վերևում։

Համշենում նոր տարվա նախորդ օրը՝ տեսչությունից, հատուկ հիսական արարողություններով, մարդիկ մոկ են գոմերը, ալեռից են տարել սեղան՝ ուտելիքներով, անասունների գլխին շուռ են տվել լորի և ուլիկի (վայրի խոզերի սերմեր), ասելով՝ էհեզվի պես շատանաք։ Ապա նրանք սկսել են աշխատել, այսինքն՝ մի որև հարթ տեղանի հետ տուն են տարել, տուրեն ուտելիքներ դրել, եզներին մոմեր վառել և հետո նայել, անզանի վրա գտնված ուտելիքները կերել [2]։

Նրանց պատկերացումների համաձայն, աշխարհը գտնվել է մի եզի վրա [3]։ Այսպիսի պատկերացում են ունեցել նաև բուլանուխցիները [4]։ «Մեզ եզը այնքան սրտոտ է, որ վարդավառին չրի մեջ սառույց կը տեսնես, ասել են Բուլանուխում [5]։

Ուշագրավ է հատկապես եզի կապը նոր տարվա տոնակատարության հետ։ Ուշագրության գրավ խոսքոր առարկան եզն է. նրան են սրսկել ասեվածության զարդարում և գովում։ Պարզ է, որ այդ եզն իր մեջ խտացնում է նախնու, գարնան, բարի ուժերի մարմնացման, վերածնության և բնության պիտարանական հերոսի կերպարը։ Նա եզն վարդավառի չրի մեջ սառույց է տեսնում, ապա այդտեղ պիտի որոնել գարնան և ամառ, բարի ու չար ուժերի մասին մարդկանց ունեցած հին պատկերացումները։ Սառույցը ամառն ու չար ուժերի սիմվոլն է, եզան քշնամին, որի հետ մինչև գոտեմարտում է նաև նրա պայքարի արդյունքն է համարվել գարնան գալը, ուստի և նոր տարվա տոներին այնքան մեծ տեղ են ավել տարբեր կապնյուս ծիսական արարողությանը։

Հավանաբար, ավելի հին ժամում պիտի ունեցած լիներ կովի, որպես առաջնի նախամոր, գոյափարը։ Այս առումով այսօրվա կանգ առնենք մեր ժողովրդական հեքիաթներից մեկի՝ «Վարդիկ կովի հեքիաթը» վրա [1]։ Այդ հեքիաթի համաձայն, լինում է մի նախրչի, որի կինը մեռնում է, թողնելով երեք որդիներ։ Բայց այդ երեխաները որբության ժամանակ չեն զգում, որովհետև Վարդիկ կովը մայրաբար խնամում է նրանց. քույլ տալով, որ հորթի նման ծծեն իր ստինքները։ Նախրչին ամուսնանում է. խորթ մայրը նենգորեն քանկանում է մորթել Վարդիկ կովին, կովը սիրում է, որքերը, երբ առնում են Վարդիկ կովին սիրած, լաց լինելով, հարցնում են.

«— Մեր մերիկ Վարդիկ կով, դու քնչի՞ ես քո նիաքի կախեն։

— Անուշիկ որքիք, ըմեն կը մորքա ձեր էն խորթ մեր։

Այսօրով կարծես պրուլքը գնում է խոփական մոր և նրա հարազատ զավակների միջև։

Երեխաները քանկանում են միշնորդել խորթ մոր առջև, որ նա չմորթի Վարդիկ կովին, բայց վերջինս (Վարդիկ կովը) հակառակում է, ասելով.

— «Ձի՛ չէ՛, էամալ մի ասեք, էամալ կասեք ձեզի կոփա, իմ սիրտ կմըռնա. ձեզ մի քան կասեմ. Որ ըմեն կմորթեն, իմ արքնից գոլասի վերցնեք, քանք ձեր քիր բերան, էնի կերնա ձեզի ինչպես քեռ ոսկի, իմ ոսկոռներ, իմ պլոխ, իմ տաեզերի էն սոլերը կասեք կիսորեք իմ մասը, ձեզի պետք կուգա։

Այսօրով մայրական հարազատությունն այնքան է ընդգծված, որ դրսևորվել է տարբ մրմունջ բազմազարյա հատկացուցչությամբ։ Ուշագրավ է հատկապես Վարդիկ կովի խորհուրդը։ Այն, ինչ պահանջում է նա՝ երբեմնի ծիսական արարողությունների մնացուկ է։ Այդպես հանգիստավոր ձևով են սկզբում մորթվել տոտեմ կենդանիները, որոնց մարմնի զանազան մասերը պահվել են որպես կախարդական առարկաներ։

---

[1] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 137, рис. 13. Մի գեղալ երիվեզի տրի Թուրայի բրոնզի վահանից (տես ևս, стр. 2).

[2] Ազգագրական հանգեր, VI, 288։

[3] Նույն տեղում, էջ 281։

[4] Նույն տեղում, էջ 41։

[5] Նույն տեղում։

[1] Հայ ժողովրդական հեքիաթներ, կազմեց Ա. Ղանալանյան, Երևան, 1960, էջ 208—208։

Կարմիր կովից քաժանվելու վիշտը շատ ծանր է. Արեխանները Հնձկաստան են.

— Ինչի՞ կուլաք, իմ որբիկ չան։

— Ապա ի՞նչ անենք, մեր որբիկ, որ քեզի մոր-ջնջին, մեր բնդան կդաժդի, էլ մեզի պահող չկա։

Կարմիր կովը, նախամոր գաղափարը, սահայն, անանց չի քողնում իր զավակներին, նա նրանց խնամքը հանձնում է իր ներկայացուցիչ բարի պառավին, իսկ Արեխաններին, որպես անգի առատ ապրուստ, քողնում իր նշույրներից մնդը.

«Ի՞մ գլխի մե կոտոշը գուռ քողնք, ինչ վախտ որ կանոթնեք, ուրթ, ծծնք, կիշտանաք...»

Նան ապատով է առատության նշույրի նախնական գաղափարը։

Վերևում մենք բնրված ե նշված խոչոնանկարներում պատով մերկ կանայք՝ իրենց բռնած նշույրներով՝ հենց այս պատկերացումների մնացուկներն են։

Կարմիր կովին մորթում են, Արեխաները շարժվում են նրա պատվիրներով և Հասնում Արշանկությունն, իսկ խորթ մայրն ու իր շոր ապրիկը արժանանում են պատժի։

Ահա կովանկով նախամոր պատկերացման մի ցայտուն օրինակ։

Անցյալի պատմական իրականության Հիմքի վրա է, որ գարգանում և մանում են կազմակերպված դիցարանություններին մեջ, որպես գլխավոր ուժեր, Արն ու կովը, իսկ ավելի Հետո նրանց մարդակերպ Հոգորգները։ Եվ այն պայքարը, որ մղում են մեր Լուսի Հերոսները, Վահագն վիշապաքաղը, Հերքաքաչին Այս-գինոները և ուրիշ Հերոսները՝ վիշապների ու գնների "գնմ", բնականաբար, Հետևում պիտի վերագրված լիներ նան նշ տոտեմին և նրա զուգակիցին։ Հայրիշխանության Հաղթանակից Հետո իր պատմական գնրի մեջ մտնող ազատարդը Համապատասխան ազդեցություն է քողնում նան դիցարանության վրա, որի պատճառով էլ աշխարհը խլհում է ձգանկերպ Հերոս նախնու գաղափարը։ Այդ է պատճառը, որ Հին ժողովուրդների դիցարանության մեջ, որպես գլխավոր վիշապաքաղ ուժ, Հանդես է գալիս նշը։ Նա է, որ կատարի պայքարի մեջ է մտնում վիշապ-ժնրի դեմ՝ այնպես, ինչպես, ասենք, Մանասարն ու Բաղդասարը, Մասունցի Դավիթն ու Վահագնը։

Այժմ բոլոր հիմքերը կան ասելու, որ Քամոզի և Իշտարի, Արաչի և Ջամիրամի, Վահագնի և Անահիտի, ինչպես նան Համանման ուրիշ գիցարանական Հերոսների օրինակով, պիտի պատկերված լինեին նան նշն ու կովը։ Պիտի նախապես պիտ և պատկարկության գիցարանական դրույցներում Հերոսն ու Հերոսուհին անասնակերպ լինեին։ Նան նրանց Հետ էր, որ պիտի կապված լինեին աշխատանքի, պայքարի ու վիշապամարտի մոտիվները։ Մենք այստեղ պայքարի Հետ միամամանակ գիտենք նշում են նան աշխատանքը, որովհետև Հետ Հենց աշխատանքն էլ պայքար է նշեր, քանի որ նշի միջոցով կատարված աշխատանքը, Հիմնականում, ունեցել է արկրատրժական բնույթ, ուստի վար ու ցանքի, Հնձի ու կալսման ամրողջ աշխատանքն է, որ պիտի առաջին Հերթին նկատի առնվեր։ Թե ինչպես է գիցարանվել արկրատրժական աշխատանք-պայքարը, այդ մասին կարևոր վկայության են Հանդիպում պարսկական Հին Հավատալիքներում։

Ավետան առում է. երբ ծլում է գարին՝ գնները ցնդվում են ատրապիից, երբ խոտանում են ցանքի ծլիլները՝ գնների սիրտը մնտնում է, երբ Հացահատիկն ազատվում է՝ գնները տնքում են. երբ ծլում է ցորենը՝ գներին մահ է։ Այնտեղ, ուր ծնվում է ցորենը, այնտեղից գնները փախչում են. Հացի առատությունը Համարոր է գների կոտորը չնկատած շամփուրներ խրելուն։

Ըստ ավետայի, Հոգն իրեն լավ է զգում մնացի այնտեղ, որտեղ Հավատացյալը տուն է շինում, անգամորվում է իր անասուններով, կնոջով ու երեխաներով, ցանում է Հացահատիկներ, խոտաբույսեր, տնկում է ծառեր, ոստոստում է։ Հոգը նրան առում է. «՝, գու, որ Հերկում ես քեզ ազ ու ծախ ձեռքով, ես քեզ Համար մշտ կթնեմ ամեն տեսակ տնունչ ու առատություն...

Ջանվոգը, չուտոգը չի կարող արբատան գործ կատարել. տնվելով է ամեն ատրատ կենդանի, չանվոգը՝ մնանում է[1]։

Այնատանքային այդ պայքարը, բնականաբար, առաջին Հերթին, պիտի գիցարանվեր այդ աշխատանքներում վիրիսարի գեր կատարող նշենքի Հետ միասին։ Այս առումով մենարժեք վկայություններ ենք Հանդիպում մեր Հայովներում, որոնք կարծես բնկորներ են մի-մի բնգարձակ առնգնագրություններից։ Այցպես, որպես քնգհանուր Հերոս, գովերգվում է Կռվանը՝ նշը, ապա նրա պայքարը՝ շոր ուժերի, գնների, վիշապների գեմ և նրա Հաղթանակը։ Ուշագրավն այն է, որ այդ բոլորը նկարագրվում է Հենց աշխատանքային պրոցեսների ֆոնի վրա և այդ պրոցեսներում։

---

[1] З. А. Рагозина. История Мидии. С. Петербургъ, 1903, стр. 141—142.

Ահա մի հերոսվիշ, ում նկարագրվում է, թե ինչպես իջել է աշտանը, և սկսվել է նաև Կռվանը։ Նրանից խլված է գարունը, գալստյոզ բուսականությունն ու կյանքը.

Հայէ ա ասի վըր հառահուռէ,
Սառաս, գարուդան էա նայհուռէ,
Ինչի՛ ա լըկն կուց-կուց առուռ,
Ու՛ նի գիգա յարի գառուռ...[1]

Այսպես են սկսում նաև այն զիջարանական հերոսները, որոնցից խլված են լինում ոսկե խնձորները, կուլա աղջիկները, գարունն ու սիրելին։ Հերոսվիհերի հերոսն էլ նրանց նման պատկերվում է որպես նույն չար ուժերի դեմ համառորեն պայքարող էակ, որի նպատակն է ևս բերել երկրի վրա գարունը՝ անհնազորված իր սիրուհու գաղափարի մեջ։ Նրա պայքարը, բնականաբար, պրոեկտվել է վարիչու պրոցեսի միջոցով։ Ըստ որոշ հերոսվիհերի, վարի աշխատանքները նկարագրված են որպես ձգած մեծ կատարի պայքարի տեսարանները՝ հանուն իր ցեղերը ազատության, գարնան և բերքի.

Ճառվռռան խավ էրալ բազէն-բազան,
Կռվան չարեց ատ յարուդ գազան,
Մեռնիմ Կռվանա յառար, ճուռաքի՛[2]։

Ծիծառ էիավ, բնէն գալ էր,
Ջուռաք էիավ — յարուդ մալ էր,
Նամարի գիմ կռվան անալ էր։

Գարան ատան մեջ վար կանի,
Կռվան գանչիմ կ'էրթա, մեկ էլ կուգի,
Կռվան ատ յարուդ ալ'նով կանի...[3]

Ցեղի համար պայքարն այնքան բնորոշ է համարվել, որ նա ուղղակի կոչվել է Կռվան։ Ո՞ւմ դեմ է նրա կռիվը։

Այս հատվածից պարզ երևում է, որ Կռվանի վարի պրոցեսը կապված է նրա ազատության նպատակի հետ։ Նա մերթ վարում է, մերթ կանգնում և սիրուհուն այլով անուշ. խոչ սիրուհին ազատ չէ, նա գտնվում է կապանքներում (ոՀուտագ էիավ — յարուդ մալ էրա)[4]։ Կռվանը նրա ազատության համար է պայքարում՝ վարում։ Պարզվում է նաև, որ Կռվանն ունի և իր սխալանքը, որը հանում է նրա սիրուհու վրա, որի դեմ, ապա, Կռվանն անարդ ու անիրավացի է (ենթադրի դեմ կռվան անալ էրա)։

Որքան էլ կցկտուր է այս հերոսվիշի բովանդակությունը, բայց և այնպես այնտեղ պահպանված են ամենահիմնական գծերը։ Այդ ամփոփ գծերով ընդհանուր պրոցեսները նկարագրելուց հետո, նույն հերոսվիշը պատկերում է նաև Կռվանի ուսումնական հանգրվանները և կատարի պրոցը՝ քյնամու վրա.

Հաւրիկ խաւրեց,
Ծիտաւէ անեց,
Ծարիկ տալից,
Ամոլ վալից։
Ալէներ էիան ճանապարհէ,
Էրէ ա էիան գազալնէ,
Ալիչէ էիան ձանգվալնէ,
Թաւրէ ա էիան բաւրալնէ,
Հավքէ ա էիան պահպալնէ,
Կարավ էիան կրկրալնէ,
Ազգաւ էիան պղպղալնէ,
Մանչիկալ էիան պահպալնէ[1]։

Հերոսվիհերում ընդգծված կերպով պահպանվել են նաև չար ուժերի գաղափարները, որոնց դեմ պայքարում է Կռվանը։ Մի հերոսվիշի մեջ չարը գտնվում է գուշանի անիվի տակ.

Անը խարխ է,
Ճըչկըտա, ճըլկըտա,
Ծարի փարխ է...[2]

Մի այլ հերոսվիշում այդ չար ուժը նստել է լեի վրա և տանջում ու գլուխը նա բերել հողի մեջ, որ այդպես կամ մնա և խանգարի վարն ու պայքարը։ Բայց Կռվանը քանի ուժ ունի, ձգում է, մոլեգնում ու քերքիչով նրան.

Ճարկով ճառի չալ կալա վէրէ,
Ճամ ու գլուխ մէջ անկոնէ,
Անիչ ճարդից, խոփը ինդից...[3]

Ահա քե ինչպես է ոգևորում ժամհալը Կռվանին՝ այդ պայքարում՝ քան մի ուրիչ հերոսվիշի.

Ելէ առնց վիս յինչինէ,
Կռվան, մեռնիմ յուր յերդումէ,
Հառավել գառ պալարի,
Ցար ձորդի։

[1] Հայ յինառանի ազգագրական հերգերը. Հավաքեց և խմբագրեց Ա. Տեռոսյանյան, Երևան, 1937, էջ 89։
[2] Նույն տեղում, էջ 78։
[3] Մի այլ հերոսվիհերում այդ նույն միտքը ևս հետևյալ ձևով.
Հեմար է՝ տանու գալ է՝
Կռվանու ազիկը կուլիկ՝ սիրան ատրալ է։
Ջուռաքն էիավ—յարուդ մալ է։
Ազիկը կուլիկ՝ սիրան ատրալ է...
(Նույն տեղում, էջ 788)։

[1] Նույն տեղում, էջ 78։
[2] Նույն տեղում, էջ 88։
[3] Նույն տեղում, էջ 87։

Անխոխան ի, ես՛, ախոխան ի,
Ծուխդ խոցիլ կը խանի՝
Հարի արյառական,
Հուռ առ պիծաց առնգական,
Ուռնգակ գառդ ին պնդական [1]։

Կովախին սպառնում են չար ուժերի մյուս արբանյակները, որոնք, իբր թե, չորում են սարերում որպես գինը և հնազինան իլնում գնդի արտերը, որոնցից ֆոլի գալարը.

Ըխը, ախը, ախոխան,
Բլուռն գլուխ գիխոխան.
Դեմ ելավ սար ու ակյառան,
Գլեր ելան Լուռ-Ֆյառան,
Ես ար յրատա, չիշա՛
Երթա, լցվի բնատ բլուռն,
Դարե առավիկ, ն՛յ... [2]

Պետք է գոռալ, սարսափեցնել այդ գնդերին, քանի նրանց, որ մոա չգան Կովախին.

Ես ասա, ես՛, ամավիս մանկիկ,
Իսկի չես անե կռվմանիկ.
Ասա մեռատս, կանչի սպառվի,
Ինորիս, բանիս խոլոլ գոլոլ [3]։

Իսկ քանի՝ Կովախը մինչև պատրաստ է այդ չար ուժերի դեմ, նա այլերին սրբությամբ ու արդյունքով լցրած Համաստղին մղում է իր մատը՝ ֆոլի կոչնչով բոլոր քշնամիներին.

Գարան գիպա Կովախին,
Կովան գիպա մանկանին,
Հայիր լցի կուց-կուց առած,
Կանիկ կուգա Ցրա պոլ տարած [4]։

Կամ՝

Գարան կիլիս, գուրգին կուգիս,
Գարդին բարձև կանիկ կուգիս,
Ենկոս կտաան կիլցան կուգիս,
Ձոմն ի գնանի, կուզ ի տարնի,
Ասա՛վ, ևլավ՝ խնոն ա բարնի,
Ենոն ա բարնի մանկըվարնի...[5]

[1] Հայ չինախոսի ալիսաստանի հրատարակ, Կոստանդ և խմբագրեց Ե. Չամչյանցյան։ Վրնան, 1837, էջ 71։
[2] Նույն տեղում, էջ 88։
[3] Նույն տեղում, էջ 72։
[4] Նույն տեղում, էջ 88։
[5] Նույն տեղում, էջ 81։

Այստեղ արդեն, ինչպես տեսանում ենք, Կովախը տվնզ պատյարի պրոցեսում հաղթում է քշնամուն և ղրկի ի գնանին, ֆոլն ի սահինս Հոգի բնակարանից դուրս է բերում տեսնն ու բարկին, որին հետևում է ազատ ապրիլների գովքը։ Պարզ է, որ այստեղ նկատի է առնված Կովախի սիրուհու ազատությունը սարսափելիս չար ուժերից և նրա մինչև գարնան ու պտղաբերության սպասումը երկրի վրա։

Այս տեսակետից վերին աստիճանի ուշագրավ է մի փոքրիկ հերովին՝ ամրողջապես նվիրված Կովախի սիրուհուն, որն այստեղ կոչվում է Հայլու։ Ամրողջ հերովին բրենից նեղիլայացնում է մի կանչ, լուսո աշխարհ հրավիրող մի կոչ, մի ոգևորող ու հուսացրող ազատիկ, որին անսալով հայլոն պիտի ուժ հավաքի և վերածնվի։ Այդ հերովին երգվիչ է հերին ավարտվելու պարհին, նրա գնդյունները ժոանցիկ են վերջին պատառ չվարած հողամասը շուտ տալուն։ Այդ ավարտով էլ, իրոք, ավարտվիչ է վարի պայմանը և պսակվիչ հաղթանակով հայլոն, Կովախի և նրա օգնականների չնորհիվ, գուրս է բերվիչ լուսո աշխարհ, և ուրախությունից մոլորվիչ է փերուն ու պղպեղվող ուժով լիցուն ախոռների մեջ։ Ահա այդ հերովին հատվածաբար.

Ձ՛յ, հայլո, Լե՛յ, հայլո,
Կա՛յ, հայլո.
Պոլորով,
Պոլորով, Կնով, ա՛, հայլո՛։

Ոչ, ասա՛ վ, կյ, ասա՛, ամասնվար...
Ես՛յ, ամասնվար, գի՛մ ասա,
Գնմ ասա, Լե՛յ, ամասնվար,
Ն՛յ, ասավիկ, ն՛յ ասավի՛յ։
Հոփ ասա, Լե՛յ, ամասնվար,
Հոփ ասա, Լե՛յ, ամասնվար...
Գարնիր պոլորով, Կնով,
Գարնիր պոլորով, Կնով,
Հոփ ասա, Լե՛յ, ամասնվար...
Ն՛յ... ն՛յ... գիե... ն՛յ...
Ան՛յ, ասավի՛յ ասա։
Գարնիր պոլորով,
Հայլոն ախոռ մեր ծոլորով [1]։

Ներ ու փերուն ախոռների մեջ ուրախությունից մոլորված այս հայլոն նման է մոլորվինակաև նորով ասավաճառուհուն, որը նույնպես գարնան հերկի ատնի ժամանակ գանվում էր ախոռների մեջ։

Հայլոյի գաղափարը հերովինիներում համամա փոխարինված է տարբեր հասկացողություններով, որի

[1] Նույն տեղում, էջ 71—72։

մասին մի ակնարկ անում ենք։ Ըստ մի ուրիշ Հոթովիչում Կռվանի ողջ պայքարը մղվում է Հանուն այդ բարիքի, որին Հասնում են Կռվանն ու գիշերուկները Հերկն ավարտելիս.

Գարով առնք, կուռ գալարավ,
Գարին կիսով ես տեր առնք.
Փաչի, հավանուն մեռնիմ,
Կուռ գալարավ, կիսով,
Փաչի, հավանուն մեռնիմ։
Ոսոսիկին մառնցավ,
Փաչի, հավանուն մեռնիմ,
Ոսոսիկ ի։

«Ոսոսիկին» արդեն ավարտ ու հաջողանակն է, որից հետո գիշերուկները փոսափրանում են Հերս Կռվանին.

Հերկն պատ էր, հավանուն մեռնիմ,
Կուռ գալարես, հավանուն մեռնիմ,
Հավանուն մեռնիմ, հավանուն մեռնիմ,
Մեկ ապատ էր, հավանուն մեռնիմ։

Գովասանքի խոսք է ասվում նաև այդ պայքարին մասնակցող գիշերուկների մասին, որոնք պարգևատրվում են ջնարդանուշ, խնձորով, ազատ ազդիկներով, դինու ու բարիս-ով։ Կռվանն իր խոլտյին է Հասնում, իսկ գիշերուկներն քնքշանալիս սիրու և պատգարեցության մասին ունեցած իրենց հրազանքին.

... Ջանն ի գնանք, կուզն ի տանիմ,
Ոսոսիկ, Ձիլով խնուն ու բարին...
Ասպատ տատիկ խնչնասանի՝
Ձիլ գասպիկներ կիտակվանի...
Ասրգնասան՝ խատգան ի նես,
Ինձատան՝ խնձար գասնի,
Ազատ ապին՝ ասմանվանի,
Խուն ու բարին մանկկլվանի։

Ինում գարնանային վարի սկիզբը նվիր է համաժողովրդական ընտանյան օր, որը նույնպես նշվել է Հատուկ ծիսական ճոխ արարողություններով։ Այս տեսանկյունից խիստ արժեքավոր տեղեկություն է պահված չինական ազբյուրներում։ Ըստ որի գարնանային ամենամեծ տոնը Համարվել է Հերկի տոնը, որին մասնակցել է նաև քաղաքորը։ Նրա Համար պատրաստվել է Հատուկ գուբան՝ ներկված գնդին գույնով. Հատուկ ձևով զարդարել են նաև այդ գուբանի նվիրերին, իսկ սերմի ակրդը ներկել են կանաչ գույնով։ Այդ ծիսակատարությանը մասնակցել են նաև պալատականներն ու փորձված ծերունի երկրագործները։ Քաղաքորը, երեք որ պատ պահելուց և ազոթելուց Հետո, դուրս է նվել գարտ և առաջին ակոսը բացել ինքը, ապա մյուսները [1]։

Մեր Հոթովիչներն էլ, Հանախ, Կռվանի ու գուբանի գովքն անելիս, Հիշում են տանտիրանալին տնօրաններիս.

Հոթան բալից տուն գալիմ,
Ոչխար կայներ ես բանալիմ,
Ոսկի կբնաներ Կռվանու գալիմ,
Խորինի, ես խուրան մեռնիմ։

